

ԱՅՆԻՄ
ՀԱՅՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՈՒՅԹ
ԲՈՎԱԿԱՆ



ԱՅԵՍՅԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԿԱՐԱԳՈԽՅՐԸ ՀՈՆԴԱԼԻ ԹԱՓՈՎ
ԲԱՑԿԵՑ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ. ԹԱՅԻ
ՍՈՍԻ ԱՐՎԵՏԱՍԱԳԵՏԻ ԱՏԵՂՑԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԵՐԿԱՐ
ՈՒ ԶԻԳ ԾԱՆԱՊԱՐԴԸ:





ՀԱՅԱՍՏ

ԿՐԵՊՈՆ
ՀԱՅՈՎՐԴԻ-ՑԱՅՆ

ՏՐԱՎԵ-
ԵՎ
ԲԼԱԳՈՒՔՑՈՒՄ


Վաղան Աշխեմյան
Կանոնադրության պատճեն



A/18860

ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՈՎՐԴԻ-ՑԱՅՆ ԳՐԱԴՐԱ

1959



ՀԱՅՈՎՐԴԻ-ՑԱՅՆ

Գրախանչ
արվեստագիտության դպիտաբ
Բ. ԶԱՐՅԱՆ

Հայութերդյան, Լ. Հ.

Ա 503 հ Տաղանդ և բնավորություն (Վ. Աճեմյանը կլանքում
և արվեստում).— Եր.: Խորհրդ. գրող, 1989.— 296 էջ-

«Տաղանդ և բնավորություն» խոհագրությունը նշանավոր թեմա-
գրիչ Վարդան Աճեմյանի որբան հարուստ, նույնիքան բարդ ստեղծա-
գործական նկարագրի բացահայտումն է՝ հեղինակի հաւերի, ար-
վեստադեսի, առեղծածած բնմական արժեքների, արխիվային նորահայտ-
նյութերի, թատերաբննագատական նյութերի վերլուծության և մեկնա-
բանության հիման վրա:

Հ 4907000000 (69)
705 (01) 89 160 — 89

ԳՄԴ 85. 334. 3 (22) 7

ISBN 5-550-00351-1

© ԵԽՈՐԾՈՂԱՅԻՆ ՊՐՈԴՅ
ՀՐԱՄԱՐԱԿԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1989



ՄԱԼԻ

Պատմությունը մեր աշած գործերի
զանձարանն է, անցյալի վկան, ներկայի
համար օրինակ և խրատ, ապազայի հա-
մար՝ նախազգուշացնում:

ՄԻՒՆ, ԹԵ ՍԵՐԳՈՅԵՏԱՍ
ՍԱԼԱՀԵՒԹԻՒ

Կան արվեստներ, որ ապրում են ներկա ժամանակում
միայն: Չկա երաժիշտը, չկա երգիչը, չկա դերասանը՝
չկա և նրա արվեստը: Ճիշտ է, ժամանակակից սարքավո-
րումներով կարելի է պահպանել երգչի ու երաժշտի կատա-
րումները, բայց դրանք, ինչպես թումանյանը կասեր, «էն
չեն լինում»: Դերասանի խաղն էլ կարելի է առնել ժապա-

վենի վրա, և շատ է խոսվում որա անհրաժեշտության մասին: Իդուր: Ես շատ թերահավատ եմ դրա հանդեպ, որովհետեւ այն, ինչ տեսել եմ ժապավենի վրա (ինչպես Վահրամ Փափազյանի օթևառի դրվագները) լավականի պատրանքը չեն տալիս, մինչև իսկ հակառակը՝ նսեմացնում են մեր վսիմ պատկերացումները մեծ արտիստների մասին:

Կատարողական արվեստի հավերժական ողբերգությունը:

Ալեքսանդր Շիրվանջադեն Պետրոս Աղամյանի կյանքից հետնորդներիս պահ է տվել հուզիչ մի դրվագ. հանճարեղ ողբերգակին տեսել է նկարելիս ու լսել նրա խոսքը, թե կովում է մոռացության գեմ: Այսինքն՝ իր խաղը կմոռացվի, նկարը կմնա: Բայց չէ՞ որ մոռացության գիրկն անցնողը հանճարեղ խաղն է, իսկ մնացողը՝ միշտակ նկարչությունը...

Գուցեն և ճիշտ է ասված՝ ամեն ինչ հավասարակշռված է այս աշխարհում: Մնայուն արվեստի մարդիկ՝ պրոդ կամ նկարիչ, կարող են մեծ գործեր ստեղծել և ճանաչում շգտնել, ճանաշումը կարող է գալ իրենցից հետո, երբ իրենց պետք չէ այլնաւ Անմիայում՝ կատարողական արվեստի մարդիկ, ապահովագրված են այդ ողբերգությունից, նրանք կամ ճանաշում են իրենց ժամանակին և վայելում իրենց ճանաշումը, կամ՝ ոչ: Նրանք չեն կարող իրենց կենդանության օրոք մերժվել և հետո հռչակվել, որովհետեւ նրանք ոհետու լունեն:

Բայց եթե կատարող արվեստագետից էլի ինչ-որ բան մնում է՝ ձայնագրություն, կինոժապավեն, տեսագրություն, ապա ի՞նչ է մնում այն արվեստագետից, որի անումն է բեմադրիչ կամ ռեժիսոր:

Դրեմե ոչինչ, եթե նույնիսկ նրանք ժամանակին թատերական մտքի տիրակալ են եղել, ճաշակի օրենսդիր, ասպարեզի առաջնորդ: Ասում եմ «զրեթե», որովհետեւ նրանց բերեցի առաջնորդ:

մաղրությունները մնում են ժամանակակիցների հիշողության մեջ, մնում են դրանց մասին գրված հոդվածների ու գրքերի մեջ, մնում են իրենց նամակներն ու գրառումները՝ արխիվային մեռյալ նյութեր։ Բայց ի՞նչ են դրանք ժամանակակիցների մտքերը բորբոքած, շռնդալի ժափերի արժանացած ներկայացումների համեմատ։

Հոչակված բնմագրությունների վերականգնումներ։ Այս, լինում են։ Բայց դրանք էլ, իրենց ստեղծումի մինուլորսից դուրս, էլի «էն չեն լինում»։ Բարձրորակ վերականգնում լինելու դեպքում անգամ, ինչպես Վախթանգովի «Արքայադուստր Տուրանդուն» էր, էլի «էն չեղավ»։ Ալ. Մացկինի պես լրջախոհ մի քննադատ, որ և հինն էր տեսել, և նորը, զրեց, թե նորի մեջ չկա ստուդիական անփորձության հմայքը, որ նի անմերժելի արժանիքն էր և, վերջապես, ուրիշ էր «Արքայադուստրը» 1922-ի կարիքավոր, հրճվանքի ժարավ Մոսկվայում, ուրիշ՝ մեր ժամանակներում։

Ուրեմն, որակյալ վերականգնումն անգամ «Քննադրային համարժեքության» չի հասնում։

Այսքան դժվար է բնմագրիչի անձն ու գործը սերունդների սեփականությունը դարձնելու խնդիրը։

Ի՞նչ կարող է ասել «Վարդան Աճեմյան» անունը նրա գործերը շտեսած հետնորդներին։

Այն, որ նա եղել է մեծաթիվ ներկայացումների հեղինակ, դրանց մեջ՝ մի մեծ շարք առաջնակարգ ներկայացումներից Ի՞նչ ապացուց։ Նույնպես մեծաթիվ հոդվածներ՝ լրագրերի ու ամսագրերի գունաթափ էշերում, նաև մի շարք գրքեր՝ գրադարաններում ու գրադարակներում։ Շատ ավելի վառ ու անհերքելի պատկերացում կարելի է կազմել ժաղանկարից Աճեմյանի մասին։ Նրա ժաղանկարները լույս են տեսել

առանձին զրբերով, զբանը հիշած էլ դիտվում են, և միշտ կդիմութեան բաւականությամբ: Բայց Աճեմյանը նախ առաջնակարգ բնմաղրիլ էր և հետո, ի միշի այլոց, ժաղանկարիչ Մնացունն ի միշի այլոց-ը եղավ և ոչ բուն գործը: Դուցք նա էլ, Պետրոս Աղամյանի սկս, նկարելիս մտածել է մռացության դեմ մարտոնելու մասին: բնմաղրությունները կանէանան, նկարները կմնան իրեւ սուր դիտողականության, շռապ հոււրի, անվրեալ ձեռքի անհերքելի վկայություններ:

Եվ մնում են:

Իսկ ո՞ւր կմնա ամենափնտիստ հայ մարդկանցից մեկն իր ազգային վառ նկարագրով, իր փայլուն արվեստով ու հղացումներով, իր զրամատիկական ճակատագրով:

Իմ աշխատանքի, հանգամանքների առատաձեռն բնրումով ևս հայ նշանավոր արվեստագետներից շատերին եմ տեսած, որոնց վրայից տաղանդը թափվում էր: Ոմանց ճանաչել եմ, ոմանց հետ Եղել մտերիմ: Շատ մոտ ու մտերիմ՝ վարդան Աճեմյանի հետ: Այն էլ՝ տասնյակ տարիներով, 1946-ից մինչև 77-ը՝ իր մահվան տարին: Այն էլ՝ ոչ միայն գործի ու ստեղծագործության մեջ, այլև կենցաղում, իր տանը և մեր տանը, կյանքի ամենատարբեր հանգամանքներում և տարբեր քաղաքներում:

Եվ այն էլ՝ օր-օրի զրառումներ անելով:

Իշխան զրառումներ անելով:

Դա էլ ասեմ:

Տաղանդը թափվում էր նաև Գուրգեն Մահարու (նույնպես Աճեմյան) վրայից, որի հետ ևս մտերիմ եմ Եղել, բայց, թափվելով, մարմնացում էր գտնում իր զրվածքների մեջ: Նրա գրվածքները կան ու կմնան այնքան ժամանակ, քանի դեռ կլինի թեկուզն մի հայերեն ընթերցող:

Նաև իմ ավագ ընկեր Ռաֆայել Խորայնյանին վրայից, բայց, թափվելով, մարմնացում էր գտնում իր բազմաթիվ նախագծերի մեջ և կառուցների: Մինչև իսկ գրական փորձերի¹ մեջ, որոնք «Թափվող ձիբրի» ոչ մասնագիտական նշաններն էին, ինչպես կատականկարներն Աճեմյանի համար: Սարդարապատի և Ապարանի Հուշակոթողները, Երևանի գինու մասնների շինությունը և ուրիշ կառուցներ կմնան այնքան ժամանակ, որքան կրիմանա քարը: Դա թիւ չէ, իհարկե, մեր մարդկային երեակայության սահմաններում՝ հավիրժական:

Թափվում էր տաղանդն իմ հասակակից ընկեր Պարույր Սևակի վրայից, և մարմնացում էր գտնում իր անհամար բանաստեղծական գործերի, այլևայլ գրությունների մեջ, բայց շատ բան էլ մնում էր սղուրսը, իր բանավոր գրուցների ու վեճերի մեջ: Դա էր, նաև դա էր պատճառը, որ ինձ մղեց շարադրելու «Պարույրը»² խոհագրությունը և մարելու իմ պարտամուրհակն իր հիշատակի առաջ:

Պարտքի այդ զգացումը կա նաև վարդան Աճեմյանի պարագայում, մանավանդ, որ նրա մտքի արտադրանքները՝ բազմաթիվ առաջնակարգ բեմադրություններ, անհետացել են ոնցնորդ ժամանակի մշուշներում: Եվ որպեսզի դրանք պահպանվին ազգային գեղարվեստական մշակույթի անդաստանում և խաղան իրենց զերը, ժամանակին ևս շարադրել եմ մի դիրք³, որի մեջ ջանացել եմ Հնարավոր մանրամասներով վե-

¹ Դրանք լույս են տեսել «Ռաֆայել Խորայնյան. Հոդվածներ, ուսումնակիրառյաններ, ակնարկներ» գրքում (կազմեցին և խմբագրեցին՝ Լ. Բարսեղյան, Լ. Զորյան, Լ. Հախվերդյան), Երևան, 1982:

² «Պարույրը», Երևան, 1987:

³ Կւասիկան և մեր օրերը. Վարդան Աճեմյանի արվեստը, Երևան, 1962:

բականգնել նրա լավագույն ներկայացումների մի շարք:
Դրանք հայ դասականների երկերի բնմաղրություններն են՝
ամենամեծ և ծրագրային արժեքն արվեստագետի լայնածա-
վալ ստեղծագործության մեջ: Ուրիշ բնմաղրություններ առա-
վել կամ պակաս շափով նկարագրված են ուրիշ մասնագետ-
ների գրեթե ու հոգվածներում: (Նկատենք, որ Աճեմյանի
մասին գրվել է թերեւս ավելի, քան բոլոր հայ բնմաղրիների՝
միասին առնված):

Այսքանով հանդերձ, Վարդան Աճեմյանը՝ հայ բնմաղրա-
կան արվեստի բարձրակետը, ազգային բնավորության բե-
մական քանդակագործը, այնքան ինքնատիպ և լեցուն ան-
հատականություն էր, որ չի տեղավորվում մինչև այժմ գըր-
վածների մեջ: Դուրս են մնում ի կատար շաժված մտքերն ու
հղացումները, որոնք հետաքրքիր են ոչ պակաս, քան ի կա-
տար ածվածները, իր նկարագրի ոչ միայն լուսավոր, այլև
ստվերու կողմերը, որոնք թույլ շտվին իրեն լինելու ավելին,
քան եղամը, քան կարող էր լինել ըստ բնության տված շնորհ-
ների:

Գրել Աճեմյանի մասին այնպես, ինչպես կուզենայի և
ուղում եմ, նշանակում է ներկայացնել ոչ միայն իրեն, այլև
իր ապրած ժամանակի մեր թատերական ու մշակութային մի-
ջամայրը՝ և ոգեշնչող, և հուսահատության մատնեղ հանդա-
մանքներով: Նշանակում է ուրվագծել արվեստագետ մարդու
մի նակատագիր, որ երջանիկ էր՝ իր կյանքի երևացող, ամեն-
քին տեսանելի կողմերով, քայլ և խորապես դրամատիկա-
կան՝ այդ կյանքի գաղտնախորհուրդ, քչերին հայտնի կող-
մերով:

Տողերիս գրողն այդ քշերից է: Ուստի և պարտավոր է
զրել՝ ի տես և ի խրատ հետնորդների:

Ահա և դրում եմ՝ ամեն պարագայում վավերականորնն
ստուգապատում լինելու, հայրենական մշակույթի պատմու-
թյան, արվեստագետի հիշատակի և սեփական խղճի պուած
անպարտ մնալու խոստումով:

Խոստովանեմ. ինձ համար ամենից դժվարը շարադրանքի
համակարգումն էր նյութի ոչ միայն հարուստ, այլև տարա-
բնույթ լինելու պատճառով։ Ծատ ծանրութեան անելուց հե-
տո հանգեցի մի համակարգման, որ հեռու է իդեալական լի-
նեւց, բայց ավելի լավը շգտաւ

Այսքանը բավական է իրրե մուտք:



ԱՐԱԶԻՒ ՄԱԿ

ԱՐԱԶԻՒ ՆԱՆՈՅԻԹՅՈՒՆԻՆ.
1946-ի ԵՎ 1953-ի ՄԻԶԵՎ

Վարդան Աճեմյանի հետ իմ ծանոթությունը, ապա և երեք տասնյակ տարի տևած մտերմությունը ծայր առավ իր կյանքի բախտավոր մի պահի:

1946-ի ամռանը ես, քսաներկու տարեկան մի ուսանող, համարձակություն ունեցա առանց թույլտվություն առնելու մտնել Լենինականի թատրոնի Հանդիսարան՝ «Արա Գեղեցիկ» բնմագրության փորձերը դիտելու Դահլիճի կիսամութի մեջ աննկատ մնալով, ես տեսա Աճեմյանին այն ներ-

շնչառնքի պահին, որ կոշում են ստեղծագործական։ Նա փորձում էր Շամիրամ—ժաննա Թովմասյանի հետ կապված տեսարաններն այնպիսի լարակիլ հրճվանքով, որ հաղորդվում էր դերասանունուն և վերադառնում բեմադրողին։

Հետագայում ինձ շատ ու շատ անգամներ վիճակվել է լինել Աճեմյանի փորձերի հմայված հանդիսատեսը, բայց այդ օրվա տպավորությունս մնաց անջնջելի։ Բեմից հնչող բարձրաշունչ հայերենը, Մելիքսեթ Սվախչանի վեհատեսիլ բեմանկարչությունը, բեմադրիչի և դերասանունու հազվագյուտ ոգորությունը միանգամից պարուբնցին զարմանքի պատրաստ երիտասարդիս, և այդ օրվա տպավորությունը մնաց չգերազանցված։

Պատկերացրեք խոշորակազմ և խոշորակն ժաննա Թովմասյանին Շամիրամի մենախոսությունը նորից ու նորից, ավելի ու ավելի բուռն կրքով ասելիս՝

...Ահա գողում եմ հա։

Սա այն արտառուն է սուրբ, որով երկիրը սիրուեկէ

Սպասում է պատանի գարնան արևպակին։

Իսկ նա՞... Ուրարտացիներ, արդյոք սիրո՞ւմ է ինձ։

Օ, սի՞րտ իմ, մի՞ արոփիր այդպիս ազերասան։

Ես նինոսի գաւնով կը դըրավիմ նորան

Եվ կըրերնմ նինվէ լուր բարձրաբերձ Ուրարտությ

Եվ կըմբռեմ Ասորեսատան նըրատ ոտքերի տակ։

Ասորեսատան Ուրարտացո՞ւ ոտքերի տակ։

Իսկ Ուրարտուն՝ ասորեների՞...

Պատկերացրեք Աճեմյանին այսօրինակ խոսքի ամեն մի շարձակածքը, արեկյան առասպելական գեղեցկունու ամեն մի շարժումը սեփական շարժմամբ մշակելիս, ճիշտ կլինի ասել՝

քանդակելիս, և տպավորությունս ավելի հասկանալի կդառնա-
նա. Թատրոնի աստված իր գերագույն հրճվանքի պահերին

Եկավ փորձն ընդհատելու ժամը, զահինը լուսավորվեց:
Աճեմյանը նկատեց ինձ ու մոտեցավ ժպտերես, դրհումակ
հսկությունից վառվող աշխերով և, ի պատասխան փորձերը
դիտելու իմ ուշացած խնդրանքի, ասաց՝ ի՞շարկե՞, նայիր,
արի՞ երբ կուզես...

Ոչ միայն նայեցի, այլև հանդգնություն ունեցա անփորձ
գրչով հողված գրելու փառավոր ընդունելություն դուած ներ-
կայացման մասին («Գրական թերթ», 1946, 24 օդուտոսի),
որ իմ առաջին ելույթը եղավ մամուկում:

Ասեմ, որ Աճեմյանն այդ ժամանակ վարում էր թատերա-
կան ինստիտուտի գերասանական առաջին կուրսը: Նույն
1946-ին նա ցույց տվեց կուրսի առաջին աշխատանքը՝ Ֆ.
Սոլոգուրի «Քնքույց սրտից պատուհաս» վողելիի բնմադրու-
թյունը: Վերստին հիացմունքի արժանի աշխատանք, վառ
գույների սրբնթաց մի ներկայացում, որի հերոսուհին Մե-
տաքսյա Սիմոնյանն էր քսանամլա գեղեցկուհու շողջողուն
հմայքով:

Առանց այն էլ զարմանքի տրամադիր՝ ևս անսքող հիաց-
մունքով էի նայում դյուրաշարժ, ժպտերես, շենշող Աճեմ-
յանին, համոզված, որ նա ինչի էլ դիպլոմի ձեռքբարձր՝ կհառազի
արվեստի հրաշքը: Եվ այդպես էլ էր: Քառասումմենքը նոր բո-
լորած (դա շափազանց շատ էր թվում) արվեստագետն ապ-
րում էր իր կարելիությունների փարթամորեն ծաղկուն՝ մեծ
գործերի պատրաստ ժամանակը: Ափսոս միայն, որ այդ ժա-
մանակը համընկավ գեղարվեստական մշակույթի, հատկա-
պես թատերական արվեստի վաստ ժամանակներին:

Պատճառը, ավելի ճիշտ՝ պատճառների մեջը գործնակա-

Նորեն անմիտ կիրառումն էր Համերթ) և Կենտկոմի այն որոշման, որ հրապարակվեց 1946-ի օգոստոսի 26-ին՝ «Թատրոնների խաղացանկի» և նրա բարելավման միջոցառումների մասին» վերնագրով։ Որոշումը, կարծես, հետապնդում էր բարի նպատակ՝ թատրոնների ուշադրությունը սևեռել արդիականության հարցերին։ Բայց դա հանդեցրեց ամենատխուր հետևանքների։ Որոշումը խնդիր դրեց զարկ տալ արդիական թիմաների, բայց հետևանքը եղավ այն, որ թատրոնների խաղացանկը հեղեղվեց անորակ պիեսներով, դրված «լավի ու լավագույնի» պայքարի սնամեջ սխեմայով։ Դա կարուտ է բացատրության, իսկ ևս պատմում եմ այնպես, կարծես բոլորը գիտեն ինչն ինչոց է։ Ասվածը նշանակում է հետևյալը. քանի որ սոցիալիստական հասարակության մեջ չկան հակամարտ գասակարգեր՝ այդ հասարակության կյանքն արտացըլող երկերում շեն կարող լինել կոնֆլիկտներ, իրարամերժ ուժերի բախումներ, ուստի և դրամատիկական պայքարը կարող է ընթանալ լավի և առավել լավի միջև։ Այսպես անկոնֆլիկտայնության տևողությունն» ավերեց բովանդակ երկրի թատերագործությունը (նաև գրականությունը, նկարչությունը, կինոն) ծնունդ տալով անբռնվանդակ, իրականությունն անհավատալիորեն շքնդաղարդող պիեսների։ Աղետը տևեց մինչև 1953 թվականը, երբ դա խստորեն գատապարավեց իրեն սնանկ և արվեստը անանկացնող տեսություն։

Իսկ մինչ այդ, կարծես եղածը Հերիթ շեր, 1949-ի հունվարի 28-ին «Պրավդայում» հրապարակվեց «Թատերական գննադատների մի հակահայրենասիրական խմբի մասին» վերնագրով մի հոդված, որի մեջ, ինչպես վերնագրից էլ երեսում է, ամենածանր մեղադրանքներ էին բարդվում մի շարք հայտնի քննադատների հասցեին։ Ինչպես և պետք էր սպա-

սել, Հայաստանում ևս գտնվեցին եղան տակ հորից որոնդներ, խստորեն դատապարտվեցին ավագ սերնդին պատկանող բոլոր թատերագնաները: Ի՞նչարեւ, տարիների ընթացքում և տարիներ անց, զուր տեղը պղտորմած ջուրը հստակվեց, վերանայվեցին ու վերագնահատվեցին թերագնահատված արժեքները, ամեն բան տեղն ընկալ, բայց այն տարիների մռայլ օրերին շատ արյուն պղտորմեց, արվեստի, գրականության տեսականն ու գործնականը շնորհեցին զարգացման բնականոն հունից: Յանկության դեպքում միշտ էլ կարելի էր պեղել ու դանել ֆորմալիզմին, «միասնական հոսանքին», նացիոնալիզմին, արևմտյան կուլտուրայի հանդեպ ստորաքարշ վերաբերմունքին, կոսմոպոլիտիզմին արված տուրքեր և տուրք տվողներ: Եվ պեղվում ու գտնվում էին առանց մեծ դժվարության, առավել ևս, երբ առարկող, ծպտուն հանող շկար. ո՞վ էր գլխից ձեռ քաշել: Եվ իրոք, բանը հասավ ունպուսիաների: Վահրամ Թերզիբաշյանը, մի հմուտ թատերագետ ու գրականագետ և հեզ բնագործություն, որ զլուխն ազատելու համար խոնարհաբար ընդունում էր իր «սխալները»՝ արսորմեց: Սարդիս Մելիքսեթյանն ազատվեց թատերական թանգարանի դիրեկտորի այնքան սիրած պաշտոնից և մնաց օրվա հացի կարուտ: Գեորգ Գոյանի նման ընտիր դասախոսն ազատվեց դասախոսական աշխատանքից: Մյուսների պատիճն ավելի մեղմ եղամ: Մամուլի դռները փակվեցին անմեղ մեղավորների առաջ:


Կենտրոնական և տեղական մամուլը ողողվեց գաղափարական արատներ մերկացնող հոգվածներով: Կոսմոպոլիտական անլուր արատներ հայտնաբերվեցին փայլուն թատերախոս Յու. Յուզովսկու հոգվածներում և դրբերում, շնոսելով այլևս նվագ հայտնի անունների մասին: Լավ հիշում եմ Երե-

վանում, արվեստի աշխատողների տանը, 1948-ի նոյեմբերին կայացած այն ժողովը, ուր «անարգանքի սյունին գամվեց» Յուլյուզկին և նրա «Դարն ու կերպարը» հիմնալի գիրքը՝ գըրված հայկական շեքսպիրյան ներկայացումների հիման վրա, ևս մի խայտառակ ժողով, որտեղ ևս առանձին եռանդ էր ցուցարերում պրոպագանդայի և ադիտացիայի բաժնի վարիչ Հովհաննես Մամիկոնյանը, որ Յուլյուզկուա դատապարտեց բուրք մաճացու մեղքերի մեջ, որոնցից մեկն էլ հայ ժողովրդին Համլետի հետ համեմատելն էր...

A 18860
Պիեսներ էին գրվում և բեմադրվում ֆորմալիզմի և կոսմոպոլիտիզմի գեմ մզվող շարժման թիմաներով, որոնցից մի քանիսը բեմ հանվեցին Սունդուկյանի անվան թատրոնում: Առանց այլևալլության արգելվում էին ներկայացումներ, որոնք ինչ-ինչ կարծիքների համաձայն չէին բռնում «գաղափարական անաղարտության» ենթադրվող պահանջներին: Բայց պատմությունը միայն լույսերից կամ միայն ստվերներից չէ, որ հյուսվում է: Մարդկային բնավորությունները՝ նույնպես էլույսն ու ստվերը միշտանց հետ են մշտապես: Ստվերն անբաժան է լույսից, ինչպես արևի տակ քայլող մարդուց: Մեկը հասկանալու համար պետք է հասկանալ մյուսը, քանի որ դրանք միմյանցով են պայմանավորված և միմյանցով են բացարձում: Մենք կարող ենք, իհարկե, մեկից գոհ լինել և մյուսից գժդո՞ւ, քայլ շենք կարող անտեսել ոչ մեկը, ոչ մյուսը:

Ուրեմն առաջ գնանք այս արամարանության թելադրանքով, այն հունով, որ նա բաց կանի մեր ճանապարհին:

Եթե մեր պատումի հերոսը վարդան Աճեմյանն է, ապա նա, իբրև դեպքերի կենտրոնում գտնվող արվեստագետ, շեր կարող անմասն մնալ ո՛չ լույսից, ո՛չ ստվերից: Եթե խոսք



հեղավ կոսմոպոլիտիզմի դեմ գրված պիեսների մասին, ապա
նաև եղավ դրանցից մեկի՝ Կ. Սիմոնովի «Օտար ստվերի» բե-
մագրիշը (1949), զլխավոր դերակատար ունենալով վաղարշ
Վաղարշյանի նման առաջնակարգ մի դերասանի (Գանուն
արդարության պետք է այն էլ ասվի, որ նրանք՝ լրջախոճ՝ ար-
մեստագետներ, բանը հանգեցրին ոչ թե շեղած կոսմոպոլի-
տիզմի դատապարտմանը, այլ ճշմարիտ մտավորականի
շփոթմունքին՝ այս ի՞նչ է կատարվում մեր շուրջը): Եթե խոսք
եղավ «անկոնֆլիկտ դրամատուրգիայի» հանգով գրված փուլ
պիեսների մասին, ապա նա եղավ դրանցից մեկի՝ Գ. Բոր-
յանի և Հր. Ղափլանյանի «Հրաշալի դանձ» պիեսի վարդա-
դույն-լավատեսական բևմագրության հեղինակը (1950): Եվ
ոչ միայն դրա նույն տարում նա շատ քանի թափեց Հարո
Ստեփանյանի «Հերոսուհին» օպերայի բեմադրության վրա,
բայց շնչառավ ցանկալի արդյունքի, թեև արժանացավ պե-
տական մրցանակի: Դրությունը չփրկեցին ոչ Միքայել Թավ-
րիզյանի գիրիֆորական աշխատանքը, ոչ էլ Տաթերիկ Սաղան-
դարյանի և Գոհար Գասպարյանի անձնվեր մասնակցությունը:
Մեծաշնորհ արվեստագետների քանքերը քուրն ընկան, որով-
հետեւ օպերան, ստեղծված «անկոնֆլիկտ դրամատուրգիայի»
սկզբունքով (լիբրետոն՝ ըստ Ն. Զարյանի «Արմենուհի» պոե-
մի), անհունորեն հեռու էր կյանքի ճշմարտությունից:

Եթե խոսք եղավ արգելված ներկայացումների մասին,
ապա Աճեմյանին դրանցից ևս բաժին ընկավ այդ տարինե-
րին: Դրանցից մեկը վանո Մուրագելու «Մեծ բարեկամու-
թյուն» օպերայի բեմագրությունն էր (1947), մյուսը՝ Ա.
Արաքսմանյանի և Հր. Քոչարի «Պաշտպանության շորորդ
գիծը» պիեսի բեմագրությունը (1948): Արգելքի պատճառ-
ները տարբեր էին, և դրանց բացատրությունը մեզ հեռու

կտաներ, այս դեպքում դա չէ էականը, այլ հավաստումն այն իրողության, որ այդ տարիներին բնմական արվեստի մարդկանց (և ոչ միայն նրանց) արած, ըստ որում գերազույն խնամքով, ուժերի գերազույն լարումով արած գործերից շատ երբ շունեցան տևական կյանք, որևէ հետք լթողեցին ոչ թատերական պատմության, ոչ էլ իրենց ստեղծագործական կենսագրության մեջ Ավաստ հղավ վատնված ջանքն ու ժամանակը, ասես վերստին ապացուցելու համար այն ճշմարտությունը, որ ոչ մի տաղանդ ու վարպետություն չեն կարող կլանք պարզեցնել կյանքի ճշմարտությունից դուրկ գրվածքին։ Իհարկե, ապածը վերաբերում է ոչ միայն հայ արվեստի միջավայրին։ Այդպիս էր ամենուրեք։ Նույն պատճառն ամենն տեղ ծնում է նույն հետևանքները իսկ պատճառն ամենուրեք նույնն էր՝ այն պետական վերաբերմունքը երևույթների, այդք թվում նաև արվեստի երևույթների նկատմամբ, որ պետք է կոչել վոլյունտարիստական, ուրիշ խոսքով՝ արվեստի օրենքների, տվյալ զնագրում դրամատուրգիայի օրենքների և առհասարակ արվեստի զարգացման բնականոն օրինաշափությունների անտեսումը։

Հասկանալի է ինքնին, որ անճշմարիտ, մակերեսային գրվածքների բեմադրությունը, ինչպես զրանց մեջ հանդես դաւը, բավականություն չէր պատճառում բեմադրիչներին և դերասաններին, թեև նրանք իրենց գործն անում էին ամենայն բարեխղճությամբ։

Կարծում եմ, որ Աճեմյանին մեծ բավականություն շպատճառեցին նաև «Միքայել Նալբանդյան» պիեսի («Էղինակներ» Ա. Արաքսամանյան և Զ. Վարդանյան) և «Անհանգիստ Ժարդիկ» կատակերգության («Էղինակ» Ա. Գուլակյան) բնմադրությունները (1952)։ Առաջինն այն պատճառով, որ պիեսը

որոված էր ժամանակին ընդունված «կենսագրական պիեսի» պարզունակ սխեմայով, երկրորդը՝ կյանքի մակերևոսային վերաբարձրության, թեև երկուսն էլ լավ բեմադրվելու և ընտիր դերասանների մասնակցության շնորհիվ ձեռք բերեցին թատերական արժեք ու գրավչություն:

Նույն 1946—53 թվականներին Աճեմյանն ստեղծեց անհամեմատ խոշոր բնմական արժեքներ:

Հստ ժամանակագրության՝ 1946-ի «Արա Գեղեցիկից» հետո «Երիտասարդ գլաւորդիան» 1947-ին: Ակերսանդր Ֆադեևի նույնանուն վեպը հետպատերազմյան խորհրդային գրականության առաջին մեծ երևոյթն էր: Ողբերգականորեն հերոսական վեպ, որ ճշմարտացի ցույց էր տալիս և՛ թշնամու ահեղ ուժը, և՛ սսոխին գիմագրավող ժողովողի աննկուն ողին: Աճեմյանի բնմադրության մեջ երկուսն էլ թատերային վառ արտահայտություն էին գտնել: Հիշում եմ, սարսուռ էր պատում հանդիսատեսին, երբ ցույց էր տրվում, թե գերմանացիներն ինչպես են գրավում երկիրը: Ամբողջ հանդիսարանն էր առնվում արցանի մեջ. որ կողմը դառնայիր, քնզ էին նայում դիմավառ բռնադատիչների ահեղ դեմքերը: Ոչինչ, թվում էր, չի կարող խափանել այդ ամենակործան ուազմի մերենան: Մեծապես ընդգծելով շար ուժը, բնմադրիշ-մենաբանը դրա շնորհիվ ահազնացնում էր հակադիր կողմի անխորտակելի ողին: Եվ հայրենական պատերազմից երկու տարի անց, երբ մարդկանց հիշողության մեջ անցյալ շէր դարձել ո՞չ կորուստների մորմոքը, ո՞չ էլ հաղթանակի բերերանը, ներկայացումը հնչում էր իբրև հայրենասիրության հիմն:

Այստեղ ես վերստին շեղման կարիք եմ գտում՝ ասելու համար այն, որ ընթերցողը կարող է և չիմանալ: Թատրոնն այն ժամանակ ուներ ավելի մեծ հասարակական նշանակու-

թյուն, քան Հիմա, թատրոնը ժողովրդի գիտակցության մեջ անհամեմատ մեծ տեղ էր զբաղեցնում՝ կինոարվեստը մատնբիւած էր ամուլ վիճակի, հեռատեսիլ գոյություն չուներ, գեղարվեստական զբականություն թիւ էր լույս տեսնում, երաժշտական և վիճակու կասետների մասին հեռավոր պատկերացում իսկ չկարու Հիմա դրանք առանձին-առանձին և բոլորը միասին թատրոնի հետ զբաղեցնում են հասարակության ունեցած այն ժամանակը և զիտակցության մեջ եղած այն տարածքը, որ առաջներում պատկանում էր զրեթե բացառապես թատրոնին:

Այսպես որ, թատերական արվեստի կշռի նվազման մասին խորհելիս այս պարագան շպիտի մոռանալ: Խնդիրն ավելի բարդ է, քան կարող է թվականացնել հայացքից:

Եղավ այնպես, որ 1948-ին Անեմյանը դարձավ Երաժշտական կոմենդիայի թատրոնի գեղարվեստական զեկավարը (շգիտեամ ինչու, կարծում եմ՝ իղուր, այդ պաշտոնը հետագայում է երակոչվեց «գլխավոր ռեժիսոր»): Դա ունեցել էր նախապատմություն, որ այն ժամանակ չգիտեի: Իմացա այս զիրքը դրելու համար Անեմյանի թղթերը զննելիս, երբ ձեռքս ընկավ իր զեկուցադիր-առաջարկը կենինականի թատրոնը Երևան տեղափոխելու մասին, հասցեադրված Հայաստանի կոմկուսի քարտուղար Գրիգոր Հարությունյանին:

Դա էլ իր նախապատմությունն ունի:

Անեմյանն Անեմյան դարձավ, իհարկե, կենինականի դրամատիկական թատրոնում: Եվ թատրոնն էլ հոչակի տեր դարձավ Անեմյանով: Նա լիակատար իրավունք ուներ այդ թատրոնն իրենը կոչելու և չէր կարող դյուրությամբ լքել հարազատ օջախը: Ահա ինչու, երբ 1939-ին, կենինականի թատրոնում տասը տարի աշխատելուց հետո, Անեմյանը Երևան

տեղափոխվեց՝ նա իր կապերը չկտրեց Քին օջախից. տարիներ շարունակ, մինչև 1947-ը, նրա մի ոտքը Երևանում էր, մլուսը՝ Անինականում:

1946-ը բայց տավոր տարի նդավ «Արա Գեղեցիկ» ներկայացման փառավոր հաջողությամբ, բայց և մեծապես ղըժքախտ՝ ողբերգական սպանություններով: Այդ թվի մարտին Արտյուշա Փաշիևանյան անունով մի սրիկայի կրակոցով սպանվեց մեծ շնորհը տեր թատերական նկարի Մելիքոսիթ Ավախչյանը (կարծե՞ն թե ուսանողի հոդի վրա): Նույն թվի հոկտեմբերին Արշավիր Փիլոյան անունով մի ապաշնորհ դերասան հնոց թատրոնում, նույնպես ատրանակով, սպաննց շնորհալի դերասանունիներ Ասյա Բերյանին (դերասան Արամ Ռշտունու կողմը), Արարս Առաքելյանին (Նուարդի դեղիձկուհի դերակատարին), վիրավորեց դերասան Գեղամ Հարությունյանին (Արարս Առաքելյանի ամուսնուն):

Ստեղծագործական հաջողությանը հակառակ՝ թատրոնում տիրեց մահաճոտ ժամը մթնոլորտու Այդ մթնոլորտը փարատելն էր նպատակը, երևի, որ 1947-ի հունիսին թատրոնը հրավիրվեց Երևան մեծ հյուրախաղերի: Աննախագետ հաջողություն գտան հյուրախաղերը նվ դա է հիմք ավել Աճեմյանին ներկայացնելու իր դեկուցագիր-առաջարկը: Խնամքով գրված և հիմնավորված մի փաստաթուղթ, որ ծրագրային համարձակ բնույթով միակն է Աճեմյանի թզերի մեջ: Արժեց դրան ժանոթանալ:

«Երևանը որպես մայրաքաղաք անընդհատ անում է իր ազգարնակչության թվով և իր կուլտուրական պահանջներով»— Այսպես է սկսվում զեկուցագիրը: Այնուհետև, «Ուշագրավ է այն փաստը, որ գաստրոլների ժամանակ Երևանի գործող թատրոնի հետ միասին Անինականի թատրոնի ներ-

Հկայացումներն էլ անցնում էին լեփի-լեցուն դահլիճով։ Սա ևս վկայում է այն մասին, որ մի նոր դրամատիկ թատրոնի պահանջը Երևանի համար հասունացած է։ Դրանից հետո զեկուցագրի հեղինակն իր առաջարկը հիմնավորում է մի շարք կովաններով։ Դրանցից առավել կարևոր են հետևյալները։ «Հաշվի պետք է առնել նաև, որ թատերական ինստիտուտը մոտ ժամանակներս տալու է իր շրջանավարտները — դեբասանական ֆակուլտետից 30 և ոհմիսորականից 15 հոգի։ Այդ շրջանավարտների մեջ կան ոչ քիչ թվով շնորհալի և հուսալի կադրեր, որոնք կարող են աճել միայն լուրջ թատրոնում։ Սուսպուկյանի թատրոնը հնարավորություն շի ունենա այդ ուժերին ներդրավել այն պատճառով, որ մատակարարվում է իր սեփական ստուդիայի ուժերով։» «Ես մտածում եմ այսպես։ Կարելի է Հենինականի թատրոնը իր հիմնական կադրերով (թվով 15 հոգի), իր գլխավոր ունկերտուարով տեղափոխել մայրաքաղաք և խմբի կազմը համալրել ինստիտուտի ամենաշնորհալի կադրերով։ Այդ կնպաստի, որ երկու տասնյակ տարի լենինականում անընդհատ աշխատող մի շարք շատ արժեկավոր արվեստագետներ դուրս գան նոր ասպարեզ ու նրանց առաջ բացվեն ստեղծագործական նոր հեռանկարներ։ Վերջինքերու այդ կենսունակ ուժերը առանձին-առանձին ձըգտելով Երևան, պետք է որ Հենինականից դուրս գան։ Իսկ Հենինականում մնացած խումբը կարելի է նույնպես համալրել շրջանային թատրոններում աճած, ստեղծագործական ավելի լայն ասպարեզ որոնող կադրերով։»

«Ի՞նչ դեմք է ունենալու նոր դրամատիկական թատրոնը։ Զեկուցագրի հեղինակը տալիս է այդ հարցը և պատասխանում. «Դլխավորն այն է, որ թատրոնը լինի մկում, քաղաքականապես սուր և թատերական հետաքրքիր, թարմ ձեեր

փնտրող թատրոն։ Որ Սունդուկյանի անվան թատրոնի նման ակադեմիկ բնույթ ունեցող թատրոնի կողքին լինի նաև մեկ ուրիշը, որը կարողանա ստեղծագործական թարմ խոսք ասել մեր ռեսպուբլիկայի թատերական կյանքում։

Դուցի լինեն կարծիքներ, որ Սունդուկյանի անվան թատրոնի ֆիլիալի ստեղծմամբ կարելի է լուծել այս հարցերը։ Այդ միջոցառումը չի կարող լուծել իմ հիշած հարցերը, քանի որ դա կինքնի նույն թատրոնը, կունենա նույն ռեսպերտուարը, նույն դերասանները, ուրիշ խոսքով նույն թատրոնը մեկ երեկոյում տալու է երկու ներկայացում։ Այդ, իհարկե, հեռու է հարցերի այն մասշտարից, որ մասամբ ևս շարադրեցի։

Զեկուցագրի հեղինակն իր ծրագիրը լինելության այնքան մոտ է համարել, որ նկատի է տաել նաև կննցաղային հանգամանքները։ «... շտապում եմ ասել, որ կենցնականի թատրոնի տեղափոխելու արժանի արտիստների մեծ մասը Երևանում բնակարաններ ունեն և մեծ պահանջներ այդ առնչությամբ չեն լինին։»

Եվ ամենից զերջում, «Մուս է շենքի հարցը։ Առաջին շրջանում թատրոնը կարող է իր ներկայացումները կազմակերպել կոնսերվի դորձարանի ակումբում, որը միաւնգամայն հարմար է թատրոնի պահանջներին, կառլուկը գրում մասի ակումբում և շարաթական 2—3 օր էլ Երաժշտական կոմեդիայի և ռուսական թատրոնների շենքերում»։

Ես շգիտեմ՝ այս ծրագիրը բննության առարկա դարձել է արդյոք։ Առնենք, դա շատ էլ էական չէ, քանի որ դրան ընթացք լի տրվել։ Զեկուցագրից պարզ երևում է, որ Անեմյանն ինքնուրույն գործ էր որոնում, թատրոն, որի տերն ու տնօրինչ ինքը լիներ։ Այդ ժամանակ նա երկու ներկայացում էր ստեղծել, երկուսն էլ բնմադրական շատ մեծ աշխատանքի արդ-

յունք՝ Վ. Մուրագելու «Մեծ բարեկամություն» ռպերայի և Ա. Սշաջամանյանի ու Հր. Քոչարի «Պաշտպանության շորրորդ դիմք» պիեսի բնմաղրությունները, որոնց ցուցադրումն արդեկվեց, Պատճառների բացատրությունը մեզ հեռու կտաներ, ասեմ միայն, որ արգելքները կապ չունեին գեղարվեստական որակի հետ։ Եվ կաշկանդումներից հոգնած արվեստագետն ինքնուրույն գերծելու ասպարեզ էր որոնում։ Ահա ինչու, երբ իր առաջարկը գլուխ չեկավ, շատերիս համար անսպասելի Աճեմյանը հանձն առավ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի գեղարվեստական զեկավարությունը։

Դա բարերախառություն էր ոչ միայն այդ թատրոնի, այլև մեր ամբողջ թատերական կյանքի և դերասանական արվեստի համար։ Իսկույն ենթ փոխվեց թատրոնի խաղացանկը, ապա նաև բնմաղրական ու դերասանական արվեստը։ Դրա շնորհիվ թատրոնը, որ գտնվում էր աղքատ ազգականի վիճակում, տեղաշարժվեց հանդիսատեսային ուշադրության կենտրոն։ մարդիկ, որ տարիներով այդ թատրոնը չէին մտնում, լցրին նրա հանդիսասրահը։

Ի՞նչ կատարվեց այդպիս միանգամից։

Ահա թե ինչ։

Աճեմյանը բեմադրեց Ա. Շիրվանզադեի «Մորգանի խնամին» (ի սեր վաղեմի ընկերության ազգագրում թողնելով նույն թատրոնի բնմաղրիչ Թադևոս Սարյանի անունը. դա բացառիկ բան չէր, նման դեպքեր շատ են եղել Աճեմյանի կյանքում)։ Ստեղծվեց մեծակտավ մի ներկայացում։ Բայց դա երևոյթ գարձագու ոչ այնքան բնմաղրական արվեստի, որը ան գլխավոր դերում հանդես եկող Թադևոս Սարյանի խաղի շնորհիվ։ Աճեմյանն էր հորդորել, որ խաղա։ Ի վեցոց, 20-ական թվականներից դերասանական արվեստին հրաժեշտ

առված և ուժինորականին՝ նվիրված գերասանը տեղի էր
տվել: Դա իսկական հայտնություն եղավ հանդիսատեսի հա-
մար: Վերստին ապացուցվեց դերասանի հնարավորություն-
ները ճանաշելու և ի հայտ բերելու Անհմյանի հազվագյուտ
ձիրքը: Մինթունի դերը Սարյանը խաղաց հիանալի՝ թատրոայ-
նորեն վառ, խոշոր ու պարարտ մարմնի ծույզ շարժմամբ,
նույնպիսի ժույզ և ժայրահնդորեն միամիտ խոսվածքով կեր-
պարի նախատիպին այնքան հարազատ, որ ասես բնմում
անցուղարձ անողը ոչ թե դերակատարն է, այլ նախատիպը:
Մի գիշերում Թաղենոս Սարյանը հոչակվեց և տեղ գրավեց
ժամանակի բերասանւական արվեստի առաջին անոնների
շարքում: Հայ բեմը կորցրեց շարյային մի բեմադրիչ (կար-
ծեմ դրանից հետո նա այլևս ոչինչ լրեմադրեց) և ձեռք բերեց
առաջին մեծության մի դերասան: Այնուհետև նա հանդես
էկավ մեկը մյուսից փայլուն խաղերով և գրեթե միշտ Աճեմ-
յանի նրբամիտ հսկողությամբ: Բեմադրիչը կարծես նպատակ
էր որեւէ սիրենի դերասանի առաջանորդ փայլեցնել բոլոր կող-
մերից: 1949-ին նա բեմադրեց երեք պիես, երեքի մեջ էլ գրլ-
խավոր դերը վերապահելով Սարյանին. Հակոբ Պարոնյան՝ «Ծողոքորթը», Գարրինը Սունդուկյան՝ «Եղ այն», կամ Նոր-
Դիոգինեսը, Նաիրի Զարյան՝ «Ալղյուրի մոտա:

Առաջին երկու ներկայացումը ցուցադրվում էին նույն երե-
կոյի ընթացքում, երեկոն դարձնելով հայկական ծիծաղի,
արևմտահայ և արևելահայ ծիծաղի մի շքեղ հանդես: Նաև
արևմտահայ լեզվի և թիֆլիսահայ բարբառի: Նաև պոլսա-
հայ և թիֆլիսահայ կենցաղի: Նաև Պարոնյանի և Սունդուկ-
յանի կատակերգական վառ արվեստի: Նաև Անհմյանի բեմա-
դրական վատահ վարդեսության: Նաև Թաղենոս Սարյանի կա-
տակերգական շուայլ ձիրքի:

Գունագեղ, բայց ոչ խայտարդես, ռեժիսորահնար զավեշտական դրվագներով լցցուն, բայց և ազնիվ ճաշակի պահանջեստ Հակոբովիթյամբ՝ ներկայացումները հռում էին ասիս կախարդական գավագանի մղումով, հանդիսատեսին պարզեպելով ճշմարիտ գեղագիտական հաճույք:

Էլ ավելի մեծ հաջողություն բաժին ընկավ երրորդ ներկայացմանը: Չափ ու սահմանից դուրս հանդիսատեսային հաջողությունը Բուն պատճառը պիեսի կամ բեմադրության որակը չէր, այլ թադևոս Սարյանի խաղը Բալաբեկի դերում: Շացավանձ վեպի հեղինակն իր պիեսում կոլտնտեսային կյանքը պատկերել էր դրախտային վարդագույն երանգներով, կյանքը, որը բոլորը, նաև կոլտնտեսական դարձած հայրենադարձներն իրենց անհունորեն երջանիկ են զգում: Եվ այդ կյանքին հակաղը էր գյուղացու մի կերպար, որ տառապում էր մենատնտեսի հոգերանությամբ, դիմում ամեն տեսակ խարեւիթյան գլուխ պահելու, կոլտնտեսային անձեռնատու աշխատանքից խուսափելու, իր իմացած միջոցներով բարեկեցիկ կյանք ստեղծելու համար: Թատերագիրն, իրոք, ստեղծել էր կատակերգական ցայտուն բնավորություն: Իսկ դերասանը դերն անձնավորել էր ստուգ գտնված այնպիսի մանրամասերով, վարար, բայց և անբռնադատ, ասես ակամա ծագող այնպիսի հումորով, որ նրա ամեն մի խոսքն ու արարքը ոչ թե ծիծաղ էր շարժում, այլ ծիծաղ էր պայթեցնում հանդիսարահում: Եվ, տարօրինակ բան, հակառակ թատերագրի մտադրության, հակակրանք չէր հարուցում: Դա ուներ պատճառներ: Նախ որ հակակրանքի ծիծաղ, ատելություն արթնացնող սարկազմն առնասարակ հաւուկ չէր թադևոս Սարյանին (մի բան, որ բնորոշ էր Ավետ Ավետիսյանին, դա է պատճառը, որ երբ մի քանի տարի անց

Առնելույանը անվան թատրոնում Աճեմյանը քեմադրեց նույն Հեղինակի «Փորձագաշտ» պիեսը, որը թայարենէր Երևանում էր շարադրութիւններով, Ազնախոյանն այդ գերում ավելի համոզիլ էր, քան Սարյանը): Թացի այդ, «Աղբյուրի մոտա Ներկայացման մէջ Սարյանի խաղն ուներ մի ննթախմաստ, որ ի չիթ է դարձնում Հակակրանքը: Ոչ թէ՝ ահա ձեզ մի մարդ, որ խուսափում է հանրային աշխատանքից և արժանի է դատապարտման, այլ՝ ահա՝ ձեզ բարեհողի մի մարդ, շրջապատի մարդկանցից ամենասրբամիտը, ամենից վառ ընավորությունը, ընալ ոչ այնքան միամիտ, ինչպես կարծում են, որ ուզում է ասպեկլ իր իմացած ձեռվ, միայն թէ իրեն հանդիսաւ թողնեն: Դերասանի էությունից եկող, նրա խառնվածքով պայմանավորված մի մեկնություն, որին ասեմ վստահությամբ, ննթարկվում էին դերասանի նախորդ և հաջորդ գրեթե բոլոր անձնավորումները: Հանդիսատեսը դա կարող էր ընդունել էամ ընդունել: Դասինավ այն ուրախ աղմուկից, որով ուղեկցվում էր Թալարեկի ամեն մուտքը, Հանդիսատեսը նրան ընդունում էր Համակրանքով, թնե, դա ևս ակներեւ էր, ոչ ոք ուրախ չէր լինի, եթե իրեն Թալարեկի կոշշեն: Եվ այսպես Թալարեկը գուրս եկավ թատրոնի սահմաններից, դարձավ Հասարակ անուն, իսկ Թագեսոս Սարյանը ժամանակի ամենասրբիված դերասաններից մեկը, որին ժողովուրդը փաղաթշանքով Թաթիկ էր կոչում: (Հետազայում արդեն նա ուրիշ շատ և շատ դերեր խաղաց թատրոնում, բարերախտաբար, նաև կինոյում և սաղիոթատրոնում, դարձավ Համաժողովրդական սեր վայելով դերասան):

Թաթիկ Սարյան դերասանին «Հայտնագործելուց» հետո էլ Աճեմյանն ուշի-ուշով հետեւում էր նրա դերասանական հակատագրին, ցույց տալով ստեղծագործական բարեկամության

Հազվագյուտ օրինակ: «Ասա ով է քո ընկերը, ասեմ ով ևս
դու հնամենի ասույթը վերաբերում է թատերական ասպա-
րելին ևս: Այսպես, օրինակ, Վարդան Աճեմյան—թագեռու
Սարյան բարեկամությունն ուներ ստեղծագործական հիմք, որ-
նրանց տաղանդի ստեղծաբան, օտար և ավելի գործածական-
բառով ասած՝ իմպրովիզացիոն բնույթն էր: Ցայտուն արտա-
հայոված ստեղծաբան արվեստագետ, Աճեմյանը դերասանի-
մեջ ոչինչ այնպիս չէր գնահատում, որքան դա՝ հնթագիտակ-
ցարար, տեղնուտեղը, հանկարծահաս, ասես ոտքի վրա հո-
րինված հղացումն ու կատարումը: Մեծապես զնահատելի-
հատկանիշ բոլոր արվեստներում, բեմականում՝ առանձնա-
պես: Ինչ էլ գրվել է Աճեմյանի մասին, նրա արվեստի այդ
կողմն ընդգծվել է մշտակես: Հուշագիրները որ՝ բանը հասց-
րի են առասպելի: Բայց անտեսել են գիտակցականի դերը:
Ասենք, դա չէր էլ կարող տեսնվել, դա իր անձնական խո-
հանոցն էր, իր գաղտնիքը: Նս դրան հասու եղա իր գրառում-
ները կարդալով: Արվեստագետի ընտանիքը նրա արխիվը
վստահեց ինձ, և շատ բան ինձ համար ևս հայտնություն-
ելավ:

1939-ին Աճեմյանը Սունդուկյանի թատրոնում բեմադրել-
էր «Պատվի համար» դրաման. «մայր թատրոնում» երիտա-
սարդ բեմադրիչի առաջին աշխատանքը, որով նա միանգա-
մից անուն հանեց մայրաբաղաքի հանդիսատեսների և դե-
րասանների մեջ (շմոռանանք, որ ներկայացման գլխավոր-
դերակատարներն էին Հրաչյա Ներսիսյանը, Ավետ Ավետիս-
յանը, Ռուզաննա Վարդանյանը, Վաղարշ Վաղարշյանը):
Թատրոնի մարդիկ ստացել են այն տպավորությունը (ինձ
թվում է՝ բեմադրիչը դեմ չի եղել դրան), որ նա ներկայացում-
է ստեղծում հանկարծահաս հղացումներով: Դա միշտ էր,

բայց ճիշտ էր և այն, որ դրան նախորդում էր գրական հիմքի մանրազնին ուսումնասիրությունը: Հիմա իմ սեղանին են «Պատվի համար» դրամային վերաբերող իր դրառումները՝ մի տիտր, որի բոլոր էջերին տպագրված է «ՀԽՍՀ պետական 2-րդ թատրոնի դիրքեկտոր, Հնուախոս 1-69», կենինական»: Այստեղ բեմադրիչը մի առ մի գրի է առել դրամայի բոլոր գործող անձանց ռեպլիկները, ապա և ներկայացման գարգացման գլխավոր գիծն ըստ վերնագրի՝ հանուն պատվի էլիդրարկանն «աղջկան է զոհում», Մարդարիտն «ինքն իրեն է զոհում», Սուրենը «փող է շուալլում», Օթարյանը «մտնում է պայքարի», այդպես էլ մյուս գործող անձինք, ամեն ինչ անում են պատվի համար, բայց ամեն ոք պատիվ ասվածը հասկանում է յուրովի: Դրան հաջորդում են համառոտ նշումներ՝ պիեսի մասին, Արելյանի մասին, իրեն առաջնորդող միտրը՝ «ժառանգության ճիշտ օգտագործում, ոչ ընդօրինակում», նոր բեմադրության նպատակները՝ ստեղծել անսամբլ՝ ուշադիր էլիդրարյան», «կենցաղային դրամայից ստեղծել սոցիալական մեծ դրամա», «մեծ կիրք, դերասանական մեծ խաղ»: Թե այդ ամենն ինչ հաջորդությամբ մարմնավորվեց ներկայացման մեջ՝ այստեղ հարկ չկա ասել, դրա մասին գրվել են բազմաթիվ հոգվածներ (իսկ տողերիս գրողը բնմադրությունը մանրամասն նկարագրել է Անեմյանի արվեստին նվիրված մինագրության՝ մեջ): Ասեմ միայն, որ այդ դասական բեմադրությունը երկար ժամանակ պահպանվեց թատրոնի խաղացանկում, որոշ դերակատարների վորփիոխումները՝ մինչև հնտակատերազմյան տարիները:

1 «Կամահեկան և մեր օրերը. Վարդան Անեմյանի արվեստը», Երևան, 1962, էջ 121—134:

Կարևոր եմ համարում ընդգծել, թե Աճեմյանն ինչպես էք կրթում ինքն իրեն, աշխատում իր միտքը զարգացնելու համար:

Ահա ես նորից հուզմունքով ձեռքս եմ առնում իր այլիայլ գրառումներն անցնող ժամանակի կնիքը կրող խունացած թղթերի վրա: Գրառումներ կան, որ երեսում է ինչ առիթով ու նպատակով են արված: Ասենք, Անիի պատմությանը, արհեստակով են արված: Ասենք, Անիի պատմությանը, արհեստակով են արված: Հայ միջնադարյան քաղաքների կազմավորման ձևերին, բնակչության սոցիալական կազմին, հոգևորականությանը, առեւտրին վերաբերող գրառումներն արված են Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի» պատմական դրաման բեմադրելու առիթով՝ ինքնին հասկանալի է: Բայց ահա հայ ազգային-ազատագրական շարժումներին վերաբերող գրառումները՝ Բյուզանդիայի անկումից, խաչակրաց արշավանքներից մինչև Խորայել Օրի և այնուհետև, վատահորեն չես կարող ասել «Դավիթ-Բեկ» օպերայի բեմադրությամբ առիթով են արված: Թե մեկ ուրիշ, կամ էլ առանց որևէ կռնկրետ առիթի: Այդպիսին են, օրինակ, խորական վերածննդին, ֆրանսիական բարոկոյին վերաբերող գրառումները, գրված ուսանողական-կոնսպիկութի ձևով: Պատկերացում տալու համար բերեմ միքանի նմուշ: «Ռենեսանսը սկսվեց XV դարի II կեսից. Էնգելսն ասում է՝ այդ տերմինը չի սպառում «ռենեսանսի» բովանդակությունը. դա առաջադիմական մեծագույն հեղաշրջում էր, որ մինչ այդ ապրել էր մարդկությունը, մի էպոխա, որ մըտքի, կրքի, գիտության տիտաններ ծնեց», և... ջախջախում է կաթոլիկական սխոլաստիկական աշխարհայացքը (Կոպենիկոս, Կեպլիկը, Փալիկը) և կաթոլիկությունը XVI դարի վերջում իր վերջին ճիգերն էր թափում — ստեղծվեց ճիզվիտների օրդենը — վերականգնվեց ինկվիզիցիան՝ խեղդելու ազատ

Հիտքը — անկարող եղավ — թեև ոչնչացրեց ֆիզիկապես, բայց պարուժում էր բարոյապես. Զորդանոն Բրունոն, 1600 թ.: 1626 թ. նշանավոր էր անգլիացի Բեկոնը. առաջինը կանգնեց մատերիալիտատական դիրքերում... փորձն իրեւ ճշմարտության միակ չափանիշ. Բեկոնը անգլիական մատերիալիզմի և առհասարակ ժամանակակից փորձնական գիտությունների նախահայրն էր: Բեկոնի ուսմունքը շարունակեցին անգլիական փիլիսոփաներ Հոբսը (1588—1679) և Զոն Լոկկը (1632—1704): Մտածողության հետափիզիկական նղանակը ծագեց այս երեքի ուսմունքից, Դեկարտն ու Սպինոզան հակադրվում են իրենց զիալեկտիկական մտածողությամբ, «Էյուղովիկոս XIV-ի ժամանակ իր ժաղկման դադարին է Հանուն Բարոկկոն — ոչ թե նպատակահարմարություն, այլ պերճ շքեղություն, ոլորապտույտ գծեր, ճոխ ու խառն օրնամենտ, ուսկի արծաթ ֆակտուրան.. մարդը թաղված մանուֆակտուրայի ծալքերում: Մեծապես տարածվեց նաև գորելնը... ազնվական ծագումը հարկադրում է իննել պատվախնդիր, լյուտովիկոս XIV-ի ժամանակ և Հաղար Հողի սպանվեցին մենամարտում: Լյուտովիկոս XIV-ը զիսարկը հանուն էր աղախինի առաջ. տեսեք թե ի՞նչ կիրթ բարքեր էին: Բարոկկոն որպես ոճ — խոսակցության մեջ, շարժումներում, փոխհարաբերություններում... Արվեստում խուսափում էին կոպտովթյունից, նատուրալ կրքերից, ամեն ինչ գալանտ էր...»:

Այս և նման ուրիշ դրառումներ վկայում են ոչ այլ ինչ, քան իմացության պաշարը հարստացնելու արվեստագետի ջանքն ու աշխատանքը: Իսկ հիմա օգնում է մեզ ճանաշելու նրա իսկական էությունը, ցըլու Աճեմյանի մասին գոյացած այն թյուր պատկերացումը, թե նա հենց միայն ի բնե տըրպած ձիրքի, բացառապես ինտուիցիայի, բնաղդի արվեստա-

գետ էր և իմացականն ու գիտակցականը նվազ դեր են ունեցել իր ստեղծագործական կյանքում։ Իշարկե, գրառումները կողմնակի հանգամանք ունեն։ Բեմադրիչի համար էականը նրա արվեստի միավորն է՝ բեմադրությունը, ինչպես նկարչի համար՝ կաավը, քանդակագործի համար՝ արձանը։ Դրանից հետո շատ էլ էական չէ նա իր մտքերը գրավոր շարադրել է, թե ոչ, թեև դա էլ, ինչպես տեսնում ենք, ունի կարևորություն, երկրորդային կարևորություն։ Պատմեմ, ուրեմն, առաջնային կարևորության՝ բեմադրությունների մասին։

Նույն այդ տարիներին Աճեմյանն իրար վրա ստեղծեց երեք բեմադրություն, վառ թատերայնության մի-մի բարձր-արվեստ օրինակ՝ Դունաևսկու «Ազատաշունչ հողմը» օպերետի (1950), Ա. Չեխովի «Բալենու այգին» պիեսի (1951) և Տ. Չուխաչյանի «Կարինե» օպերետի բեմադրությունները:

Նախագծեանքի մասին:

Հայանի բան է և դեռ ժամանակին ասված, որ Հինգ-վեց
տարվա ընթացքում (1948—53) Աճեմյանը երաժշտական լո-
ւեղիայի թատրոնը բարձրացրեց այնպիսի գեղարվեստական
աստիճանի, որ թատրոնը չէր տեսնել մինչ այդ և շտեսավ դրա-
նից Հետու Դրա վկայությունը տվող «Մորգանի խնամին»,
«Եղողոքորթը», «Եվայն», կամ նոր Դիոգինեսը» ոչ թե օպե-
րետներ էին, այլ երաժշտախառն կատակերգական ներկայա-
ցումներ։ Թատրոնի դիմագիծը, տեսակը որոշելու համար
Աճեմյանը կարևորում էր զտարյուն օպերետի ժանրը նույն-
պես։ ԱՇա ինչու նա բեմ հանեց երկու այդպիսի գործ՝ «Աղա-
տաշունց հողմը» և «Կարինեն» («Լեռլերիջի Հոր-Հոր աղայի»
վերանվանումը):

Օսկերնան, իբրև ժամը, իմ թատերական նախասովություն-ներից զուրս է: Բայց այնպիս, ինչպիս Աճեմյանը բեմադրել

էր «Ազատաշունչ Հողմօ», ստիպում էր մոռանալ ամեն մի նախասիրություն։ Միջերկրականի ափին գտնվող նավահանգըստային ուրախ քաղաք՝ նավերով ու նավաստիներով, իր ազգային ինքնորոշման համար պայքարող ժողովրդով (ներկայացման բուն թեման), խայտարղետ գույներով ու բնակչությամբ, որոնց շարժման մեջ էր դնում մեծատաղանդ Դունականկու զվարի երաժշտությունը և Անձմանի բնմադրական արվեստը։ Ժողովրդական վառ ներկայացում, համակ շարժում, ուժգին թափ, երգ ու պար, երաժշտական հանդիսանքի մեծ կտավ։ Եթե հայ երաժշտական թատրոնն այս ժամանում ունեցել է գլուխգործոց կոչվելու իրավունքը կրող մի գործ, ուա, անտարակույս, «Ազատաշունչ Հողմն» է։ Եվ վերջինը՝ Ինչո՞ւ վերջինը։ Թատրոնի շենքը փոխելու պատճառով։ Օպերետը սիրում է բնմական արձակ-ընդարձակ տարածություն և մարդաշատ հանդիսասրահ։ Բնմը տեղ պիտի ունենա երգչախմբի և պարային խմբի ծավալվելու համար, նաև մեծակազմ նվագախմբի տեղ։ «Ազատաշունչ Հողմի» ժամանակ թատրոնն ուներ այդ ամենը, դրանից քիչ ժամանակ անց՝ շունեցավ։ Կատարվեց անուղղելի սխալ։ Զգիտես ում կամքով թե հրամանով երաժշտական կոմիտիայի և Ստանիսլավսկու անվան ուսուական թատրոնները փոխեցին իրենց տեղերը (կարծեմ թե նախաձեռնությունը պատկանում էր ուսուական թատրոնի նորահայտ գլխավոր ռեժիսոր Անատոլի Նալին։ Շատ կարճ ժամանակ մնաց նա այդ պաշտոնում՝ դրանից բացի ոչ մի հետք լիբողնելով իրենից հետո. շնորհալի մարդ շէր՝ դատելով իր բնմադրած միակ ներկայացումից)։ Ճակատագրական սխալ։ Դրանից ոչ մեկը շշահեց։ Ռուսական թատրոնը զբաղեցնում էր «Արմենիա» հյուրանոցի մոտ գտնվող այն կոկիկ շենքը, որ 1922-ից մինչև 1938-ը պատ-

կանում էր Երևանի Առաջին պետքատրոնին: Մեծ չէր նրա հանդիսաբանը, բայց մտերիմ էր ու գրավիչ և շատ էլ հարմար դրամատիկական թատրոնին:

Իսկ Երաժշտական կոմեդիայի թատրոնը բացումից ի վեր (1942) առող-փառը տեղավորվել էր այն շենքում (Նախկին Կառուցցողների ակումբը), որ մինչև 1940-ի հունվարը պատկանում էր օպերայի և բալետի թատրոնին: Այն, ինչ այստեղ արված էր այդ թատրոնի համար, լիուլի բավական էր երաժշտական կոմեդիայի թատրոնին, մեծ քեմն ու դահլիճը հատկապես: Մինչեւ, ուստական դրամատիկական թատրոնը, տեղափոխվելով այստեղ, ինչքան էլ դահլիճը փորբացրեց-հարմարեցրեց իր պահանջներին՝ նախկինի նման գրավիչ դահլիճ շունեցավ:

Երաժշտական կոմեդիայի թատրոնը հայտնվեց է՛լ ավելի աննպաստ վիճակում: Հիշում եմ այս շենքում կայացած առաջին պրեմիերան՝ «Կարինեն» Աճեմյանի բեմադրությամբ: Լայնաշունչ մի ներկայացում՝ Խցկված նեղլիկ մի բեմատուփ, նվազախմբի երաժիշտները փոսի մեջ իրար զիսի նստած, ոնց որ հաղթ մի տղամարդ փոքր պիտիկի մեջ՝ մինչև դաստիկները հասնող թերեւով...

Այսպիս թե այսպես, սա, իմ կարծիքով, Չուխաջյանի օպերետի ամենալավ բեմադրությունն էր՝ հրավառություն-ներկացում: Այստի է, դրանից քիչ անց (1951) Աճեմյանը նույն օպերետը, այս անգամ ու կերպերիցից վերնագրով, բեմադրեց օպերայի և բալետի թատրոնում: Ինչպիս և պետք էր սպասել, սա ուներ վոկալ և երաժշտական ավելի բարձր մակարդակ. սա եղավ դասական-ակադեմիական ներկայացում, որ շունեցավ նախորդի վարար ու վարակիչ շերմությունը: Այն էլ վկայեմ, որ, ճակատագրի հեգնանքով, Աճեմյանը նույն երկի երկ-

բորդ բեմաղբություններում երբեք հաջողության լեր հասնում, արվեստագետը կորցնում էր երկի ընկալման նախնական թարմությունը:

Դանք «Բալենու այգուն»: Զեի ուզենա բաց դռներ ծեծել բացատրելու համար, թե ինչ նուրբ հեղինակ է Անտոն Չեխովը, ինչ նրանցուս, փիրուն երկ է «Բալենու այգին» գործող անձանց գծագրությամբ, կիսատոնային դիալոգով, երբ մարդիկ առօւմ են մի բան՝ ենթատեքստը կուանել է տալիս մեկ ւրիշը: Ասեմ միայն, որ պիեսն իր այդ բնույթով կարծես թե դուրս պիտի լիներ Ամեմյանի նախասիրությունից:

Ամեմյանը «Բալենու այգին» բեմադրեց, կարծեա, աշու պատերացումը հերքելու համար: Ներկայացումը մասնաւուական արձագանքներ շատ ունեցավ: Ահա դրանցից մեկը, որի հեղինակն է թատերագետ Օլգա Օլիգորը, «Պիեսի կերպարները լուծված են ոեալիստորեն, հեղինակալին մտահղացմանը կատարելապես ներդաշնակ: Որոշելով պերսոնաժների սոցիալական էությունը, նրանց բնութագրելով որպես հասարակական որոշակի խմբերի ներկայացուցիչներ, Սունդուկյանի անվան թատրոնի արտիստները միաժամանակ բացահայտում էին Չեխովի հերոսների ներաշխարհը, ձգում էին բեմական կերպարների մաքսիմալ անհատականացման և հոգեբանական մշակմանը¹:

Այս մեջբերման վերջին տողերն ինձ թվում են շատ կարևոր: Ներկայացման մեջ ինձ ևս ամենից շատ գրավում էին դերապատկերները՝ գործող անձանց ներաշխարհի որբան նուրբ, նույնքան ստույգ ըմբռնումով: Որ վաղարշ Վաղարշյանը կամ մուզաննա Վարդանյանը, ոռուսական կյանքն ու

¹ «Ամեմյան», գիրք-ալբոմ, Երևան, 1978, էջ 107:

կենցաղը սեփական կենսափորձով ճանաշող դերասաններ, իրենց դերերը (Ֆիրս, Ռանևսկայա) խաղում էին «հանալի» միանգամայն սպասելի էր: Բայց որ Գուրգեն Զանիքենիկանն էր՝ արագատորեն անձնավորել տոհմական ազնվական Գաւեհի, Ավետ Ավետիսյանը Եպիխողովի, Լևոն Մարլյանը Սեմյոնով-Պիշչևի կամ Գավրիլ Մալյանը Լոպախինի դերերը, որում եղած արդեն պետք էր տեսնել բնմադրողի ոչ միայն ծառայությունը, այլև սկզբունքը: Անեմյանի համոզմամբ, շնորվան դրօղ անձինք վառ բնավորություններ են և ոչ թե մշուշապատ արարածներ: Վառ բնավորություն և նուրբ խաղ՝ կարծես թե իրարամերժ այս խաղաձեւերի ներդաշնակ համադրումն էր այս ներկայացման մեջ արժանիքը: Մալյանի Լոպախինն, օրինակ, դերասանի թերեւս լավագույն անձնավորումը, և ռամկորեն զորեղ անհատ էր (հաղթահասակ, թափածայն դերասան էր Մալյանը), ամենազոր սեփականատեր, և դրության տերը լինելուց ամաշող, ազնվական շրջապատից քաշվող զգայուն բնավորություն: Այնպես, ինչպես հանձնարարել էր Զեխովը. «Լոպախինին ապրում էր բալենու այգուն տիրահաւալու հրճվանքը, մյուս կողմից մի տեսակ անհարմար էր զգում որանից: Հըրճվանը՝ իրու իր դասի ներկայացուցիչ, ճորտ Երմոլայի թոռը, որ ձեռք է քերում այն կալվածքը, որը իր պատը մնաց է ծռել: Անհարմարության զգացում՝ առանձնապես. նա իրոք խորապես հարգում, կարեկցում է ասպարեզից դուրս մղվող, իիրթ, գեղեցիկ նկարագրի տեր, բայց կատարելապես անօդնական ազնվականներին:

Ես, իհարկե, նպատակ չունեմ մի առ մի մտարերել բոլոր

դերակատարներին, պետք է ամենից էականն ասել, որ հետեւյալն է. այստեղ ամեն մի դերակատար, անկախ իր ձիրքի ու համբավի շափից, գտել էր իր ճիշտ տեղը, ինչպես լավ գործիքավորված երաժշտական երկում։ Գտել էր այնպես, որ թվում էր, թե երկրորդական դերի թեկուզն համեստ կատարողը չէր կարող փոխարինվել թեկուզն ավելի մեծ ավալների տեր մեկ ուրիշ դերասանով։ Այսպես, Ամալյա Արագյանը և արյայի, Գեղամ Հարությունյանը Տրոֆիմովի, Մարգո Մուրագյանն Աննայի, Վարյա Ստեփանյանը Շառլուտայի, Գեղամ Աֆրիկյանը Յաշայի գերերում լիարժեք էին ոչ պակաս, քան Ռուզաննա Վարդանյանը Մանեսկայայի, Վաղարշ Վաղարշյանը Ֆիրսի կամ Պավիթ Մալյանը Լոպախինի գերերում։ Եվ Եթե ժամանակակից թատերական ստեղծագործության բարձրագույն նշանն անսամբլային որակն է, ապա «Բալենու այդին» հայ բնեմում տեսած ամենակատարյալ անսամբլներից մեկն է, որ չնխումքան հյուսվածքի նուրբ ըմբռնումով հազվադեպ է հաջողվում նույնիսկ ոռուսական թատրոններին։

1951-ի «Բալենու այդին», ինչպես 1946-ի «Արա Գեղեցիկը», թատրոնի պատմություն ստեղծող ներկայացում էր։ Դա ճիշտ է, քայլ ճիշտ է և այն, որ 1946—53 թվականներին Աննմյանն ավելի շատ աշխատեց ոչ թե դրամատիկական, այլ երաժշտական թատրոնում (Պարոնյանի և Սպենդիարյանի անվան թատրոններ)։ Եվ երաժշտական թատրոնում նույնպես՝ ազգային արժեքները վեր հանելու անխոտոր սկզբունքով։

Իմ ձեռքի տակ է նշումներն իր այն ելույթի, որ նա ունեցել է 1968-ին, հայ ազգային առաջին օպերայի՝ Չուխաչյանի «Արշակ Երկրորդի» ստեղծման 100-ամյակին նվիրված հանդեսում։ Ոհմ գործունեությունն օպերային թատրոնում եղել

է ծրագրային և հետեւղական... Ես բեմադրել եմ մեկ տասն-
յակից՝ ավելի անուններ... ազգային դասական և առավել չա-
փով հայկական նոր օպերաներ:

Ես շեմ բեմադրել «Ալիքա», «Կարմեն» կամ «Ֆաուստ»,
այլ մեծ սիրով իմ ուժերը նվիրել եմ ինքնուրույն օպերանե-
րի ստեղծմանը, որն, անշուշտ, եղել է դժվարին, բայց և ավե-
լի շնորհակալ գործք:

Սա էր սկզբունքը: Եթե ընտրություն լիներ, ասենք,
«Ֆաուստի» կամ Լևոն Խոջա- էջմանթյանի «Նամուս» օպերա-
ի միջն, նա առանց տարակուսելու երկրորդը պիտի ընտրեր:
Ինչո՞ւ Որովհետև առաջին գեղարվում նա հոչակավոր օպերա-
յի հերթական բեմադրիչը կլիներ, իսկ երկրորդում՝ նորա-
հայու ազգային օպերային բեմական կյանք պարգևառդր:

Ի դեպ, Աճեմյանը, որ տեսական դատողություններ անե-
լու մի առանձին սեր չուներ, այս ելույթում շատ ուշագրավ
մտքեր է հայտնել օպերային երկի սեփական ընկալման մա-
սնին. «Ինձ համար հեղինակի պարտիտուրը կենդանի մարդ-
կանց հարաբերությունների, իրական դեպքերի սուր ու խոշո-
րացված պատկերներ են: Օպերային ներկայացում հասկացու-
դությունը նախ և առաջ, իմ համոզմամբ, հնչյունների վրա
խարսխված գաղափարներ են, ձևեր, գույներ, շարժում ու
գործողություն և ոչ թե համերգ՝ հանդերձներով ու դիրիժո-
րով. մի բան, որ դժբախտաբար ապրում է դեռևս Այստեղ
շատ բան կարող է որոշել դիրիժորը, որը եթե միայն լսում է
պարտիտուրը և չի տեսնում կամ տեսնելը նրա համար երկ-
րորդական բան է, ապա նա իզուր է կապված օպերային
թատրոնի հետո:

Սա կարևոր դատողություն է և ընդհանրապես, և մա-

նավորապես՝ երաժշտական գործերի բնմագրիլ— մեկնաբանի վերաբերմամբ։ Սա բանումը է նրա ստեղծագործության այդ մարզը հասկանալու համար։

Ենցում եւալի, որ Աճեմյանը կապվեց օպերայի հետ։ Արդեւագենոի Շնորհամ հատա դրա պատասխանը։ «Արվագյանի շնորհիլ էր. նա իր գործը դիտեր, առել էր՝ զիրիմորը նիշքայիլ թավորվանը պիտի լինի, ուսմիսորը՝ ևու։ Եվ Հրավիրեցին։ Դա իմ առաջին բեմադրությունն էր Երևանում, ոՊատվի համարից» առաջ։ Վախենում էի Երևան գալ։ Հյուրանոցում հեռվից տեսա Այվազյանին՝ նուրբ, գեղեցիկ դեմք Նոր արտիստ է երևի, — մտածեցի հս։ Հետո օպերայում ծանոթացրին և աշխատեցինը միասինաւ Այդ աշխատանքի արդյունքը՝ «Թափառնիկոս» ներկայացման գոտած հաջողությունը հայտնի է։

Մենք զիտենք Աճեմյանի նկարչական ունակության հիմքը՝ մասնագիտական կրթություն Երևանի գեղարվեստական ուսումնարանում (1921—24), իսկ ի՞նչն էր, որ այդպես միանգամից նրան դարձրեց օպերային ուսմիսոր։ Դա եղավ ոչ այնքան միանգամից։ Միանգամից ոչինչ չի լինում։ Երգի, երաժշտության, պարի օգտագործման հաջողակ օրինակներ երիտասարդ բեմադրիլը տվել էր արդեն։ Ամենից վառ օրինակը՝ «Մեծապատիվ մուրացկանների» բեմադրությունը (1934)։ Սարգսու Բարխուդարյանի երաժշտությամբ։ Անկառած, հենց դա էր դրդել Ա. Այվազյանին, որ «Թափառնիկոսի» բեմադրության համար հրավիրեն Աճեմյանին։ Ապա և «Շահնամեիս բեմադրությունը (1935) պարային տարրերի օգտագործմամբ։ Այս առիթով կուզենայի մեջքերել Աճեմյանի մի վկայությունը, առված 1971-ին, պարուսույց Վահրամ Արիստակեսյանին նվիրված երեկոյին։ «Երեսնական թվականներին

Ի՞նձ վիճակիվեց հանդիպել՝ Արիստակեսյանի հետ։ Համաօնդ
ստեղծագործական աշխատանքով կենինականի թատրոնում,
ուր բեմագրում էի Մ. Զանանի «Շահնամեն»։ Ես խնդրեց՝
Նրան բնմադրելու ներկայացման պարերը։ Խնդրեցի՝ ունե-
նալով կասկածներ, արդյոք իշաջողվի՞ն նրան ստեղծելու աշխ-
մելլայն, հարեմային կանաչը պարերը, չէ՞ որ նա մեր ազգային,
զուտ ազգային պարարվեստի անգերազանցելի մասնագետն
էր։ Եվ, ահա, Արիստակեսյանը «Շահնամեն» ցուցադրեց
և որևէ պահանջիկ իր լայն ըմբռուսմներն ու վարպետությունը։

Այսպես, Աճեմյանը երաժշտական և ուարային արվեստ-
ների իմացություն ձեռք է բերել առանց մասնագիտական
կրթության, գործնական աշխատանքում։ Հիշենք Վահրամ
Փափառյանի հայտնի դարձվածքը. բան կա՝ պիտի սովորես,
որ անես, բան էլ՝ պիտի անես, որ սովորես։ Այս դեպքը երկ-
րորդն է։ Միանգամայն հնարավոր, եթե միայն բնատուր ձիրքը
կա։ Երաժշտականի և պարայինի զգացությամբ Աճեմյանն
օժտված էր ի ծնե։ «Վարդան Աճեմյան» վավերագրական կի-
նոնկարում¹ կա քեֆի մի տեսարան, ուր նա, ասես ակամա,
ժողովրդական պար է պարում՝ պլաստիկայի ու ոիթմի ինչ-
պիսի՝ սուր զգացություն։ Ու նաև շարժման հումոր, այս,
շարժման հումոր։ Այդպես կարող են պարել միայն տաղան-
դավոր մարդիկ։ Ռիթմի ու պլաստիկայի այդ զգացողու-
թյունն էր խոսում օպերաներ և օպերետներ, մինչև իսկ գրա-
մաներ (ինչպես՝ «Նամուսը») բնմադրող Աճեմյանի մեջ։

Աճեմյանը չէր երգում, այլ, ինչպես ասում են, զնդնում

1 Հիշենուկարը՝ ստեղծվել է 1970-ին, Հեղինակներ՝ Հովհեն Հայավերդյան
և Մարտիր Վարժակյան։

էր ոբեկ երգ: Ես նրան շատ եմ լսել խոսակցության արանգում դնդնալիս: Եատ հաճախ կուսիկ Քոշյանի (որին իրը երգչուու և պարունու շատ էր հավանում) երգերից, ամենից հաճախ՝ «Սարի սիրում յարը...»: Ինչքան իմ ականջը կարող էր հասու լինել՝ մեղեղին վերաբարում էր կատարելապես ճիշտ, նրին երանգավորումով և քնարական երգին հումոր հազորդելով:

Ասեմ նաև, թե ում էր հավանում մեր կոմպոզիտորների ու երաժշտոների մեջ: Դա կօգնի գաղափար կազմել նրա երաժշտական նախասիրությունների մասին: Իմ լսածը վերաբերում է այն կոմպոզիտորներին, որոնց հետ ինքն աշխատել է: Գրիգոր Եղիազարյանին, որի երաժշտությամբ նա մի ամբողջ շարք ներկայացումներ է բեմադրել Լենինականում, և դրանց մեջ՝ «Արա Գեղեցիկը»: Էղգար Հովհաննիսյանին, որի հետ նա միայն մի և շատ գեղեցիկ հանդիպում է ունեցել «Նամուռ» դրամայի բեմադրությամբ: Առնո Բարաջանյանին՝ «Իմ սիրու լեռներում է» ներկայացման երաժշտությունը հորինողին: Էղվարդ Բաղդասարյանին՝ «Մոմեն և Զուլլիկետ», «Պեպո» բեմադրությունների երաժշտության հեղինակին:

Մի անգամ մի պարզունակ երգ լսեցինք՝ «Չէ որ ես քեզ բերում էի թարմ ծաղիկներ...: Հարցը» մեր կոմպոզիտորները կարո՞ղ են այսպիսի սրտագրավ երգ հորինել: Ասաց՝ երբեք, շատ են պրոֆեսիոնալ:

Դիրիժորներից շատ էր հավանում Միքայել Բավրիզյանին և Յշան Գուրյանին: Առաջինի մասին խոսում էր անսրող հիացմունքով, իրեն անխառն արտիստի: Երկրորդի մասին Աճեմյանը գրել է նաև, ըստ երևույթին երաժշտին նվիրված ինչ-որ մի հանդեսում կարդալու համար: Գրվածն անթվակիր

է, բայց վերաբերում է, անշուշտ, 70-ական թվերի առաջին տարիներին Անեմ մի մեջքերում, որից կերևա, թե Աճեմյանն ինչպիս էր հասկանում դիրիժորի արվեստը, նաև այն, թե նա ինչպիս կարող էր արվեստարան երաժշտագետի գրիլ բանցնել, երբ տեղը գալիս էր. «Շատերը կարող են բռնել դիրիժորի փայտիկը, կանգնել ու շափ տալ, մինչև իսկ վարժվել նվազախումբը վարելու կանոններին, յուրացնել արհեստը։ Սակայն թշերին է վիճակվում լինել իսկական, մեծատառով դիրիժոր։ Օհան Դուրյանն, ահա, այդպիսին է։

Դիրիժորի արվեստն ունի անսովոր առանձնահատկություն.

— Նա հա՞մբ է...

Ավելին՝ կանգնում է մեր առջև թիկունքով ու թարցնում է իր դեմքը։ Սակայն շկա ավելի խոսուն ու բազմաձայն» արվեստագետ, քան դիրիժորն է, և շկա ավելի վճիռ հայելի, քան նրա թիկունքը, ուր արտացոլվում են իր դեմքին ծնվող հարափոփոխ հույզերի-ապրումների բազմերանգությունը։

Օհան Դուրյանը, նոտակալի առջև նվազախմբի ու դահլիճի տերն ու տիրակալն է միշտ, և իր պրելված կամքի, իր ըստն տեմպերամենտի ուժով ստիպում է մեզ գնալ իր հետեւից՝ տանելով մեզ կախարդական մի աշխարհ, որ ստեղծել է սեփական երևակայությամբ ու հույզերով։

Անկասկած, այս գնահատության ակռնմքը Աճեմյան—Դուրյան համագործակցությունն էր «Անուշ» օպերայի բեմադրության ընթացքում (1969): Եթե առիթ ներկայանար, Աճեմյանը նույնպիսի ոգեշունչ խոսք կգրեր Միքայել Թավրիզյանի մասին, ակռնմք ունենալով իրենց համատեղ աշխատանքը «Դավիթ-Բեկ» օպերայի բեմադրության վրա (1956), ոչ պակաս հշանակալի երեսությ մեր թատերական-երաժշտական տարե-

դրության մեջ թայց ինձ հետաքրքրողը ոչ այնքան ոնչանակալի երևություն է, որքան կիրառումն օպերային ոճժխուրացին այն սկզբունքի, որ որդեգրել էր Անհեմյանը:

«Դավիթ-Բեկը» պատկանում է պատմա-հերոսական օպերայի ժանրին, որ ենթադրում է Հանդիսավոր-ստատիկ բեմ ու լինակներ՝ ժանրին հատուկ մեծաշուրջ պատկերացումներով։ Իրրեւ բեմադրիչ-մեկնարան Անհեմյանն օպերան բեմականորեն բացահայտել էր Հակառակ սկզբունքով՝ ստատիկային հակառակով զինամիկան։ Հիմա, շատ աւարիներ անց, այդ ներկայացումն աշքիս առաջ պատկերանում է իրրեւ կառուցվող և քանդվող, վերստին կառուցվող և վերստին քանդվող բազմամարդ կոմպոզիցիաների անընդմեջ մի շղթա։

Օպերայի երաժշտության ամենաուժեղ կողմը ժողովրդական ապստամբության թեման էր՝ քայլերգերով, խմբերգերով և ասերգությամբ։ Դա էր որոշել ներկայացման զլիսավոր շեշտը՝ ապստամբ ժողովուրդը համախմբվում է Դավիթ-Բեկի շուրջը։ Եվ, առաջ, տարերային մղումով մարդիկ գալիս են, համար գալիս, կուտակվում ալիք առ ալիք և դառնում զինավառ մի ամբողջություն։ Այս շարժումը, «Շախով-շունով իմ յարը» մեղեդու հիման վրա զրված հզոր քայլերգի ուղեկցությամբ, թողնում էր անդիմադրելի ներգործություն։ «Ժողովուրդն իրրեւ պատմության շարժիչ ուժ» միտքը բեմական-երաժշտական կատարյալ արտահայտությամբ։ Իրենց ոսկեղենն զարդերն ազատազրության պայքարի սեղանին դնող կանայք։ Մի ծերունի, որ տղային բներում է միացնելու ապստամբ զրբագնուին։ Ժողովրդական ցասում՝ «Դավաճան» Մելիքին մա՞ս, մա՞ս» խմբերգով, Հավատարմության երդում՝ սրերն ի մի րերեւով։ Թուսաց պատվիրակների զիմավորումն ազուհացով։ Խարույկի շուրջը բոլորած զորագումդը. ալ կարմիր տե-

սարան՝ զինավառ գյուղացիների կերպարանքներով։ Ողբերգական թեմա՝ զոհված հերոս իշխան Սանթուրի թաղումը, դարձյալ հոծ բազմություն։ Ազա կառւցը քանդվում է վերստին՝ այս անգամ ոչ թե իրրե վիշտ, այլ իրրե ռազմաշունչ ցաման արտահայտություն բռնցքվելու համար։

Ես, իշարկե, ներկայացումը վերլուծելու նպատակ չունեմ (որա համար պետք է երաժշտագետ լինել), ինձ զբաղեցնողը թեմադրական մտահղացման վերհանումն է։

Ես, որ 1956-ի Հունիսի 1-ին (հայ արվեստի և գրականության տասնօրյակի բացմանը) դիտելի եմ «Դավիթ-Բենեկ» Մեծ թատրոնում, կարող եմ միայն հավաստել երաժշտագետների տվյած գնահատությունները։ Ներկայացման հեղինակները զգուշ են մեներդիշների ու երգչախմբի էֆեկտիվ, արտահայտիչ (և ամեն անդամ՝ վերափոխվող, նորացվող) բեմական տեղաբաշխում, երաժշտության հետ հիանալի ներգաշնակող գնդեցիկ բնմավիճակներ» (երաժշտագետ Մարինա Սարինինա), «Ամենից ավելի ուշադրություն է գրավում մասսայական տեսարաններ կառուցելու ոնքինորական հմտությունը։ Դրանք ներդաշնակորեն առնվում են հոյակապ դեկորացիայի մեջ, որ ստեղծել է ականավոր նկարիչ Մ. Սարյանը և Եսայանի և Ա. Միրզոյանի համագործակցությամբ, և որը, այդ տեսարանների հետ, քանդակային և դռւնային միասնական կոմպոզիցիա է կազմում։ Երաժշտական-բեմական կուլտուրայի այն բարձր մակարդակը, որ թատրոնն ի հայտ բերեց «Դավիթ-Բենեկ» ներկայացման մեջ, գնդեցիկ սկիզբ եղավ հայ արվեստի և գրականության տասնօրյակի համար» (օպերային բեմադրիչ Բորիս Պոկրովսկի), «Մեմադրողները հատաքըրքական լուծումներ են զանու նրանք խուսափել են պայմանականությունից և կարողացել են մեծ ուժ հաղորդել թե»

առանձին հերոսներին, թէ՝ մասսայական առևտութաններին»
(ոռոմին կոմպոզիտոր Հիլդա Ժերար)։

Թատերախոսային այս բնորոշումները ճիշտ են, բայց չեն կարող հազորգել այն ոգեշունչ տրամադրությունը, որ լցրել-հագեցրել էր Մեծ թատրոնի վիթխարի հանդիսասրահը։ Պարտերում նստած, ևս դիտում էի ոչ այնքան բեմը, որքան ուսև և օտարերկրացի հանդիսատեսների խանդավառ դեմքերը, եթիւ հոգին ողողում էր ազգային արժանապատվության հայկական զգացումը։

Այդպիսի, գուցե միամիտ, բայց և վարար հրճվանք ևս մեկ էլ, նույն Մեծ թատրոնում, «Անուշի» բեմադրությունը դիտելիս եմ ապրել 1969-ի աշնանը՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի հորելյանական օրերին։ Այս անգամ ևս շրջապատված էի օտարերկրացի, ամենից շատ՝ գերմանացի հանդիսատեսներով։ Մեծ թատրոնը պարուրվել էր այն ոգեսրությամբ, որ մեծ արվեստը կարող է պարզեցնել։ «Անուշի» մեղեղիների հեղեղը՝ Օհան Դուրյանի մեկնաբանությամբ, կոռվա բնաշխարհի հզոր տեսարանները՝ Ռոբերտ Նալբանդյանի բեմանկարչությամբ, օպերայի բեմական գործողությունը՝ վարդան Աճեմյանի մտահղացմամբ։ ատեղծագործական հազվագեպօրեն գեղեցիկ հանդիպում։

Օտարերկրացու ականջին անժանոթորեն հրապուրիչ մեղեղիներ, երգեր (շեմ ուզում գրել՝ արիաներ), պարեր, պատկերներ, այրող-շիկացնող կովկասյան կրթեր ու զգացմունքներ, սեր և ատելություն, հարսանիք և առևանդում, դաշույն ու յափունջի, բոցեղեն սեր և ահեղ կործանում՝ մատուցված

¹ Մէջքերումներն արված են ովարդան Աննեյանը գիրք-ալբոմից, Երևան, 1978։

առաջնակարգ արվեստով, — այս ամենը թունդ էր հանում օտարերկրացիների սիրտը, և իմը նույնպես:

Իսկ երբ, ներկայացման ավարտակետին, շարականահյուս խմբերգերը սկսեցին լցնել դահլիճը ոչ թե բեմից, այլ թիկունքից՝ Մեծ թատրոնի ամենավերին պատշգամբներից, մեր օտարերկրացիները սարսուցին հուզմունքից: Այնքան անսպասելի, այնքան մեծ էր ազգեցությունը, որ «Նուշալուշ» վերջին հայունների հետ ժողովուրդը սկսեց բարձրանալ տեղից...

Հայկական որևէ ներկայացման այդպիսի միջազգային ընդունելություն ես չեմ տեսնել ոչ դրանից առաջ, ոչ էլ հետո Այդ հաջողության մեջ որքանո՞վ մեծ կարող էր լինել բեմադրական արվեստի բաժինը: Չէ՞ որ, ի վերջո, երաժշտական երկի բնմադրությանն է վերաբերում խոսքը:

Իհարկե, օպերայի բեմադրության մեջ դիրիժոր-ռեժիսոր հարաբերության հարցը զյուրին չէ որոշելու կյանքումս երկու օպերայի անթերի բնմադրություն եմ տեսել՝ Բիզեի՝ «Կարմելնը» և Գերշվինի «Պորդին և Բեսր»: Առաջինի կինոնկարը, երկրորդի բնմադրությունը Բեովինի «Կոմիշն օպեր» թատրոնում: Երկուսն էլ արված էին այնպես, որ օպերային վաղաժամութ պայմանականության հետք իսկ շունեին: Դրանց չէր կարող վերաբերել այն անեկդոտը, թե օպերան այն է, որի մեջ, երբ հերոսին դաշունահարում են՝ արյան փոխարեն արիա է հոսում:

Սրանց մեջ կար բարձրագույն որակի վոկալ արվեստ և այնքան ապրված խաղ, որ հատուկ է դրամատիկական թատրոնի կարգին դերասանին: Դա է իդեալը: Մի դեպքում («Կարմելն») ամենից առաջ դիրիժոր ֆոն Կարայանի անունն են տա-

լիս, մյուս զեպքում՝ ուժիսոր Ֆայլզենշտայնի: “Ի դնա՛ ու պարզի՞ր...

Ինչ վերաբերում է մեր «Անուշին» աղա այստեղ դիրիժոր Օհանն Դուրյանի դերը վեր է ամեն գնահատությունից: Իր ուն մեկը, որ տասնյակ տարիներ շփումներ է ունեցել լիատն-րական աշխարհի հետ, շեմ հիշում արտիստական այնպիսի ինքնանվիրում, որ հանդես բերեց Օհան Դուրյանն իրը և Անուշին երաժշտական մեկնարան և դիրիժոր: Նա շվարանեց անելու անհնարինը՝ մերժելու Գոհար Գասպարյանին և նախապատվությունը տալու երիտասարդ, քիչ հայտնի երգչուհի Ելենա Վարդանյանին, որ աշքի չեր ընկում կակմեի զարմանահրաշ գեղգեղանքներով, բայց իր թե վոկալ, թե զերասանական տվյալներով շատ հարազատ էր գեղջկուհի Անուշին նկարագրին: Սանր ընդհարում էր դա, փոխադարձ այնպիսի վիրավորանքներով, որ մտաբերել իսկ շեմ ուզում: Կարծեմ թե բանն ավարտվեց փոխադարձ զիջումով, որի զուգակշիռը դիրիժորի կողմն էր՝ առաջինը Վարդանյանը պիտի լինի, այլապես դիրիժորը հրաժարվում է գործից՝ «Անեք ճիպոտը¹... Յաշա՛, Ակո՛ւր հոս...», — վեճի թունդ պահին, մի խումբ ողեկավար ընկերներին ներկայությամբ, այդ թվում Հորելլանական հանձնաժողովի նախագահ, Հայաստանի կոմիտսի Կենակոմի քարտուղար Անտոն Թոշինյանի ներկայությամբ դիմեց նա դիրիժոր Հակոբ Ռսկանյանին:

Հիշում եմ, շշնչացի կողքիս նստած Աճեմյանի ականջին՝ կարող եր այսբան համարձակ լինել Զեր սկզբունքը գործի դնելիս, եղե՞ք էլի...

Ինձ վրա նետեց դժգոհ հայացք, թեկ ինքն էլ հիանում էր

1 Անշոշա՞ դիրիժորական ճիպոտը:

Օհան Դուրյանի մոլեգնությամբ, համամիտ էր նրան կառապելապես, բայց ձևանեց հօգուտ դիրիժորի:

Քաջությունն էր պակասում, թե շատ էր նրանեւատ, որ գրեթե նույնն է, բայց իր բնավորությունն էր: Քաջությունը չէր հասնում տաղանդի շափին: Տաղանդի և բնավորության զուգակշռի այս հարաբերությունն ի նպաստ արվեստի չէր:

Բայց վերադառնանք Օհան Դուրյանին: «Անուշ» ներկայացման երաժշտական տնօրինության մեջ նրա նվիրումը գործին արժանի է ծնրադիր հարգանքի: Դա երևում էր փորձերի ընթացքում, իսկ առաջին ներկայացումներին, — Երևանում, թե Մոսկվայում, — վերջին հնչյունների հետ մարդն սպառվում էր ֆիզիկապես: Բեմում, շիկացած հանդիսարանի ողջուններն առնելիս, կողքի մարդիկ բռնում էին, որ վայր շընկնի, իսկ նա ընկնում էր թևաթափ: Ի՞նչ շափով էր դա արտիստական խաղ կամ խաղ՝ էր, արդյոք, շեմ կարող ասել, բայց՝ կարող եմ վստահեցնել՝ դա ճշմարիտ արտիստական սրչանկությունն էր իր բարձրագույն պահին: Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ արվեստագնուը հեռացավ հայրենիքից՝ մնում է մի անպատասխան հարցում, որ ինձ համար նույնքան ցավալի է, որքան անըմբռնելի: Շատ բան այս աշխարհում ինձ համար մնաց անըմբռնելի, թող լինի այս մեկն էլ, եթե ըմբռնում շհամարենք այն, որ ազատություն, ոչ թե սովորական, այլ բացարձակ ազատություն էր ուզում արտիստը, և շղիմացավ... Եվ, որքան գիտեմ, «այստեղ» էլ երջանիկ շեղավ: Է՞հ, դա էլ էդպես... ինչ որ է, «Անուշի» ժամանակ նա երջանիկ էր արտիստական մեծ երջանկությամբ:

Ուրախ եմ ասելու, որ Օհան Դուրյանը մեծապես գոհ էր գործընկերոջից. «... Հաճելի անակնկալ էր, որ նոր ներկայացման մեջ ինձ բախտ վիճակվեց աշխատակցել մեր տա-

ղանդակոր ոհմիսոր վարդան Աճեմյանի հետ, որը ինձ մինչ այդ անծանոթ նոր լույս ու մեկնաբանություն ափոք օպերայի վրա: Հակառակ երբեմնի ստեղծագործական վիճաբանությունների (շատ բնական մի բան), Աճեմյանը շատ ճշմարիտ մեկնաբանեց «Անուշը» և նրա մատուցումը չափազանց համոզիլ է¹:

Ո՞րն էր այդ ոնոր լույսն ու մեկնաբանությունը: Երաժշտագետները դա նկատել են և արձանագրել: Ամենից լավ՝ «Սովետսկայա մուղիկա» հանդեսի քննադատ Ն. Շահնազարովան. «... Ծեմիսորը հրաժարվել է գոկհիկ-սոցիոլոգիական բմբանման այն նստվածքից, որի հետքերը եղել են նախորդ մեկնաբանություններում (այսպես, երկու ընկերների կոնֆլիկտը սրվում էր նրանց դասային պատկանելության տարբերությունից): ... Վ. Աճեմյանը հետևողականորեն ի հայտ է բերում օպերայի գործուն առանցքը՝ բացահայտում և սրում է հուզական հակադրությունները, ուշադրությունը կենտրոնացնում է կումինացիաների վրա, ուժեղացնում է զարգացող ողբերգության հիմնական փուլերի դինամիզմը: Այսպես, ոհմիսորը մեծ շանք է գործադրել, որ առաջին իսկ տեսարաններից ճակատագրական դատապարտվածության մթնոլորտ չստեղծվի. այդ տեսարանները, ինչպես պոհմում, անամպ են, լուսավոր... Բեկումը կատարվում է առաջին արարի շորորորդ պատկերում՝ վիճակահանության դրվագում: Պատահական չէ, որ սովորաբար առանձին արարով ներկայացվող Համբարձման տոնը այս բեմադրության մեջ եղանակում է առաջին արարը: Հենց այստեղ է սկզբնավորվում ողբերգական դատապարտվածության թեման, և այստեղ է

¹ Վարդան Աճեմյան, դիրք-ալբոմ, էջ 178:

ավարտվում հույսերի ու զվարթ խաղերի աշխարհը՝ ճակատագրական կանխագուշակումից հետո ողբերգությունն անկասելիորեն գնում է դեպի հանգուցալուծում։ Անուշին բաժինընկած վիճակի ցնցումն այնքան ուժեղ է, որ բեմում քարանում է ամեն ինչ։ Աղջիկները, նիշտ է, սկսում են աստիճանաբարար ուշքի գալ («Համբարձում յայլա» a capella խմբերգը), սակայն տեսարանի սկզբի անհոգ-ուրախ կոլորիտն այդպիսէլ չի վերականգնվում և չի կարող վերականգնվել։ Ներկայացման կուլմինացիոն երկրորդ պահը հարսանիքն է և Մոսկիի ու Սարոյի կոփս բռնկը, որի պատճառով նախկին ընկերները սիսերիմ թշնամիներ են դառնում։ Ռեժիսորը կիրառում է այն տպավորիչ հնարանքը, որ արդեն ժանոթ է առաջին արարից՝ սարսափից քար կտրած ամբոխին փորձում է հետպհետեւ ուշքի բերել քյոփան։ Վերջապես, երրորդ՝ թերեւ ամենաուժեղ ներգողծովթյան դրամատուրգիական շեշտը՝ ողբը Սարոյի վրա (որպու դին գրկած մայրը, սգավոր համագլուղացիներ, ներս վազող Անուշը, որ մեքենայորեն հյուսում ու քանդում է հյուսքի ժայրը և անզգա ընկնում Սարոյի կողքին)։¹

Այսուեղ նկատված են ներկայացման գրեթե բոլոր գըլխավոր շեշտերը։ Կա ոչ պակաս կարևոր մի հանգամանք ևս ոչ միայն օպերայի, այլև պոեմի մեկնարանության խնդիրը իրեւէ արվեստաբանական և գրականագիտական մեծ կարևորության խնդիր, ուստի ինձ անհանգստացրել է վաղուց ի վերև և դա ես արծարծել եմ «Թումանյանի աշխարհ» (1966) մենագրության էջերում, չանալով վերանայել ու հերթել եղած թյուր պատկերացումները։ 1968-ին, Թումանյանի ծննդյան

¹ Խոյժն առջ, էջ 178։

100-ամյակի նախորդ տարում, երբ ժագեց «Անուշ» օպերան վերստին բեմադրելու միտքը, ևս բռնկվեցի բանաստեղծականու երաժշտական արվեստի այդ գլուխգործոցը, մանկուց սիրած սակավաթիվ օպերաներից մեկը իմ հասկացած կերպով տեսնելու ցանկությամբ: Այն մտերիմ հարաբերությունները, որ տարիներ ի վեր ստեղծվել էին Անեմյանի և իմ միջն, ինձ թույլ էին տալիս համառորեն հուշել իմ համոզումները: Անեմյանը, որ առանց այն էլ սիրում էր լսել իր առաջիկա աշխատանքների շուրջն ամեն մի դատողություն վարիչ բան, հաշվի կառներ թե ոչ մեծ մասամբ հաշվի չեր առնամ), ինձ լսում էր սիրահոգաբ: Ահա այդպիսի նպաստավոր պայմաններում ևս նրան շարունակ այն միտքն էի հուշում, որ ներկայացումը պետք է մոտեցնել գրական հիմքին, հրաժարվել մինչև այժմ եղած փարթամությունից, ճոխացումից, վնասականալ զնալի նախնականություն, իտալական վերիստական օպերայի սկզբունքներով: Այդ նպատակով զըրդեցի, որ իր և բեմանկարի նորերու նալբանդյանի հետ մեկնենք Դսեղ, այնտեղից էլ բարձրանանք սարը՝ Թոշաքար, ահանենք ուրիշերը, որ նրանք ներշնչվնեն, ինչպես բանաստեղծն է Ներշնչվել:

Քընում է զըրդարը ազմուկը բինի,
Բարձրանեմ է ծուխն իմ ծանոթ ուրիշից,
Ու բոլորն ահա նորից կենդանի,
Եղուամ են աշխատյժ վազորդյան մութից,
Ու թարմ, ցողապատ չեաների լանջում...
Ահա... ակա՞նց արա, — հովիզն է կանչում...

Դսեղ մեկնել հաշողվեց, մի զիշեր էլ գյուղում մնացինք, բայց Թոշաքար բարձրանալ շհամաձայնեց ճանապարհի ղըժ-

վարությա՞ն, թե ժամանակ չոմենալու պատճառով՝ ինչ որ
տեսանք հերիք է:

Իրոք, այդ երանելի ճամփորդությունն իր հետքը թողեց
(չեզ կարող չթողնել) ապագա բնմագրության, հատկապես
նկարչական շատ գեղեցիկ ձևավորման վրայ Բայց իմ հե-
տապնդած «վերիդմին» հասնելու համար պետք էր Քոշաքար
բարձրանեալ, շատ էր պետք, բայց չհաջողվեց: Ճիշտ է, ինքն
ասում էր, թե լավ հասկանում է ինձ և համամիտ է, բայց մի
տեսակ կիսարերան էր ասում...

Հնից հետո հնարավոր սխալները կանխելու նպատակով
և սույնիուկ մի հողմած հրապարակեցի «Անուշի» մեկնարա-
նության շուրջը վերնագրով¹: Գրա մեջ ես այն էի ասում,
թե չի կարելի Սարոյին գեղեցկացնել, իսկ Մոսուն տգեղաց-
նել, բանի որ սպանմը ոչ թե արդարացնում, այլ միայն բա-
ցարուում է հերոսների վարքագիծը, ցույց է տալիս հերոսնե-
րի ոչ թե լավ ու վատ լինելը, այլ այն, թե ինչ է կատարվում,
և ը մարդկանց սահացնորդում հեռոշոշե բանականությունը,
ու Ա բորբոքուն կրթերը: Ահա-թե ինչու պոեմում ոչինչ չի
փոխվի, եթե Սարօն ու Մոսին փոխեն իրենց տեղերը: Տար-
բնրությունը ոչ թե նրանց բարոյական նկարագրի, այլ վիճակ-
ների մեջ է: Չի կարելի բանն այնպիս ներկայացնել, թե Մո-
սին «չարիք է նյութում տանուտերի». Հովանավորությամբ»,
քանի որ դա գուհիկ-սոցիոլոգիական մեկնարանության հետքն
է օպերայի բնմական վերաբարտագրության մեջ: Չպետք է կըրկ-
նել կոպիտ սխալը, ցույց տալով, թե ինչպիս ողարանակալ
Մոսին Սարոյին սպանում է հենց այն պահին, երբ հալածա-
կան հերոսը չուր է խմում աղբյուրից: Հակառակ գնալով մեր

1 Ա. Հակոբյանը, ժամանակի հետ (Հողվածներ), Երևան, 1976, էջ 209:

ժողովրդական բարոյախոսությանը (օձը որ օծ է, ջուր խմողին չի կծում), Մոսին երևում է իրրե բարոյական վասթար նկարագրի տեր մարդու Զպետք է այնպես երկա, թե «Հարսանիքի վայրը ոչ թե գյուղական գլխատունն է, այլ Սունդուկյանի Թիֆլիսը հիշեցնող մի տուն»: Եվ այսպես նաև ուրիշ, նվազ կարևոր, դիտողություններ:

Հարկ եմ համարում ասել, որ Աճեմյանի բեմադրության մեջ հիշածս թերություններից ոչ մեկը չկար, բացի մեկից (զբա մասին՝ քիչ հետո): Առանց համեստություն խաղալու այն էլ ասեմ, որ զբանը շենին լինի առանց իմ հոգվածի է, բեմադրիչի անթերի ճաշակը թույլ չեր տա, որ լինեին, իմ դրածը թերեւ միայն ամրապնդած լիներ նրա կողմնորոշումը: Դա իրոք բեմադրական արվեստի մի դասական օրինակ է, որ մինչև այժմ էլ ասկրում է բեմում, թեև ժամանակի ընթացքում «մաշվելու» անխուսափելի հետևանքներով:

Շատ բան կարելի է ասել այդ ներկայացման մասին, կարելի է նույնիսկ վերաբարադրել նրա «ոռեժիսորական պարտիտուրը», բայց մեր շաբադբանքում դա չառ տեղ կդրավեր կուղենալի, սակայն, մտարերել ներկայացման հուզական բարձրակետերից մի քանիսը, որ մեր զրույցն անառարկա լինի և գնահատությունները հիմք ունենան:

Նախ կոխի շրջադարձին տեսարանը: Բեմադրիչն այնպես էր արել, որ Մարոյի ողբերգական մեղքը՝ միամիտ ընկերոջը զետնելու արարքը, հիմնավորվի դրամատիկական թատրոնին վայել հոդերանական հիմնավորմամբ և հավասարիությամբ՝ «աշքերի առջե մըլարը պատեց, մոռացավ ընկեր, աղաթ ու աշխարհքու Համարյա թե հետք չեր մնացել օպերային սկայանականությունից: Իրապատում տեսարան՝ իրական ներդործություն:

Մարտիի սպանության դրվագը, Արդեն հիշեցրի,
որ նախորդ բնմադրության մեջ կանարվում էր ոչ այլ ինչ,
քան դարձնակալ՝ պահություն, որ ի շիք էր դարձնում դըր-
վագի դրամատիկական բովանդակությունը: Այստեղ դա ձեռք
էր բերվում: Վրեժիսնդիր Մոսին շուզենալով, ներքին մեծ դի-
մադրություն: Հաղթահարելով, կարծես հակառակ իր կամքի
է գործում ոճիրը: Երբեմնի «ախաղեր-տղերքը» հայտնվում են
դեմ Հանդիման: Ջինավառ Մոսու առաջ կանգնած Սարոն մի
պահ նայում, է մահվան աշքերին: Աշխարհ է գալիս ու անց-
նում ախոյանների մտքով՝ իրենց մանկությունը, երբեմնի
անստվեր ընկերությունը: Մոսին վարանում է, բայց վրեժի
մոլուցքը, գեղջկական ասպետության՝ աղաթի ուժը, հաղթող
են դուրս գալիս: Նա հրացանն առաջ է մեկնում մի ձեռքով
և կրակում առանց նշան բռնելու, ախոյանին չնայելով ան-
գամ:

Կատարվեց այն, ինչ պետք է կատարվեր:

Նվա մի հուզական բարձրակետ: Սարոյի մայրը ողբում է
որդու դիակի վրա: Հեռվում երեսում է սպանության բոթն
առած Անուշը: Մոտենում է ոչ թե իրրև կենդանի արարած,
այլ իրրև ուրիշ: Հուզմունքից սառած համագյուղացիների
(նաև հանդիսատեսի) աշքի առաջ գալիս կանգնում է սիրեց-
յալի դիակի մոտ՝ նայում ովինչ լուսնող աշքերով: Հանդիսատ,
անշտապ քանդում է հյուսերը և մեկ էլ հանկարծ հասակով մեկ
տապալվում է գետնին: Անուշն այլևս այս աշխարհում ապ-
րողը չէ: Ահա ձեզ մարդկային վշտի ցնցող արտահայտու-
թյուն և ցնցող ներգործություն:

Իսկ թերություն համարում էի (հիմա էլ այդպես եմ մտա-
ծում) հարսանիքի պատկերի անհարկավոր շքեղությունը: Իմ
հավանած ովերիզմից դիրքերից ես ձգտում էի համոզել, որ

այս «Անուշը» լինի բացարձակ ճշմարտացի ներկայացում՝ միջավագրի, չկնառավորման, նիստուկացի հավասարի պատկերմամբ։ Սիսլդեռ Հարսանիքի պատկերում գեղանի աղջիկների մի մեծ խումբ, ճերմակ շորերով, ձևոքներին մի-մի մոմ բռնած, պարում են այնպիսի «բալետային» հմտությամբ, որ իր մեծաշաք հանդիսակորությամբ սաղ էզար պալատական, բայց ոչ դեղջկական միջավայրին։ Տեսաբանը բանդում էր այն, ինչ այնքան հմտորեն արված էր հանուն կենսական հավաստիության։ Մի անգամ, ներկայացման վերջին փորձերից մեկի ժամանակ ևս չթարցրի իմ վերաբերմունքը՝ էրեկլէթառավորի պալատական խնջույքն սկավեց...

Ի պատասխան՝ Անեմյանի խեթ հայացքը և բարկացած խոսքը՝ օպերային պայմանականությունից բան չե՞ս հասկանում։

Ես առարկեցի, և ապարդյուն։

Բայց, ինչպես ասում են, հաղթողներին չեն դատում, իսկ ներկայացումն, ամբողջությամբ առած, իհարկե՛, հաղթանակ էր։ Անվերապահ հաջողություն, ինչպես պետք է կոչել այն հաջողությունը, որ գրկաբաց ընդունում են և՛ մասնագետները, և՛ ժողովուրդը։ Ոչ թի «Պեպո» ներկայացման հաջողությունը, որ մասնագետների կարծիքով բնմական արվեստի մեծ արժեք էր, բայց հանդիսատեսային մեծ ընդունելություն շգտավ։ Ոչ էլ «Փորձապաշտ» ներկայացմանը, որ բնմական արվեստի աշթի ընկնող արժեք չէր, բայց հանդիսատեսն ընդունեց այնպէս, որ ցուցադրով մի բանի հարյուր անգամ։

«Անուշ» ներկայացման տեղն Անեմյանի ստեղծած մեծ արժեքների կողքին է, արժեքներ, որոնց կհանդիպենք այս շարադրանքի հետագա էջերում։



ԱՐԿԵՐԴԻ- ՄԱՍ

ԹԵ ԱՐՎԵՍՏԱԴԵՏՆ ԽՆՁՊԵՍ ԼԲ
ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՎ ՊԱՏԿԵՐՈՒՄ ԻԲ
ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՅԱԼԵ

Այստեղ ես կպատմեմ Աճեմյանի այն բեմադրությունների մասին, որ նա ստեղծել է Հայ դասական երկերի, պատմական պիեսների, հեղափոխությանը նվիրված գործերի հիման վրա։ Դրա հետ միասին, կերպայացնեմ արվեստագետի կյանքի անցած-զնացած այն դրվագները, որոնք ուժեղ ենիք են դրել իր բնավորության վրա։

Ասեմ, թե ինչու դասական երկերի բեմադրությունները ես եմ Հայաբում ևմ պատմական անցյալի գեղարվեստական

պատկերում և իմաստավորում։ Պատճառն այն է, որ դասական երկ բեմադրելիս Աճեմյանը, այլևայլ խնդիրների հետ, հետամուտ էր պատասխան տալու նաև այն ժարցին, թե իր ժողովուրդն ինչպե՞ս է ապրել ու գործել, սիրել ու ատել, վըշտացել ու հրճվել, խռուել ու շարժվել պատմական անցյալի տարրեր ժամանակներում ու վայրերում։ Կենցազային, գրեթե ազգագրական ճշտությամբ Դիտակցված նպատակ էր դա, թե հնթագիտակցորեն հետապնդված խնդիր՝ շպիտեմ, բայց որ այդպիս էր իրոք՝ անկասկած է։

Անարդար բան է, երբ գրական երկին է վերաբերում խոսքը՝ մենք դա համարում ենք կյանքի գեղարվեստական հետազոտություն, բայց երբ բանը գալիս է բեմադրական արվեստին՝ շենք համարում։ Բեմադրիչը շունի հեղինակային իրավունք, դա գրողին է պատկանում։ Բայց չէ՝ որ ներկայացնումն ուրիշ, գրականությունից (այիսահց) տարրեր որպակ է, ուրիշ արվեստի գործ, որի գրական հիմքի հեղինակը գրողն է, բեմադրության հեղինակինը՝ բեմադրիչը, դերինը՝ դերասանը։ Պիեսի հեղինակը գրում է, թե ի՞նչ պատահեց, ի՞նչ կատարվեց, ի՞նչ ասվեց, ոչ թե ինչպե՞ս պատահեց, ինչպե՞ս կատարվեց, ինչպե՞ս ասվեց։ Դա արդին գերասանի և բեմադրիչի գործն է, որ նույնպես կյանքի հետազոտություն է, իմաստավորում և մեկնություն։ Եթե այդպես լիներ՝ թատրոնի արվեստն առհասարակ իմաստ չեր ունենա. կարելի է պիեսը վերցնել ու կարդալ։ Հակառակ դեպքում թատրոնը գոյության իրավունք էլ չէր ունենա։

Թե ինչպես է մի որեկ ազգ խոսում ու շարժվում, նստում-վեր կենում, արտահայտում իր կրթերը՝ ոչ մի արվեստ ցուց չի տալիս այնքան առարկայորեն շոշափելի, որքան թատրոնը Աճեմյանն այդ արվեստի վարպետն էր։

Մեացած ամեն ինչից բացի, ինձ զարմացնում էր այն իմացությունը, առավել ևս ևնթագիտակցական կոահումը՝ ինտուիցիան, որով նա կարողանում էր պատկերել, թե ինչպես են ապրել, գործել, նստել-վեր կացել, ինչպես են խոսել անցյալ դարի պոլսահայերը («Մեծապատիվ մուրացկաններ», «Առաջնարույժն արևելյան», «Եռդոքորթը», «Պաղտասար աղբար», «Կարինե» ներկայացումները), թիֆլիսահայերը («Էլի մեկ զան», «Եվլայլն, կամ Նոր Դիոգինես», «Ամուսիններ», «Գիւլու» ներկայացումները), Բարվի Հայությունը («Պատովի Համար», «Թառա»), Շամախու Հայությունը («Նամուս», «Զար ոգիս»), Լոռվա գյուղացիությունը («Ժայռ»): Եվ բոլորն էլ՝ կատարելապես հավաստի ու համոզիլ, ամենանուրը մանրամասերով, ճշմարտապատում և գեղարվեստորեն արտահայտիլ, ամեն մի ազգային միջավայրի լեզվի ու կենցաղի նուրբ զգացողությամբ: Ահա սա է, որ իրավունք է տալիս խօսելու հայ ժողովողի պատմական անցյալի պատկերման մասին նաև այն դեպքերում, երբ Աճեմյանը բեմ է հանել պատմական դրամայի ժառնշվող պիեսները:

Իհարկե, Աճեմյանը նույնն էր անում, ինչ որ բեմադրիչներն առնասարակ՝ գրական երկի գաղափարական մեկնություն, դերաբաշխում, աշխատանք սեղանի շուրջը, աշխատանք դերասանների, բնմանկարչի, երաժշտի հետ, փորձեր գիործասենյակում և բեմում...

Ո՞ւ մի տարբերություն:

Բայց չէ՞ որ բոլոր նկարիչները, երաժիշտները, գրողները՝ շնորհալի թե ապաշնորհ, նույնն են անում, արդյունքն է, որ շափականց տարրեր է լինում. նրանց տաղանդի, ներշնչման ուժի, ասելիքի մեջ է տարրերությունը:

Աճեմյան-բեմադրիչն ոմեր մի հատկանիշ էլ, որի ըմ-

բանման բանալին կարելի է դանել վսելուող Մեյերհոլդի ասուլիններից մեկում։ «Հայ ուժիսորի մեջ պատճեցիալ կերպով նստած է դրամատուրգը։ Զի որ մի ժամանակ, դա միենույն մասնագիտությունն էր, հետո միայն դրանք բաժանվեցին... Բայց դա սկզբունքային բաժանում չէ, այլ տեխնիկական անհրաժշտություն, բանի որ թատրոնական արվեստը բարդացավ... Բայց էությունը նույնն է։ Անտոի և ոսմիսուրացի արվեստը հեղինակայինն է և ոչ թե կատարողական»¹։ Այս առումով ևս՝ ոճմիսորական դրամատուրգիայի առումով, Անհմյանի ներկայացումները կարելի է կոչել հեղինակային։ Այնպես որ իր լավագույն ներկայացումների ազդագրիցում Անհմյանը կարող էր նշել՝ «Ներկայացման հեղինակ վարդան Անհմյան», ինչպես վարդում էր Մեյերհոլդը։ Զի նշել, բայց կարող էր՝ լինակատար իրավունքով։ Դրա համար կա մեկ ուրիշ հիմք ևս, ոչ պակաս կարենոր, զուտ մասնագիտական վարդեառությունից էլ կարենոր մի գաղտնախորհուրդ շնորհ, որ Անհմյանինն էր միայն։ Դա դժվար է բացատրել, բայց դրա արտահայտությունները զյուրին է ցույց տալի նա, Պոլսում երբեմն շեղած մարդ, կարող էր Պոլիսը ներկայացնել այնպես, որ շարժեր բնիկ պոլսացի Զապել Սաալյանի զարմանքը («Մեծապատիվ մուրացկանները»)։ Կամ, չին Թիֆլիսը շտեսած մարդ, նրա կոլորիթը կհազորդեր այնպես, որ քեզ կզգայիր Ստեփանոս ներսիսյանի «Թիկնիկ Քուռ գետի ափին» պատկերի միջավայրում («Եվային, կամ նոր Գիոգինես»)։ Մեկ էլ, որտեղից որտեղ, կոռվա զյուղացիության պահպանը ու շարժմունքը, խոսելու և նստելու ձեզ ցույց կտար այն-

¹ «Teatr», №.. 1980, էջ 284:

պիսի անթերի հարազատությամբ («Ժայռ»), ասես ժանկությունը կոռումն էր անցկացրել...

Ի՞նչարկեն, այդ արդյունքը ձեռք էր բերվում դերասանների շնորհիվ. «Մեծապատիվ մուրացկանները»՝ Զոհրաբյանի, Ամերիկյանի, Արուս Ասրյանի, «Ժայռը»՝ Դուրգեն Ճանիբեկյանի՝ Ժայռակոփի Գրիգոր աղայովի, Վաղինակ Մարգունու՝ Բաղդասար ամիկով՝ այնքան հարազատ կոռվա գյուղական միջավայրին, ասես թումանյանի գեղջուկներից մեկն է Մտել բեմ, գյուղացիների մյուս գերակատարումները՝ վերստին մի հրաշալի անսամբլը: Այնպես որ, ևս մտադիր շեմ դերասանին կողոպտելով, նրա վաստակը վերագրել բեմադրիչին: Դերասանն է թատրոն կոչված երեւյթի առաջին դեմքը, և առանց որակյալ դերակատարման որակյալ ներկայացում գոյանալ շե կարող! Բայց ինչո՞ւ նույն այդ դերասանները մեկ ուրիշի բեմադրության մեջ այդպիսի գեղարվեստական արդյունքի չէին հասնում: Շատ պարզ: Աճեմյանն էր նրանց հասցնում անձնավորման արվեստի այդպիսի մակարդակի: Կա՞ մեկը, որ չվկայի իրողությունը՝ փորձերի ընթացքում նա մի առ մի խաղում էր բոլոր դերերը: Մասնագիտական լեզվով դրան ասում են «ցուցը տալու» Ականատեսները գիտեն, թե նա ինչպիսի նրբությամբ և թատերայնորեն վառ «խաղում» էր բոլոր դերերը՝ ծերծերուն օրիորդի դեր լիներ թե քաջակորով հերսուի նա կարծես դրանով իր կարոտն էր առնում դերասանական արվեստից: Հիշեցնեմ, որ շահել օրերին Լինինականի թատրոնում նա խաղացել էր մի քանի դեր, և շատ հետաքրքրուիր: Կուղենայի մտարերել հետեւյալ դեպքը: 1956-ի ամռանը, հայկական արվեստի տասնօրյակի օրերին, Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի Փիլիպի շենքում ցուցադրվում էին Սունդուկյանի թատրոնի ներկայացումները: Դրանցից

«մեկը «Ժայռն» էր, ցերեկային ներկայացում։ Դատարկ ճեմարածում զրուցում էին Հրաշյա Ներսիսյանը, Ավետ Ավետիսյանը և Աճեմյանը։ Դահլիճից ծափերի ու կանչերի ձայներ հասան ճեմարած։ Պարզ էր՝ հանդիսասրահի վերաբերմունքն էր Զանիբեկյանի խաղի նկատմամբ։ Աճեմյանի նախանձը շարժվեց՝ թող իմ բոյն այսքանով (ցույց տվեց մի թղաշափ) բարձր լիներ՝ ևս դերասան կլինեի և ձեր հերը կանիծնի...»

Հրաշյա Ներսիսյանն ի պատասխան՝ դե հիմա էլ անիծում ես, էլի՞...

Ի՞նչն էր հուզում Աճեմյանին, շգիտեմ. այն գիտակցությունը, որ թատրոնի առաջին դեմքը, ինչ ուզում ես արա, դերասանն է, ա՞յն, որ հասակի կարճության պատճառով իր մեջ մեռնում է տաղանդավոր դերասանը, թե՞ այն ողառն իրողությունը, որ ինքն այնքան մեծ գործ է տեսնում թատրոնում, իսկ ծափերն, ահա՛, բաժին են ընկնում դերասանին...

Ինչ որ է, փորձերն էին Աճեմյանի դերասանական տվյալների դրսերման միակ ասպարեզը։ Պաղտնիք շպիտի բացեմ՝ զա էր պատճառը, որ նրա փորձերը դիտվում էին ավելի հաճույքով, բան պատրաստի ներկայացումները։ Այն էլ կարելի է ասել, որ ցցույց տալու մեջ բեմադրիչը երբեմն շափն անցնում էր՝ դերասանին պարտադրելով կերպարի սեփական պատկերացումը, նրան ենթարկելով ռեժիսորական գերիշխանության։ Բայց դերասանական մեծ անհատականությունների հետ նրա աշխատանքը մեծ էլ արդյունք էր տալիս՝ առանց անհատականությունը ճնշելու ինչելու օրինակներ կան. Հրաշյա Ներսիսյան՝ Անդրեաս Էլիզբերյան, Պաղտասար աղքար, Մեր-Դրեգոր, Ավետ Ավետիսյան՝ Սաղաթել, Սարգիս («Էլի մեկ զոհ»), Լուս Զոհբարյան՝ Արիսողոմ աղա, Թորի

թելը («Տասներկուերորդ գիշեր»), Յոլակ Ամերիկյան՝ Մանուկյանի աղա, Գուրզեն Զանիբեկյան՝ Գրիգոր աղա, Վառավին («Դատական գործ»), Թագեսոս Սարյան՝ Մինթու («Մորգանի խնամին»), Սուրաբթով («Էլի մեկ զոհ»)... Սրանք դեռ դասական խաղացանկում:

Եվ բոլոր այդ նշանավոր անձնավորումների մեջ Աճեմյանի միջամտությունը գուրս է կասկածից: Գրաքննադատ Սուրեն Աղաբաբյանը մի անգամ այնքան լավ ասաց, որ մնացել է Հիշողությանս մեջ՝ ևս Աճեմյանին տեսնում եմ Զանիբեկյանի Գրիգոր աղայի կողքից բայց ելիս:

Հիշածս բոլոր ներկայացումների մասին ևս ժամանակին գրել եմ «Կլասիկան և մեր օրերը. Վարդան Աճեմյանի արվեստը» գրքում (1962): Այնտեղ դրանք նկարագրված վերլուծված են կերպար առ կերպար, բեմավիճակ առ բեմավիճակ: Այնպես որ, կրկնելու կարիք չկա: Միայն «Պեպոյի» մտախն է, որ խոսք չկա այնտեղ, որովհետև այդ պիեսը բեմադրվել է ավելի ուշ՝ 1966-ին: Դա էլ այստեղ կդարձնեմ թատերագիտական վերլուծության առարկա՝ նույնպիսի, զուցեն ամփելի մանրամասնությամբ, քանի որ դա հանգուցային տեղ է գրավում Աճեմյանի ստեղծագործության, «Պեպոյի» ամբողջ բեմական պատմության, ժամանակակից հայ թատրոնի պատմության մեջ: Եվ ապա՝ այդ ներկայացումը դրամատիկական ճակատագիր ունեցավ, որ կարուտ է մասնագիտական բացարության:

Սկսեմ հեռվից:

Չեմ տեսել մի արվեստագետ, որ այնքան մտատանջվեր, նույնիսկ վախ ապրեց որևէ գործ սկսելիս, որքան Աճեմյանը ինչքան էր տալիս-առնում ինքն իրեն, ընկնում տարակուանքների դիրկը՝ դա մեկ իրեն է հայտնի, մեկ էլ իր վատա-

ՀԵՇԱԾ ՎՐԵՄՆԸ ՎԱյելող մտերիմներին: Դա իբ բնավորության հիմնորոշ գծերից մեկն էր, որ ինչքան էլ թարցներ, երևում էր: Խսկական արվեստագետի հատկանիշը: Սանրութեթե էր անում հղացումները, ստուգում իրեն, իր մտածմունքների դուրը կիսարաց աննլով մոտիկ մարդկանց առաջ: Սրանցից մեկը լինելով, ես դա կվկայեմ այս անդամ ՊՊեպոյից առիթով, հետո կզան ուրիշ առիթներ ես:

Բայց դրանից առաջ՝ Աճեմյանի վերաբերմունքի մասին Սունդուկյանի նկատմամբ: Ասել, թե նա մեծապես գնահատում էր մեծ թատերագրին, նշանակում է քիչ բան ասելու հմձեռքին է Սունդուկյանի ծննդյան 150-ամյակին նվիրված երեկույթում (1976, մայիսի 27) Աճեմյանի կարդացած նառն իր իսկ ձեռագրով. «Ես իմ կարճառոտ ելույթում կուզենայի առանձնաշեշտել մի հանգամանք, որ ինձ՝ Սունդուկյանի պիհեսները բեմադրողիս, մշտապես զրադեցրել է ու հիացրել: Դա այն անքակտելի, այն օրգանական կապն է, որ գոյություն ունի Սունդուկյանի անձնավորության և ստեղծագործության միշտ... Ինձ թվում է, որ եթե Սունդուկյանը մայրական կաթի հետ յուրացրած Ալիներ բարության և մարդկայնության ավանդները, եթե շունենար հոգու մաքրություն և գեղեցկություն, ապա նրա ստեղծագործությունը չէր կրի այդ սրանչելի հատկությունների կնիքը: ... Սունդուկյանի դրամ ատուրգիան ժամանակի ռուս և ելքոպական դրամատուրգիան յուրացրած հեղինակի ստեղծագործությունն է: ... Դա լեզվական և դրամատուրգիական կուլտուրան է այն հեղինակի, որ տիրապետել է ութիւնի լեզվի, որ երիտասարդ հասակում հղել է Պետերբուրգում տրվող ռուսական և ֆրանսիական ներկայացումների մոլեռանդ հանդիսատեսը»:

Այս վերաբերմունքն Աճեմյանը Սունդուկյանի նկատմամբ

ուներ վաղուց ի վեր: Սունդուկյանը նրա աշքում մարդկային հոգու մաքրության կատարելատիակ էր, վարպետության առումով՝ ամենաբարձրը, հայերեն գրված դիալոգի ամենահմուտ վարպետը:

«Պեպոն» բեմադրելու պատասխանատվության շափը դուրս էր սովորականից. գործ, որ այնպես շունդալի մուտք էր գործել հայ հասարակական և գեղարվեստական կյանք 1871-ին, դառնալով հայ թատրոնի մշտական ուղեկիցը. այն «Պեպոն», որով սկզբնավորվել էր հայ խորհրդային թատրոնը 1922-ի հունվարի 25-ին, անհախաղեապ հաջողությունն գտել Համբ Բեկնաղարյանի 1935-ի կինոբեմագրությամբ, պետք է 1966-ին բացեր Սունդուկյանի անվան թատրոնի նորակառուց շենքը՝ երևույթին վայել մակարդակով:

Դրա համար պետք էր հնօրյա պիեսի վրայից սրբել թատերական ավանդների տասնյակ տարիներով կուտակված փոշին, գործը հնչեցնել արդիաբար թե ձևով, թե բովանդակությամբ: Դժվարին խնդիր բոլոր առումներով:

Դա Աճեմյանին հանգիստ չէր տալիս:

Դեռ 1959-ին, երբ թատրոնի հին շենքը կանգուն էր, ուստի և իսուր չէր կարող լինել նոր շենք կառուցելու և նորակառույցը «Պեպոյով» բացելու մասին, ասաց մի օր, թե գիշերը շի բնել, մտածել է «Պեպոյի» մասին. ուզում է բեմադրել չահել դերասաններով, կենցաղային տարբերից մաքրե-

¹ Մատրեներ. Թատրոնի շենքը 1962-ի օգոստոսին այրվել էր, որի որոշմասով՝ զրկվել չորս տարի թատերախումբը դատապարտվեց անօթեան և Նվազ արդարավոր գործունեության, շատագից նրա կյանքի ընականոն ընթացքը: Դա ժաման անդրադարձապ նաև Վարդան Աճեմյանի առեջտագրծական մակատագրի վրա, հասուն վարպետի կյանքից իւրեւով մի քանի թանկագին տարի:

յով՝ մինչև Հիմա Կեկելին բանի տեղ չեն դրել, մինչդեռ տրագեդիան էստեղ է, գիտե՞ս ինչ է Կեկելը, պիտի նայես ու ցնցվես:

Գրառմանս մեջ պահպանվել է բնմագրիչի երկընտրանքն է՝ բնմագրելու ուրիշ գործերից հավելումներ անելով, որ հետարրիր դառնա, թե՞ մաքուր ակադեմիական, ինչպես պըրված է:

Ես հօգուտ երկրորդի խոսեցի՝ Կոմեղի Յարնսեղը Մոլիերի տեքստին ձեռք կտա՞ կամ Փոքր թատրոնը՝ Օստրովսկու տեքստին:

Ես էլ դրան եմ հակված, — ասաց, — ես համաձայն չեմ թեկնազարովի արած փոփոխություններին, որ դու պաշտպանել ես... (Աճեմյանը նկատի ուներ իմ «Հայ գրականությունը և կինոն» ուսումնասիրությունը)¹: Ես պաշտպանվեցի՝ դե, զա կինոն է, ուրիշ արվեստ...

Մի անգամ էլ, գրառմանս մեջ նշված է՝ 1961-ի գեկտեմբերի 21-ին, ասաց միանգամայն որոշակի. Ներկայացման սթեման պետք է լինի՝ մարդն աշխարհի մեջ, աշխարհի դիմաց։ Պետք է աշխատի ոչ թե Բարեկեն Ներսիսյանի, այլ եռքբեն Արքահամբյանի հետ, մյուսներն էլ պետք է նոր սերնդի դերասաններ լինեն։

Այս կողմնորոշման պատճառն ինքնին հասկանալի էր. ուզում էր գործ ունենալ պիեսի բնմական ավանդներից ազատ դերասանների հետ։

1962, հունվարի 25:

Վերագարձել է Մոսկվայից, ուր զիտել է մի ամբողջ շարք ներկայացմաններ, ոչ մեկը չի հավանել (զա անսպասելի շեր»

1 «Հայկական կինոարվեստը», Երևան, 1958, էջ 52:

Համար քիչ բան էր հավանում առհասարակ): Վերստին «Պեպոյի» մասին. «Պետք է ուրիշ կերպ սկսել. Քուոք պիտք է միշտ երևա, Պեպոն պիտի գա նավակով, Կեկելն ուզում է իրեն Քուոք գցել, բա՛...», ոչնքան ասում են՝ հալիլեր. Զիմզիմովի տունը շատ հայելիներ կլինեն ու երբ Պեպոն մտնի՝ արտացոլումներ կլինեն, կթվա թե շատ Պեպոներ են խոսում:

1965-ի վերջին ամիսները «Պեպոյի» բեմադրության թեժօրերն են: Անվերջանալի փորձեր: Սուրբ քննադատական վերաբերմունք հին բեմադրությունների նկատմամբ, հատկապես էփեմիայի և Սամսոնի միջև ինտիմ կապ տեսնելու ռոեֆիզորական գյուտերի», որ գոհնիկ են, անհարիր Սունդուկյանի անթերի ճաշակին, ինչպես և Կեկելի ու Կակուլու հարաբերությունների անհարկի մերձեցման, որ ամենից ավելի ընդգծված է կինոնկարում:

1965, դեկտեմբերի 16:

Փորձից հետո բացված ասուլիսի արանքում անսպասելիորեն սկսեց կարդալ Սունդուկյանի սիմ մահն ու թաղումը», որ սովորաբար «կտակ» են կոչում: Խորապես հուզիչ մարդկային մի փաստաթուղթ՝ հենց զուսպ ու հանգիստ գրված լինելու պատճառով. մահվան հետ հաշտություն կնքած, մահվանը խաղաղ ու անքեն աշխով նայող, մաքուր խղճով ապրած և հանգիստ խղճով մեռնող իմաստուն ծննդունու վերջին խոսքը մերձավորներին ու հեռավորներին, համեստափայլ պատվիրաններն իր թաղման մասին: Առանձնապես հուզիչ են Մեծ ծերունու հրաժեշտի խոսքերը.

«Մնա՞ք բարով, սիրելի մարթիք, ինչ ասկի, ցիզի ու հավտի էլ ըլիք:

Մնա՞ս բարով, իմ սիրած թիֆլիզ բաղար:

Մնա՞ս բարով սիրելի ու պաշտելի ասկ. աստուծ վաթա-
նիդ արժանի անե:

Դիմունքիդ սերը սրտումս խուռը թաղած տանում իմ հիդս:
Մնա՞ք բարով:

Աճեմյանի խորազգաց ընթերցումն ինձ շատ հուզեց: Այն-
քան, որ առաջարկեցի վերջին հատվածը հնչեցնել ներկայաց-
ման վարագույրը բացելուց առաջ: Ներկաներին այդ առա-
ջարկը խելքին մոտ թվաց: Աճեմյանին՝ ավելի քան: Թերեւ
իմ միակ առաջարկը, որ նա ընդունեց միանգամից և գործի
դրեց: Եվ, պետք է ասել, լավ եղավ:

Նույն օրը քննարկվեց ձևավորման մակետը, որի հեղի-
նակն էր Արմեն Գրիգորյանցը՝ մի գեղեցիկ տղամարդ, վերին
աստիճանի կիրթ ու լրջախոռ. Մինսկի բելոռուսական թատ-
րոնի գլխավոր նկարիչը, որ Աճեմյանի հրավերով ձևավորել
էր նաև «Ռոմեո և Ջուլիետ» և «Իմ սիրաց լեռներում է» ներկա-
յացումները (Աճեմյանը մտադիր էր նրան Սովորվանի ան-
վան թատրոնի գլխավոր նկարիչը դարձնել, որ այնպես էլ
շհաջողվեց):

Փորձերի լավ օրերից մեկն էր: Աճեմյանը կարդաց Պեպոյի
առաջին մենախոսությունը՝ զուրս եկավ ոիթմիկ արձակու-
թացի՝ գիտե՞ք, որ Գևորգ Արովը, տաղաշափության գիտակ
մի գրականագետ, ակադեմիայի դահլիճում զեկուցում է կար-
դացել, ապացուցելով, որ «Պեպոն» գրված է շափածո. և
լունը եմ այդ զեկուցումը: Պատասխանեց՝ շգիտեի, բայց
մտքովս անցնում էր, ահա՝ տես...

Կարդաց: Կարծես թե իրոք այդպիս էր:

1966-ի փետրվարը խանդավառ օրեր էին նորակառուցց
թատրոնում, «Պեպոյի» մոլեգին փորձերի, այդ փորձերի վեր-
ջին երջանիկ օրերը...

Աճեմյանն իր տարերքի մեջ է, այն միակ ոլորտում, ուրիշնեն զգում է նախանձելիորեն ինքնավստահ, ոգեշնչված ու ոգեշնչող: Փորձում է, ինչպես զահել ժամանակ՝ առանց հոգելու, ժամ ու պատարագ հարցնելու: Մեկ հանդիսարանումն է, ոեթիսորական սեղանի մոտ, մեկ էլ թուզում է բեմ՝ մոտիկից բացառելու, զերերը «ցույց տալու»: Հիշում եմ նրան Պետրովի առաջին մենախոսությունը հորին Արրահամյանին «ցույց տալիս»: Ոչ մի վերամբարձ շեշտ, աշխատավոր մարդը հայտնվում է բեմում վաղ առավոտյան, գիշերային հաջողակ ձկնօրսությունից հետո, հիմա քունը տանում է, և իր նշանավոր մենախոսությունն ասում է հոգնատանջ, բայց և դուռընակ, դրեմի նուչելով... Ոչ պակաս նրբությամբ կյուսյա Հովհաննիսյանին «ցույց է տալիս» էփեմիայի ծերծեքումները՝ բայլվածքը, պահվածքը, առարկություն շընդումող հրամայական խոսվածքը:

Դերասանները, փորձի ականատեսները նայում են հաճույքով, ծափ զարկում: Դա բեմադրիչին ոգեսրում է ավելի, և նա ցուցադրում է նորից ու նորից...

Տարակուսանները, նույնպես կային: Դերասանները կարծես մանրացնել են աշքիս, — ասում է, — այն նրբությունները, որ փորձասենյակում հիացնում էին, մեծ դահլիճում տեղ շիւանեւամ: Համարակալիս լինելով, հուսադրում էի: վարագույրները կախվեն՝ բնմը կփոքրանա, էղքան փոքր շեն երևա: (Այն ժամանակ չեն կռահում, որ Դրիգորյանցի տպավորիչ ձևավորումն ունեն մի թերություն՝ դեկորների մասշտարի անհարկի խոշորություն փոքրաթիվ գործող անձանց համեմատ: Ռգեսքած նոր շենքի շքեղությամբ, ճարտարապետ Ռազմիկ Ալեքսեյանի իսկապես անձնվեր աշխատանքով, — մարդը ծանր,

անբուժելի հիվանդ էր, — չէինք նկատում, որ բնմի և հանդիսասրահի կապը սերտ չէ, բնմը հեռու է հանդիսատեսից):

Ուղում էր ծանրակշիռ դարձնել ֆինալը՝ «Հիմի, աղա Արութին, մնացինք ես ու դուն...». փոքր բան է, պետք է մեծացնել:

Զիմզիմովի երկու գերակատարի շնավանեց՝ անհամ են: Վերջը փոխարինեց Սոս Սարգսյանով: Բայց նրանով էլ ոգեվորված չէր՝ մի բան պիտի մտածել: (Ասեմ ի միջի այլոց, Սոսի հանդեպ ուներ անարդար թերահալատ վերաբերմունք, որ ես ապարդյուն կերպով ջանում էի փարատել, ակնարկում էի նույնիսկ, որ Պետո—Սոս Սարգսյան, Զիմզիմով—Խորեն Արքահամբյան դերարաշխումն ավելի հետաքրքիր կլիներ, բայց ո՞ւմ կասես: Շատ հավանում էր Խորենի հատկապի խոսքը. մի օր վերցին փորձերից մեկի ժամանակ, ուր Պետոն գալիս է Զիմզիմովի տուն պարտքն ուղելու և ասում այն խոսքը, թե «Ա՛յ, քնթեմեն դուրս գա էն հացը, ինչ մարթ ձիր հացն ուտե, հըա՛»: Հիացալ՝ ինչքաշն ուելիզմ կա Խորենի խոսքի մեջ, ամեն մի բառը զգում ես):

Էփեմիայի և Սամսոնի կապի մասին, իհարկե, ոչ մի ակնարկ. «տերն ու ծառան» թեման Աճեմյանն այնպիս էր սրել, ծառաներին, նաև Սամսոնին, այնքան էր ստորադասել, որ դրա մասին մտածել իսկ շէր կարելի: Բայց փորձերից մեկի ժամանակ նկատեցի, որ էփեմիան թարուն համբուրդում է հյուրերից մեկի՝ ինչ-որ կնյազի հետ: Դժգոհեցի: Ասաց՝ ուղեցի փորձել, չէ՛, դա էլ պիտք է հանել:

Նկատվում էր, որ Մհեր Մկրտչյանն իր գերակատարումը (Կակովի) դեպի էստրադա է տանում: Ասաց՝ դրան պիտի հավաքել, օտքեյտին է անում: (Հետապայում Մհերին փո-

Խարինեց Շահում Ղազարյանով, բայց էլի Կակովին իր
ուզածը շնչարի:

Տարակուսանքներ էլի կային, բայց զրանք աննշան բա-
ներ էին հարուցելու համար հանդիսատեսային այն անսպա-
սելի մերժողական վերաբերմունքը, որին հանդիպեց ներկա-
յացումը: Ստեղծագործական հաղթանակների սովոր Աճեմ-
յանն էլի էր ունեցել անսպասելի պարտություններ, բայց հայ
պասական երկի բերազրությամբ՝ երրե՛ր:

Այն է՛ տարիներով փայտիալած մառուումների, ինքնամո-
ռացման առտիճանի ներշնչված աշխատանքի արդյունքը, երբ
արվեստագետն այնքան չանք էր թափել զործը նորովի հըն-
շեցնելու համար, անտեսելով պիհսի ավանդական դերակա-
տարներ Ավետ Ավետիսյանի, Բարեկն Ներսիսյանի, թերևս
նաև ուրիշների դերասանական ինքնասիրությունը: Այն է՛
թատրոնի նորակառույց շենքի բացման օրը, որին ժողո-
վուրդն սպասում էր անհամբերությամբ:

Ներկայացումն առաջին անգամ ցույց տրվեց մարտի 4-ին,
շենքի շինարարներին՝ ի նշան երախտագիտության: Երկրորդ
անգամ՝ հաջորդ օրը կուսակցության համագումարի պատվի-
րակներին (Աճեմյանը, որ նախընտրում էր պրեմիերան ցույց
տալ «սովորական» հանդիսատեսներին, ուզում էր խուսա-
փել դրանից, բայց շեր կարողացել, փորձել էր առարկել, թե
չի հասցնի՝ շեր եղիլ):

Երրորդ անգամ ցույց տրվեց հրավիրատոմսերով՝ տարբեր
հիմնարկների ներկայացուցիչներին:

Առաջին անգամ լավ անցավ, այնքան լավ, որ Աճեմյանը
շողում էր ուրախությունից, ասես չաշելացել էր մի քանի
տարով: Բանկետի ժամանակ շամպայնը, ինչպես ասում են,
հոսում էր գետի պես: Էդվարդ Բաղդասարյանը՝ ներկայաց-

ման հիանալի երաժշտության հեղինակը, ինքն էլ հաջողության վայելքի մեջ, ուրախ տրամադրությունը բորբոքում էր երաժշտական սրամիտ կատակեներով՝ իրարամերթ մեղեղիների դաշնամուրային ծիծառաշարժ համագրություններով։ Նկարիչ Արմեն Դրիգորյանցը պատմում էր անհեղոտներ իրեն հատուկ կիրթ հումորով...

- Երկրորդ անգամ ներկայացումն ընդունվեց զուսպ սառնությամբ, որ վերագրվեց հանդիսաբանի հույժ պաշտոնական հանգամանքին։

Երրորդ անգամ հանդիպեց սուր քննադատական վերաբերմունքի՝ սառը ջուր մաղելով տաք ոգնորության վրա։ Հանդիսատեսային այդ վերաբերմունքը գնալով խորացավ։ Ճիշտ է, հանդիսատեսների հասկացող փոքրամասնությունը ներկայացումն ընդունում և գնահատում էր նույնքան լավ, որքան մասնագետները, բայց թատրոնում, որ հանդիսատեսային արվեստ է, հարցը մեծամասնությունն է վճռում։ Նա չէր ընդունում հատկապես Խորեն Արքահամբայանի Պետոն, ևս հարցը Աճեմյանին, թե ի՞նչն է պատճառը։ Պատասխանեց՝ որովհետեւ կուլտուրա չունեն, հապա ի՞նչ ես կարծում... Թե չէ տղայի խաղի մեջ խելք կա, մի՛տք կա, դիտե՛ ինչ է անում։

Ես էլ նույն կերպ էի մտածում։ Ավելին՝ ես անարդար էի համարում դերասանի հանդեպ հանդիսատեսի ունեցած վերաբերմունքն առհասարակ։ Դրա պատճառը դերասանի հույզական շնչի պակասն էր, բայց նախ դա դերասանի արվեստի գնահամարության միակ շափանիշը շէ և հետո՝ նայած ով ինչպես է՝ ընկալում հույզականը։ Հանդիսատեսային գանգվածը սիրում է բացեիրաց, հորդառատ հուզականություն, որից հեռու է Արքահամբայանի խառնվածքը։

- Դառնանք «Պեպոյի» պատմությանը։ Խնդիրը, որ բարդա-

ցավ, կուլտուրայի մինիստրությունը մի պատկառելի խորհրդակցություն հրավիրեց կողմնօրոշքելու համար։ Երկու եկատ կայացավ՝ առավոտյան ու երեկոյան։ Մի տասնհինգ մարդ խոսեցին, միայն երկու-երեքը՝ բացասաբար։ Վերջիններին մեջ ամենից համոզիչն Արտաշես Բաբայանն էր իր հետեւյալ դատողությամբ։ Հարգելի՝ մասնագետներ, գուրք ամենին ինչ հիմնավայր բացատրում եք, հիմնավորում այն ամենն որը ու ինքնատիպը, որ այս բեմադրությունը բերում է «Պեպոյի» բեմական պատմության մեջ, բայց ինչպես վարվենք, որ ներկայացումը չի հուզում հանդիսատեսին։

Հիմա, երբ ամեն ինչ պատմության գիրկն է անցել, պատճառներն աշքիս ավելի հստակ են երևում։ Ժամանակակից հանդիսատեսին, որ շատ ավելի զարհուրելի բաներ է տեսել ու տեսնում է շորս բոլորը, դժվար է հուզել բարաթի ուրացման պատմությամբ՝ «սրտի դավթարի» պրոբլեմատիկան, կարծես, ճնշում է իրքն միամիտ անախրոնիզմ։ Այսօրվա հանդիսատեսին արի և հուզիր կեկելի ժանրագին ապրումներով։ Էլ ո՞նց կլիներ, տե՛ս, է՛, փեսացուն հարսնացուին պաշտ է արել ու հիմա լրում է նրան։

Երկրորդ։ Թիֆլիսահայ բարբառը, որբան էլ կատարյալ Սունդուկյանի պիհեսներում, որբան էլ բյուրեղացած մեծ արշակուտագետի ձեռքի տակ, սովորական հանդիսատեսի համար մի պատնիշ է նրա պիհեսները հասկանալու հանապարհին։ Դեռևս 1910-ական թվականներին գրում էին, թե Թիֆլիսի հայությունն այնս անցյալ դարի լեզվով չի խոսում, այդ լեզվուն գնալով դառնում է անմատչելի։ Եթե դա անհանգստացնում էր սրանից վաթսուն-յոթանասուն տարի առաջ, ապա այսօր՝ ավելի ևս

...Երրորդ։ «Պեպոյ կինոնկարը շատ է խանգարում» «Պեպո»

թատերական ներկայացման ընկալմանը: Եավ հիշում եմ, սիեսից անտեղյակ հանդիսատեսը (նրանք, որ մեծամասնությունն են) հարցում էին շարունակ՝ հապա ո՞ւր է փեսացու Դարչոն, ինչո՞ւ չկա բարաթը կծիկի մեջ հայտնվելու պատմությունը և այլն:

Չորրորդ. հանդիսատեսը չկամեցավ հաշտվել իր ավանդական պատկերացումների կորսայան հետ՝ բարձրաշունչ Պեպոյի, հաստարեսոտ Զիմզիմովի, լրբենի էփեմիայի, դանդալոշ Գիբոյի, անպատկառ Սամսոնի... հանդիսատեսը չի սիրում, երբ հերթվում են սովոր պատկերացումները:

Ժամանակին (1966) ես մի հոդված գրեցի ներկայացման մասին, որ ավարտել էի այսպիս. հանդիսատեսների շերտեր կան, որոնց համար «Պեպոյի» այս մեկնաբանությունն ընդունելի չէ, «որովհետև դա չի բռնում իրենց պատկերացումներին, որ մնե արժեք ունեն իրենց իսկ աշքին: Եվ այստեղ արդեն մեղքը թատրոնինը չէ, այլ դիտողինը, որ պետք է մտածի ոչ ոչնքան ներկայացման, իր և իր պատկերացումների մասին...»¹:

Հիշածս խորհրդակցության ժամանակ Խորեն Արրահամյանն ասաց՝ ես խաղում եմ հասկացող 5 տոկոսի համար, իսկ թուրքն Զարյանը, որ Սունդուկյան դիտի հինգ մատի պես, իր ելույթում ասաց՝ ես հենց այդ 5 տոկոսի կողմն եմ:

Քիչ չեին մարդիկ, որ կարողանում էին բարձրանալ «Պեպոյի» կոնֆլիկտի անմիջական ընկալումից, բախումը տեսնելով ոչ թե մի ձկնորսի ու մի վաճառականի միջև, այլ շիտակության ու խարդախության միջև՝ բիբլիական չափանիշներով, «սրտի դավթարի» գոյության և շգոյության միջև:

1. Հայովերդյան. ժամանակի հետ (Հոդվածներ), Երևան, 1976, էջ 216։

Նրանք հասկանում էին, որ «Պեպոն» սրտակեղեցք դրամա չէ (իրոք, պիեսում անդառնալի կործանում բերող ոչինչ չկա, Պեպոն մի կարճ ժամանակ բանտ կնստի ու ետ կգա՝ ասում է, չէ», «վաղեն Հիոու չէ», Կեկելին էլ մի օր կգտնի իր բախտը, ոչ որ չի սպանվում, ոչ որ չի մեռնում). «Պեպոյի» հուզականն ու բանաստեղծականն ուրիշ տեղ է՝ Պեպոյի ասպետական նկարագրի, Գիրոյի գրեթե հերիաթային ազնվության մեջ: Ես շատ բան կտայի վերստին լսելու համար, թե էղուր էլլրակւանի Գիրոն ինչպես է անում անիծյալ բարաթը կորցնելու պատմությունը՝ հոգնբանական ինչպիսի՞ նուրբ ելեկջներով: Առավել ևս՝ լսելու Պեպոյի և Զիմզիմովի դիալոգը, տեսնելու նրանց հանդիպման պատկերը, մի մեծ պատկեր, որ հայ բեմում, առհասարակ բեմում տեսածու ամենակատարյալ թատերային մարմնացումներից է: Ես երբեմն թատրոն էի դնում հատկապես այդ պատկերը դիտելու, ավելի ճիշտ՝ լսելու Մոտավորապես այդպես էին ընկալում ներկայացումը նրանք, ովքեր բիշ թե շատ գիտեին թիֆլիսահայ բարրառը, պիեսը գիտեին, ուստի և չէին վրդովվում, թե ինչու ներկայացման մեջ չկան փեսացու Դարձոյի կամ միջնորդ կոնց կերպարները, որ այնքան զվարճալի են դարձնում աՊեպո» իինոնկարը: Առավել ես նրանք, ովքեր ի ոլոյակի եղան հրաժեշտ տալու ավանդական հնացած պատկերացումներին, տեսնելով, թե բեմադրիչը ինչպիսի վարպետությամբ, խորունկ թափանցումով դրանք փրխարինել է նոր, արդիական, ճշմարտացի պատկերումներով:

Պատկերացրեք, ուրեմն, Պեպոյին առանց հերոսական կեցվածքի, պարզ մի աշխատավոր, որ ոչ թե պատգամներ է նետում դաշիճ, այլ բարձրածայն միտք է անում իր վիճակի վրա, և մենք ակամա լսում ենք նրան: Պեպոն մեր աշքին հե-

բոսանում, ճշճարտության առաջնորդ է դառնում դեպքերի զարգացման ընթացքում:

Դիրո՞ն՝ ոչ թե փոշտացող մի զառամյալ, ոչ թե ֆլեգմա, այլ խողերիկ՝ սուր մտրի տեր ժիր, մանրաքայլ ծերուկ՝ հին թիֆլիսի բարի ողին, որին կարուտում ես, երբ հնուանում է բեմից:

Զիմզիմովը՝ բնավ ոչ հաստափոր, ոչ անգեղ, կնոջ քմայրներին գերի մի ծերունի, այլ բարալիկ, թեթևաքայլ, յուրովի խելացի տղամարդ, որ գիտե իր անելիքը: Սիրում է երաժշշտություն, թերես կնոջը նույնակես (նրա սիրով փափկում է խորքի սենյակից կնոջ երգը լսելիս և զրա աղղեցությամբ է հինգ թուման «բաշխում» Պեպոյին): Վանող արտաքին շուներ Սոս Սարգսյանի Զիմզիմովը, տեր ու տիրականի նրա ներաշխարհ: Էր վանուալը, ավելի վանող, քան եթե արտաքինապես տգեղ լիներ: Սա այն է, ինչ կոչվում է դերի հոգերանական հիմնավորում:

Էփիեմիան էլ տարբեր էր ավանդական մեկնությունից. ոչ թե անհոգ վատնող, սեթնեթ, անուղեղ կին, այլ փողի իշխանության, առհասարակ իշխանության տենչանքի մարմնացում՝ դրավիլ կնոջ կերպարանքով (Լյուսյա Հովհաննիսյան): Այդպիս լինում են հանկարծահաս հարուստները:

Սամսոնը (Յուրի Ամիրյան)՝ ոչ թե լկտի ծառա, այլ աշքը վախեցած սպասավոր, որ մղկուում է տերերի ձեռքին:

Կեկելը՝ ոչ թե խղճալի, շերեացող մի արարած, այլ խորազգաց մի աղջիկ, որ լցված էր սիրով եղբոր հանդեպ, և ավելի ծանր ապրում էր եղբոր, քան իր վիճակը (այս գերը խաղում էին վարդեհնի վարդերեսյանը և Կլարա Դարագյաղյանը): Նա ուզում էր իրեն Թուրը զցել և կցցեր, եթե եղբայրը շհամներ հետեւից և շրոներ նրան: Թրոչ ու եղբոր հարաբերու-

թյունն ամենից հուզիչն էր ներկայացման մեջ (Զանիքեկյանն ասում էր՝ այդ տեսարանը նայելիս արտասվում եմ):

Ներկայացման մեջ կային «ուժիւորական դետալներ», որ անհնար է մոռանալ: Ահա մի-երկուսը. երբ Պեպոն, հինգ թումանը Զիմզիմովի երեսին շպրտելով, նրան թուք ու նախատինք տալով դուրս է գալիս՝ նկատում է անկյունում զիսիկոր կանգնած Սամսոնին, մոտենում և մի թեթև շոյում է նրան, ասել է թէ՝ դիտեմ, որ դու մեղք չունես, դու էլ մի գերի ես սրանց ձեռին...

Պիեսի ֆինալում, երբ Զիմզիմովը գալիս է Պեպոյի տուն դանշած բարախը ձեռք դցելու, Գիբոն բարախը հեռվից է ցույց տալիս, որ չփախցնի՝ ուշ՝, դուն մի քիչ հի՛ռու կանգնի, աղա՛ Արութինը: Բայց երբ Պեպոն ու Կակուլին են թրում-մրում Զիմզիմովին՝ մուրճակը նետում են սեղանին, նրա աշքի առաջ Զիմզիմովը կհամարձակվի՝ ձեռք տալ, գիծ հո չի, կտան կսպանեն՝ այնքան են զայրացած...

Ներկայացումն ուներ նաև խոցելի կողմեր: Այն ժամանակ էլ նկատվեց, կարող եմ կրկնել՝ Խորեն Արրահամյանի և Սոս Սարգսյանի դերակատարումների մեջ մեկնաբանությունը գերիշխում էր ներշնչանքի վրա, մտքային կողմն ուժեղ էր հուզականից: Մէնք Մկրտչյանի Կակուլին ավելի գյումրիական տիպ էր, քան թիֆլիսյան, իսկ Շահում Ղազարյանի Կակուլին, ինչպես կիդա Սալախյանի Շուշանը, շուներ այն հմատիչ նրբությունը, որ հատուկ է Սունդուկյանի կերպարներին:

Այսպես թէ այսպես, «Պեպոյի» թատերական արդիականացման հարցը լուծվեց, համենայն դեպք՝ մեծամասնության աշքում, Դեպքերից առաջ ընկնելով ասեմ՝ էլ ավելի բարդացած Խորեն Արրահամյանի 1984 թվականի բնմադրությունից հետո: Սա էլ, հրաժարվելով պիեսը եղածի պես բնմադրելու

մտքից, այսպիսի խննեց ձեախնդման ևնթարկեց պիեսը, որ շեղումներ անելու ճանապարհը վարկարեկվեց իսպառ: Բացի այդ, եթե Աճեմյանն ընթացավ պիեսն առավել ազնվացնելու, հին ներկայացումներում եղած գոենկարանությունները մարքելու ճանապարհով, ապա բեմադրիչ Արրաջամյանը, կարծելով, թե պիեսի արդիականացման ուղին գոենկարանության ուղին է, հակառակ ընթացքը բռնեց և հասավ խելքից-մտքից դուրս հետեւանքների: Դրա մեջ կարելի էր տեսնել երկու բեմադրիչների նկարագրի տրամադրուն հակադիր տարբերությունը:

Այս գորքի ընթերցողներից բշերը կիմանան ինչի մասին է խոսրը, բանի որ ներկայացումը հասարակությանը ցուցադրվեց միայն մի անգամ՝ 1984-ի փետրվարի 28-ին, Սունդուկյանի անվան թատրոնի հիմնադրման 60-ամյակին նվիրված հանդեսին: (Թեև, հեղնանքի արժանի բան, այդ ամյակը լրացել էր 1982-ի հունվարի 25-ին): Դրանից հետո ցուցադրումն արգելվեց: Եվ իզուր: Դա շատ ուսանելի օրինակ էր, թե ինչպես չի կարելի վարվել դասական երկի, առավել ևս բշուրեղյա մաքրության Սունդուկյանի «Պեպոյի» հետ: Այստեղ էփեմիան երեսում էր իրրե փողոցային կին (թունդ վիճելիս նա էարող էր փեշը բարձրացնելով խփել իր հետութին), Զիմզիմովը՝ միասնուական հակումով: Այստեղ էփեմիան, նաև կեկելը կարող էին «կինտառուրի» պարել, Շուշանը՝ երգել «էրեսիդ խալը...», Զիմզիմովը կարող էր ասել «եպոյի տեքստը («Գիշեր շարշրվի, ցերեկ շարշրվի...»), Դիբոն՝ հատվածներ «Համալիք մասլահթնիրից», ապա և «Իմ մահն ու թաղումից... թեմում շարժվում և երգում էր կինտոների մի բանակ: Նրանք են ներկայացման ֆինալում բերում կիսաշունչ Դիբոնին, վրում սեղանին, որ հետո բարաթը՝ հանեն գրպանից ու

նախատեն ջիմզիմովին... Մի խոսքով՝ մյուզիթլ-օպերետացին «Պեպո», տերատի և կերպարների անլուր աղավաղմամբ ու դռեհնկացմամբ:

Ներկայացումը դիտում էր նաև Հայաստանի կոմկուսի կենտրոնի քարտողար Կարնն Շիմիրճյանը: Հենց դա էլ լուծեց խնդիրը: Մի քանի օր հետո կուլտուրայի մինիստրությունում կայացավ մի ժամը խորհրդակցություն, և Արրահամյանն ազատվեց զիմավոր ուժինորի պաշտոնից:

Մի խոսքով, և՛ որպես գերասան, և՛ որպես բնմադրիչ ի րնե օժտված մարդ, բայց ոչ որի խորհուրդը շարժնող, շափուածանից դուրս ինքնավստահ Խորեն Արքահամյանը դիմեց ստեղծագործական ինքնասպանության և տապալվեց առանց կողմնակի միջամտության: Այդ պարտությունը, ինչպես ևս եմ մտածում, նախ բարոյական-դաղավարական էր, ապա միայն գեղագիտական: Բարոյականը, արվեստագետը, մի դործ անելու համար, պետք է և՛ վստահ լինի իր վրա, և՛ կասկած ունենա՞ ձի՞շտ է անում արդյոք: «Պեպոյի» վերջին րեմադրիչը շուներ այդ տարակուսանքը, ուստի և՛ արվեստակիցների հետ խորհրդի նստելու առաքինություն, որ համեստություն է կոչվում: Բացի այդ, դատելով նրա ուրիշ թեկուզն վիճելի, բայց անպայման թատերական արժեք ներկայացնող բնմադրություններից («Հացավան», «Զոն արքա») այս բնմադրիչը, իբրև կյանքի մեկնաբան, շեր տառապում խորին հարգանքով մարդ արարածի հանդեպ, ուստի և առիթ բաց շեր թողնում նրան կոպիտ կամ գոհհիկ կերպարանք տալու համար: Բարոյական այդ կողմնորոշման խոտացումն էր «Պեպոն»: Եվ վերջապես՝ շափից դուրս անհարգալից վերաբերմունք դասական երկի բնագրի նկատմամբ:

Այսքան շեղում անելուց հետո այն էլ ասեմ, որ երբ

ստեղծագործական ժանր դրամա ապրելուց հետո Խորեն Արքահամբանը հայտնվեց Լենինականում, հանձն առնելով թատրոնի գլխավոր ուժիսորի պաշտոնը, նա Արտ. Քալանթարյանի «Թիկունք» դրաման բեմադրեց մարդու հանդեպ այնպիսի կարևոր վերաբերմունքվ, որ արվեստագետի այդ կերպարանափոխումն ինձ հիշեցրեց արքա Լիրի ողբերգությունը...

Արդարամիտ լինելու համար այն էլ պետք է ասել, որ նույն այդ «Պեպոյում» հատկապես առաջին դրվագներում, կային վառ թատերայնության ցոլքեր, հին թիֆլիսյան կոլորիտ, ոիթմային ցայտուն լուծումներ, բեմադրական հետաքրքրիր գյուտեր, բայց այդ ամենը սուզվում-կորչում էր անհեթեթության, գոենկարանության մեջ: Մի խոսքով, կթե Աճեմյանի «Պեպոն» ունեցավ միակողմանի հաջողություն՝ ընդունվելով մասնագետների, նաև հասկացող հանդիսատեսի կողմից, ապա այս մեկը կատարելապես մերժվեց բոլորի կողմից:

Բայց դրանից շպետք է հետեւեցնել, թե Սունդուկյանի թատերագրական ժառանգությունը, հատկապես «Պեպոն», յի կարելի տեքստային փոփոխություններով կամ թեկողեւ մյուզիքլի միջոցներով արդիականացնելու հեշտեցնել: Խնդիրն այն է, թե ինչն ինչպես ևս անում՝ ի՞նչ ճաշակով, բարոյական ու գեղագիտական ի՞նչ կողմնորոշմամբ, ի՞նչ մակարդակով:

Ինչ վերաբերում է Աճեմյանի «Պեպոյին», ապա դա կմնա իրրե այդ երկի բեմական երկարամյա պատմության և արվեստագետի երկարամյա ստեղծագործական կենսագրության գեղեցիկ էջնորից մեկը:

Հայ դասականների թատերային-բեմական իմաստավորման գործը, Աճեմյանի կյանքի ծրագրային գործը, նշանա-

Վորվեց մեծ արժեքներով՝ «Մեծապատիվ մուրացկաններ», «Գատվի համար», «Ժայռ», «Նամուս», «Պաղտասար աղբար»... Իմ համոզմամբ, «Պեպոն» պատկանում է հայ թատրոնի հպարտությունը կազմող այդ ներկայացումների շարքին:

Եվ այդ շարքն ավելի մեծ կլիներ, եթե նա ի կատար ածեր իր այն մտադրությունները նույնպես, որ տարբեր պատճառներով մնացին շիրագործված: Ներկայացնեմ ըստ ժամանակին արածո գրառումների:

1959, ամառ:

Միանգամայն անսպասելի՝

— Կինոյում պետք է «Պաղտասարը» բեմադրեմ, ի՞նչ ես ասում:

Ինչ պիտի ասեմ՝ շատ լավ կլինի, մեծ մասամբ ինտերիեր, ձեր սիրած պավիլլոններին նկարահանումներով:

— Ի՞նչարկե՞մ, պավիլլոնից դուրս ի՞նչ արվեստ:

Բայց կարելի է դուրս գալ փողոց, թեկուզ ծովափ:

— Առանց Պոլիսը շեշտելու:

Ոչ էլ ֆեսերը:

— Ի՞նչարկե՞մ, կարիք չկա: Պետք է մարդկային հավերժական հարաբերությունները հնչեցնել տրագիկոմիկական պլանով: Պետք է սկսել թեկուզ «վատահամբավ տանից»: Դիտե՞ս ինչպես կարելի է խաղացնել փողոցը և տունը, հարեւանները նայում են դրսից, աշքով-ունքով են անում, իւառնվում իրար...

Ոգևորված է, կարծես տեսնում է կինոնկար-ներկայացումը, լեցուն է ցանկությամբ:

Այդ գործը շարվեց (մեր հայոց գործերի արամաբանությամբ): Մինչդեռ Հրաշյա ներսիւանի Պաղտասարը կարող

էր առնվել ժամավենի զրա և մնալ, ինչպես Գուրգեն Զանիքեկյանի Գրիգոր աղան («Ժայռ» կինոնկար-ներկայացման շնորհիվ):

Զմոռանամ ասել, այդ օրը Հարցրի՝ ճիշտ է, որ հանդիպել է Ալեքսանդր Շիրվանզադեին:

— Հա՞ ի՞նարկե՞ւ նա ինձ հավանում էր Եկել էր լենինական: Դնացի մոտը, խոսեցինք: Ասաց, թե «Քառուը» մի-երկու ակտ սարքել է բամի համար: Բայց թղթերի մեջ չկա:

Պահպանվել է Շիրվանզադեի մի գիրը՝ Աճեմյանին գնահատող ընծայագրով:

1964, փետրվարի 23:

Ասաց, թե «Սպանված աղավնին» բեմադրում է ինստիտուտում՝ տեքստը նվազագույշի հասցնելով, ավելի շատ համբ տեսարաններով, սիմվոլիստական ոճով: Հունիսի 28-ին դիտեցի ներկայացումը՝ զուսպ, լուրջ, խորհրդավոր: Շատ համանեցի:

— Պիտի մի ուրիշ տեղ՝ թատրոն տարվի նույնությամբ: Քանի ևս պահանջուր եմ արել ինստիտուտում, գնացել են, կորել:

Ճիշտ որ, թվեա՞ն երկար շարք կլինի:

Ավելի բան բնական է, որ Աճեմյանին պետք է մտահոգեր կեռն Շանթի պիեսները բեմադրելու խնդիրը, հատկապես այն ժամանակ, երբ վերստին բացվում էր (ապա և փակվում) դրա հեռանկարը (այդպիսի մի քանի ժամանակ եղավ): Զդիտես ինչու, — ես ինչքա՞ն այդպիսի անպատճիւմ մնացած ինչուներ եմ տեսել, — հնարավոր համարվեց տպագրել Շանթի պիեսների ժողովածուն (1968), նույնիսկ հաղորդել «Հին աստվածների» ուղղիորեմադրությունը, բայց թատրոնում խաղալ արգելվում է մինչև օրս և մեր շերս դասական թատերագիր-

Ներից մեկը (Սունդուկյանից, Պարոնյանից և Շիրվանդաղեից հետո) մնում է ժամանակակից հայ թատրոնի ուսումնական դուրս։ Անհեթե՛ք բան։

Անհեմյանն ասաց մի օր՝ զիտե՞ս ինչ, եթե մերոնք թույլ ասն, սփյուռքը կարող է խանգարել նո, որ դեռ տեղյակ չէի սփյուռքահայության կուսակցական հակամարտություններից, շատ զարմացաւ Եվ Անհեմյանը պատմեց ուսմկավար կուսակցության լիդեր Դերմամ Ահարոնյանի հետ ունեցած հանգիպման մասին (Անհեմյանն առհասարակ սփյուռքահայերի հետ շփուռ էր հաճույքով, իր և նրանց միջև զգալով ներքին մի կապ, որի հիմքը թերևս կորսված հայրենիքի զգացողությունն էր): Խոսել էր Ահարոնյանի հետ Շանթի պիեսները խաղալու մոտակա հնարավորության մասին և լսել այսպիսի պատասխան՝ շա՞տ անպատճ բան կլինի դա, շա՞տ անպատճ, Շանթի պիեսները խաղալ հայրենիքո՞ւմ...

Սա իւ էսպիս:

Վկայիմ՝ արգելված պառուղի գրավլությունը, որ խենթացնում էր շատերին, Անհեմյանին բնավ չէր մղում շափաղանցության, նա Շանթին նախապատվություն չէր տալիս Պարոնյանի, Շիրվանդաղեի, առավել ևս Սունդուկյանի հանդեպ, որին նա համարում էր հայ թատերագրության վարպետներից առաջինը։

1967, սեպտեմբերի 4:

— Ասենք, թե թույլ տրվեց, Շանթի պիեսներից ո՞րը խաղալ:

Թվում էր բոլոր պիեսները և ի վերջո ընտրությունը կանգ էր առնում երկու պիեսի վրա՝ «Օշին պայլի» և «Հին աստվածների» (թեև հավանում էր նաև «Շղթայվածը»): Ես ավելացրի «Կայսրը»։ Համամիտ չէր, նախընտրելին նրա աշխում

«Օշինն» էր՝ ոչ այն պատճառով, որ չէր գնահատում «Կայսեր» պատմափիլիսոփայականը, այլ որ ավելի հարկավոր ու արդիական համարում էր «Օշինի» հայրենասիրական-հերոսական ողբին, Կիլիկյան Հայաստանի կերպարը՝ տարբեր մինչև Հիմա խաղացված պատմական պիեսներից, Փրանսիականի նման միջնադարյան Հայաստան, ուրիշ արսենուար, ուրիշ կոլորիտ: Եվ մեկ էլ միտք փոխում էր՝ իր բնավորության մյուս բնորոշ գիծը. ամենից առաջ «Հին աստվածները», կըոն Շանթ ասելիս նախ «Հին աստվածներն» ենք հասկանում, չէ՞», ուրիմն դա՝ պիտի բնմադրել: Մի տեսակ սիմվոլ է դարձել՝ կըոն Շանթ— «Հին աստվածները: Եվ վերստին իրենից անաւելուս տարակուսանքները՝ ինձ խրտնեցնում են միգանուլչները, կուտանա բանտիկ կապած բոնրոներկա: Պիտի ասկետարար լուծել: Դերասաններ շունեմ, Սեղա չկա, ոչ թե աննյութեղեն, այլ հրապուրիչ աղջիկ, Արեղա չկա, սա էլ պինդ տղա պիտի լինի...»

Կոնցեպցիայից շատ բան է կախված,— ասաց, — «անաշահութեա Արեղա, որի՞ կողմն ես դու

Սկսեցի միտք անել: Շտապեց կանխել՝ իհարկե՛, Կանաչոր կողմը, իդեալնե՞ր ունի մարդը, իդեալի հերոս, անձնվիրություն, վեհություն...

Հայ դասական գրականությունը լավ գիտեր և սիրում էր ի սրան: Հիշում եմ իր մշտական հիացմունքը Երվանդ Օտայանի «Առարելություն» մը ի Սապրլարով», ի՞նչ գործ է, նմանը շրւնի, ինչո՞ւ չեն հրատարակում, եղբա՛ր, էսպես բան կլինի»...

1968, ամառ:

Քումանյանի ծննդյան 100-ամյակի նախապատրաստության թեժ օրերն էին: Անտոն Քողյանը հորելլանական

Հանձնաժողովի նախագահն էր, ես՝ դրա հունդուն քարտուղարը, Խորհրդակցություններից մեկի ժամանակ Քոշինյանը դիմեց Աճեմյանին՝ կարծում եմ, մեր մայր թատրոնն այս հորելլանին անտարբեր չի մնա, կասի իր խոսքը:

Աճեմյանը կիսաբերան խոստացավ:

Օրեր անց՝ ի՞նչ պիտի անենք: Գիտե՞ս ինչպես եմ պատկերացնում. բեմը լցված է Թումանյանի անհամար հերոսներով՝ լուս ու անշարժ: Հետո կամաց-կամաց սկսում են շարժվել, խռել, գործել...

Բնականարար՝ ոգորովեցի: Բայց բանը դրանով էլ ավարտվեց: Ինչքան էլ Բախանձեցի՝ բան դուրս չեկավ: Առանց այն էլ ժամանակ շուներ, գլուխին տարված էր «Անուշի» բեմադրությամբ, Բայց էլի կարող էր գլուխ բերել, եթե Աիների իրենից անբաժան երկյուղը, որ կարող ենք ստեղծագործական երկյուղ կռչել՝ լիինի», չի՞ լինի...

Փա էլ չեղավ:

Ամենից շատ հավանում էր Թումանյանի Փոլկլորային մշակումները, հերիաթները: «Անբան Հուսիս» հեքիաթից կտորներ էր ասում հրճվանքից փայլող աշքերով:

Ի՞նչն է հրապուրում այդ հերիաթներում: Ասաց՝ ազգային բնավորությունները:

Նրա մեջ խոսում էր ազգային բնավորություններ կերտող վարպետը:

1973, Հունիսի 27:

Մոսկվայից նոր եմ եկել: Պատմեցի Տագանկայի թատրոնի «Товарищь, верь!» ներկայացման մասին, Պուշկինին նվիրված վավերագրական մի ներկայացում՝ արված փաստերի, փաստաթղթերի, նամակների հիման վրա: Չի՞ կարելի ալդալիսի ներկայացում ստեղծել Թումանյանի մասին:

Ազնորվեց՝ իհարկե՛, կարելի է, վերնատնով, լինեն՝ Աղա-
յան, Բահհական... իրենց խոսքերով, բանաստեղծություննե-
րով, պուրլիցիցիստիկա էլ շատ լինի:

Դա էլ չարվեց:

Հարցրի մի անգամ՝ ինչո՞ւ մինչև Հիմա «Քաջ Նազարը»
ի բեմադրել:

— Ինձ վախեցրել է կենցաղայինի և Հերիաթայինի խառ-
նուրդը: Հետո՝ խոսքն է ծիծաղելի, զրությունները ծիծաղելի
չեն: Էղ հսկաներն ի՞նչ են, Դեմիրճյանն ասում էր՝ ուղղակի
լեռնցի մարդիկ են: Ո՞նց պիտի արովի, երսի նազարի աշբին
են հսկա երեսում, դրանք մանր մարդիկ պիտի լինեն, ամենա-
հալուն դերասաններին պիտի տամ (քահ-քահ ծիծաղ): Հետո՝
վագրի տեսարանը: Դա իսկի շպիտի ցույց արվիր: Երսի կա-
տու պիտի լինի, ժողովուրդը կարծում է վազրին կատու է շի-
նել... Հը՞: Օրիգինալ բան պիտի անել, ա լա Բրեստ կամ թե-
կուզ ֆրակներով:

Չարվեց ալդ գործն էլ:

«Խաթարալայի» մտադրությունն էլ ուներ՝ սկզբից մնչե-
լուշ կատակերգություն. Մարգրիտը լացուկոծ շպիտի անի՝
ա՞խ, աստուծ և այլն, պիտի շատ թեթև ասվի, դրամատի-
կական խորացում պետք չի: Այնպես պիտի արվի, որ մտա-
ծեա՝ ափսոս շէ՞ր էս աղջիկը, որ Մասիսյանցը սրան չառավ:

Այս մտադրությունն էլ մնաց անկատար: Բայց ես ավե-
լորդ շհամարեցի Անեմյանի անկատար հղացումները վկայել՝
նրա, իրեն հայ դասական գրականության բնմական մեկնա-
րանի, նկարագիրն ամբողջացնելու համար:

1974, օգոստոսի 20:

Հանգստանում էր Դիլիջանի «Լեռնային Հայաստան» առող-
ջարանում: Դնացի այցելության: Տեսնեմ՝ սկզբանին Նար-

Դոսի հատորները: Ի՞նչ եր կարդում: Դեմքը ողողվեց բավականությամբ՝ «Մահը», ի՞նչ վեպ է, այսի բեմագրեմ, ի՞նչ նուրբ մարդկային հարաբերություններ, խոր հոգեբանական կերպարներ՝ Աշխենը, Շահյանը, Եվան ու Հայրը... Թող հիմա այսպես գրեն, էլի՛, մեծ-մեծ խոսում են:

Այսօրվա կյանքը նման մարդիկ չի գոյացնում, — ասացի Զեռքը թափ տվեց:

* * *

*

Հայ դասական գրականության արժեքները, ինչպես առիթ ունեցա ասելու, Աճեմյանի համար իր ժողովրդի պատմական անցյալը թատերայնորեն պատկերելու և իմաստավորելու անփոխարինելի հնարավորություն էին: Նախ դա, հետո մնացած ամեն ինչ: Այդպես էր, որովհետեւ արվեստագետն, ասես, ներծծված էր արտմությամբ, հեռու-հեռավոր, թե մոտիկ-մոտավոր պատմությամբ: Այստեղից էլ նրա սենուն ուշադրությունն այդ պատմության ամենավառ էջի՝ հեղափոխության նկատմամբ, հեղափոխությանը նվիրված բեմադրությունների անսովոր մեծ թիվը նրա ստեղծագործության մեջ:

Ես կպատմեմ դրանցից երկուսի մասին՝ «Դեպի ապագան» և «Հանրապետության նախագահը» ներկայացումների: Միայն այդ երկուսի, քանի որ մյուսները եղել են պարզապես որակյալ ներկայացումներ, ինչպես Գ. Բորյանի «Նույն հարկի տակ» գրամայի բեմադրությունը: Դրանց մեջ չէր նշշմարվում բեմադրիչ արվեստագետի անձնական կենսափորձը, չէր նկատվում, որ բեմական գործողությունը հարստացված է կյանքից առնված սեփական տպավորություններով, չէր երևում նրա թատերային մտածողության անշփոթելի կնիքը,

ուրիշ խոսքով՝ ձեռագիրը։ Այդօրինակ ներկայացումները գիտելիս կարող էիր ասել, որ դրանք հմտությամբ արված աշխատանքներ են, բայց չէիր ասի, թե Աճեմյանի ձեռքի գործն են։

Հեղափոխության բնմական իմաստավորումների գիծը պետք է մի քիչ հնովից սկսենք, այն հարցից, թե արվեստագետն ինչ վերաբերմունք ուներ հեղափոխության նկատմամբ։ Ի՞նչարկե, պիտի ասենք՝ դրական վերաբերմունք։ Եվ իրոք այդպիս էր, բայց ոչ թե այն պատճառով, որ այդ հայացքը պարտադիր է ամեն մի օրինապահ խորհրդային քաղաքացու համար, այլ որովհետև դա հիմնավորված էր Աճեմյանի կյանքով ու կենսագրությամբ։

Ուրեմն՝ մի քիչ կենսագրություն։ Այնքան, որքան դա անհրաժեշտ է արվեստագետի մարդկային նկարագիրը, բնավորությունը, աշխարհայացքը, ստեղծագործական նախասիրությունները հասկանալու համար։

Վարդան Աճեմյանը վանեցի էր ոտից զլուխ՝ վանեցուն հատուկ բոլոր հատկանիշներով. ազգային թանձր խառնվածք, նպատակադիր, բայց և զգուշամիտ վարդագիծ (միայն ժլատություն չուներ). եթե նույնիսկ ընդունելու լինենք այն տարածված կարծիքը, թե վանեցին առասպեկտական ժլատ է՝ Աճեմյանը դրանից շատ հեռու էր, քիչ կապատահեր, որ սեղանի հաշիվը փակողն ինքը չիներ, փող ասվածը նա կարծես չէր նկատում)։

Եվ, վերջապես, հայրենաբազմություն, անփարատելի այն նորատագիան, որ հատուկ է ամեն մի ճշմարիտ վանեցու կարծես երեկ էր լքել անպատմելի վանը և ուր-որ է պետք, չ վերադառնա։ Այնպես որ, կյանքի բոլոր պարագաներում Աճեմյանը մնում էր արմատական վանեցի, դրանից դուրս

Հկար Աճեմյան: Զուր չէ, որ գրող Լուսի Թարգյուլը, նույնպես
վանեցի, նրան էր նվիրել հայրենաբազմ մի բանաստեղծու-
թյուն, որը պահպանվել է իր թղթերում, և ես ուզում եմ դա
մեջրերել ամբողջությամբ, այլապես կկորչի կդնա, մեղք է.

ԿԱՐԲՈՒՏԻ ԵՐԳ

Սիրելի Վարդանին

Արդյոք երդո՞ւմ է ժպրիդը նորից
Իմ հայրենական թոնըի մազքում,
Բե՞ ավելրումին զա՞ն դարձավ և նա,
Խեշպէս նազանին մեր վանա կատան...

Արդյոք դաշի՞ւ մեր բարեռուն այցի
Չուրդ արագիներն երդով կափկափան,
Բե՞ շորացէլ է ժառը նորբա տնկած,
Որի շուրջի տակ առուն էր երգում:

Չեն ծփում այլնս արտերը ոսկի
Վարագա լուսն լանչերին զիարթամ...
Էսէլ է տաղը հայ շինականի
Քարգերից հետո այն եղնոնական...

Չեն լողում այլնս վանա ծովի մճչ
Աղջիներ լուսն, հարսներ նազիրան,
Էտ՛ական ժերեր, կտրիմ տղաներ.
Երգ ու խնդություն, ա՞խ, այլնս չկան...

Ասում են հիմա փողոցներում մեր
Մարդկանց փոխարեն տատապէն է անում,
Իսկ զիշերները ամայտության մեջ
Դառն մլավում է մռուացված կատուն...

Պանդույսա հայրենիք, տանշված հայրենիք,
Դեպ քեզ է թոշում հոգիս անդադար,
Ա՞խ, ե՞րբ, ե՞րբ, ե՞րբ արդյոք զիրկդ պիտ դառնանք,
Եթ գործի դնենք մուրճը շինարար...

Ար նորից բացվեն դռները հրդով,
Են երդիներից ծուխը բարձրանաւ,
Աղոազու քարից ՄՆԵՐԻ էլեի.
Պատիկ ՄՀԵՐԸ՝ շառագիռ Սասնա...

Արդյոք Լրդո՞ւմ է ժարիղը նորից
Իմ հոյքնուկան տան թոնը Էնդրում,
Թէ՞ ավերտմին գոճ դարձագ և նա,
Խշովես թագամազ մէք վանա կատուն...

Այս հուղմունքն Աճեմյանն անթեղած էր պահում հոգու խորքում: Բացվում էր Մահարու հետ զրուցելիս՝ շատ առիթներ և ունեցել լսելու: Բայց այս գծով շատ շխորանանք, որովհետեւ դա մեզ հեռու կտանի (կարծեմ արդեն իսկ տարավ): Մասնավորվենք վանի թատերական կյանքից Աճեմյանի առած առաջին տպավորությունների վրա:

Իր զրբերում Գուրգեն Մահարին վանի մասին պատմել է այնքան վառ ու հրապուրիչ, ինչպես միայն ինքը կարող էր պատմել: Բայց ևս վարդան Աճեմյանից լսածներս պիտի վերաբարդեմ: Ո՞վ իմանա՞ ուրիշին պատմե՞լ է, թե չէ, և այց ուրիշը զրի տուն՞ է, թե չէ:

Այսպիսս, ուրեմն, պատմել է ինձ, որ վան քաղաքն ունեցել է երեք սիրողական թատերախումբ ըստ կուսակցական պատկանելության. դաշնակցականների (խաղացել են «Արցունու», «Հին աստվածներ»), ռամկավարների (խաղացել են «Օթելլո», «Հին աստվածներ»), հեշակյանների (խաղացել են «Պետո»): Թատրոնի սրահում կանայք նստել են առանձին, պատշգամբում, թեյ է մատուցվել հանդիսատեսներին, ճիշտ արևելյան ոճով:

Առաջին ներկայացումը, որ զիտել է յոթ-ութ տարեկան շասակում, եղել է «Վենետիկի վաճառականը»: Հայրը՝ ուսուց-

շապեաւ Մկրտիչը խազացել է Անտոնիոյի դերը: Երեխան լաց է եղել:

Տեսած երկրորդ ներկայացումը՝ «Հին աստվածներ»: Ի՞նչարկե, ոչինչ չի հասկացել, բայց ճգնավորի տեսարանից շատ է ազդվել:

1915. կոտորած, գաղթ: Դժոխային իրարանցման մեջ ընտանիքի անդամները կորցնում են իրար: Մի ոռու դինվոր որսաւայլու տղային վերցնում, դուռը է դուռմակի (ինքն ասաց՝ արողի) սալլին, պարսիմատի տոպրակների վրա: Հայրը որդուն գտնում է իգդիրում: Սով, տիֆի համաձարակ: Ընտանիքի անդամները հազարավոր ուրիշների հետ հայտնվում են Թիֆլիսում, ուր նրանց կարիքները հոգում է վաղուց ի վեր այստեղ բնակություն հաստատած Մանուկ Հորեղբայրը: Հիշում էր Հորը՝ կոշմարային զառանցանքների մեջ անկողին ընկած: Նույն 1915-ին վախճանվել է մայրը՝ աակավին երիտասարդ հասակում, ապա և իրենից երեք տարով փոքր Ռուսական կազմակերպություն է առաջը և իրենից յօթ տարով փոքր Գառնիկ եղբայրը (սրա ողբերգական ճակատագրի մասին՝ իր տեղում, որ հաջորդ գլուխն է):

1917. Երեան, ուսանել է թեմական դպրոցում: Խառը ժամանակներում դպրոցը փակվել է:

1918. Բուրժական արշավանքի սարսափը. վերստին գաղթ, այս անդամ Հյուսիսային Կովկաս՝ Մայկոպ:

1918—1919. վերստին հայտնվել է Թիֆլիսում (այստեղ տեսել է «Ավազակները», Միքայել Մանվելլանին Ֆրանցի գերում, ինչպես և «Դավաճանություն» ներկայացումը):

1919—20. Ալեքսանդրապոլ, ապրել են Կարմիր աղբյուրի մոտ գտնվող մի տան մեջ, որից ոչ հեռու բնակվել է Հովհաննես Զարիֆյանը՝ «շեկ, հաճելի դեմքով, համակրելի անձ, մեծ

ապավորություն էր թողնում, երբ շլլապան թեր դրած անցնում էր փողոցով։ Մանոթացել են մեծ արտիստի հետ Զարիֆյանը նրանց փոքր պիեսներ է նվիրել խաղալու։ Արմեն Արմենյանի բնմաղրած «Նախ մեռան, հետո ամուսնացան» վողեիլում խաղացել է ինչ-որ մի դեր։ Այդ ժամանակ Գուրիսը (Գուրգեն Մահարին), որ եղել է ամերիկյան որրանոցում, պիես է գրել «Պոետն ու արտիստը»։ Աճեմյանը որրանոցի տղաների հետ խաղացել է այդ պիեսում, հետո նաև մի քանի անգամ՝ Պազտասար աղբար։

1920. Երևան։ Ուսանել է Արովյանի անվան դպրոցում, միաժամանակ՝ դերասան Վարդան Միրզոյանի բացած թատերական ստուդիայում։ Ապրել է մոռաքրոջ որդու՝ Աղասի Խանջյանի տանը (այդ ժամանակ Խանջյանը զրադված էր հեղափոխական ընդհատակյա գործունեությամբ, «գտնվում էր կոնսպիրացիայում»)։

1921—24. ուսանել է Արովյանի անվան դպրոցում և զեղարքեստական (նկարչական) ստումնարանում, երկուսն էլ ավարտել է 1924-ին։ Նույն թվականին Երևանում իր ներկայացումները ցուցադրել է Մոսկվայի հայկական ստուդիան (Բաղեսու Սարյան, Արշավիր Կորկոտյան, Սուրեն Թոշարյան և ուրիշներ) Ռուբեն Սիմոնովի զեկավարությամբ։ Ստուդիան նոր սաներ է հավաքել։ Աճեմյանը ներկայացել է քննության՝ արտասանել է մի առակ, Լերմոնտովի «Դեր», ցուցադրել է այսպիսներ։ Ընդունվել է։

1924-ի վերջից մինչև 1926-ի ամառը Մոսկվան տարիներ նախ՝ Մոսկվայի հայկական կուլտուրայի տանը կից դրամատիկական ստուդիա։ Այդ տանը գործել է Գարիմա (բառացի՝ բնմ) Հրեական թատրոնը։ Այստեղ Աճեմյանը մի քանի անգամ դիտել է «Հաղիբուկ» ներկայացումը՝ Եղիշենի

Վախթանգովի նշանավոր բեմադրություններից մեկը։ Տեսել է Կոնստանտին Ստանիսլավսկուն («Բոյարի արտաքին ուներ, հաղթ հասակով, մարտը և ահավոր պատկառելի»), լսել է նրա դասախոսությունները։ Լսել է Վասիլովդ Մելքոնովին դիսպուտների ժամանակ, դիտել նրա փորձերից մեկը։ Դիտել Վախթանգովի «Արքայադուստր Տուրանդուց»։ անսովոր ներկայացումը երիտասարդին շփոթեցրել է, զարմացրել, հիացրել («Դեռ շըմբոնած որոշում կայացրի՝ պետք է դառնամ ուժիսոր»):

Հետո՝ այնայլ ներկայացումներ թատերական բուռն կյանք ապրող Մոսկվայում՝ Մելքոնովի «Անտառը», Թափրովի «Ժիրոֆիլյան»՝ Յակովովի ձևավորմամբ, «Աղջիկնակուպրես», Փոքր թատրոնում՝ «Կրեչինսկու հարսանիքը» Դավիդովը Ռասպլյումի դերում, Գեղարվեստական թատրոնում՝ «Ֆեոդոր Շուշնչովիչ» արքան», անձնավորման արվեստի գլուխգործոցներ՝ Միխայիլ Չեխովի երիկ XIV-ը և Համեմետը...

Ստուդիայում ուսանել է մեկ տարի, խաղացել է քահանա՝ «Մեծապատիվ մուրացկաններում», Դիգոլի՝ «Պեպոյում»։ Զգացել է, որ չունի դերասան գոտնալու հեռանկար («Էս բայով ի՞նչ ունի դերասան»)։ Այդ պատճառով էլ ընդունվել է Պրոլետկուլտի ուսումնարանի ուժիսորական բաժանմունքը, որ ավարտել է 1926-ին։

Նորընծա բեմագրիչի հետագա բախտը տնօրինվում է զավեշտական դրվագներով։ Թիֆլիսի դրամատիկական ստուդիայի դեկանվար կարգվելու համար (ըստ հանձնարարականի), հարկավոր էր ներկայանալ Հայարտան վարչության նախագահ Սերգո Խանոյանին։ Ընդունարանում սպասում են ստուդիա ընդունվելու հավակնորդները, Աճեմյանը նրանց մեջ Խանոյանը հայտնում է, թե միայն Աճեմյանին կարող է

ընդունել: Սա տեղից վեր է կենում, թե՝ Աճեմյանը ևս եմ: Պատասխանը՝ խորին հիասթափություն քանի երկուամյա կարճիկ երիտասարդից՝ «վա՞Հ...»: Աւզած-շուզած թուղթ է դրում ստուգիայի տնօրին Գ. Փիրումյանի անունով: Թուղթն առած ներկայանում է Փիրումյանին, սա կարծում է, թե կարճիկը ստուգիա ընդունվելու համար է եկել, ուստի և առաջարկում է դիմում գրել Աճեմյանի անունով: Վերստին թիֆլիսային պարմանը «վա՞Հ-ը» դարմանք և հիասթափություն: Այսպես թե այնպես, դառնում է շուրջ 30 հոգուց բաղկացած ստուգիայի դեկավար:

1927-ի ապրիլի 28-ին ցուցադրվում է Դ. Դեմիրճյանի «Հաղթական սիրո երգը» պիեսի բեմադրությունը՝ ստուգիայի առաջին և Աճեմյանի առաջին սեժմուրական աշխատանքը: Պրորեմը՝ ովքե՞ր կփրկեն նավը խորտակումից, հեղափոխական նավաստինե՞րը, թե հականեղափոխական սպաները. պատասխանը ենթադրվում է ինքնին: Բեմադրության ոճը՝ «ապայմանական թատրոնի» սկզբունքների անխնա գործադրում, ոիթմային կտրուկ անցումներ նավը (գործողության վայրը) տեղադրվել է դահլիճի մեջտեղը: Աւրիշ կերպ չեր կարող լինել, Մելքոնյանի համատարած տիրապետության ժամանակներն էին:

Առաջին ուսումնական տարին փակվում է: Թիֆլիսի հայութամա է հրավիրվում հայտնի բեմադրիչ Արշակ Բուրջալյանը: Սա պայման է դնում, որ ստուգիան էլ իրեն տրվի: Թիֆլիսում մնալն Աճեմյանի համար դառնում է անիմաստ:

1927-ի վերջերին. ընդունելություն լուսժողկոմ Ասքանազ Մոավյանի մոտ: Սա երիտասարդին ուղարկում է Առաջին պետթատրոնի տնօրին Մամիկոն Գևորգյանի մոտ: Կարո՞ղ է

ինքնուրույն բեմադրության հույս ունենալը Առաջին տարում խոստանալ չեն կարող Ռեքեմն՝ չեղամի:

Այդ ժամանակ առաջարկում են բեմադրություն անել Բանվորական շրջիկ թատրոնում: Բեմադրում է Ա. Անտիմոնովի «Ստրկովետուխին» պիեսը՝ Մոսկվայի Սատիրայի թատրոնի խաղացանկից: Բեմադրության վայրը՝ Կարմիր բանակի տուն (նախկին Զանփոլադյանների թատրոն): Պրոբլեմը՝ պայքար հեշտ վաստակ որոնողների, նեպմանների դեմ: Սյուժետային դրվագ՝ մոտացիկլետով հետապնդում են կարևոր թղթեր փախցնողներին: Բեմադրության ոճը՝ խառնածին՝ լեցուն տըրյուկներով, էֆեկտներով, կատաղի ոիթմ, վիթար, խլացուցիչ աղմուկ, նաև կինոցուցադրումներ, նաև գնչուական երգախումբ... Երկրորդ անգամ ցույց տալուց հետո ներկայացումն արգելվում է:

Ի՞նչ անել: Խոսք է բացվում կենինականում երկրորդ պետական թատրոն բացելու մասին՝ Մոսկվայի դրամատիկական ստուդիայի նոր շրջանավարտների ուժերով: Անցնում է աշխատանքի իրրե ռեժիսոր և դերասան: Նման գեպքերի համար է ասկած՝ խուփը գլորվեց գտավ պուտովը: Առաջին ինքնուրույն բեմադրությունը (Բ. Լավրենյով «Բեկում», 1929) պսակվում է մեծ հաջողությամբ: Դրան հաջորդած բեմադրությունները (Ս. Բաղդասարյան «Մարկկո», 1929, Զ. Չալայա «Հեռը», 1930, Ի. Միկիտենկո «Դիկտատուրա») երիտասարդ արվեստագետի դիրքերն ամրապնդում են այնքան, որ նաև առաջին բեմադրիչ Թադևոս Սարյանը փոխում են իրենց տեղերը, իսկ 1931-ին քսանվեցամյա վարդան Աճեմյանը կարգվում է Հայաստանի երկրորդ պետական թատրոնի գեղարվեստական զեկավար: Դրան հաջորդող տարիներին դառնում է «Հատակում» (1932), «Մեծապատիկ մուրաց-

կանները (1934) դաստիան ներկայացումների հեղինակը: Սկսվում է մեծ նավի նավարկությունը մեծ ժողով, ինչքան որ հայոց թատերական ժողով կարող էր մեծ լինել...

Այստեղ կախման կետ ենք դնում Անհմյանի կյանքի ընթացքը հաջորդ գլխում շարունակելու մտադրությամբ և այս հարցադրումն անելու համար՝ ի՞նչն էր, որ գաղթական պատանուն ոտքի կանգնեցրեց, Մոսկվա տարավ, 20-ականների մոսկովյան բուն թատերական կյանքի ականատեսն ու աշակերտը դարձրեց, մասնագիտացրեց նրան և ձևավորեց իրը արվեստագետ, թե ու թիկունք տվեց, իր հայրենիքի երկրորդ թատրոնի ղեկավար կարգեց ու հասցրեց առաջնակարգ արվեստագետի ճանաշման:

Իշարկե՛, հեղափոխությունը:

Մօխիրների միջից հառնեց հայ հայրենիքը հեղափոխության շնորհիվ, իրողություն, որի անհամար մասնավոր արտահայտություններից մեկը հենց ինքն էր՝ իր ճակատագրով՝ Այստեղից էլ Անհմյանի քաղաքական աշխարհայացքը՝ վերաբերմունքը հեղափոխության նկատմամբ, նորաստեղծ իրավակարգի հանդեպ, հեղափոխության թեմայի այնքան շատ արծարծումներն իր ստեղծագործության մեջ: Այդ հունի մեջ նրա ստեղծած ներկայացումների երկար շարում «Դեպի ապագան» (1960) և «Հանրապետության նախագահը» (1970) առանձին տեղ են գրավում: Ներկայացումներ, որ, ինչպես արդեն ասել ենք, ոչ թե պարզապես բևմաղրված են, այլ ստեղծագործված՝ սեփական կենսափորձի միջամտությամբ, սեփական ձեռագրով, ուստի և պատկանում են այն դրժերի շարքին, որոնց տակ նա իրավունք ուներ ստորագրելու՝ հեղինակ Վարդան Անհմյան:

Բեմական և բեմադրական արժեքավոր աշխատանքներ

էին դրանք, բայց գտան հանդիսատեսային տարրեր ընդունելություն. 1960-ի «Դեպի ապագան»՝ բավականաշատ սառն, 1970-ի «Հանրապետության նախագահներ»՝ ավելի քան ջերմ:

Ամեն անգամ հեղափոխական նշանավոր տարեթվերի ժամանակը որ գալիս էր՝ թատրոնի առաջ ծառանում էր հարցերի հարցը. ի՞նչ բնմաղրել: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 40-րդ տարեկիցը մոտենալիս ծագեց նույն այդ անխուսափելի հարցը: Չեմ հիշում ե՞րբ, ի՞նչ հանգամանքներում մտրովս անցավ Զարենցի երկերի հիման վրա ներկայացում ստեղծելու գաղափարը: Աճեմյանը մի քիչ միտք արեց և՝ տերսությամբ կազմիր, տեսնենք ինչ է դուրս գալիս: Առարկեցի՝ ևս նման աշխատանքի փորձ չունեմ, դուք պիտի անեք: Պատասխան՝ դու արա, ինչպես պատկերացնում ես, հետո միասին կաշխատենք:

Հանձն առա, և դա եղավ առիթն իմանալու համար, թե ինչ է նշանակում «աշխատել Աճեմյանի հետ»: Նոր հասկացա, թե ինչ էն բաշում թատերագիրները նրա ձեռքին՝ գրել, ջնջել, նորից գրել, նորից ջնջել, հրաժարվել նախորդ օրը հավանություն գտած տերսություն, նորը գրել՝ վաղը մեկ ուրիշով փոխարինելու համար: Ինքը չէր չոգնում անվերջանալի փոփոխություններից, նույնիսկ հաճույք էր ստանում դրանից և ստիպում, որ դու էլ չհոգնես: Այն, ինչ ասում էին թատերագիրները՝ քիչ էին ասում. համոզվեցի սեփական փորձով:

Հիշում եմ մեր անհամար հանդիպումներն իր տանը 1960-ի ամռանը՝ Երևանի անտանելի օգոստոսին (շթողեց քաղաքարից դուրս գամ): Ի՞նչ ընտրել Զարենցի անհամար հեղափոխական պոեմների ու բանաստեղծությունների հեղեղից, ի՞նչ հերթականությամբ, որ գաղափարի ու գործողության զարգացումը դրվի տրամարանական ընթացքի մեջ, որ Այնի

բարձրաշունչ խոսքի գերիշխանություն (մի բան, որ անխուսափելի եղավ), որ ողբերգական, կենցաղային, երգիծական տարրերը համաշափ տեղ գրավեն...

Ես, խոստովանեմ, շատ աշխատեցի, ինքը՝ շատ ավելի: Կային տեղեր, որոնց համաձայն չէի՝ գործից հրաժարվելու աստիճան, բայց և չէի կարող շհամաձայնել, քանի որ ինքն էր գործի տերը, ինքն էր «տեսնում» ներկայացումը: Ի վերջո, դուրս եկավ ամբողջովին Զարենցի գրվածքներից հյուսված-համազրված մի տերստ՝ «Դեպի ապագան» վերնագրով (վերնագիրը Զարենցի մի բանաստեղծության, որով ավարտվում էր տերստը):

Հիշում եմ, 1960-ի սեպտեմբերի սկզբին տերստը զրվեց բննարկման կուլտուրայի մինիստր Հրաչյա Մարգարյանի առանձնասենյակում՝ թատերական գործիշների ներկայությամբ: Տերստը կարդաց Աճեմյանը: Եղան թեր և դեմ կարծիքներ: Ընդհանուր առմամբ վերաբերունքը զրական էր: Հիշում եմ, ասողը վահրամ Փափազյանն էր՝ այդ պատճառով եմ հիշում, թե՝ սա պետք է բեմադրել իրրե ույցու...¹

Աճեմյանը համամիտ եղավ՝ այդ՝ ճիշտ է, ոչ թե սովորական դրամատուրգիական գործի պիս, այլ հրապարակախոսական ներկայացում, բայց կիխեն և ուրիշ շեշտեր՝ «Խըմ-րապեն» Շավարշեա, «Կապկաղի» ղրվագները և այլն:

Բեմադրիչը թևերը բշտած անցավ գործի: Ես մինչ այդ էր շատ էի եղել Աճեմյանի փորձերին, դարձել նրա անձանձիր աշխատասիրության ականատեսը: Բայց այս անգամ է որ, գործի բերումով պարտադրված, լիակատար պատկերացում

1 Բատերական հանդիսանք՝ բազկացած որևէ հատկանիշով ի մի բերված առանձին տևարաններից ու համարներից:

կազմեցի բնմի աշխատավորի մասին։ Մի մարդու մեջ որտեղի՞ց այդքան եռանդ, ֆիզիկական ուժ, չխռուելով այլևս ստեղծագործականի մասին։ Պահանջկոտ և դժգո՛ վերաբերմունք ամենըից (նաև ինձնից), իսկ ամենից առաջ՝ իրենից։ Բոլորի հոգին հանում էր աշխատեցնելով, տարբերակներ պահանջնուով ու փորձելով։ Բայց մարդիկ ամեն ինչ անում էին անմոռնչ, քանի որ նա ամենից շատ իր հոգին էր հանում։ Արվեստի մշակի աշխատանքն իմ մեջ հարուցում էր մի զգացում, որ և ակնածանք էր, և կարեկցանք։ Այդպիսի զգացում կարելի է տածել սկագործ քանվորի, հանքափորի, երկրագործի հանդեպ՝ մասնագիտությունն էական չէ։ Այդ ուժն էր, որ ոտքի էր հանել բոլորին, մեծից փոքրը՝ վահամ Փափազանից (նա, կարծեմ, ներկայացման հանձնմանը միայն հանդես եկավ Զարենցի տողերի արտասահնությամբ), Օլգա Գուլազյանից, Հրաչյա Ներսիսյանից մինչև ամենակրտսերները, համարմբել մի նպատակի շուրջը, գործի դրել Սունդուկյանի անվան թատրոնի գծվարահաճ մեքենան։

Ինձ հրապուրում էր Աճեմյանի աշխատանքը նկարիչների հետ, Բեմադրության և վայրերն էին շատ, և գործող անձինք, ուստի և մի քանի նկարիչ էր Հրավիրել՝ Սուրեն Ստեփանյան, Սարդիս Արուտչյան (որ թատրոնի գլխավոր նկարիչն էր), Թնարիկ Վարդանյան։ Լավ հիշում եմ՝ մի որոշ ժամանակ աշխատում էր նաև Միքայել Արուտչյանը։ Մինչև ուշ գիշեր լինում էի նրանց հետ։ Ինձ գրավում էր հատկապես Միքայել Արուտչյանն իր մարդկային և մասնագիտական վերին աստիճանի կիրթ նկարագրով, մեծ մարդկանց հետ ունեցած շփումների կնիքը վրան։ Մի օր ասաց Աճեմյանին՝ գիտե՞ս ինչ, վարդան, քանի մեծանում՝ դու և Ռուբեն Սիմոնովը նմանվում եք իրար...

իրոք՝ ոնց որ հարազատ եղբայրներ:

Նկարիչները և՝ բավականություն էին ստանում Անեմյանի ստեղծագործություններից, և դժգոհում իր բացակայությամբ՝ չես հասկանում ուզածն ինչ է:

Ամենից ավելի դերասաններից էր գժգոհում՝ սա խոսքի ներկայացում է, բայց տես որ արտասանել շգիտեն, չնե կարողանում վարակել...

Գոհ էր Բարկեն Ներսիսյանից, որ ամենից գլխավորն էր՝ ներկայացումն առաջ տանողը, պայմանաբար՝ հեղինակը, նրան էր հասնում տեքստի մեծ մասը: Դերասանը Զարենցի տողերն ասում էր անկեղծ ներշնչանքով, հատակ, անսայթաք, վեհաշունչ: Դերասանի նախասիրած պաթոսն ու տեքստի պարուը ըստնում էին իրար և տալիս հիանալի արդյունք (մտքումս տպավորվել է հատկապես «Գանգրահեր տղան»՝ այնքան հուզումնալից էր դերասանի խոսքն այդ հզոր բանաստեղծությունն ասելիս):

Վատահելի դերասան է,— ասացի: Ի՞շարկե՞,— պատասխանեց,— եթե բոլորն այդպես լինեին, կմտածեի ավելի բարձր բաների մասին, թե չէ շարունակ պիտի հետեւս տեխնիկական հանդամանքներին՝ այսպես ասա, այսպես շեշտիր, այս միջանցքները պահպանիր... խոսքը չի վարակում, կրակ շկա մեջները, կրակ...

Չեմ կարող ասել, թե հատկապես ում մասին էր խոսքը (ներկայացմանը մասնակից էր գրեթե ամբողջ թատերախումբը), բայց դժգոհությունը լավ հիշում եմ:

Դա անսպասելի չպետք է լիներ,— ասում էի,— մարդիկ սովոր չեն, առաջին անգամն են գործ ունենում նման տեքստի հետ:

Թույլ սփոփանք էր դա՝ հետո ի՞նչ:

Այսուհանդերձ, բեմադրիչի և թատերախմբի չանքերն իզուր շանցան, ստեղծվեց մեծ շնչի, թատերական ինքնատիւ ձևերի, վառ գույների գորեղ մի ներկայացում։ Մինչև հիմա մտքումս անջնջելի են մնացել Հրաշլա Ներսիսյանը՝ Ներկայացումը բացելիս։ «Հեռո՛ւ, մոտիկ ընկերներին, — աշխարհներին, արևներին, Հրանտան Հոգիներին... ողջո՞ւն, ողջո՞ւն...», չին Երևանի պատկերները՝ Աստաֆյան փողոցը, Դանթարի տակը՝ բեմադրիչի անձնական մտարերումների կնիքով, «Ամբոխները խելագարված» պոեմի թատերական համարժերը՝ ոիթմային ուժեղ հագեցմամբ, «Իմ ընկեր Լիպոյի» սրտալի դրվագները՝ Գարուշ Խաժակյանով, «Դանդրահներ տղայի» մասին արդեն ասացի Եվ, վերջապես, թե՛ն դա Ներկայացման մեջտեղն էր՝ «Կապկազը»։ Դա սատիրական գրոտեսկի ամենավառ արտահայտությունն է, որ ևս երբեմէ տեսել եմ թատրոնում։ Ո՞չ, ճիշտ կլինի ասել դրանից առաջ մի անգամ տեսել էի Մոսկվայում։ Մայակովսկու «Փայտոցիլը» Ս. Յուտիկիչի և մ. Պլուշեկի բեմադրությամբ՝ սատիրական կերպարանագծումների և բեմավիճակների շատրվան, արված Մեյերհոլդի «պայմանական թատրոնի» եղանակներվ։ Ամենայանի «Կապկազը» և՝ անխնա շափականցումներ, «պայմանական թատրոնի» եղանակներ, Զարենցի կամեցած ժողովրդական հրապարակային թատերախմալը, իրոք, որ թամաշա, բայց բեմադրական մեծ կուտուրայի կնիքով։ Նաև գրոտեսկային անձնավորման այնպիսի որակով, «Բ այդօրինակ խաղառնի բարձրակետը եղավ Հայ դերասանական արվեստում։ Յարս՝ դիմակներով ու զգեստավորմամբ (Էսթիզները, բարեբախտաբար, պահպանվել են), արտասովոր ճկուն խաղ՝ ոիթմային կտրուկ անցումներով, երկի բաղարական բովանդակության հստակ դրսեորմամբ։ Աշխ

առաջ են անգրկովկասյան ազգային հանրապետությունների գործիչների ցայտուն ժաղբարձրակերները։ Մեծ տպավորություն էր թողնում այս սատիրական հանդեսը, մտածել տալիս, թե ինչու Զարենցը կարող էր ասել մի որոշ շափազանցմամբ, թե իր ամենալավ գործը եկամկաղն» է։

Լավ բան շատ կար այս ներկայացման մեջ, նկարչական ձևավորումը և Վաղարշակ Կոտոյանի երաժշտությունն էլ իրենց հերթին։

Եվ, այսուհանդերձ, բեմադրությունը սպասված հաջողությունը շունեցավ։ Ո՞վ զիտի, եթե բեմադրությունը շարունակվեր ցուցադրվել, գուցի հանդիսատեսային գանգվածը կապվեր ներկայացման հետ (այդպիսի դեպքեր լինում են), բայց առաջին ցուցադրումները մեծապես սպասված խանդավառությունն առաջ լրերին։

Մի անգամ Ռուբեն Զարյանն ասաց Աճեմյանին՝ ներկայացմդ սպասված հաջողությունը շունեցավ, և պատճառը թատրոնից դուրս է։

Ուզում էր ասել, որ անցել են հեղափոխության թեման բարձրաշունչ ոճով մատուցելու ժամանակները և որ բանաստեղծական խոսքով հագեցած ներկայացման սովոր շէին ոչ միայն Բատրոնն ու դերասանները, այլև հանդիսատեսը։ Մասնագետները գնահատում էին «Դեպի ապագան», համարում դարձացման ուղիներ նշող, բեմական արվեստին մղում տվող ներկայացում։ Եվս մեկն այն սակավաթիվ դեպքերից, եթե Աճեմյանի աշխատանքի արդյունքը մասնագետների շրջանում գնահատվում էր, պարզ հանդիսատեսների մեջ՝ ոչ այնքան։

Ըստ երևութին, մեր հանդիսատեսի հետ խոսելու լեզուն զգացմունքների լեզուն է։ Արևելյան ժողովուրդ ենք, ի վերջո, հուզմունքի, զգացմունքի ժողովուրդ։ Նրա նախ սրտին պիտի

բան ասես, հետո մտրին: «Դեպի ապագան» հակառակն էր,
«Պեպոն»՝ նույնպես:

Զննենք երկար շարքն Աճեմյանի այն բեմադրությունների, որ պետք է համարել թատերական անվիճելի արժեքներ: Ռոբեր են դրանցից մեծ հաջողություն գտել, ցուցադրվել շափագանց շատ, մի քանի հարյուր անգամ, բեմից չեն իշել տասնյակ տարիներ: Եվ իսկույն կերևա, որ դրանք եղել են Հայոցի սատերի սրբի հետ խոսող, դատուականի հանդեպ Հուզականի գերակշռություն ունեցած ներկայացումներ, հագեցած դիտողի աշխին խոնավություն բերող սրտաշարժ հուզմունքներով կամ քահ-քահ ծիծաղով: Զննենք և իսկույն առաջ կմզվեն «Մեծապատիլ մուրացկաններ», «Հատակում», «Մեր և խարդավանք», «Հյուրանոցի տիրուհիներ», «Պատմի համար», «Ժայռ», «Տաներկուերորդ գիշեր», «Նամուս», «Մրտի արաւո», «Քառոս», «Քատական գործ», «Աշխարհն, այո՞», շուրջ է եկել և համանման ներկայացումներ:

«Հանրապետության նախագահը» պատկանում է այս շարքին: Ես դրա ստեղծման հանգամանքներին լավ ծանոթ չեմ, բանի որ փորձներից միայն մի քանիսին եմ ներկա եղել, բայց բարերախտարար, պիեսի հեղինակ Զարգանդ Դարյանը գրել է դրանց մասին: Գրել է իմ խնդրանքով՝ «Վարդան Աճեմյանը ժամանակակիցների հուշերում» գրքի համար և այնքան լավ ու մանրամասն, որ իմ վկայության կարիքը չկա:

Աճեմյանը գրական ամսագրում կարդացել է Դարյանի «Վերջին թոհջը» կինովիպակը, հեղինակին հրավիրել իր մոտ և հանձնարարել այդ գործը դրամայի վերածել թատրոնում ներկայացնելու համար: Դարյանը հանձն է առել: «Այդ օրվանից էլ, ահա,— գրել է նա,— ինձ համար սկիզբ առան շարշարանաց շաբաթներն ու ամիսները»:

ԱՆՎԵՐՀԱՆԱԼԻ փոփոխությունները հուսահատեցնում են ՀՆԳԲՆակին: Մի անգամ էլ, վստահ, որ գործը հասել է ավարտման, բարձր տրամադրությամբ գալիս է թատրոն և գեղ ներս շմտած» բնմաղրության նկարչից լսում է բոթը՝ «Երեկվապատկերից հետք անդամ չի մնացել: Նոր դեկորներ է պատվիրել զիխավորը»:

Եվ ամեն ինչ սկսվում է նորից, այբուբենից, ինչպես հապճակ սրբած դրատախտակի վրա ևս նոր խնդիրներ լուծում:

Այսպես հյուսվում է մի ներկարացում, որի ոչ թե առաջար գաղափարն էր նորությունը՝ թե ինչպես ճակատագրի սղբերգական տարուրերումներից հյուծված հայ ժողովուրդը փրկություն գտավ Հեղափոխության շնորհիվ և թե ինչ կարգին ու անձնվեր մարդիկ էին կանգնած Հայաստանի խորհրդային պետության ակունքների մոտ, այլ այդ գաղափարի հաստատման հոգական ուժը:

Սրանք ընդհանուր, ամենքին հայտնի բառեր են, ինչպես ներկարացման գաղափարը: Բայց տեսեք դրա առարկայորեն շոշափելի պատկերումը:

... Ալեքսանդրապոլի կիսավեր կայարանը, խոնված բազմություն՝ բնավեր գաղթականներ, տեղացիներ, կին, տղամարդ, երեխաններ, որբեր, բզկտված անտեր ժողովուրդ: Հատեն որբերը, որոնց ամերիկյան որբախնամ ընկերությունը տեղափոխում է Ամերիկա: Տիրում է անհամբեր սպասողական զինակ, ուր-որ է կերևա այն գնացքը, որով հանրապետության նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը պետք է ժամանի՝ դեպի երեան մեկնելու և իր պաշտոնին անցնելու համար: Գնացքը ժամանում է, հայտնվում է Մյասնիկյանի ժանոթ ու համակրելի կերպարանը: Մյասնիկյանը՝ բաղաքական և մարդկային

վիթխարի հեղինակություն, որին Խորեն Աբրահամյանը անձնավորում էր խորին լրջությամբ:

Նրան հայտնում են որբերին տեղափոխելու լուրը: Հանրապետության նախագահը ցնցվում է: Մեծ պառզա: Լսվում է նրա հանդիսատ, վատահ, որևէ առարկություն շընդունող հրամանը.

— Անչատե՞լ շոգեքարշը, որբերին իշեցնել գնացքից...

Այս՝ — անցնում էր հանդիսատեսի մտքով, — այս ժողովուրդն այլևս անտեր չէ, նա պետություն ունի և այդ պետությունը գտնվում է ազնիվ ու զորեղ ձեռքերում:

Հեղինակն իր հուշագրության մեջ պատմում է, որ ինքը Մյասնիկյանի և որբերի հանդիպման տեսարանն աօժտել էր երկար, ազգեցիկ երկխոսություններով», բայց փորձերից մեկի ժամանակ Խորեն Աբրահամյանն ասել է, թե խոսքը թուացնում է զործողության լարվածությունը: Աճեմյանը համաձայնել է և երկարաշունչ տեքստի... խոսքը տանք Զ. Դարյանին. «... փոխարեն ձևակերպեց ընդամենը երեք տող հեղինակային նշագրում-ումմարկ. ո՛՛րբերի երգին հետևում է սրնգի տիրուր նվազը: Մյասնիկյանը, որ մինչև այդ շրջում էր որբերի մեջ, հանկարծ կանգ է առնում և լուր հանում է զբւխարկը: Ուրիշ ուշինչ: Մոտ երեք րոպե տևող այս համբ տեսարկը»: Ուրիշ ուշինչ: Մոտ երեք րոպե տևող այս համբ տեսարկը՝ թիկնեղ, կաղներազուկ տղամարդը թեթևակի խոնարհած անհերանմեր ոճերին առջև, իրուն պահապան հրեշտակ, ցնցող տպավորություն էր զործում հանդիսատեսի վրա:

Իրոք, հանդիսասրահը սարսում էր հուզմունքից: Աշխարհ էր գալիս ու անցնում տանջաշար մարդկանց գեմքերը կաթեկցանքով զննող պետական զործչի մտքով...

Աճեմյանի նպատակն ուրիշ բան չէր:

ՏԵղն է եկել բնորոշելու Աճեմյանի արվեստի մի կարևոր կողմը ևս: Նա դավանում էր վախթանգովի ձևակերպած ռարտահայտության վերջնասահմանին» Հասնելու սկզբունքը: Դա էր ընդհանրացումների, մինչև իսկ սիմվոլիկ ընդհանրացումների հասնելու նրա ճանապարհը: Բայց վերացական անառարկա սիմվոլացումները դուրս էին նրա նախասիրությունից: Ընդհանրացումների հասնելու համար նրան չո՞ղ էր պետք, և այդ հողը կենցաղն էր, կյանքի մանրամասնությունները: Օրինակներ շատ կարելի է բերել ասածո հաստատելու համար, և դրանցից մեկն այս ներկայացումն է:

Աճեմյանի արվեստի այդ էական հատկանիշը լավ նկատել և բացատրել է թատերական բնուադաստ Աննա Օրբազյովան. «Թառամաս ներկայացման գեղարվեստական ոճը չի հակադրվում կենցաղին, մանրամասերին, պատմական ուսալ երեսների կոնկրետությանը: Վ. Աճեմյանի ներկայացումների կերպարսիմվոլներն այս առումով սկզբունքորեն տարրերիվում են, օրինակ, Ն. Օխոտկովի գեղարվեստական սիմվոլներից. աչ կաբմիր քաթանը («Երիտասարդ գլարդիա»), մի հատիկ խընձորը («Ալգիկապանն ու ստվերը») բաց բնմում երևացող սիմվոլներ են, որ ծնունդ են առել կենցաղի դեմ մզվող պայքարում, զրա ժխտման մեջ: Վ. Աճեմյանի էպիկական, սիմվոլային ընդհանրացումները հիմնված են էպոխայի սեփունուսումասիրության, մանրամասերի հանդեպ խորին ուշադրության վրա: Այսպես ուրվագծվում են երկու տարրեր և տարրեր կերպով արգասավոր ուղղություն գեղարվեստական լայն ընդհանրացումների որոնումների մեջ՝ ժամանակակից բնմական արվեստում», «Վ. Աճեմյանի ոնժխորական ստեղծագործության նշանակությունը դուրս է գալիս միայն հայուրըգային թատրոնի շրջանակներից», «Վ. Աճեմյանի ներ-

կայացումները բանավիճում են ռպայմանական ռեժիսուրացիա հետ, վիճարկելով սիմվոլի իրավունքն իրրև զուտ պայմանական բնմադրական լրուժման իրավունքը¹:

Ասվածը հաստատող մեծաթիվ օրինակներից էր «Հանրապետության նախագահը» ներկայացման կայարանի պատկերը: Այստեղ խռնված ամբոխը՝ զարկված, շփոթահար հայժողովրդի սիմվոլիկ ընդհանրացումը հենված էր կենցաղի, մարդկանց հարաբերությունների, նրանց լեզվական-բարբառակին, ազգագրական նկարագրի խորապես ուսումնասիրության վրա: Դու տեսնում էիր ինչոք են ապրում ու շնչում այդ մարդիկ, կարդում էիր նրանց «կենսագործությունը», թափանցում նրանց հոգիան մեջ: Ես դա ունեի աշքի առաջ, երբ գրել էի ներկայացմանը էկրարերող իմ «ողբածում»². «Ոճրագործությունը» հայածված ժողովրդի զառն ճակատագրի ականատեսարվեստն է, որ կարող էր այդքան ճշմարտացի և խորին հուզմունքով պատմել այն, ինչ եղել է»:

Թա էր գեղարվեստական ընդհանրացումների, հուզական հարստության և կենսական հավաստիության հասնելու Աճեմյանի որդեգրած սկզբունքը:

Հուզական հարստություն և կենսական հավաստիություն՝ Աճեմյանի արվեստի ազն ու ահյակը:

Այսքանով ես ուզում եմ ավարտել իմ խոսքն ու վեյայությունն այն մասին, թե Աճեմյանն ինչպես էր հասկանում և պատկերում իր ժողովրդի պատմական անցյալը: Չպիտեմ, համոզիլ եղա՞վ իմ դատողությունը, թե ոչ, դրա իմաստն այն

¹ «Տeatր», 1960, № 10,էջ 60:

² Լ. Հախվերդյան, Բնմադրիչներ և բնմադրություններ, Երևան, 1983, էջ 117.

էր, որ ի դեմս Անեմյանի նկատենք պատմագրի՝ թատերական տեսանկյունով, իբրև մի արվեստագետի, որ թերթել, վերականգնել, պատկերել է իր ժողովրդի պատմական անցյալի էջերը հնագույն ժամանակներից («Արա Դեղնցիկ») մինչև նախահեղափոխական անցյալը («Մեծապատիվ մուրացկանենք», «Պատվի համար», «Ժայռ», «Նամուս»), մինչև հեղափոխության ժամանակները («Դեպի ապագան», «Հանրապետության նախագահը»): Տեսանկյուն, որի թերթադրանքով տարբեր ժամանակներում ստեղծված տարբեր երկերի բեմադրությունները հայտնվում են նույն հարթության վրա:



ԵՐԵՎԱՆ ՄԱԿ

ԹԵ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆ ԻՆՊԵՍ ԷՐ
ՀԱՍԿԱՆՈՒՄ ՈՒ ՊԱՏԿԵՐՈՒՄ ԺԱ-
ՄԱՆԱԿԱԽՑ ԿՅԱՆՔԸ

Այս վերնագրի առաջին մասն է դժվարինը։ Երկրորդը
(ինչպես էր պատկերում) հեշտ է՝ զուտ թատերագիտա-
կան մասնագիտության խնդիր։

Առաջինը (ինչպես էր հասկանում) պահանջում է թափան-
ցում արվեստագիտի հոգու խորքերը, ներաշխարհի շերևացող
ժալքերը։ Եվ՝ ճիշտը գրելու առաջինությունն Այդ դեպքում
միայն այս էջերը կարող են պետք գալ հետնորդներին մեր

ժամանակի պատկերն ու պատմությունը Հասկանալու համար (իս ունեմ այդ թարուն նպատակը): Եթե ճիշտը չպիտի ասես՝ լոելն է նախընտրելին: Գիտենք, որ պետք է ասվի, բայց պիտի ասենք, որ ասվի:

Ինչպես փոխվում են ժամանակները: Հենց հիմա, 1986-ի օգոստոսի 27-ին, երբ Երևանի շոգերից փախած և տանջվող ու տանջող Սևանի ափին ազատանած գրում եմ այս տողերը, կարդում եմ ԽՍՀՄ գրողների միության վերջերս կայացած 8-րդ համադումարի համարձակ ու խորամիտ ելույթները՝ ճշմարտացի խոսքեր մոտիկ անցյալի մասին: Զրի երև են հանվում դառն իրողություններ, որ հանցավոր խնամքով ու խստությամբ լոթ փականի տակ էին դրված: Եվ սա զեռ սկիզբն է:

Վարդան Անեմյանի մեջ ամուր նստած էր երկու մեծ վիշտ: Մեկը ծննդավայր Հայրենիք վասպուրականի կորուստն էր, վիշտ, որ նա տարավ իր հետ, ինչպես բոլոր արմատական վանեցիները Դրա մասին պատմել եմ արդեն:

Մյուս մեծ վիշտը իր սրաին մոտ, թանկագին մարդկանց կորուստն էր այն համաժողովրդական աղետում, որ անուն էլ չունի, ահասարսուր մի թիվ է նրա անունը՝ «1937»: Ի բնե դրսապ ու կիրթ անձնավորություն, նա իր վշտերի մասին խոսել չէր սիրում, բայց իմ երկարամյա մտերմության, աշխարհայացքային հարազատության, շահածս վատահության պայմաններում խոսում էր երբեմն: Խոսում էր դառնությամբ, կարծես ինձ հետ չեր խոսում, այլ ինքնիրեն:

Մտածող մարդ, նա, իհարկե, թափանցում էր համաժողովրդական ողբերգության խորքերը, ծանր էր ապրում գե-

դարվեստական մտավորականության ոչնչացման իրողությունը (դա երևում էր Եղիշե Չարենցի, Վահվոլող Մելքոնուկի նման դեմքերի մասին խոսելիս), բայց մարդկայնորեն ամենից խոր ապրում էր Հարազատների կորուսար:

Հոր՝ Մկրտիչ Աճեմյանի կորուսար, որ ուսուցապետ էր եղել Վանում, 20-ական թվականներին աշխատել Լենինականի որբանոցներում, մի վերին աստիճանի արդարամիտ մարդու (նրա կերպարը մեկ-մեկ երևում է Գուրգեն Մահարու ինքնակենսագրական եռագրության մեջ):

Փոքր եղբոր կորուսար՝ Գառնիկ Աճեմյանի, որ բանտարկվել էր Լենինգրադի ինչ-որ ինստիտուտի փիլիսոփայական բաժնի ուսանող եղած ժամանակ, հետո ազատվել էր, մտանակից եղել Հայրենական պատերազմին և զոհվել Քյոնիգսբերգում: Մեծ գովեստով էր խոսում Հոր և եղբոր մասին, ինչպես զավակը կխոսի Հոր, եղբայրը եղբոր մասին:

Մորաբրոջ որդու՝ Աղասի Խանջյանի, Հայաստանի կոմիսարի առաջին քարտուղարի կորուսար՝ Կապված է եղել նրա հետ ավելի քան բարեկամաբար:

— Զե՞ս ուզում Երևան տեղափոխվել, — Հարցրեց Խանջյանը մի անգամ:

— Ոչ, — պատասխանեցի, — Լենինականում ավելի լավէ, ինքնուրույն եմ աշխատում:

— Ճիշտ ես վարվում:

Մտաբերում եմ Հետելալը նույնպես:

— Թիֆլիս պիտի մեկնեինք գաստրոների: Եղա Խանջյանի մոտ, ուզեցի մի գրություն վերցնել Բերիայի անունով, որ թատրոնը լավ ընդունեն: Լսեց, միտք արեց, մոալլվեց,

ասաց՝ չէ, ավելի լավ է Արուտինովին վրա գրեմ: Այդպես էլ արեց:

Տառապագին ցավով էր խոսում Դուրգեն Մահարու մասին, որ նույնպես բանտարկվել էր 1937-ին և արսորվել: Դա ավելի էր խտացրել Աճեմյանի շուրջը գոյացած շարագույժ մըթնուրութը: Սերունդներին պիտի անհասկանալի թվա՝ ինչպես կարելի էր անմեղ մարդկանց կազանել և տանել, աքսորել լավագույն բնակիչում մի տասը տարով՝ առանց դատ ու դատաստանի: Ավելի ճիշտ առանց դատի, ուղղակի դատաստանուն, որ կայացնում էր մի ինչ-որ եռյակ (Երօնակ): Ըստ ավանդական իրավագիտության, ամբաստանյալի ինքնախոսությանությունը մեղադրանքի ապացուց չի կարող համարվել (ասենք՝ մեկը կարող է չգործած մեղքը «խոստովանել» մեկ ուրիշին փրկելու համար), բայց, առա, այդ ժամանակներում իրավագիտության մեջ նորամուծություն արվեց (Հեղինակը, կարծեմ, վիշինսկին էր), թե մեղադրանքի գիշավոր ապացուցը ինքնախոսությանությունն է: Եվ մարդիկ հլու-հնագանդ «մեղքեր» է, որ «խոստովանում» էին հարյուրներով, հազարներով, միլիոններով: Հապա թող փորձեն՝ շխոստովանել... Քանի՞սը կարող էին դիմանալ խոշտանգումներին վկայեմ, թե ինձ ու Աճեմյանին 1962-ի մարտի 26-ին, «Արագիլ» ռեստորանում ինչ պատմեցին Մահարին և Լեմպել Մարտությանը (Բալզակի վեպերի, Ռոմեն Ռուլանի «Ժան Թրիստոֆի» թարգմանիչը, որ նույնպես վանեցի էր, 1937-ի գոհ): Այնքան է տպավորվել, որ գրի եմ առել: Ասացին, թե երբ

1 Կոսքը վերաբերում է Գրիգոր Հարությունյանին: 1934—37 թվականներին Թիֆլիսի բազարային կոմիտեի քարտուղար, 1937—53 թվականներին՝ Հայաստանի կոմիտուի կենտրոնի տռաշին քարտուղար:

Թաղեւոս Ավուլը և կյանքը («Կապիտալը» բնագրից թարգմանողը, հայտնի դրականագետ և տնտեսագետ) խոշտանգվելիս հարց է տվել քննիչին (իբրև թե քննիչին), թե ի՞նչ պատասխան պիտի տաք պատմությանը, նա պատասխանել է՝ բանի մեջը կանք պատմություն չի լինի, եթե պատմություն լինի՝ մենք չենք լինի:

Ահա այսպես՝ կարճ ու կտրուկ...

Խոսակցությունը դարձավ այն ժամանակներին, երբ «պատմությունը չէր եղել»:

Անեմյանը պատմեց իր քաշած տառապանքներից՝ հոր բանտարկությունից, Խանջյանի սպանությունից, Մահարուկալանքից հետո: Ես մտարերեցի ինչ հիշում էի անիծյալ ժամանակներից: Երեանում ամենուրեք երևում էին պաստառի վրա զրլած լողունքներ՝ հանճարեղ մտքեր «մարդկային երջանկության ճարտարապետ ու դարրին», հանճարեղ առաջնորդի ստորագրությամբ. «Ամենաթանկագին կապիտալը մարդն է», «Կազրերն են որոշում ամեն ինչը», «Կյանքը լավ է դարձել, ընկերներ, կյանքը ուրախ է դարձել»¹, պիոներա-

¹ Այս զիրքն ավարտել էի արգեն, երբ, որտեղից-որտեղ, «Օգոնեկ» հանդեսում կարդացի հատելալը. «Ժողովրդական ակտաժեխեմ» կմւեկոն, Ստալինի աիրեցյալը, ստանում է իր հերթական շքանշանը. «В ответ на это сообщение отец и мать, орденаносцы послали трогательное письмо Сталину, которое тоже напечатала «Правда». Были в этом письме строки навсегда запавшие в память Сталину, и говорили они о том, что в колхозах теперь «жить стало лучше и веселее». Слегка видоизменив эту фразу, Сталин затем выдал ее за свою, и стал после этого гулять по стране лозунг, едва ли не самый популярный в годы правления Сталина» (Վալերի Շաֆեր. «Горький плод», «Огонек», 1988, № 1, стр. 27).

համ զմայրերում՝ մեծ առաջնորդը մի փոքր աղջկա՝ շատ բամբակ հավաքած Մամլաբլաթին գրկած, երկուսն էլ ժամերեն, նկարի տակ գրված՝ «Շնորհակալություն Հայր Ստալինին երջանելիկ մանկության համար»:

Պատմության մեջ էլ, երեխ, պարկեշտությունը սահման ունի, լկտիությունը՝ բնակվ...

Կյանքն ուրախ էր դարձելու ամեն օր լսում էինք շշուկներ՝ սրան տարան, նրան տարան.. Սպասողներին էլ տեսաւում էի: Իհարկե, ևս չգիտեի, որ Աճեմյանն էլ սպասողների մեջ է՝ ամիսներ շարունակ, որ առ օր, ժամ առ ժամ... Այդ ժամանակից է, երեխ, որ Աճեմյանի մեջ բռն էր դրել վախը (Ալ. Աֆինոգենովը դեռևս 1931-ին մի պիես էր գրել՝ «Ահը» («Ետրախ») վերնագրով, աշդ վախը): Վախի գոյությունը նրա մեջ զգացվում էր: Չեմ կարող ասել ինչպես, բայց զգացվում էր և ազդում իր բնավորության, վարքագծի վրա: Եվ ինչպես կարող էր նա սպասողների մեջ լինել հորից, եղբորից, Մահարուց հետո, այն էլ ահա այսպիսի պայմաններում, որ իր հոգչերում մտարերել է դերասան Արծրուն Հարությունյանը: Կարծեմ թե միայն նա է թղթին հանձնել այս պատեհերը.

«Նստած է ողջ կոլեկտիվը: Նաև այլ մարդիկը:

Մթնոլորտը լարված-շարագուշակ է՝ ինչպես ճակատամարտի դադարի ժամանակ:

Պետք է քննարկվի թատրոնի ներկա վիճակը:

Լոռություն... Եվ շարագուշակ լոռությունը գնալով ահագնանում է:

Վերջապես, ելույթ է ունենում մեկը, հետո՝ մյուսը... Խոսքը միշտ միննույն անձնավորության շուրջն է պատվում... Դե, իհարկե, նա է, որ Ճախողնել է թատրոնի ստեղծագործական ոշխատանքները, նա է խաղացանելը խճողել մեր օրերին

խորթ, ավելին՝ թշնամական պիեսներով... նա, այդ մարդը՝ հաւածում է շնորհալի երիտասարդներին (խոսողն «աթոռի հավակնորդի» ձայնափողն է):

... Եվ, ահա, վերջապես, ամբիոնին է մոտենում ինքը՝ մեղադրյալը: Երկար ժամանակ լուս է, չի կարողանում խոսել: Հուզմունը կաշկանդել, խեղդում է մարդուն... Իսկ «դատավորները» բազմախորհուրդ լուս նայում են: Մեղադրյալը, կարկամած, ջուր է լցնում բաժակն ու դողացող ձեռքով մոտեցնում ջուրթերին... Ժողովականներից ու մեկն այդ զուսպ, հավաք, մշտադրադ ու մշտաշխատ մարդուն չեր տեսել այդ վիճակում: Նա մաքեր է սրոնում, ծամծմում ինչ-որ բառեր և, ի վերջո, մեղադրելով իրեն, իր ամբաստանված յուրային-ներին, մնշված, առավել փոքրացած, նստում է տեղը:

Ավագ զերասաններից Հայկասարը թեքվում է ականջիս ու շշնչում: «Եզր որ ընկնում է» դանակավորները շատանում են:

Այս մարդուն կարելի էր մեղադրել, այո՞ւ, բայց միայն... ժողովրդի բարեկամը լինելու մեջ... Ուրիշ ո՞չ մի բանում:

... Եվ այսպես, թատրոնը երկար ժամանակ զործում: Էր առանց զիմավոր ուժինորին¹:

Պարզ չէ², որ Ամերիանը սպասողների մեջ պետք է լիներ: Ասաց մի օր. ... սպասում էի, որ կտանեն, լավ կլիներ, որ հորից, եղբորից հետո ինձ էլ տանեին, սարսափելի վիճակ էր, հարցը վճռվել գնացել էր, բայց ուրիշ կերպ եղավ (1964-ի հունիսի 20-ի գրառում):

¹ Արժ. Հարությունյանն իր հուշերը գրել է «Վարդան Ամերիանը՝ ժամանակակիցների հուշերում» գրքի համար: Զեռագիրը գտնվում է Հայաստանի պիտույքաների ակադեմիայի, արվեստի ինստիտուտում:

Եվ այդ նույն օրը պատմեց, թե ինչպես եղավ, որ փրկվեց վերահաս աղետից:

... «Գոշի» պրեմիերան՝ էր: Առաջին անգամ պատմական պիես հայ միջնադարից երկար ընդմիջումից հետո: Ամեն ինչին նայում էին կասկածանքով, հատկապես ստանդարտ մեղադրանքի՝ նացիոնալիզմի տեսանկյունով: Կոմիսիա էր եկել Երևանից, զեկավարությամբ ոմն Ակոպովի, որ կարծեմ պրապագանդայի բաժնի վարիչ էր այն ժամանակ: ԱՀԸ սրտներում սպասում էինք, թե ինչ կասեն: Ինձ արգելե դատապարտված էի զգում: Եվ ի՞նչ: Ներկայացումն Ակոպովը հավանեց, թե սա հարված է նացիոնալիստներին, ցույց է տալիս, որ միջնադարում էլ եղել է դասակարգային պայքար: Եվ բազկոմի բյուրոյի որոշում ոհանել տվեց: Իր Ներկայությամբ:

Այսպես, լյուդվիգ Միքայելյանի «Գոշ» պիեսն իր պարզունակ սոցիոլոգիական բովանդակությամբ փրկել է դրությունը:

Սա եղավ հանգամանքներից մեկը:

Մյուսը՝ թատրոնի ընդհանուր ժաղավանի պիես՝ արդարությամբ Այստեղ եղել են դատապարտողներ, բայց եղել են և պաշտպաններ, թե Աճեմյանին չի կարելի ժողովը դիմությամբ թշնամի համարել: Դա էլ օգնեց:

Հետո՝ ուրիշ հանգամանքներ: Ինձ Դրիգոր Հարությունյանը (նույն ինքը՝ Արտավինովը) պահեց: Այսպես էր եղել: Հայկական արվեստի տասնօրյակի նախապատրատության որնքին Ռուբեն Սիմոնովը (որ ամբողջ տասնօրյակի գնդարվեստական զեկավար էր նշանակված) ասել էր Հարություն-

յանին՝ надо Аджемяна привлечь... Մեկ էլ հանկարծ ինձ երեան կանչեցին և հանձնարարեցին բնմադրել «Արմաստը»: Ներկայացումք պատրաստ էր¹, երբ իմ անունը վրայից հանեցին. դրվեց թատրոնի դիրեկտոր Կիմիկ Հովհաննիսյանի անունը, որ իրը աշխատել էր բնմադրության վրա: Ես չէի ուզում Գրիգոր Հարությունյանին տեսնել, մտածում էի՝ հանկարծ չհիշի, որ ևանջանի գրությամբ էի ևենինականի թատրոնը տարել Բիֆլիս գաստրոլների և ինքն էր կարգադրություն արել իրրե քաղկոմի առաջին քարտուղար: Ծիշտ է, անունս հանեցին և ինձ Մոսկվա շտարան (դրա դեմ բողոքեցին Հայկանուշ Թանիելյանը, Միքայել Արուտչյանը, շեմ հիշում էլի ով, իսկ արվեստի վարչության պետ Ազբալլյանն ասել էր՝ դա ի՞նչ նշանակություն ունի), բայց բնմադրության հաջողությունն էլ իր դերը խաղաց:

Գրիգոր Հարությունյանն ինձ կանչեց (իմ բողոքի հիման վրա), ասաց, թե Մոսկվա՝ տասնօրյակին գնալ պետք չէ, աշխատանքի նշանակեց Սունդուկյանի անվան թատրոնում: Հասկացրեց, որ եթե ինքն ինձ ընդունել է, ուրեմն բան չի պատահի՝ գնա հանգիստ աշխատիր: Էնինական մի գնա, — ավելացրեց, — քլայզնի город... ցույց տվեց իմ գործը՝ մի հաստ թղթապանակ: Հանգստացրեց՝ սա ինձ մոտ է:

Այս ամենից հետո առաջին քարտուղարը կարգադրել էր Աճեմյանին բնակարան հատկացնել: Նրա կարգադրությունները կատարվում էին անհապաղ: Եվ այն ժամանակվա դրժկարին պայմաններում Աճեմյանը ստացել էր Գր. Հարություն-

¹ Բնմադրությունն առաջին անգամ ցուցադրվել է 1939-ի սեպտեմբերին ՀՀ-ին և աճեմյարարձյ գնահատություն արժանացել մամուլում:

յանի առանձնատան կողքի շենքի այն մեծ, երեք սենյականց ընակարանը, որտեղ և ապրեց մինչև կյանքի վերջը¹:

Այս ժամանակից ի վեր, ալսինքն՝ 1939-ից, վարդան Աճեմյանի էնսագրության արտարին հանգամանքների մեջ ոչինչ չփոխվեց: Դրանից հետո՝ 38 տարի նույն ընակարանը, նույն Սունդուկյանի անվան թատրոնը, բնմագրություններ տարրեր թատրոններում, դասավանդություն թատերական ինստիտուտում (բացվելոց՝ 1944-ից ի վեր), նույն գործն ու միջավայրը, ևթե չհաշվենք կյանքի սովորական ընթացքից զուրս՝ մի շաբաթ հյուրախաղային ուղղորդություններ Սունդուկյանի անվան թատրոնի հետ մեր երկրում (Մոսկվա, Բաքու, Թրիլիսի) և արտասահմանում՝ Սիրիա, Լիբանան (1966), Բուլղարիա, Չինոսլովակիա (1976), մի տուրիստական ուղղորդություն կնոջ հետ՝ Հարավսլավիա և անհատական հրավերով մեկնումն Բեյրութ՝ ծննդյան 70-ամյակի առիթով և գրեթե մեկանյա կեցությունն այնտեղ (1975):

Եատ չէ, բնակ շատ չէ 38 տարվա համար: Հակառակ կենսագրության «սովորականից զուրս հանգամանքների» աղքատության՝ ներքուստ հարուստ, լարված, հեինն կյանք՝ հագեցած աշխատանքով, իր ասպարեզից անպակաս վեճերով, ընդհարումներով, հարկավոր ու անհարկավոր նիստերով ու խորհրդակցություններով, վերելքներով ու վայրէջքներով, իր հանդեպ արդարացի և անարդար կշտամբանքներով, վաստակի և արած գործերի բարձր գնահատություններով, երբեմն

1 Հետաքրքրօգիք համար. իր կյանքի մասին Աճեմյանի պատմածներն առանձին են գրավում Ռ. Զարյանի ծագալուն հուշագրության մեջ («Հուշապատճեն», զիրք երկրորդ, 1981, էջ 225—291): Կարենը է ասել, որ Աճեմյանը կարգացել է զբանք նախան ասպարություններով:

նաեւ թերագնահաճատություններով, ուրախալի ու վշտալի դիպ-
վածներով... ամեն ինչով:

Ինչպես էր Վարդան Աճեմյանը հասկանում այդ կյանքը:
Նա չի ձեռակերպել իր վերաբերմունքը, ասենք՝ ձեռակերպում-
ների սիրահար էլ չէր:

Չմուն մի օր, 1965-ին, Սաղկաձորում հանգստանալիս, մի
թեցն զեա ունեցա զրող Կոստան Զարյանի հետ, որ նա իր
քամբ ձայնով ավարտեց այսպես. «Կյանքը, կեն՝, պիտի քն-
դունել այնպես, ինչպես ներկայանում է»: Սա հենց Վարդան
Աճեմյանի սկզբունքն էր՝ առանց ձեռակերպման: Իրոք այդպես
էր կարծես: Մեծ հրավանք չէր ապրում ուրախ առիթներով, ոչ
էլ մորմորուն վիշտ՝ տխուր առիթներով... Այսպիսին է կյան-
քը, ոև լա վի, ինչպես ասում են Գրանսիացիք: Այս և այս
հանգամանքներում սա՞ է իմ պարտքն ու պարտականությունը՝
կանեմ ինչքան կարող եմ, առանց ուժերս խնայելու, մի պայ-
մանով միայն՝ ոչինչ շանել խղճի դեմ: Այդ պայմանը պահե-
լով գրեթե անխոտոր, որքան սակավաթիվ, նույնքան ստի-
պոզական շեղումներով՝ հավատարիմ ժառայություն իր ար-
վեստին ու իր ժողովրդին: Համոզմունքով, ի սրտե՞, անմնա-
զո՞րդ:

Չէր բողոքի, չէր ընդվզի, չէր ըմբոստանա, նախ չէր կա-
րող, այդ բնավորությունը չէր և հետո՝ օգուտն ի՞նչ:

Միանգամայն համոզված եմ, որ Աճեմյանը բնավ համա-
միտ չէր սեմիսորական ֆորմալիզմի դեմ 1936-ին ժավալված
կամպանիային: Բայց զրան նվիրված բանավեճի ժամանակ
նա նույնպես ելույթ է ունեցել, ինչպես ուրիշները, և, ինչպես
ուրիշները, նա ես զիմել է անխնա ինքնագատապարտման:
Ժամանակին արված տուրք: Դեռ լավ է, որ ասել է, ուրիշ-
ները դա էլ չեն ասել, թէ պայքարը ֆորմալիզմի դեմ շպետք

է պառնա պայքար ֆորմայի դեմ: Ես, բնականաբար, այդ սգեղ հավաքին ներկա չեմ եղել, բայց մամուլում («Խորհրդային արվեստ») տպագրվել է դրա հաշվետվությունը:

Ներկա եմ գտնվել մեկ ուրիշ ոչ պակաս տղեղ հավաքույթի, արդեն 1949-ին, ուղղված, այսպես կոչված, կոսմոպոլիտիզմի, արևմուտքի առաջ ստորաբարշության դեմ: Շատերը գիտեին, Աճեմյանն էլ դիտեր, որ դա սարքված բան է, հերթական կամպանիա, որ ո՞չ Յուղովակին կամ Բոյաջիկն են ստորաբարշ, ո՞չ էլ Սարգիս Մելիքսեթյանը, Վահրամ Թերոգիրացյանը, Ռուբեն Զարյանը կամ Սուրեն Հարությունյանը, բայց հարկավոր էր ելույթ ունենալ (պարզապես չէր կարող շունենալ) և նա էլ, ուրիշների պես, ելույթ ունեցավ, դատապարտեց երևույթը, բայց առանց կրակի վրա յուղ լցնելու, արված մեղադրանքներին ոչինչ շավելացնելով, բայց և չհերքելով: Եվ մեղադրվողները դրանից չնեղացան, դրանից պակաս չէր կարելի, մարդը պահանջված տուրքի նվազագույնն էր տվել:

Խորհրդային մտավորականի ողբերգություն, որ ապագա սերունդները, եթե բան է, կարդան այս տողերը՝ շպիտի հաշվատան, բայց այն ժամանակ դա ընդունվում էր իրրե նորմա, բնական վիճակ, իրերի բնականոն ընթացք: Համամիտ չինես, բայց լոելու իրավունքն էլ չունենա՞ս, ստիպվես համոզումիդ հակառա՞կն ասել և գեռ առաքինությո՞ւն համարվի մեղմորեն ասելը... Համակերպում՝ իհարկե, կոնյուկտուրա (որ պատեհապաշտություն կթարգմանվի), անպայման, Պատճառը մեկն էր և աներկրայելի. վերստին հիշեցնեմ Ալ. Աֆինոդենովի պիեսի վերնագիրը՝ «Ահքա... իհարկե Աճեմյանը շուներ, բռնադատումների դեմ ըմբռստանելու քաջությունը (չհմ գրեսել մեկին, որ ունենար կամ լսել, որ եղել է այդպիսի մե-

կը), բայց և շեղավ՝ դրության ապօրինի տիրոջ շողոքորթը, չարեց զելլ մի գործ, որ ունիաւի պաշտամունքի փառաբանությունը լիներ, իսկ դա արդեն թիւ բան չէր, այն էլ թատրոնի՝ հանդիսանքային արվեստի ասպարեզում։ Ուներ ներքին անտես մի դատավոր, որ թույլ չէր տա և որի անունն է մարդկային արժանապատվություն։ Դժբախտաբար, իրոք որ դժբախտություն էր դա, եղան արվեստագետներ բոլոր ազգերից ու ասպարեզներից՝ բանաստեղծ, քննադատ, արձակագիր, թատերագիր, աշուղ, նկարիչ, քանդակագործ թե երգահան, նույնիսկ շնորհալի մարդիկ, չունեցան այդ դատավորը և սպանեցին իրենց էլ, իրենց ունեցած շնորհքն էլ։ Ի՞նչ մնաց այդ բնույթի անթիվ-անհամար գործերից։ Ինչքան էլ միառարանված ժամանակին՝ հեռավոր հիշողություն՝ տիսուր և ամուսալի։ Եվ այլ կերպ չպիտի լիներ՝ պատմության մեջ ստեղծված ներբողական գործերից ե՞րբ է բան մնացել։ Երբեք։ Բէկինսկու հայտնաբերած օրենքը՝ «Երբ արվեստի գործի հիմքում դրվում է կեղծ գաղափար՝ դա կեղծ է դարձնում ամբողջ գործը», հրապարակվել է 19-րդ դարում, բայց գործել և գործում է բոլոր ժամանակներում։

Ժարդան Անեմյանը շեղավ երեխք և ոչ մի շափով շեղավ բոնապետության ջատագովը, ինչպես շատերը, բայց հնթարկվեց որան, ինչպես ամեն որի Անա ինչու նա գրկարաց ընդունեց մեր բովանդակ երկրում 50-ական թվականների երկրորդ կեսից ծայր առած տեղաշարժերը։ Շատ բան փոխվեց երկրի քաղաքականության մեջ, ուստի նաև գեղարվեստական կյանքում։

Բավական է մի ուշադիր հայացք գցել հետպատերազման տասնամյակների գեղարվեստական մշակույթի պատմության վրա՝ և զրբաժանն իսկույն կերևա. ուրիշ էր այդ մշա-

Եղութը մինչեւ 50-ական թվականների երկրորդ կեսը և ուրիշ՝ որպանից հետո: Տարբեջությունը վերաբերում է գեղարվեստական մշակութիւնի և հարցադրումներին, առաջ քաշած խնդիրներին, բովանդակությանը, և՛ գործի դրված արտահայտչական միջոցներին, ձևին: Արմենների վերագնահանաւում ան ժամանակներ էին, այն, ինչ ընդունելի էր երեկ, այլևս ընդունելի չէր: Փոխվում էր ամենաէականը՝ ճշմարտության չափանիշը, որով պայմանավորված էր մնացած ամեն ինչ: Այսպես՝ միութենական ամբողջ տարածքում, ուրեմն նաև հայ իրականության մեջ Ոչ մի տարակույս՝ պատմական-հասարակական կյանքի սեղաշարժերն են, որ հնարավոր դարձրին Պարույր Սևակի և Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունը: Մինամ-Ավետիսյանի նկարչությունը ևս Մի տասը տարի դրանից առաջ անհնար կլիներ «Անլուելի զանգակատունը», «Մարզը ափի մեջ» քանաստեղծությունների շարքը, «Անիմառ» «Մենք ևնք, մեր սարերը» գրվածքները, կամ էլ Մինասի «Ինքնանկարը»: Անհնարին, անթույլատրելի, անհրապարակելի՛: Բանք դեռ թույլատրելի-անթույլատրելին չէ, այլ այն, թե հասարակական կյանքը ի՞նչ մղումներ է տալիս արվեստագետին, իրականությունն ի՞նչ է հուշում ու թելադրում նրան, ի՞նչ հուզմունքներ ու մտքեր են լցվում նրա ներաշխարհը, որ հետո արտամզվեն իբրև արվեստի գործեր:

Երիտասարդ չէր Աճեմյանը, հիսուն տարեկան էր գրեթե, պատեառելի հասակ բեմադրիչի համար մանավանդ, բայց նա էլ նորոգվեց ու նոր շունչ առավ: Արդյունքը՝ բեմական արվեստի մնայուն արժեցներ, որքան մնայուն կարող են լինել այդ արվեստի արժեցները, դրանց մեջ՝ «Պազտասար աղբարը», «Նամուսը», «Թառուը»... Բայց դրանց մասին չէ, որ ակտոր է պատմեմ, այլ այն, որ թելադրում է այս գլխի վեր-

Նազիրը՝ թե արվեստագետն ինչպես էր հասկանում և մեկնարանում ժամանակակից կյանքը։ Դրա համար նա ուներ միայն մի ճանապարհ՝ ժամանակակից պիեսների բնմադրությունը։ Արեմն՝ անխուսափելի շեղում պիտի անենք դեպի բնմական դրականության ասպարեզը, եթե միայն դա կարելի է շեղում համարել։

Հայ թատերագիրների գրեթե բոլոր պիեսների բնմադրիշմեկնարանն Անեմյանը եղավ։ Չի կարելի առել նրանք իրենց պիեսներով շռայլ եղան ժամանակակից կյանքի բնմական մեկնարանի հանդեպ, բայց և այն, ինչ նա արել է իրքն այդպիսին՝ նրանց պիեսների շնորհիվ է արել։ Դա էլ շպիտք է մոռանալ։

Հիմա, տարիների հեռվից, երբ այդ ամենը պատմություն է դարձել, և երկակի վերաբերմունք ունեմ երևոյթի հանդեպ։ Մի բնեոք. թատերագիրներն ասպարեզ շրերին մեծ գաղափարներ պարունակող, բնմական արվեստին նոր ձեւը է պահպաներ առաջարդող այնպիսի ինքնատիպ գործեր, որ բնմադրիշներին ու դերասաններին միանգամից կորենին-բարձրացնեին առվորութան մակարդակից։ (Հայ թատրոնի պատմության մեջ եղել են այդպիսի դեպքեր՝ «Պեպոյի» հայտնությունը 1871-ին, «Պատուի» համարը՝ 1905-ին, «Հին առավածները»՝ 1913-ին)։ Մյուս բնեոք. եթե գրված ու բնմ հանված պիեսներն էլ չենեին՝ արդիական կյանքի բնմական արտացոլումն էլ չէր լինի, իսկ առանց դրա՝ ի՞նչ թատրոն կամ թատրոնի պատմություն։ Այնպես որ, ժամանակին անխնա քննադատված մեր թատերագիրների անունները տալիս եմ հարգանքով, երբեք թատրոնի պատմության մեջ իրենց կարևոր դերը խաչացած հեղինակների։

Թատերական արվեստի նախահիմքը թատերագրությունն

է: Կարծես թե հանրահայտ բան եմ ասում: Բայց անս որ
ուրիշ կարծիքներ էլ կան ու եղել են: Ժամանակին՝ ՅՈ-ական
թվերին, բանավիճել են Սերգեյ Մոկուսկու և Ալեքսեյ Դվոր-
դեկի նման հմուտ թատերագետներ՝ ո՞րն է թատերական ար-
գեստի նախահիմքը. առաջինը համարել է զրամատուրդիան,
երկրորդը՝ դերասանական արվեստը:

Ես առաջինի կողմնակիցն եմ մի պարզ և կարծեմ թե ան-
հերքելի կռվանով. առաջին հարցին՝ ի՞նչ եք խաղում, թա-
տերագրությունն է պատասխանում, երկրորդ հարցին՝ ինչ-
պէս եք խաղում՝ թատրոնը: Բեմադրիչ և դերասան Ալեքսեյ
Դիկին այն համոզմանն էր, թե ներկայացման հաջողությունը
ԸՕ տոկոսով կտաված է պիեսից և ՀՕ տոկոսով միայն՝
թատրոնի աշխատանքից: Տոկոսային հարարերության ճշշ-
տությունը շղիտեմ, բայց դատողության հիմքը ճիշտ է ու
ճիշտ: Ըուսաց թատրոնի պատմությանը նայենք. ինչպես էլ
զնահատենք Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի դերա-
սաններին ու բեմադրիչներին, ինչքան էլ ասենք Սատանիս-
լավակի և Նեմիրովիչ-Դանչենկո, նրա գեղագիտական դիմա-
գիծը Զեխովն է որոշել իր թատերագրությամբ, Զեխովը, հե-
տո Գորկին: Զուր չէ, որ թատրոնի խորհրդանիշը Զեխովի
հայն է՝ նրա վարագույրին, և զուր է, որ թատրոնը նրա անու-
նով չի կոչվում:

Մի պահ պատկերացրեք հայ թատրոնն առանց Սունդուկ-
յանի, Պարոնյանի, Շիրվանզադեի և Շանթի՝ թատրոնի պատ-
մությունը փուլ կգա: Արտիստական թեկուզն հանճարեղ ան-
հատականությունները չեն կարող ազգային թատրոնի պատ-
մություն հյուսել առանց ազգային թատերագիրների, բանի-
որ նրանք են իդեաներ, մտքեր, ազգային կեցության պատ-
կերներ, ազգային բնավորություններ առաջարկում թատրո-

Նին: Դա է պատճառը, որ Հովհաննես Թումանյանը, Հակառակ կ լեռյի այն դատողությունների, թե առանց հայ հեղինակի էլ հայ դերասանը կարող է մեր կյանքը ներկայացնել, գրել է իշխանունի Մարիամ Թումանյանին. «Մի ժողովուրդ, որ սեփական ունակերտուար չունի— սեփական թատրոն չունի»:

Աս՝ 1902-ին: 1910-ին նույն միտքն ավելի ստույգ. «Ամեն մի ժողովրդի թատրոն թատրոն է ամենից առաջ ինքնուրույն ունակերտուարով»: Ամենից առաջ, այսինքն՝ ուրիշ հատկանիշներ էլ կան, բայց դրանք հաջորդում են առաջինին:

Ինչո՞ւ ևմ այսօրան ծանրանում բավականաշափ պարզ ինդիքների վրա:

Երկու ծանրակշիռ պատաճուվ՝ թե ինչու Աճեմյանը, իբրև ժամանակակից կյանքի մեկնաբան, չէր կարող կախված Ահենել ժամանակակից բեմական գրականությունից: Եվ ապա՝ թե ինչու նա այնքան նախանձախնդիր վերաբերմունք ուներ ժամանակակից թատերագիրների նկատմամբ, ինչու ազգային երկիր հիման վրա ձևոք բերված հաջողությունը կրկնակի արժեք ուներ նրա աշբում:

Ինչո՞վ, եթե ոչ արդիական կյանքի պատկերման անդիմադրելի ձգտումով պետք է բացատրել այն իրազությունը, որ Աճեմյանը բեմադրեց ասպարեզում հղած քիչ թե շատ աշքի ընկած գրեթե բոլոր պիհեսները: Ասում եմ «գրեթե», որովհետև դրանցից մեկը՝ Ա. Արաքսյանյանի «Յօ տարի և երեք ժամ» դրաման բեմադրել է Հրազդա Ղափլանյանը, իսկ մյուս՝ Գ. Տեր-Գրիգորյանի «Վերջին մեխակները»՝ Ալբերտ Մկրտչյանը («Մառերը կանգնած են մահանում» գեղեցիկ ներկայացման բեմադրիչը, որ հետագայում տեղափոխվեց Մուկվա): Վերջին մեխակներին պրեմիերան, դրամա, որ պետք է ամարել թատերագրական նոր հոսանքի առաջնեկը, կայացել

է 1958-ի գետրվարի 1-ին։ Անհմբանն այդ բնմադրության ղեկավարն է եղել։

Այստեղ մեջեղ է գալիս խճճված մի հարց։ Իրրև գլխավոր ռեժիսոր, Անհմբանն ի պաշտոնէ պարտավոր էր աշխատել թատրոնի նաև այն ներկայացումների վրա, որոնց բնմադրիչն ինքը չէր եղ ոչ ոք չի կարող որոշել որ ներկայացման վրա ով ինչքան, ինչ չափով է աշխատել։ Պատահէլ է, որ ուրիշների սկսած բնմադրություններից, ինպես ասում են, բարը բարի վրա չի թողել։ Նման դեպքերում ներկայացումը երբեմն հայտարարվել է իր անունով, երբեմն էլ չի հայտարարվել։ Դա է պատճառը, որ Անհմբանի ստեղծագործությանը բազատեղյակ թատերագետ Լեոն Խալաթյանն իր կազմած «Վարդան Անհմբան» գիրք-ալբոմում (1978) տվել է ժանոթություն (էջ 247), թե «Այս թատրոնում Անհմբանի դեկավարությամբ են բնմադրվել...», դրան հետևում է ներկայացումների մի երեսը շարք։ Դրա մեջ մեծ տեղ են գրավում հատկապես ազգային ժամանակակից պիեսները։

Դրանք՝ իրենց հերթին։ Բայց ավելի մեծ է իր անունով հայտարարված բնմադրությունների շարքը՝ «Փորձադաշտ» (1953), «Սրտի արատ» (1959), «Գարնան անձրև» (1959), «Կարուքաբարքի վրա» (1961), «Մենոնդ ֆլորան» (1962), «Աշխարհն», այուն, շուռ է հկել» (1967) և վերջինը՝ «Սանր է Հիպոկրատի գլխարկը» (1975)։

Սրանցից դրամայի ժանրին պատկանում են քչերը՝ Գ. Տեր-Գրիգորյանի «Գարնան անձրևը», Գ. Բորյանի «Կամուրջի վրան» և վերջինը, որի հեղինակն է Վ. Պետրոսյանը։ Այս պիեսներից երկումը՝ «Վերջին մեխակները», «Կամուրջի վրան» (ինչպես և Արարամանյանի «60 տարի» և երեք ժամ» դրաման) արծարծում են մի խնդիր, որ բնորոշ էր «խրուշչևյան

ծամանակներին՝ քննադատական վերաբերմունք մուտիկ անցյալի բռնադատության, միլիոնավոր մարդկանց կյանք արժեցած մատնությունների, պաշտոնյա անձանց անմարուր վարքագծի, չարաշահումների ու շահատակումների նկատմամբ, որ կարմ բնութագրվում էր իրբն «անհատի պաշտամունք» տիրապետության ժամանակաշրջան, ինչպես գործված անլուր ոճիրները, ժողովրդին փլացնող անբարոյական հանցանքները բնութագրվում էին ընդամենն իրբն «անցյալի սխալներ և մոլորություններ»:

Քննադատական վերաբերմունքի կրողներն այդ պիեսներում կյանքի մեծ փորձի տեր լրջախոն՝ անհատն էր (լավ հիշում եմ Սոս Սարգսյանի Արտաշեսին «Վերջին մեխակներում») կամ իրականության հետ հաշտության եզր շգտնող նորահաս երիտասարդը (լավ հիշում եմ Խորեն Արքահամբյանի Արմենինի «Կամուրջի վրա» ներկայացման մեջ): «Փարնան անձրևն» ընտանեկան դրամա էր՝ հավատարմության և վստահության արձարծումներով: Վարդգես Պետրոսյանի դրաման սուր ծայրով ուղղված էր անտարբերության, մարդկային ճակատագրի հանդեպ անկարեկից վերաբերմունքի դեմ: Վերջինս բեմ է հանվել 1975-ին, իսկ մեր խոսակցությունը վերաբերում է 60-ական թվականներին:

Ուրեմն՝ վերադառնանք:

Դրամայի ժանրին պատկանող բեմական գրվածքները սպասվում են վերը հիշվածներով: Դրանք կարգին գործեր էին և դրանց բեմագրությունները՝ կարգին ներկայացումներ, ուստի և ունեին հանդիսատեսային հաջողություն նույնպես: Եվ ինչո՞ւ պիտի չունենալին, երբ այսպես թե այնպես բավականաշափ ճշմարտացի խոսք էին առում ժամանակակից կյանքի մասին, հանդես էին բերում ժամանակակից բնակորու-

թյուններ, բեմադրված էին ամենայն խնամքով։ Բայց և այսպէս, դրանք չէին թափանցում կյանքի դրամատիկական բռվանդակության բուն խորքերը։ Արդարամիտ լինելու համար ասեմ, որ ժամանակի ոռու թատերագրության լավագույն երկերը նույնպես, որ գրում էին Վ. Ռոզովի, Ա. Արքուզովի, Ա. Վոլոդինի նման հմուտ հեղինակներ, ավելի բարձր լինելով իրենց գրական որակով, չունեին դրամատիկական խտացման այն աստիճանը, որ առաջադրում էր իրականությունը Ուրիշ խոսքով՝ մարդկանց զիտակցության մեջ, նրանց առօրյա ասուլիսում կյանքի դրամատիկական բովանդակությունն արտահայտվում էր շատ ավելի ուժեղ, քան արվեստում։

Մի անգամ, ինձ համար շատ անսպասելի, Աճեմյանը խոսեց դրա մասին։ 60-ական թվականների մոսկովյան ամենահռչակավոր թատրոնը՝ Օլեգ Եֆրեմովի ղեկավարած «Սովորեմեննիկը», Հյուրախաղերով հանգես էր գալիս Երևանում։ Մի երեկո, թատրոնի մեջ համբաւ հանած «Մերկ թագավորը» ներկայացումից հետո, թատրոնի պատվին բանկետ տրվեց նորում։ Թատերական ընկերության հանգստյան տանը։

Ես ու Աճեմյանն իրար կողքի նստեցինք դերասան Իգոր Կվաշայի դեմ-դիմաց։ Խոսակցության բռնվեցինք նրա հետ, որ ոչ միայն լավ դերասան է, այլև խելացի մարդ, ինչպես լինում են իսկական դերասանները։ Նա դժգոհեց իրենց թատրոնի հռչակից ու հաջողությունից։ Մենք զարմացանք մինչև որ նա բացատրեց։ Ինչ խաղում ենք՝ լեփլեցուն դահլիճն, տումա չի ճարվում, և չենք հասկանում մեր ո՞ր ներկայացումն է լավ, որը՝ ոչ, որո՞վ ենք հասնում կյանքի բուն ճշմարտությանը, որով՝ ոչ։

Աճեմյանն ընդհատեց՝ ո՛չ մեկով։

Քշախոս զբուցակցի կտրուկ խոսքը զարմացրեց Կվաշա-
յին՝ ինչո՞ւ:

Արովհնեակ, — պատասխան է Աճեմյանը, — Հիմա ժողո-
վուրդն ավելի շատ քան գիտի, շատ ավելին է հասկանում,
ասում ու խոսում, քան կարող է ասել թատրոնը:

Դերասանը հիացավ՝ ևս չգիտեմ ինչ ուժիսոր է Աճեմյանը,
նրա բնմաղրությունները չեմ տեսել, բայց տեսա, որ շատ
խելացի մարդ է:

Աճեմյանն, իհարկի, նկատի ուներ սեփական բնմաղրու-
թյունները նույնպես Բայց դա, իմ լարդիրով, վերաբերում
էր դրամայի ժանրին պատկանող պիեսների և ոչ թե կատա-
կերգությունների բնմաղրություններին: Բացատրեմ: Շատ
տարիների իմ գննումները, ասենք, թատրոնի մասին կար-
դացածս գրքերը նույնպես, ինձ հանգեցրել են մի տարօրի-
նակ, բայց և բացատրելի եղրակացության՝ բնմաղրիչի (ոչ
միայն Աճեմյանի) միորն ու ձիրքը կատակերգության բնմա-
ղրության մեջ երեսում են աշխիլի վառ ու ցայտուն, քան դրա-
մայի: Կատակերգությունն ավելի շատ ծալքեր է թարցնում
բնմաղրական արվեստի համար, քան դրաման:

Ահա ինչու Աճեմյանն անկատելիորեն մղվում էր գեպի
ժամանակակից կատակերգությունը և ստեղծում փայլուն ներ-
կայացումներ: Սրանով չեմ ուզում ջուր լցնել այն թյուր կար-
ծիքի ջրաղացին, թե Աճեմյանը կոմեդիայի ուժիսոր է: Եվ
ինչպես կարելի է այդպես դատել «Պատմի համար», «Ժայռ»,
«Նամուս» դրամաների դասական բնմաղրությունների հեղի-
նակի մասին: Բայց տեսեք, որ ժումանակակից դրամաներից
որևէ մեկի բնմաղրություն չի կարելի դասել այս շարքը:
Պատճառն այն է, որ դրանցից ոչ մեկը չի հասնում այնպի-
սի դրամատիկական շիկացման, որ հատուկ է հիշածս դասա-

կան երկերին, հետեւաբար՝ դրանց քննական մարմնավորումները նույնապես Մինչդեռ կատակերգությունները հասնում են դասական երկերին հատուել «կատակերգական շիկացման»: Հայ ժամանակակից հեղինակների կատակերգությունները կարող են համեմատել նույն ժանրի դասական գործերի հետ, դրամաները՝ ոչ Դա էլ իր պատճառներն ունի:

Նախ թատերագրական ձիրքի խնդիրը կա, կյանքի դրամատիկական զգացողություն և կատակերգական զգացողություն՝ նույն բաները չեն: Հայ թատերագիրների մեջ գերիշխողը երկրորդն է: Ուրիշ պատճառ էլ կա՝ արգելքները, որ դրամայի առաջ ծառանում էին ավելի, քան կատակերգության. ճշմարիտ բանը կատակով ավելի դյուրին է «անց կացնել», քան լրջորեն:

Այս երկու պատճառների հնարավոր բացատրությամբ՝ հայ խորհրդային կատակերգությունը շատ ավելի կենսունակ դուրս եկավ, քան դրաման՝ 1923-ին ստեղծված «Քաջ նազարից» ի վեր: Սա շատ հետաքրքրական երեսությ է: Թատերագիր Մելիք Քոչարյանը դրում էր դրամաներ, դուրս էին դալիս մելոդրամաներ, որոնք եռանդով խաղացվում էին ժամանակին՝ հիմա չեն ուղղում հիշեն: Դրեց մի կատակերգություն՝ «Հիմն հիվանդություն» անունով, որ ժամանակին լավ էր ընդունվում և հիմա էլ կդիտվի, եթե խաղան:

Նահիրի Զարյանը՝ մեծ տվյալների տեր բազմաժանր գրող, «Արա Դեղեցիկը»՝ նրա երկերից ամենամնայունը, դիցաբանական պատումի փայլուն մշակում, որ, իհարկե, ավելի բանաստեղծական արժեք է, քան թատերագրական: Հետագայում նա գրեց ժամանակակից դրամաներ. «Արմաշն», «Քարը», ոչ մի հաջողություն, թույլ գործեր: Կատակերգությունները՝ «Աղբյուրի մոտ», «Փորձադաշտ», իրենց թերի կողմերով հան-

դերձ, ունեցան մեծ հաջողություն և հիմա էլ կարող են դիտվել հենց թեկուզ Բալաբեկի վերին աստիճանի վառ կոմիկան կերպարի շնորհիվ:

Դանք Գրիգոր Տեր-Դրիգորյանին, թատերագիր, որ և՛ գրամաներ էր գրում, և՛ կոմեդիաները՝ Դրամաներից երկուսը՝ «Երջին մեխակները» և «Գարնան անձրևը» հաջողություն ունեցան, բայց ի՞նչ համեմատություն նրա կատակերգությունների («ԱՇխ, ներվեր, ներվեր», «Մեռնող ֆլորան», մինչև իսկ «Սոֆիկի սխալը», «Իմ սիրելի Ժորժ», «Եկեք անկեղծ խռովներ») հաջողության հետ. ո՞չ մի:

Այլևս ինչ խոսք զտարյուն կատակերգակներ Ժորա Հառությունյանի «Սրտի արատ», «Հարսնացու հյուսիսից», Արամաշոտ Պատայանի «Աշխարհն, այսո՛, շուտ է եկել» պիեսների շոնդակի հաջողության մասին, երր տոմս ճարելը երևանցու համար դյուրին խնդիր չէր: Ամեն երեսությունի իր բացարությունը: Եթե բացատրությունը չի գտնվում՝ չի նշանակում թե չկա, պարզապես դեռ չի գտնված: Այս դեպքում, ահա, միտքս ևն գալիս, ինչպես վահրամ Փափազյանը կասեր, ամեկից ավելիք պատճառներ:

Սիծաղը՝ կատակերգությունը, ավելի կենսունակ երևույթ է, քան լացը՝ գրաման: Տեղն է մտարերել Վահվողող Մեյեր-Հոլդի դատողություններից մեջը. կատակերգությունն ավելի մնայուն է, քան ողբերգությունը, ահա ինչու Կոռնելի, Ռասինի ողբերգությունները հիմա գրեթե չեն խաղում, իսկ Մուլեր խաղում են ու կխաղան:

Սիծաղը մարդուն կենսաբանորեն ավելի անհրաժեշտ է, իրու ինքնապաշտպանության՝ հոգեմաշ հոգսերից խույս տալու միջոց, որանով պիտի բացատրել այն տարօրինակ երեխույթը, որ և՛ առաջին, և՛ երկրորդ աշխարհամարտի ահեղ

ժամանակներում տարբեր երկուներում ծլել-ծաղկել է կռմհ-դիան:

Կյանքում կատակն ավելի հեշտ է ճանապարհ գտնում դեպի ճշմարտությունը, քան լո-րջ խոսքը: Նույնը պետք է ասել կատակերգության մասին՝ թատերական արվեստի ասպարեզում. «Ֆիգարոյի ամուսնության» բովանդակությունն անհնար կլիներ ասել դրամայում՝ թույլ չեր տրվի: Այնպիսի անողոք քննադատությունը, որին ենթարկվում է ցարական ինքնակալությունը «Ռևիզորում», ոչ մի դրամայում հնարավոր չեր լինի տեղավորել: Հենց գրաքննությունը թույլ չեր տարմինչդեռ կատակերգությունը զիտելուց հետո նկուլալ Առաջինն այսպես է ասել. «Բոլորին բաժին հասավ, իսկ ամենից շատ՝ ինձ»:

Այսքանն ընդհանրապես, հիմա 1960-ականների կատակերգական արվեստի ծաղկման պատճառների մասին մասնավորապես:

Հայ կոմեդիագիրների շնորհը նախ և առաջ. եթե պատեհացնենք թատերագրական համամիութենական մի ստանդարտ, կտնենենք, որ հայագիր դրամաները զիշում են այդ ստանդարտին, մինչդեռ կոմեդիաները չեն զիշում, նույնիսկ գերազանցում են, կենցաղային կատակերգության գծով հատկապես:

Մեծ շնորհի տեր կատակերգակ դերասանների գոյությունը՝ Շաղնոս Սարյան, Արզո Արզումանյան, Մհեր Մկրտչյան, Կարպ Խաչվանքյան...

Վարդան Աճեմյանի բեմադրական արվեստը. Հիշածո կատակերգությունները, քիչ բացառությամբ, նա է բեմադրել կամ նրա մասնակցությամբ են բնմադրվել:

Կատակերգությունները բոլոր թատրոններում ունեին հա-

Հողություն, դրանցից մի քանիսը Սունդուկյանի անվան թատրոնում՝ խելքից-մտքից գուրս հաջողություն։ Ռուսներն ասում են՝ փայտը երկու ծայր ունի։ Հաջողության փայտը՝ նույնպես։ Ակներե զրականը՝ ժողովուրդը խուռներամ լցվում էր թատրոն, թատրոնի կամարների տակ հնչում էր լիաթոք ծիծաղը, ծափ ու խնդության կատարյալ տիրապետություն, թատրոն-հանդիսատես կազզը հասնում էր իր բարձրակետին։ Ակներե բացասականը՝ ժողովուրդը վարժվում էր զվարճալի թամաշայի՝ «ա’-հա’-հա’», «ի’-հի’-հի’», և այնքան, որ այլևս դժվար էր լինում նրան դարձի բերկը Եվ թատրոնը հնձում էր այն, ինչ ցանում էր։ Ճիշտ է, մտքի աշխատանք կատարելու սեր ունեցող լրջախոհ հանդիսատեսը նույնպես այդ ներկայացումները դիտում էր հաճույքով, բայց զրամատիկական բարդ, խորամիտ հյուսվածքների նրա կարուր մնում էր զգոհացած, և նա երես էր թերում թատրոնից։

Դա նկատվում էր, զրա մասին և խոսվում էր, և գրվում։ Բայց ոչ ոք չէր տեսնում ավելի լավ, քան Աճեմյանը՝ թատերական այդ իրադրության զլիսավոր հեղինակն ի վերջո։ Եվ Եթե ուրիշները (քննադատները) ասում էին ու գրում, ապա Աճեմյանը հանուն հարվածակշռության աշխատում էր՝ բեմ հանելով զրամատիկական և ողբերդական բովանդակության գործեր։

Երեխ նա ոչինչ չէր արել ավելի համառ հետեղականությամբ, բայց ամենից ցավագին պարտություններ հինց այդ հանապարհին է կրնել։

Ճիշտ է, Աճեմյանի «ոչ կատակերգական» ներկայացումներից շատերն անտարակուսելի գեղարվեստական արժեքներ դարձան՝ «Թառ» (1959), «Գարնան անձրկ» (1960), «Դեպի ապագան» (1960), «Իմ սիրու լեռներում է», «Կամուրջի վրա»

(1961), «Պեպո», «Դատական գործ» (1966), «Հանրապետության նախադահըլ» (1970), «Իֆիգենիան Ավելիսում» (1974, ևս այդ ներկայացումը հավանում էի, բայց և տեսնում ափսոսանքով, որ սառն է ընդունվում): Բայց նույն այս ճանապարհին պարտություններն էլ անպակաս եղան, անձկորեն սպասված, կարծիս թե նախապես երաշխավորված հաջողությունը շտանցան ո՞չ «Ռումին և Ջուլիետը» (1964), ո՞չ «Արա Գեղեցիկը» (1965, ոչ մի համեմատություն 1946-ի բնմադրության հետ), ո՞չ էլ «Արտավազդ և Կլիոպատրան» (1968):

Թատրոնի խաղացանիի դրամատիկական, «պրոբլեմային» դիմն ուժեղացնելու համառ ձգուումն էր Աննեմյանին մզում դեպի Սաղաթել Հարությունյանի խնդրահարուց պիեսները («Միայն մարդն է ուղիղ քայլում», «Դատավորը»), դա էր դրդում, որ վարդես Պետրոսյանին ստիպի գրել «Ծանր է Հիպոկրատի գլխարկը» պիեսը (որին վիճակվեց փակել Աննեմյանի բնմադրությունների երկար շարքը 1975-ին):

Այնպիս որ, լրջախոռն դրամաներ բեմ հանելու համար Աննեմյանը ջանք չէր խնայում և, անկատկած, այդ նպատակին ավելի շատ ջանք ու եռանդ էր ծառայեցնում, քան կատակերդությունների բնմական մարմնավորման, բայց կատակերդություններն «աներեսարար» հասնում էին հանդիսատեսային ավելի անսպասելի հաջողության, քան դրամաները սպասելի հաջողության (պատճառներին ընթերցողն արդեն ծանոթ է և դեռ կունենա ծանոթանալու առիթներ):

Իշարկեն, նորահայտ թատերագիր Գևորգ (Ժորա) Հարությունյանի «Արտի արատը» բնմադրելիս Աննեմյանը վստահ էր դրա հանդիսատեսային հաջողությանը, բայց այն, ինչ կատարվեց՝ երևակայությունից դուրս բան էր, մարդիկ գլուխ էին կոտրում այդ ներկայացումը, թադևոս Սարյանի, Արուս Ասրյանի

խաղը և ամենից ավելի՝ Մհեր Մկրտչյանի խաղը տեսնելու համար (նրա Գլխադրունն էլ, ինչպես դրանից առաջ Բագնոս Սարցանի Բալաբեկը, դարձավ Հասարակ անուն, մտավ կենցաղի մեջ): Եկամտաբեր ներկայացումը ցուցադրվեց տարիներով, միքանի հարյուր անգամ: Նույնը, ոչ, շատ ավելին, կատարվեց Ա. Պապայանի «Աշխարհն, այո՛, շուտ է եկել» կատակերգության բեմադրության հետ: Դժվար էր ոգեսրբել պիեսի նախնական տարբերակով, բայց Աճեմյանը տեսավ դրա բեմական հեռանկարը, սկսեց աշխատել, աստիճանաբար տաքաշավ, ոգեսրբեց և հյուսեց մի հրապուրիչ ներկայացում՝ հարսանիք Երևանով մենք: Սրա համար էլ էին «գլուխ կոտրում»՝ զիշերները հերթի էին կանգնում (ցրտին խարույկ վառելով, որ տաքանան) տումս ճարելու համար: Իրոք, զրավիչ շատ բան կար այս ներկայացման մեջ, ամենից առաջ՝ Գուրգեն Զանիիքյանի, Արուս Ասրյանի, Գեղամ Հարությունյանի անձնավորումները: Իսկ Ժորա Հարությունյանի «Հարսնացու հյուսիսից» կատակերգությունը սկսեց բեմադրիչ Կիմ Արզումանյանը, լավ էլ աշխատեց, բայց հետո Աճեմյանն իր սովորության համեմատ շարունակեց գործը, խմբագրեց և սրբագրեց այնքան, որ ներկայացումն աճեմյանական կնիք առավ: Եվ վերստին՝ խելքից-մտքից զուրս հաջողություն: Ճիշտ է, Գ. Տեր-Դրիգորյանի «Մեռնող ֆլորան» նույնպիսի հաջողություն շունեցավ (Հնայած իր դրական որակով, հարցադրումների համարձակությամբ առավել էր մյուսներից), բայց դա էլ իր հերթին չուր էր լցնում կատակերգականի առանց այն էլ ջրառատ ջրաղացին: Եթե սրան ավելացնենք, որ հանդիսատեսային մեծ հաջողություն բաժին ընկավ Հարությունյանի «Ղաղարը գնում է պատերազմ» կատակերգությանը ևս (բեմադրիչ՝

Հրաշլա Ղափլանյան, գլխավոր դերում՝ Մհեր Մկրտչյան), եթե այն էլ ավելացնենք, որ ինքնուրուց պիեսների արանքում սովորականից դուրս հաջողություն գտավ Սարդուի և Մորոյի «Մաղամ Սամ-Ժեն» կատակերգությունը (որ բնմաղրել էր Կիմ Արզումանյանը և որին անդիմաղրելի հրապուրը էր տալիս Մետաքսյանի հանդուզն Շերտունին), ապա պատկերը էլլրանա և հասկանալի կդառնա. թե ինչու Սունդուկյանի թատրոնի կամարների տակ զերիշխում էր զվարիթյան ու զվարության ոգին, ամենից ուժում էր ծիծաղը:

Զվարիթ, լիաթոք, վարակիչ, նույնիսկ անհոգ, բայց ոչ երբեք անմիտ ու անբովանդուկ: Սա շատ էական է:

Զպիտի կարծել, թե Աճեմյանը հենց զվարճալիք-ներկայացումներ ստեղծելու համար էր կառչել «Սրտի արատ» կատակերգությունից: Իհարկե, բնմաղրիչն անձնական համականք տածում էր Հարությունյանի մարդկային նկարագրի, չեզ ու համեստ բնավորության նկատմամբ Բայց Աճեմյանին դեպի այդ պիեսն էր մզրւմ ոչ թե հեղինակը, այլ դըրվածքը: Ի՞նչն էր, որ զրավում էր Աճեմյանին թատերագրի առաջին, շատ կողմերով անկատար, պիեսի մեջ: Բնական, շնչառության պես բնակոն դիալոգը, ինքնարուխ, անբոնադատ հումորը, շեշտված ազգային բնավորությունները, որ այնքան մեծ գին ունեին Աճեմյանի աշքում և, իհարկե, հետապնդած գաղափարը, որի հիմքը, ինչպես հիմա ներ եռանդույլ ասում՝ «անաշխատ եկրամուտով» ապրող մարդկանց ծանակումն էր: «Աշխարհն, այո՞», զուռ է նկել» կատակերգությունը, ժանրային ավելի ստույգ բնորոշմամբ՝ վոդկիլը, որի բնմաղրությունից առատորեն հորդացող ծիծաղն ամենից անհօդն էր (և դրան նվիրված հոդվածու վերնագրել էի՝

«Ալւախ երեկո Սունդուկյանի թատրոնում»¹, Հարուցելով հեղինակի գմբռահամբյունը), ապա դա էլ իր գաղափարական ատաղձնուներ. ճակատի քրտինքով ապրող բանվոր մարդու (Մարգար-ջանիրեկյան և ուրիշներ) «սոցիալական վրեժը» հղփացած բաղբենիներից (Շմավոն-Դեղամ Հարությունյան և ուրիշներ), այսօր ընդունված բառերով ասած՝ «սոցիալական արդարության» հաղթանակ՝ գոնե բնմում: Այն, ինչ դժվար, շատ զբժվար էր լինում կյանքում՝ վողեկիլային թեթևությամբ գլուխ էր գալիս բնմում՝ լիարուն հրճվանք պարզեցնով հանդիսատեսին: «Հարսնացու հյուսիսից» վողեկիլը շոշափում էր խառնածին ամուսնության (հայ տղա և ոռւս աղջիկ) հանդիսատեսային զանգվածին մեծապես հետարրրող խնդիրը: Ինչ վեւարերում է «Մեռնող ֆլորային», ապա սա թունդ սատիրական պիես էր՝ հեռուները գնացող եղրակացություններով: Այնպես որ, «հանդիսատեսային հաջողությունն» այնքան հասարակ բան չէ, ինչպես կարծում են, որա հիմքը կարուտ է զննումի և բացարության:

Գրականից շատ ավելի բարձր էր այդ ներկայացումների թատերական որակը: Գրա բազկացուցիչ տարրերը շատ են՝ նկարչական ու երաժշտական ձևավորումներն էլ դրանց հետ Բայց ամենից առաջ, ամեն ինչից առաջ այդ որակը դերասաններն են ստեղծում և բնմադրիչը: Դերասանների աշխատանքի բնութագրումն այս շարադրանքի խնդիրներից դուրս է, ուստի և բավարարվենք մի այսպիսի ընդհանրացմամբ. Ահեմյանի բնմադրած կատակերգական թատերախաղերում դերասանները, նույնիսկ ոչ առաջնակարգ դերասանները, երե-

¹ Լ. Հախվերդյան, Բնմադրիչներ և բնմադրություններ, Երևան, 1983, էջ 201.

վում էին իրենց ձիրքի, բնատուր շնորհը ու տվյալների վերին մակարդակով։ Զլիներ դերասանական որակ՝ թատերային ռրակի մասին խոսելն իսկ ավելորդ կլիներ։ Բայց իմ խընդիրն Աճեմյանի արվեստի մեկնությունն է, արվեստ, որի սուազին հատկանիշը վառ թատերայնությունն է։ Դա այլ բան չէ, բան գրական երկի թատերական համարժեքի հայտնարերումն այն միջոցներով, որ հաւառկ են թատրոնին և ոչ մի ուրիշ արվեստի։

Ամեն մի արվեստ ունի արտահայտման սեփական միջոցները, իր լեզուն։ Արվեստի ճշգնարիտ գործ ստեղծում է այն արվեստագետը, որ տիրապետում է տվյալ արվեստի լեզվին։ Ավելին՝ մտածում է այդ լեզվով։ Կա լեզվամտածողություն հասկացությունը։ Սա կարող ենք տեղափոխել արվեստի ասպարեզ և լիակատար իրավունքով ասել՝ գեղանկարչական մտածողություն, շարժանկարային (կինևմատոպրաֆիական) մտածողություն, երաժշտական մտածողություն Այդպես էլ թատերային մտածողություն։ Սա հենց այն է, ինչ վերաբերում է Աճեմյանին։ Նա թատերայնորեն, թատերաբար էր մտածում։

Այդ մտածողության շնորհիվ է, որ պիեսը, գրական երկը նա ոչ թե վերապատմում, վերաբռնագրում էր բեմում, այլ հյուսում էր արվեստի մի նոր տեսակի գործ, այն արվեստի, որի անունն է թատրոն և որի գլխավոր հատկանիշը թատերայնությունն է։ Մնում է ավելացնել, որ թատերայնության պարագան շպետք է կապել ակնապարար շքեղության, բեմական էֆեկտների, գլխապտույտ բեմավիճակների, թատերական սրայմանական ձևերի հետ, ինչպես վարվում են ոմանք՝ շարալար սխալվելով։ Խճարկե, կարող է լինել ներկայացում, որի թատերական որակը պայմանավորված լինի վերը հիշված

Հատկություններով, բայց և ճշմարիտ թատերային ներկայացում՝ առանց այդ ամենի, արտահայտչական զուսապ և համեստ միջոցներով, կյանքի բնական համաշափություններով։ Գրական երկի տեսակը, ժանրը, բովանդակությունն է հուշում իր բեմական դրսեորման ձևը։

Անեմյանի ստեղծագործության մեջ դյուրին է գտնել և այնպիսի ներկայացումներ, որոնց թատերային որակն ի հայտ է բերված առանց պայմանական ձևերի՝ կյանքի բնական համաշափության սահմաններում, և՝ այնպիսիք, որոնց մեջ այդ նույն որակը ձեռք է բերված պայմանականության առատաձեռն կիրառմամբ, ոլխապուռյա բնմավիճակներով, թատերական վառվուն ձևերով։

Նկատենք և այն, որ այս տողի վերևում նշածս հատկությունները ավելի լայն ասպարեզ են գտնում կատակերգական բնույթի ներկայացման մեջ, քան գրամատիկական օնույթի։ Բեմադրիչի երևակայությունն ավելի ազատ ու համարձակ գործում է կատակախաղի մեջ։ Թատրոնի պատմության էջերը թիրթելով առնեք. «Կախանգույինը»՝ «Արքայագուստը Տուրանդութ» կամ Մեյերհոլդինը՝ «Ռեկիզորի»։ Ես կուզնայի ավելի առաջ գնալ, հայտնելով ևս մի վիճելի (ինձ համար՝ անվիճելի) միտք. Թույլ զրամայի հիման վրա անհնար է լիարժեք ներկայացում ստեղծել, թույլ կատակերգության հիման վրա՝ հնարավոր է։ Պատճառն, իմ կարծիքով, այն է, որ կատակերգական իրադրություններն ավելի դյուրությամբ են ենթարկվում «ուժիսորական հարստացման»։ Կատակերգական վիճակը, դիալոգը, բնավորությունն իրենց մեջ շատ ճեղքեր, արանքներ ունեն բեմադրիչի և դերասանի ինքնուրույն հավելումների տեղ բացելու համար։ Ահա ինչու կատակերգությունը բեմում կարող է պոկվել, հեռանալ իր գրական հիմ-

քից շատ ավելի, քան դրանքան: Վախթանգովի ռԱրքայագուստը Տուրանդուսը ներկայացումը շատ է տարբեր Գոցցիի պիեսից: Դրամայի բհմադրության և իր դրական հիմքի տարբերության այսպիսի օրինակ հազիվ թե գտնվի: Ինձ թվում է, հայ կոմնդիմագիրների պիեսներն Աճեմյանին հրապուրում էին սեփական երևակայության սանձերը բաց թողնելու հնարավորությամբ: Եվ ոչ միայն զուտ բհմադրական-ռեժիսորական առումով (դա կար ու կար), ույլե գրական-թատերագրական: Կողմինար՝ պիեսը վիրածելի կտար ըստ իր մտահղացման, ամբողջ պատկեր ու տեսարան գրել կտար՝ հները չնշելով, կստիպեր, որ հեղինակը նորից նոր էջեր շարադրի՝ արդեն գրածին հրաժեշտ տալով...»

Եվ այդ ամենը հեղինակներն անում էին երբեմն անմոռնչ (մեծ էր իրենց պիեսն Աճեմյանի բհմադրությամբ անսիւնու գայթակղությունը և՝ բարոյական, և՝ նյութական իմաստով), երբեմն ոմոնշալով (դյուրին բան չէ արդեն գրվածից հրաժարվել): Բայց այդպիս գործի ընթացքում միայն, տաք-տաք աշխատելիս, իսկ հետո հասկանում էին, որ ճիշտը բհմադրիչն է: Եվ Աճեմյանի մասին հուշ կամ խոսր գրած հեղինակների մեջ չկա մեկը, որ իր համատեղ աշխատանքն Աճեմյանի հետ մտարերի առանց երախաւագիտության: Աննշան կլինի շափաղանցումը, եթե առեմ՝ Աճեմյանն իր բհմադրած ինքնուրույն պիեսների համահեղինակն էր: Եվ, իհարկե, նա պիեսի մեջ պետք է արժեցող, իր հոգու հետ խոսող մի բան տեսներ այդ գործն իր վրա առնելու համար: Իսկ գրանց մեջ, ինչպես ասացի, առանց բացառության կար այդ բանը: Մի օք Սոս Սարգսյանը պատմեց ինձ, թե ինչպես Աճեմյանն իրեն է տվել Պապայանի մի պիեսը (որ հետագայում թատրոնում կրվեց ռԱշխարհն, այո՛, շուր է եկել անունով և որի մեջ

Սարդոյանը խաղաց զլխավոր դերերից մեկը): Կարդացել է, շի հագանել, և այդպես էլ ասել է Աճեմյանին: Սա թե՛ վաղը գեղարվեստական խորհրդի նիստում կգովես, որ ընդունվի: Տարակուսել է դերասանը, բայց այդպես էլ վարվել է, մտածելով, թե ինըը կարող է սխալվել, Աճեմյանը՝ ոչ եվ, ինչպես պարզվեց, լավ է արել: Աճեմյանը թեկուզն անկատար հյուսվածքի մեջ նկատել է այն հատիկը, որ պետք է ծլի ու բացի փարթամորեն:

Այսպիս, ձեռքի տակ առնելով այդպիսի թանկագին համբեկ ունեցող կատակերգություններ, Թաղեռս Սարյանի, Ավետ Ավետիսյանի, Արուս Ասրյանի, Մհեր Մկրտչյանի նման կատակերգակ դերասաններ՝ Աճեմյանը հյուսեց «Սրտի արատ», «Մեռնող ֆլորան», «Աշխարհն, այո՞», շուր է հենել», «Հարսնացու հյուսիսից» ներկայացումները. շողջողուն թատերախաղերի մի շարք՝ հագեցած ազգային հումորով, ազգային բնավորություններով, ոճիտորական անհամար գյուտերով, վառվրուն գույններով: Եվ բնմից հանդիսարան էր հորդում ժամանակակից հայոց կյանքի իր հրճվանքով, այդ կյանքի քատամնելի կողմերի սուր ծանակումով, ժողովրդական առողջ ժիծաղով: Եվ ամեն ինչ՝ անցած Աճեմյանի անթերի ճաշակի միջով. ո՞չ մի գոեհիկ բեմավիճակ, ո՞չ մի գոեհիկ շեշտ, հնչերանգ անզամ (իր բնավորության հիմնորոշ գծերից մեկը՝ արտահայտված իր արվեստում. տաելով ատում էր գոեհիաբանությունը կյանքում թե արվեստում, այդքան տարիների ընթացքում իրենից շեմ լսել ոչ մի գոեհիկ խոսք, ինչպես տգեղ ու գոեհիկ ոչինչ շեմ տեսել իր արվեստում):

Սիրում էր իր բնմադրությունները՝ գիրեկտորական օթյակից դիտել կրկին ու կրկին՝ գրեթե՝ մանկան հրճվանքով:

...Մի օր միասին էինք գիտում «Հարսնացու հյուսիսից»

Ներկայացումը։ Առաջին մասում կար գեղջկական լացուկոծի մի վառ տեսարան։ աղմուկ, իրարանցում աննշան պատճառով, գործող անձանց ձայնները երկինք են հասնում։ Տեսնեմ՝ Անեմյանը բա՞-բա՞ ծիծազում է։ Ես ասացի կշտամբական հայցը ովք սրա մեջ ի՞նչ կա վերջապես... Պատասխանեց՝ «Կիկոսի մա՞ը» շի՞...

Ծիշտ որու Ազգային բնավորություն, ազգային հումոր։

Հետո եկամ մի տեսարան (երկրորդ մասում), որ հիացմունքս բերեց, նայեցի իրեն այդ տպավորության հայցը քով։ Ի պատասխան՝ գործումակ ժամանակ, որ Գուրգեն Մանարու բառապաշարով կթարգմանվեր՝ բա՞ս։

Մտաբերեմ՝ տեսներ։

... Լուր առնելով, որ Արտակը զինվորական ծառայության ժամանակ սիրահարվել է մի ոռու աղջկա և «բանը բանից անցել է», տղայի ծնողներն ու բարեկամները, մարահատյալ, մեկնում են Ռուսաստան ռազմկան ուղելու։ Հարսնացուի հայրական տանը նրանք ծանոթանում են աղջկա ծնողներին ու մերձավորներին։ Սրանց մեջ է աղջկա պապը՝ վիթխարի մի ծերունի՝ երկար մորուքով, մարտական խաշերը կրծքին (այդ դերը շատ էր սազում հաղթահասակ դերասան Գուրգեն Հակոբյանին)։ Արտակի հայրը հարցնում է նրան՝

— Մեր կողմերում եղե՞լ եք։

ՊԱՊ— Ո՞վ, ե՞ս... կոո՞մ ես, նիկուայ Ասում է՝ մեր կողմերում եղե՞լ ես է, սիրելիս, ես հայերին վաղուց եմ ճանաշում, շատ վաղուց։ Դուք երեկի շկայիք էլ։ Ես Ղարսում եմ կովել։ Զահել էիր Օ՝, Ղարսը ուրիշ բան էր։ Ա՛յ, էս մի խաշը Ղարսում եմ ստացել... Հիմա Ղարսը ո՞նց է, շատ է փոխվել...

ԱԶԱՏ— Է՛, ձեր գնալուց հետո Ղարսը մեր ձեռքից գնաց, Սեմյոն Իվանիչ։

ՊԱՊ — Հըմ... ափսո՞ս, ափսո՞ս: Ի՞նչ հողեր էին...

Եվ պապը ծերունավարի ընկեւում է երիտասարդական հուշերի գիրկը:

Այստեղ բեմադրիչը մուծել էր այսպիսի մի մանրամասն: Պապի հարցման և Ազատի (Արտակի հորեղբոր) պատասխանի վրա մեր հայերի գլխին սառը ջուր է մաղվում: Սրանք, բոլորը միասին, վիզները ծոռում են ամոթահար՝ Ղարսը չպետք է տրվեր, կարո՞ղ էր շտրվել, բայց ձեռքից գնաց. կովկասյան հակատի քայրայումից հետո, երբ ցարական բանակը լթեց ֆրոնտը և բռնեց տունդարձի ճամփան, հայությունը չկարողացավ պահել բերդաբաղաբը. Հայոց պատմության տիսուր, ամոթալի էջերից մեկը, — այս բովանդակությունն ուներ բեմադրիչի հորինած բեմավիճակն ու պառզան:

Այսպիսի մանրամասերով, ոռհմիսորական գյուտերով էցուն է Անեմյանի ստեղծագործությունը: Դրանք թափվում էին իր երեակայությունից, ինչպիս առատության եղջյուրից: Նա դրանցով էր հյուսում իր ներկայացումները, ավելին. դրանցով՝ բեմավիճակներով էր մտածում, իսկ ի՞նչ է ներկայացումը, եթե ոչ բեմավիճակների տրամաբանված միշտա:

Ասացի արդեն, որ կատակերգությունը բեմադրական միշտամություն, հարստացում, շեղումներ ու զեղումներ ընդունում է անհամեմատ ավելի ոյուրությամբ, քան դրաման: Կա ևս մի պարագա, որի մասին ամենից լավ դատել է Դերենիկ Դեմիրճյանը: Հայ թատրոնի և թատերագործությանը նվիրված իր հուշերի ու խոհերի մեջ, ի շարս ուրիշ խորոշներությունների, նա ունի մի այսպիսի զննում. «Չեմ կամենում պարագորսներ ասել, բայց կոմիկական տարրը ամենաղոր միջոցն է՝ սթափեցնելու սենտիմենտալիզմից, ուղան-

սիզմից, իմպրեսիոնիզմից և ամեն տեսակի «իդեալ-երից» Սակավ կպատճանի կոմիկական տարրի ներկայությամբ ռեալիզմից շատ հեռանալ: Կոմիկականը զսպում է, տալիս է ուժեղ, սարսափեցուցիլ հարված: Եվ չափավորելով շատ հակաբնական, արվեստական և մելոդրամատիկ բնույթի խաղը՝ շափավորում է նաև երգեցողությունն ու պաթետիզմը: Ես կարծում եմ, որ «երգեցողությունից», «խոսակցության» անցնելու գործում կոմիդիան և կոմիկականի հյուսվածքը թատերական արվեստում մեծ դեր են կատարելու¹:

Անմիջական կապ է երեսում Դեմիրճյանի վերոհիշյալ և Աճեմյանի ներքոհիշյալ դատողության միջև. պատմահայրենասիրական ողբերգությունները, որ խաղացվել են նախահեղափոխական հայ թատրոնում, «անհետ շանցան», ծնունդ տալով դերասաններական խաղի «ճարտասանական», կեցվածքային ոճին: Պատկերացրեք, որ այդ խաղառնի հետքերը, ի դարմանս մեր, մեկ էլ հանկարծ նկատում ենք նաև այսօրք²՝

Աճեմյանի կատակերգական թատերաշարում գործի զըրպած խաղառնը Դեմիրճյանի ասած «երգեցողության» և պաթետիզմի, Աճեմյանի ասած «ճարտասանական», կեցվածքային խաղառնի հերքումն էր ու բնականի, իրապատումի հաստատումը: Ո՞չ մի կեղծ ինտոնացիա, սարքովի կեցվածք և ընդհակառակը՝ ազատ շնչի ստեղծաբան (իմպրովիզացիոն) խաղ: Գործող անձինք, կարծես, նախապես գրված խոսք չեն, որ ասում են, բնմադրիչի հազար անգամ մշակած բնմավիճակները չեն, որ ներկայացնում են:

1 Դ. «Նմիրենյան», Երկերի ժողովածու, Համոր Ե-րդ, Հայպետհրատ, 1958, էջ 640:

2 «Տայտ», 1960, № 8, էջ 73:

Ալեքսան որ, կատակերգական ներկայացումներն ինքնին ոչինչ շունեին բացասական նշանով, բայց դրանք, միասին առևկած, իրենց դրական գերը ոչ միայն կատարեցին, այլեւ գերակատարեցին, և դա էլ հանգեցրեց միկողմանիության Շաղրի ու ծիծաղի գերարտադրության մեջ ոչինչ չեղ լինի այպանելի, եթե դրա կողքին զորսվոր հնչեր նաև ողբերգականի և դրամատիկականի ձայնը:

Ավարտելով այս զլուխը, ևսեմ նաև, թե Աձեմյանն ինչ կարծիքի էր իր ժամանակակից թատերագիրների մասին:

Նաիրի Զարյանին գնահատում էր, բայց ավելի շուտ իրեւ արձակագրի ու բանաստեղծի, քան թատերագրի: Շատ էր հավանում «Արա Գեղեցիկը», բայց դա համարում էր ավելի բանաստեղծական, քան դրամատուրգիական գործ:

Ժորա Հարությունյանի պիեսներում ամենից շատ հավանում էր խոսքի բնական հնչերանգը, խոսակցական հայերենը, աղգային բնավորություններ հյուսելու շնորհը, հավանում էր այնքան, որ ներողամիտ աշխով էր նայում նրա միամտություններին: Նույնպիսի ներազամտությամբ, ինչպես նայում էր Ա. Պապայանի «Աշխարհն, այո՞», շուր է եկել» պիեսի միամտություններին և վերստին՝ դրա անբռնադատ հումորի, խոսքի բնական հնչերանգի, աղգային բնավորությունների պատճառով: Այստեղից հասկանալի պետք է լինի, թե ինչու նրան վանում էր Ա. Արաքամանյանի պիեսների այն հատկությունը, որ կոչում են նպատակարանություն, թատերագիր, որին ինքն էր առապարեզ հանել և բեմադրել նրա պիեսներից մի քանիսը: Վանում էր այնպես, ինչպես Գ. Տերդրիգի գործանի պիեսների գոեհկարանությունները, տուրքը հոռի ճաշակին: Հիշում եմ, ինչքան էր աշխատում Զ. Պարյանի «Հանրապետության նախագահը» պիեսի վրա՝ հեղինակի հետ

միասին տերսարը փոխելով հա փոփոխելով։ Իր պրած իմաստալից հուշերում Գարյանը մտարերել է, որ այդ աշխատանքն իրեն բանիցս հասցրել է հուսահատության։

Մի անգամ, — այդ տառապանքի օրերին էր, — ասացի Աճեմյանին՝ ի՞նչ եր ուզում մարզուց (Զարդանդի մարդկացին նկարագիրը սիրելի էր ինձ), չիր հավանում՝ մի՛ բեմադրեք...

Նայեց ինձ կշտամբանքով՝ ի՞նչ ես խոսում, գրող է մարդը, գրո՞ղ... Լեզուն, գրական ճաշակը կրնատվող տեսարանների մեջ էլ երևում են։

Լեզու, ճաշակ, գրական ձիրը (անկախ զուտ թատերագրականից), — սրանք շափանիշի արժեք ունեն արդիական պիեսները զննող ու գնահատող արվեստագետի աշխում։

Ամփոփեմ այս գլուխը. Վարդան Աճեմյանն իր ժամանակի կյանքը մեկնարանել է տարբեր ժանրերի պատկանող մեծաթիվ պիեսների հիման վրա, բայց ժամանակակից պիեսներում (ի տարբերություն դասականի) նրա ձիրը, անհատականությունը, անշփոթելի ծեսագիրը կատակերգությունների բեմադրության մեջ արտահայտվել է անհամեմատ ավելի վառ, քան դրամաների բեմադրության։

Պատճառները բացատրելու փորձն արվեց բուն շարադրանքի մեջ։



ՉՈՐՅՈՐԴ ՄԱՍ

ԽՆԹՆ ՈՒ ԽՐ ԽՈՀԵԲԸ

Վկայություններ արվեստագետի
խոհերի, կարծիքների, անկատար
հղացումների մասին

Աղջադիր եղեք, որովհետև հիմա պետք է խոսեմ իմ խոհագորության հերոսի մի շատ էական ու դժվար ըմբռնելի հատկության մասին։

Ամեն անգամ, երբ Աճեմյանին հանդիպելուց հետո գրի եմ առել իր ասածները, նկատել եմ տիսրությամբ, որ աղքատիկ բան է դուրս գալիս Զարմանալի բան՝ զրուցելիս ստանում եմ հարուստ տպավորություն, թղթին եմ հանձնում լսածո՛ պատ-

կերը փոխվում է. մի՞թե սա էր ընդամենը։ Հապա ի՞նչն էր, որ հմայում էր զրոցելիս։ Մտածել եմ դրա մասին և պատասխանը չեմ գտել։ Պատասխանը գտա շատ ուշ, պատահաբար, ինչ-ինչ զրբեր, հողվածներ կարդալիս։

Վարդան Աճեմյանն իր մտքերն ու դատողությունները, իր վերաբերմունքը որևէ մարդու կամ երեւլիթի հանդեպ բառերի մեջ չէ միայն, որ տեղավորում էր, այլ նաև հայացքի, աշքերի, հատկապիս աշշերի արտահայտության, ժեստերի մեջ։ Իսկ դա թղթին հանձնել չի լինի։ Ուրեմն ի՞նչ, մտքեր՝ խոսրից դո՞ւրս։ Այս՝ խոսրից, բառերից գորս, այսպէս ասած, «արտալեզվական միջոցներով»։

Իմ տարակուտանքն ուրիշները փարատեցին՝ շատ խելացի մարդիկ։ Կարդում էի էղվարդ զի Բոնոյի զիրքը՝ «Նոր մտքի ծնունդը վերնազրով», «Աշ շարլոն մտածողության մասին» ևնթավերնազրով (հայերն լույս է տեսել 1982-ին)։ Դրա 70-րդ հջում հանդիպեցի հետևյալ դատողությանը։ «Բառերի կարծրությունից խույս տալու եղանակներից մեկը հետևյալն է. մտորել տեսողական կերպարների հիման վրա՝ առհաստրակ չօգտվելով բառերից։ Մարզը միանգամայն ընդունակ է, հիմնվելով այդ կերպարների վրա, մտածել հետեղղականորեն։ Դժվարությունները ծագում են լոկ այն ժամանակ, երբ միտքը պետք է արտահայտել բառերով։ Ցավոք, քչերն են ընդունակ մտածել, այսպէս ասած, տեսողականորեն և, բացի այդ, բոլոր իրադրությունները չեն, որ հնարավոր է վերլուծել տեսողական կերպարների միջոցով։ Այնուամենայնիվ, մտածողությունը տեսողականացնելու սովորություն արժեն ձեռք բերել, որովհետև տեսողական կերպարները օժտված են այնպիսի շարժուն և պլաստիկ հատկություններով, որպիսիք բառերը չունեն։»։

Նկատենք՝ Բոնոն ափսոսանքով է դրում քշերն ևն ընդունակ մտածել տեսողականորեն։ Աճեմյանն այդ քշերից էր։

Մի հոգված էի կարդում «Տեսար» հանդեսի 1980 թ. 6-րդ համարում՝ Ա. Յակոբովսկիի. «Տոնն ո՞ւմ համար կլինիա։ Հեղվածում հանդիպեցի այս տողերին. «Ինչ-որ ժամանակ Մարմոնելը նկատել է. «Նո. ով Դիդրոյին ճանաշում է միայն իր երկերով՝ ամեննեին չի ճանաշում նրան։ Նրա բովանդակ հոգին աշքերի մեջ էր և շուրջերին։ Սրտի բարությունը դեռևս կբուր դեմքն աշդրան լավ չի արտահայտել...» (էջ 136)։ Այս տողերը կարդալիս աշքիս առաջ հայտնվեց Աճեմյանի կերպարը։

Որևէ բան պատմելիս, որեւէ դրատողություն անելիս Աճեմյանը մտածում էր տեսողականորեն, տեսանելի պատկերներով և այդ ամենն արտացոլվում էր դեմքի արտահայտության մեջ։ Բառերչ ավելի քիչ էին, բան ասածի բովանդակությունը, քանի որ դրա մեծ բնուն ընկերում էր տեսողական պատկերների և որանց արտացոլման՝ դիմագծերի շարժման, աշքերի մեջ, հայացքի վրա։ Դա է թասներազիր Ժորա Հարությունյանի զարմանքի բացատրությունը. «...ովքեր ճանաշել են Վարդան Աճեմյանին, կարծում եմ, չեն առարկի, եթե ասեմ, որ նա քշախոս մարդ էր։ Զրուցելիս նա ավելի շատ լուսում էր, նկարում, բան խսում։ Երբեմն էլ թվում էր, թե նա քեզ չի լսում։ Բայց երբ նրանից բաժանվում էի, ինձ թվում էր ամբողջ դրույցի ժամանակ միայն նա է խսուել, նա է պատմել, նա է բացատրել... Այդպիս է դա ինձ համար մնաց մի հաճելի առեղծվածք։»։

1 «Վարդան Աճեմյանը ժամանակակիցների հուշերում» անտիւ ժողովածություն (գտնվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտում)։

Ահա և առեղծվածի լուծումը:

Մի անգամ, 1965-ի հունվարին էր, գնացքով մեկնում էինք Թբիլիսի թատերական մի խորհրդակցության, Շանապարհին մտարերեց մի շատ ծիծաղելի պատմություն, թե ինչպես պատերազմի տարիներին կենինական մեկնելիս տարատը դողացել են գնացքում, և ստիպված է եղել կայարանում իջնել և քաղաք մտնել առանց տարատի, հետո ինչպես է Մելիքսեթ Սվախչյանի հետ շուկայում գտնել տարատը, հետո պարզել, որ իրենը չէ, հետո ինչպես է Վարդուն Թերզիրաշյանը ոտուճեռնկել մի ուրիշը գտնելու համար և ի վերջո ճարել է...

Երբ պատմում էր՝ ծիծաղից չուր էինք դառել, բայց ոչ այնքան ծիծաղաշարժ դեպքի խոսքային վերաբռնդրության, որքան դրան ուղեկցող դիմախաղի, աշքերի արտահայտության՝ այնքան դրանք հագեցած էին հումորով, կյանքի թըրթըռում զգացողությամբ:

Մի անգամ, 1974-ի փետրվարն էր, իր հիացմունքն էր Հայտնում «Հատակում» ներկայացման նկարչական ձևավորումից, ձևավորման արդեն պատրաստի մակետից (զա արել էր բնմանկարիչ Ա. Կուրիլկոն, որ Մոսկվայից հրամիրվել էր Դե Ֆիլիպոյի «Շաբաթ, կիրակի, երկուշաբթի...» պիեսի ձևավորման համար և դրա հետ միասին, Աճեմյանի խնդրանքով, «Հատակումն» էլ ձևավորեց):

— Շատ լավ է արել, հիանալի, — ասաց Աճեմյանը, — ուզում ես շարունակ նայել:

Ասաց, թմբիկ ձեռքը գրեց այտի տակ, գլուխը թերեց և հիացմունքից փայլող աշքերով նայեց մի անորոշ կետի: Նայելու բան էր, թե ինչպես էր նայում: Հայացքն ասում էր ավելին, շատ ավելին, քան խոսքը: Դե արի ու վերաբռնդրի գրավոր: Անհնար է:

Հիշո՞ւմ եք, երբ պատմում էի, թե տակավին երիտասարդ՝ ինչպես է ընդունելության քննություն հանձնել Մոսկվայում՝ Հարց են տվել, չի կարողացել պատասխանել, և չեր էլ կարող իր գիտեցած ուսւերենով։ Փոխարենը՝ նկարել է պատասխանն ու ներկայացրել Եվ դա՝ տեսանելի պատկերը, բավական է եղել, որ հավակնորդն ընդունվի։

Այսպես էր «խոսում» Աճեմյանը՝ ներքնատես պատկերներով, հայացրով, աշրերով, դիմախաղով։ Ավելին։ Մի քայլ էլ անեմ առանց սխալվելու վախի՝ նա նույնիսկ մտածում էր տեսանելի պատկերներով։ Ավ էլ որ մտարերում է Աճեմյանին՝ մատիտը կամ ֆլումաստերը ձեռքին նկարելիս կամ ծաղրանկարելիս է մտարերում։ Միշտ և ամենուրեք՝ նույնիսկ զբուցելիս և մանավանդ երկար ու ձիգ ժողովների, խորհրդակցությունների ժամանակ։ Դրս արդյունքն է կատականկարների նրա մեծահարուստ պատկերասրանը, հայ կատականկարչության բարձրագույն որակն, իմ կարծիքով։ Նկարում էր Բղթի կտորի վրա, թուղթ շեր լինում՝ ծխախոտատուփի կտորտանքների։ Միայն թե նկարեր, մատիտը շարժելը և միտք շարժելը նույն քանն էր նրա համար՝ ուժածել տեսողական կերպարների հիման վրա։ Խոսելիս էլ նույնն էր՝ այդօրինակ մտածողությունը դեմքի պես-պես արտահայտություններով։

Ահա ինչու այն, ինչ պատմում եմ Աճեմյանի մասին՝ դուք այդ հատկանիշը գրա հետ պիտի հասկանաք և ջանաք ուսել։ Նրան արտալիղվական այնպիսի դրանորումներով, որ խոսքաշին վերարտադրության շեն ենթարկվում։ Դա հատկապես կարեւոր է հիմա, երբ պետք է ներկայացնեմ Աճեմյանին իր խոհերով ու կարծիքներով՝ այնպես, ինչպես ժամանակին դրի եմ առել։ Ժամանակապրական կարգով և դրեթե առանց «հու-

շային միջամտությունների», որոնք սրբեմն զուր տեղը ծանրաբեռնում են շարադրանքը:

Իհարկե, գրառումներս կներկայացնեմ ոչ թե պարզ հերթականությամբ, այլ մի որոշ համակարգմամբ՝

1. Գրառումներ, որ ցույց կտան Աճեմյանի տպավորություններն ուրիշների արվեստից:

2. Գրառումներ, որ կներկայացնեն Աճեմյանի բնավորությունը:

3. Գրառումներ, որ կայատմեն Աճեմյանի անկատար մնացած հղացումների մասին:

Եվ այսպես...

Գրառումներ, որ ցույց են տալիս
Աճեմյանի տպավորություններն
ուրիշների արվեստից:

1957, դեկտեմբերի 26:

Մոսկվայում շատ ներկայացումներ է դիտել, հավանել է, այն էլ շափապանց, միայն մեկը՝ «ևավարի թագավորությունը» (ՀՀ Տոլստոյի դրաման Փոքր թատրոնում, Բորիս Ռավենսկիի բեմադրությամբ):

— Հիանալի՞։ Դերակատարները, ռեժիսուրան, ձևավորումը՝ ամեն ինչ իր տեղը, թեև տեղ-տեղ ռեժիսուրան հուար է տալիս, ու քեզ դուր կգաւ Խորը հոգեբանական խաղ, իսկական ժողովրդական ողբերգություն, ամուր ռեժիսուրա։ Հանդիպեցի Ռավենսկիին, խոսեցինք, ասացի ինչն եմ հավանում, ինքն էլ թե՝ մաս պոխожи друг на друга...

Երբ ես եղա Մոսկվայում՝ դիտեցի: «Փայլուն» և «խորունկ»

առծականները, կարծես, մերժում են միմյանց, այս գեպքում՝
ոչ Մինչև հիմա մտքումս են բեմադրության ընդհանուր կեր-
պարը և իգոր իլլինսկու խուզն Ակիմի դերում։ Ռուսաց թատ-
րուում տեսածո, երեխ, ամէնալավ ներկայացումը։

1961, Հունվարի 21։

Մոսկվայից նոր է վերադարձի՝ վառ տպալորություննե-
րով ժանրաբեռ։

Դիտել է Լոնգոնի Օլդ Վիկ թատրոնի «Մակրեթ» Հյուրա-
խաղալին ներկայացումը։

— Դործողությունը խցկել են մի փոքր տեղ՝ խավար,
ճնշող, խնդրադ մինուրուս։ Ներկանքը է, մարդիկ կուանալով ճն-
շոցնում կամարների տակով։ Շեքսպիրյան ողբերգության
միջավայրը Դործող անձերը՝ մուշտակներով, մատներին խո-
շոր, մասսիվ մատանիներ թանկադին քարերով։ Շատ ազգե-
ցիկ էր Բանքոյի անսպասելի երեալը՝ երեսն արնաշաղախ։
Շեքսպիրն ընդունում է այսովուն նատուրալիզմ։ Կանգնում են
մի դիրքավ ու խոսում Հա խոսում, ասում ես դոնն ձեռքերը
շարժեն՝ շնորհում։ Խոսում են Սափով, լիբը, կրօպվ։ Սրան-
չելի լեզի Մակրեթ՝ կուրծքը կիրարաց Հրապուրիչ կին։ ուժ
ուղի Հետեկց կտանի։

Սակավահավան Աննմյանն այս անգամ առատաձեռն է։
Հաւանան է հակ «Կուրաժ մայրիկն ու իր զավակները» (Բ.
Բրեխտի պիեսի բեմադրությունը Մայակովսկու թատրոնում՝
«օրիգինալ ներկայացում է»), «Իմ ընկեր Կոլկան» (Մանկա-
կան կենտրոնական թատրոնում՝ «պարզ, ազդեցիկ ներկա-
յացում»³), Մինչեւ «Սովորմեննիկ» թատրոնի ազմուկ Հա-

¹ Սա Ա. էֆրոսի բեմադրությունն է։

նած «Մերկ թագավորը» ներկայացումը համարում է դատարկ բան՝ «կապուստնիկ»:

1961, դեկտեմբեր:

Մեծ ասուլիս բացվեց իմ կարգացած «Ժամանակը և դերասանը» բանախոսության շուրջը: Երեք թե շորս երեկո թեր և դեմ կարծիքներով հանդեռ եկան շատ շատերը՝ դերասաններ, բեմադրիչներ, թատերագետներ, թատերագիրներ: Բանավեճի առանցքային խնդիրը հին և նոր խաղառների պարզաբանմն էր ժամանակակից դերասանական արվեստում՝ Անեմյանն իր կարծիքն արտահայտեց վերին աստիճանի պարզ ու կտրուկ՝

— Ի՞նչ ասել է նոր և հին ռա: Ինչ որ տաղանդավոր է՝ նո՞ր է, ինչ որ անտաղանդ է՝ հի՞ն:

Իմ վերջին խոսքում ես առարկեցի նրան, վկայակոչելով իր իսկ «Սկիլլայի» և Քարիբդիսի միջև հոգվածը¹, որ այլ բան չէ, քան Հնի և նորի ըմբռնման ու մեկնաբանության բոլորովին ուրիշ և փայլուն օրինակ: Այստեղ նա և՛ այն է ասում, թե որն է հինն ու Հնացածը հայ դերասանական արվեստում՝ հարտասանական, կեցվածքային խաղառնը, և՛ այն, որ աեթե մենք ուզում ենք լինել կատարելապես արդիական արվեստագետներ, ամենից առաջ անհրաժեշտ է, որ այսօրվա հայ դրաման վճռական թոփշը կատարի դեպի մի նոր որակը, ու լավ էլ բացատրում է խաղառների նորոգման դիալեկտիկան. «... թատրոնի համար վտանգավոր է «Հարմարվել» հանդիսատեսին, այդ փայտը երկու ծայր ունի: Պետք է նայել ոչ

¹ В. Аджемян, «Между Сциллой и Харибдой», «Театр», 1960, № 8, с. 72:

միայն վաղվա, այլև վաղը չեւ մյուս օրվան։ Կյանքի ձևերն այսօր արագ են փոխվում, և հանդիսատեսը հանկարծ («հանկարծ» միայն թատրոնի համար) այլևս չի գնում դիտելու այն, ինչ դեռ երեկ ընդունել է ժամփաճարությամբ։

Այսքանից հետո՝ եզրահանգումը.

«Հնաբույր տեխնիկան, բուղմապլան պսիխոլոգիզմի ընկալման անկարողությունը, — ահա, թերեւ, դերասանական պրոցեսի այն «ազգային տվյալները», որ ժամանակն է արխիվ հանձնել։

Խորապես ճշմարտացի դատողություններու Եվ այսպես մտածողն ինչպես կարող էր առարկել՝ «Ի՞նչ ասել է նոր և հին...»։ Հենց միայն հանուն առարկության։ Մինչև հիմա էլ չեմ հասկանում։ Անձմյանի առեղծվածներից ևս մեկը։

1962, հունվարի 25։

Վերադարձել է Մոսկվայից, ուր մասնակից է եղել հերթական ինչ-որ խորհրդակցության և դիտել է մի ամբողջ շարք ներկայացումներ (այն ժամանակ լավ ներկայացումներ Մոսկվայում շատ կային)։

Ալ, Ֆրեդրիխ «Փամանիր և հուսարներ» կատակերգությունը վախճանգովի թատրոնում, Ա. Ռնմիզովայի բեմադրությամբ։

— Երեղ, թեթև, զույներով հարուստ ներկայացում... Դիտես ի՞նչն է զարմանալի՝ կանանց զգեստների մաքրությունը, ոնց որ արդուկի տակից նոր հանած, պարելիս ներքնաշուրբը երեսում են՝ ճեփ-ճերմակ, քեֆդ գալիս է, կուտուրա...»

(Ինձ էլ զարմանալի թվաց իր զարմանքն այդքան հասարակ բանի վրա, Հետազում ես դիտեցի նույն ներկայացումը և հասկացա թե ինչու է այդպես ասում. լեհական փայլուն

կատակերգության փայլուն կատարում, որի մեջ զգեստավորումն ուներ առանձին կարևորություն, զգեստավորման նման կուլտուրայի ու մաքրության մասին հայ բնմադրիչը կարող էր միայն երազել):

Ա. Սաֆրոնովի «Стряпухас» («Խոհարար կինը») նույն թատրոնում, Ռ. Սիմոնովի բնմադրությամբ:

— Մեր «Սրտի արատը» դրա մոտ շեղեւր է: Բայց լավ, մաքրուր բնմադրությամբ պինսն ազնվացել է: Ժողովուրդն ուզում է ծիծաղել, ցրվել, և լավ ընդունում են:

«Կարամազով նղրայրները» Գեղարվեստական թատրոնում:

— Այս, հնառն որ ասում են հենց սա է՝ ծանր, շորսժամանոց ներկայացում և ոչ մի կարգին գերակատար:

Պուշկինի անվան թատրոնում դիաել է «Խոզի պոչուկները» և «Երենգայի ծննդյան տոնը» ներկայացումները, երկուսն էլ Բորիս Ռավենսկիին բնմադրությամբ (մոսկվյան երեխ միակ բնմադրիչը, որի հետ անձնական մտերմություն ուներ):

— Դատարկ պինսներ, մեկը մյուսից վատ: Ռեժիսորան գոռում է ամեն բայլափոխի. լավ է, որ ևս այդպես չեմ: Երկրորդ ներկայացումից հետո միասին զնացինք ուստորան, ի՞նչ բարքեր են, տե՛ր ասոված...

(էլ շասաց ինչ բարքեր են, խոսքը վերաբերում էր Բորիս Ռավենսկիին շափաղանց աղատ վարբին):

«Սովորենենիկ» թատրոնում Կ. Սիմոնովի «Զորբորդ» ներկայացման առիթով՝

— Եֆրեմովն էր իսկապէս: Սա ավելի լավ ուժիսոր է, քան դերասանու Փօրբրացրել է հերսոնին, մտածում ես. արժե՞ այդպիսի մարդով այդքան մտահոգվել:

Սարդուի և Մորոյի «Կատրին Լեֆեվր» («Մազամ Սանֆեն») կատակերգությունը Մոսկվետի անվան թատրոնում:

— Հազ դերասաններ կան, հատկապես Մարեցկայան: Բեմադրությունը (Վուլֆ) խեղճ է: Մեզ մոտ կարելի է խաղալ:

(Եվ իրոք, 1972-ին խաղացին՝ Կիմ Արգումանյանի բեմադրությամբ):

Եվրիպիդեսի «Մեդեան» Չայկովսկու անվան համերգային դահլիճում, Ն. Օխլոպկովի բեմադրությամբ:

— Անպետք դերասանունի է խաղում (Գերդիխ), Խանովը լազ գերասան է, բայց չի բռնում դերի (Յազոն) ֆակտուրային: Օխլոպկովը հետաքրքիր բաներ արել է, բայց այնպես, կարծես դերասանը միայն մի կտորի համար է խաղում, փայլատակում ու կորչում: Նայում էի ու մտածում հին հույներից ինչ պիտի խաղանք, «Բաքոսունինե՞րը», թե...

— Իշարկե՞ս, «Իֆիդենիան»:

Ինքն էլ այդպես կողմնորոշվեց (Գրիգոր Բոյաջինն էր խորհուրդ տվել): Եվ բեմադրեց 1975-ին: Դրա մասին՝ իր տեղում:

1962, դեկտեմբերի վերջը:

Նոր է վերադարձել Մոսկվայից: Մեկնել էր մասնակից լինելու արվեստի գործիչների հանդիպմանը Նիկիտա Սերգեևիչ Խրուշչովի հետ: Նրա մասին պատմում էր մեծ համակրանքով, բայց և տարակուսանքով: Համակրանքով՝ Տրկորի զեկավարի խառնվածքի, բուռն ու հմայիչ նկարագրի, տարակուսանքով՝ նրա ինչ-ինչ դատողությունների մասին: Սիծաղով էր մտարերում նրա թունդ քննադատությունների մասին: Նեիզվեսանու հասցեին (սա այն քանդակագործն էր, որ Խրուշչովի մահարձանի հեղինակը պիտի դառնար՝ Նովոդեմիլինի գերադանատանը պետական նշանավոր գործչի շիրիմին դըր-

ված մի շատ ինքնատիպ, դիտողին խոհերի տրամադրող մի գործ):

Մոսկվայում դիտել է ներկայացումներ, դժողով է բոլորից, հատկապես վախթանգովի թատրոնի «Կենդանի դիակից»:

«Մոսկվան ջրի ճամփա եք դարձրել, էլ ժամանակ մնո՞ւմ է աշխատելու...»:

Լուրջ հարց և անլուրջ պառասխան՝ անվերծանելի ծիծառով:

1963, հունվարի 26:

Վերստին՝ վերադարձ Մոսկվայից:

Այս անգամ մեկնել էր Կ. Ստանիսլավսկու ծննդյան 100-ամյակի հոբելյանական հանդեսին ներկա լինելու:

— Սառն անցավ հանդեսը, բոլորը ճերմակած ժերեր, եկել էին գլուխները տմբամբացնելով...

Տեսած ներկայացումներից ոչ մեկը չի հավանել.

— Հիմար բան («Եսուն շենք» Մոսսովնտի անվան թատրոնում):

— Դատարկ բան (Ա. Շտեյնի «Աստորիա» հյուրանոցը» Մայակովսկու անվան թատրոնում):

— Վատ, անճաշակ ներկայացում (Թ. Ուիլյամսի «Օքֆեռուն իջնում է դժոխք» դրաման Մոսսովնտի անվան թատրոնում):

— Նարվում է, բայց ներկայացում չի, ուրիշ բան է («Սիրելի խարերա» թատերադիր Շոռուի և դերասանունի Քեմբրի նամակադրության հիման վրա ստեղծված ներկայացում Գեղարվեստական թատրոնում):

— Չդիմացա, կեսից գնացի (Ա. Շտեյնի «Օվկիանոս» պիեսը թանակի կենտրոնական թատրոնում):

Աթենքից ժամանած մի թատերախումբ Թբիլիսիում ցուցադրեց երկու ներկայացում՝ «Մեղեա» և «Էլեկտրա», գլխավոր դերում հույն նշանավոր դերասանուհի Ասպարիա Պապատանասիու, բեմադրիչ՝ Դիմիտրիիոս Ռոնդիրիս, Դիտեցինք միասին:

— Այս ողբերգակ դերասանուհի: Խնձ ձայն, չսված ձայն, տեմպերամենտ: Եվ ասկետիզմ ամեն ինչում՝ խաղի մեջ, բեմադրության մեջ: Ոչ մի ֆոկուս, ինչպես Օխլոպկովի «Մեղեայում»: Նա իր ֆոկուսներով ձանձրացնում էր, թեև լեզուն հասկանում էիր, սա չի ձանձրացնում, թեև լեզուն շփիտես:

— Իսկ պարերգային խո՞մբը:

— Այդպիսի խոր ստեղծելու համար մեզ հինգ տարի է պետք:

Իսկապես, զարմանալի էր Ռոնդիրիսի բեմադրությունների պարերգային խումբը՝ երեխ ոչ ավելի, քան 14—16 կին, հինգ հունական թատրոնի գարս-դարս ծալքավոր զգեստավորմամբ, անհավատալիորեն սինխրոն շարժումներով հասնում էր հուզական այնպիսի ներգործության, որ հանդիսարանը սարսում էր:

Անհասկանալի բան, հունական ներկայացումների մեջ Անհյանին ամենից շատ գրավում էր ասկետական խստաշունչ ոճը, մինչդեռ Ելրիավիդեսի «Իշխաննեան Ավլիսում» ողբերգության իր բեմադրությանը (1975) հենց այդ հատկությունն էր պակասում: Մի անգամ հարցրի՝ «Ի՞ն է իր բեմադրության թույլ կողմը: Պատասխանեց՝

— Զեավորման մեջ կա որոշ շալօնություն:

Ճիշտ էր, բայց դա, դժբախտարար, վերաբերում էր ոչ միայն Ն. Նիկողոսյանի բեմանկարչությանը:

1963, *Philosophy* 3:

Նոր է վերադարձել մռոկովլան այս էլ քանիերս՝ բոլ խոր-Հըրդակցությունից:

Երմուղայի թատրոնում զիտել է «Շաբաթ», կիրակի, երկուշաբթի» ներկայացումը (էդուարդո զի Ֆիլիպովի պիեսը Ալ-Շատրինի բնմադրությամբ): Եվ անսպասելի բան, Հավանակ է: Այնքան, որ՝

— Զբանապես մեղ մաս: Մերոնք լավ կխաղան:

Պատմեց նաև, թե Շատրինը մտադիր է իր թատրոնում՝ բեմադրել «Պաղտասար աղբարը», միայն թե խոսակցության մեջ ասել է՝ «Պաղտասարից բացի մյուսները թուրքեր են, չե՞...

«Анкеты мы вам не запрещаем, что вы, что вы?», — сказал я им и добавил: «Но так нельзя, я поговорю с ними...»

Զգիտեմ, դրանից հետո ինչ է անցել-դարձել, միայն թե և դավագիշտ է այնպես, որ Շատրինը Սունդուկյանի թատրոնում քեմադրեց «Շաբաթ», կիրակին...» իսկ Աճեմյանը Երմոլովյանի թատրոնում՝ «Պաղտասասար ազգարը» Երևի միակ արդյունավետ համագործակցությունը, որ Աճեմյանն ունեցավ մռակովյան թատրոններից մեկի հետ: «Շաբաթ», կիրակին..., մի ընտիր ներկայացում, թատրոնի խաղացանկում պահպանվեց շատ տարիներ՝ ի գոհունակություն գերակատարների և հանդիսատեսի: «Պաղտասասար ազգարը», նույնպես ընտիր մի ներկայացում, նույն բախտը չունեցավ: Թէ ինչո՞ւ կասեմ իր տեղում:

Այդ օրը խոսեց «Մեծապատիվ մուրացկանների» 1934-ի բնագրությունը վերականգնելու մասին՝ ի՞նչ կա որև Ես համաձայն եղա վերապահումով՝ այն ժամանակվա մեկնությունը կրանի՝ այսօրվան:

— Կմտածենք:

Այդ գործը շարվեց: Եվ բարերախտաբար. նույն գործի հրկորդ բեմազրությունն Աճեմյանին հրբեր չեր հաջողվում:

1964, Հռւմվարի 17:

Վերսալին՝ նոր է վերադարձել Մոսկվայից, բայց այս անգամ ոչ թե խորհրդակցությունից, այլ ստեղծագործական աշխատանքից՝ երմուռվայի թատրոնում սկսել է «Պաղտասար աղբարի» բեմադրական աշխատանքները. կատարել է դերաբաշխում (Պաղտասար—Վահկուող Տակու, Օգսեն—Վալերի Լևկարեն, Անուշ—Լարիսա Օրդանսկայա), բացատրել, պարզաբանել է յուրաքանչյուրի խնդիրը: Դրանից հետո եղել են ժափեր, և առել են՝ Յան պրիալու...:

Պատմում էր բարձր տրամադրությամբ՝ լավ դերակատարներ կողառնան, բայց վայսենում է, թե Յակուտի հումորը պակաս լինի, իսկ Օրդինսկայան՝ չափից ավելի դրամատիկական: Մտահոգիւմ է ձեւավորմամբ: Բոլ սլիտի անի՝ Կոլյան¹ շատ է ուղում, բայց ոհսկով բան է, թատերական ձեւավորում երբեմ լի արել...

Մտածում էր ինքնեն, որ Մարտիրոս Սարյանն անի, այլապես՝ Հարություն Գալենցը, Սուրեն Ստեփանյանը:

Եվ մեկ էլ թի՝

— Տեսնես Ռուբեն Սիմոնովն ի՞նչ կասի:

(Անտեղի շեր հարցումը. «Պաղտասար աղբարի» մոսկովյան ուղիւրեմադրության մեջ Սիմոնովն էր խաղում գլխավոր դերը, և հիանալի: Մտքովս անցավ, թե ինչու նա իր թատրոնում՝ վախթանգովի անվան թատրոնում չի բեմադրում

1 Պանդոկադործ Նիկողայոս Նիկողոսյան:

կատակերգությունը և ինքս էլ խաղում։ Բայց նա այդ թատրոնի երկարամյա գեղարվեստական զեկավարը լինելով հայ թատերագործթյանը մոտ շեկավ)։

Ամենից վերջում՝

— Նայեցի «Սեղուանցի» բարի մարդը, այլ Բրեխտ ինչպես կիսաղան։

(Դա վախթանգովի անվան թատրոնի Շշուկինի անվան ստուդիայի ներկայացումն էր, Յուրի Լյուբիմովի բեմադրությունը, որով ծայր առավ այդ նորարար բեմադրիչի և Տագանկայի թատրոնի փառավոր պատմությունը։ Ինձ շատ ուրախացրեց, որ առջասարակ չժառավան, ավանդասեր, եթե շասմ պահպանողական, թատերական նոր հովերի հանդեպ վերապահ Աճեմյանը ոգևորված է նորարնույթ, նորորակ բեմադրությամբ և որ Բրեխտի «օտարման էֆեկտը» բնավ էլ օտար չէ նրան)։

1964, Հունվարի 28։

Պատմեց, որ եղել է Սարյանի մոտ «Պաղտասար աղբարը» ձևավորելու առաջարկով։

— Չմերժեց, բայց չի էլ ուզում լուրջ բան անել, ծերացել է։ Ասում է ուսւները շնն կարող «Պաղտասար աղբար» խաղալու Երևի Սուրբն Ստեփանյանը պիտի անի։

Այդպես էլ եղավ։

Մեջ եմ բերում այն սակավաթիվ նամակներից մեկը, որ ստացել եմ Աճեմյանից։

«1964, 10 մայիսի, Մոսկվա։

Սիրելի Լևոն

Նամակը (ավելի շուտ երկտողդ) ստացաւ վաղուց էի ուզում գրել բեղ, կամ խոսել քեզ հետ հեռախոսով, բայց

Рудзиневский կոչեցյալը Մոսկվայում շէր և ապա մայիսյան տոնները... Մի խոսքով, հնար շէր լինում կապվել կամ տեսնել նրան: Երեկ անձամբ գնացի «Առկուստ» և, ինչպես նախապես հեռախոսով պայմանավորվել էինք— հանդիպեցինք:

— Մենք,— ասաց նա,-- արդեն պատրաստել ենք Հախվերդյանին ուղարկվող զրությունը, և նախապատրաստել ամեն ինչ: Առաջարկված է փորբունչ սեղմել ծավալը: Ես խնդրեցի զրությունը շտապ ուղարկել: Խոստացավ վաղն իսկ ուղարկել: Թե ո՞ր շափով նա իր խոստումը կկատարի, զգիտեմ: Ամեն դեպքում ինձ իրազեկ դարձեռու¹:

Անցնենք «Փաղտասարին»: Փորձերը անում եմ բեմի վրա: Հստ նոր աշխատանքային ծրագրի, ներկայացումը պետք է պատրաստ լինի մայիսի 29-ին—30-ին: Հետաձգման պատճառը միազանում հայտարկված իրենց գաստրոներն են (մայիսի 15-ից 21-ը) և ամիսու, որ իմ փորձերի քանակը այսպիսով կրճատվում է և շեմ կարողանալու փորձերը շարունակել անխափան:

Գործս դժվարացել է սան նրանով, որ մուտք են դորձել երկու նոր դերակատարներ (Օգսեն և Փայլակ), որոնց հետ շատ գործ կա անելու:

Օգսենը (Լեկարեն) շատ լավ կլինի:

Փայլակը (Гушанский) վատ չի լինի:

Քանի որ ներկայացումը այսպիսով պատրաստ կարող է

1 Խոսքը վերաբերում է Հետեմյալին. Մոսկվայի «Բակուստվո» հրատարակությունը մտադիր էր լույս ընծայել իմ «Կամբկան» և մեր օրերը՝ Վարդան Աճեմյանի արվեստը՝ մենագրություններ. Խնշ-ինչ պատճառենք այդ գործը զլուխ շնկագի: Պատճառներից մեկն էլ այն էր, որ Աճեմյանը հետեղական չէղագի իրեն վերաբերող գործի մեջ՝ իր բնավորության գեղեցիկ կողմերից մեկը:

լինել 24-ի փոխարեն 30-ին — այսինքն երբ փաստորեն Մոսկ-վայում թատրոնների սեղոնց փակվում է, — ապա նպատակահարմար են համարում՝ պրեմիերան հայտարարել սեպտեմ-բերին՝ սեղոնի բացմանը: Իսկ մայիսի 29-ին 30-ին խաղալ փակ, առանց աֆիշների, առանց հայտարարության: Կարծում եմ ճիշտ են մտածում, ուստի՝ ևս համաձայնվեցի:

Այժմ քո գալու մասին:

Եթե ունես ցանկություն, հնարավորություն, լավ կլինիք գայիր: Մայիսի 22-ին, 23-ին լինեիր Մոսկվայում: Այսպիսով հնարավորություն կունենայիր ներկա լինելու և մասնակցելու վերջին փորձերին, և փակ ցուցադրումներին¹:

Դրի այս մասին քո կարծիքը, հայտնիր որոշումդ:

Օրերն այստեղ անցնում են զարմանալի արագ — ուղղակի բոշում են:

Նայել եմ 7—8 ներկայացում — զանազան թատրոններում:

Մեծագույն հաճույք եմ ստացել իտալական (Ճենովայի) թատրոնի ներկայացումից «Վենետիկյան երկվորյակներից» (блеск!): Վատ չեր Ռոզովի «В день свадьбы» Կոմսոմոլի թատրոնում: Ռուբշ լավ բան դնու չի հանդիպել: Նայեցի «Ռո-մեո և Ջուլիետը», մի ներկայացում, որն այստեղ ստեղծվել

1 Ես, իհարկե, մեկնեցի Մոսկվա, բավեկանությամբ դիտեցի Անձա-յանի վերջին փորձերը, քանի որ ինքն էլ, դերասաններն էլ փորձում էին հանույցով: Բայց կատարվեց անսպասելին. ներկայացման պրեմիերայի առամսերը վաճառված էին մայիսի 30-ի համար, բայց զրա նախորդ օրը զլիավար գերակատար վահվուղող Յակուտան ինֆարկտ սահացավ և տեղափոխվեց Հիվանդանոց: Տիսուր նախանշան «Հայի բախտ», — տրամադրությամբ ասաց Դր. Բոյազինը: Պրեմիերան կայացավ աշնանը: Բարձրորակ ներ-կայացումն ունեցավ հաջողություն, բայց ոչ այն հաջողությունը, որ ապա-ստում էինք:

է մի մեծ խումբ մարդկանց՝ զանազան կոնսուլտանտների (Անիկստների և շատ ուրիշ մասնագետների) ջանքերով։ Բացառությամբ 2—3 մոմենտների, ամբողջ ներկայացումը¹ թողնում է զարմանալի թույլ, ուղղակի կիսապրոֆեսիոնալ ներկայացման տպավորություն։ կվաս— կտեսնեա:

Քիչ առաջ ինձ մոտ էր Անահիտ Սահինյանը։ Ես նրան առաջարկեցի իր պիեսը մշակելու նոր ծրագիր— կարծես ընդունեց և խոստացավ նստել ու աշխատել։

Մոսկվայում արտակարգ ոչինչ չկա։ Իմ պատուհանից նաևցի մայիսյան պարադը։

Դեռ նայելու եմ իտալական թատրոնի երկրորդ ներկայացումը (Պիրանդելլոն)։

Շուտով սկսվելու են լենինգրադի Գորկու անվան թատրոնի գաստրոլները։ Վերջապես կտեսնեա Տովստոնովի ներկայացումները։

Ափսոս, որ ինձ հետ չես

Պարոնյանի մասին գրածդ անոտացիան (այն է, ինչ պետք է) թարգմանվել է և պատրաստ է ծրագրի հետ տպագրվելու Առաջմ—

բո Վ. Անեմյան»։

1965, հունիսի 23։

Փարիզի «Ատելիե» թատրոնը եկել է Երևան Հյուրախաղերի։ Հանդիպեցինք օպերայի և բալետի թատրոնի (այդուն էին ցուցադրվում ներկայացումները) ճեմասրահում։

— Հը՛, ո՞նց են ընդունում հոգվածդ։

1 Ա. էֆրոսի բհժաղբությունը Սալայա Բըոնեայա փողոցի թատրոնում։

Ասացի՝ ո՞նց պիտի ընդունեն, ինձ են ման գալիս մի-մի
փետ առած...

Քահ-քահ ծիծաղ:

Հարցումը վերաբերում էր իմ մի հոգվածին՝ «Մեր թատե-
րական գործի և նրա քննադատության մասին»¹, որ նոր էր
լույս տեսնել «Սովետական արվեստ» հանդեսում և որի մեջ
ևս թունդ «մշակել» էի Աճեմյանին հանիրավի մեղադրող քըն-
նադատներին:

Դահլիճում նստեցինք իրար կողքի, դիտում էինք հյուրա-
խաղային առաջին ներկայացումը. Տուրգենև՝ «Մեկ ամիս
գյուղում»: Առաջին ուղիղիկների մեջ լսվեց՝ «Բոն ժուր»:

— Էս մեկը հասկացանք:

Լիքը դահլիճն ուշի-ուշով լսում է:

— Հայերն լիներ էսպիս չեին լսի:

Ներկայացումը լավ ընդունվեց ընդհանուր բարձր կուտու-
րայի, նույր ճաշակի, կիրթ, սահուն խաղի շնորհիվ, հատկու-
թյուններ, որ այնքան անհրաժեշտ էին Տուրգենևի նրբանյուս
գրվածքին: Մի առանձին հրապույր ուներ զիսավոր հերոսու-
հի նատալիա Պետրովնան՝ Դելֆին Սեյրիդի խորունկ ու գե-
ղեցիկ անձնավորմամբ: Ֆրանսիական, ասել է թէ կատարյալ
արտիստային խաղ: Բայց և նկատելի էր, որ բեմադրիչ Անդրե
Բարսուկը (որ նաև թատերախմբի ղեկավարն էր) պիեսի բո-
վանդակության ռարար վերաբերադրությունից հեռու չի գնա-
ցել: Ասացի Աճեմյանին:

— Ճիշտ է: Ես երբեք այդպես չեմ արել:

Առարկեցի՝ ինչպես չէ, աէլի մեկ զոհը... Զբողեց շա-
րունակեմ:

1 Ա. Հայովերդյան, ժամանակի հետ (հոգվածներ), Երևան, էջ 227:

— Դնա՞նք թարսակի մոտ:

Ֆրանսերնն իմացող լեռն Ներսիսյանին առաջ դցեցինք ու գնացինք: Պարզվեց, որ թարսակը սուսերնն մեզնից լավ գիտի, Օգեստայում զիմնաղիա ավարտած հրեա է: Անեմյանը մի լավ գովեց ներկայացումը: Լեռն Ներսիսյանը նույնպես, ավելացնելով, թե վաղը կերևա բեմադրիչը, բեմադրիչը կատակերպության մեջ է երևում:

1965, Հունիսի 25:

Նույն թատրոնում զիտեցինք Բուժաբշեի «Սեփլան սափերիչը»: Ասելիք շունեցող ավանդական ներկայացում առանց բեմադրական մտքի միջամտության:

— Ի՞նչ ներկայացում է...

Ասացի, որ ինձ թակարդը դցել չի կարող:

— Սա ուժիսոր չի, անտրեպրենյոր է:

1965, Հունիսի 27:

Դիտում էինք Անույի «Անտիգոն»ն: Խաղում են ֆրակով, ժամանակակից զգեստավորմամբ, պարերգային խմբով: Կոնցերտային փայլուն կատարում, արտահայտչական միջոցների ժլատություն, զուսպ պլաստիկա, հնչեղ խոսք, սարսուռ ազգող ողբերգական շունչ: Ռւժեղ տպավորություն են թողնում համեկապես Անտիգոննեն և Կրեոնը: Ասացի՝ «Արա Գեղեցիկն է պետք է այսպես անեիք, մաքուր կոնցերտային կատարում՝ առաջին բեմադրությունից միանգամայն տարրեր:

— Եվ դու սա հավանո՞ւմ ես: Այս, խոսք շունեմ՝ վարպետություն, կուկտուրա, բայց ինչ ուժիսոր է՝ ամեն ինչ ստատիկ:

Փորձեցի համոզել՝ դա բեմադրական սկզբունք է։ Ոչ մի ազդեցություն։ Մեկ էլ թե՝

— Հենինականում «Մակրեթ» շեն ուզում, ազգային գործ են ուզում։ Գուցն «Քառսը»։

Ինչո՞ւ «Քառսը»։ Այնպիսի գործ, որ չի արել, ասենք, «Խաբարական»։ Բռնկվեց մի պահ։

1965, սևպահմբերի 17:

Մոսկվայում, Կրեմլի թատերասրահում դիտեցինք անգլիական ազգային թատրոնի «Օթելո» ներկայացումը, գլխավոր դերում՝ Էռուրենս Օլիվյե։

— Հիանալի՛։ Վաղուց մեծ դերասանի խաղ չէի տեսել։

Իհարեկե՛, հիանալի՛, ամեն ինչ իր տեղը։ Օլիվյենն, որ մայր Օթելոյին նեղը է դարձրել, նպատակ է հետապնդել՝ այս կիսավայրենին հնչ գործ ուներ վենետիկյան ազնվականի դրսեր հետո։ Անհամատեղելին չէր կարող համահղուի, ոտ է ողբերգության նախապատճառը։ Անգլիական վերնախավային մտածողություն։ Սա՝ ելակետը, իսկ խաղը՝ բացարձակ արտիստային, ներքուստ լիբրը, ավելի քան հուզական։ Այդ աստիճանի հուզական խառնվածք կունենա բաղաքակրթությունից հեռու մարդը (սա ևս մանում է մեկնարանության մեջ)։ Հուզական, ավելի ճիշտ՝ դպայտական խառնվածք է նաև Դեղզեմոնան, արևմտաբում դրան կարճ ասում են «սերս ոռոմք» (սա էլ բացատրությունն է, թե ինչու նա կարող էր անվերադարձ հրապուրվել հովադ հիշեցնող սեամորթով, զնալ նրա հետեւից թեկուղեւ ուզմանակատ։ Սա հայկական ներկայացումների բնբշալից, ոսկեմազիկ Դեղզեմոնան չէ, այլ զորեղ կին, տիրական հաստատակամ բայլվածքով, կիսարաց փարթամ կրծքավակ, որ խելքից հանում է Օթելոյին)։

1965, սեպտեմբերի 18:

Գնում ևնք նույն թատրոնի մյուս ներկայացումը դիտելու հետ Կոնգրիվի «Սեր սիր դիմաց» կատակերգությունը:

Կրեմլ մտնելու համար շնորհնում ենք Կարմիր հրապարակով: Աշնանային արևոտ, մեղմաշունչ երեկո է (աշնանը Մոսկվայում ուշ է՝ մթնում): Մի լուսանկարիչ առաջարկում է նկարվել: Ինչո՞ւ չէ: Աճեմյանը շի ուզում: Ստիլեցի նկարվել վասիլի Երանելու ֆոնի վրա ասելով՝ Սարիր Ռիզակը տեսներ, կասեր գավառուկան բան իր անում:

— Կարծես մենք զդիտենք, որ գալառական է:

Դավառական է թե չէ, բայց դա եղավ Աճեմյանի և իմ ամենալավ լուսանկարը, թեև շատ անսովոր՝ գունավոր լուսանկար թենիսի գնդակի շափ գնդի մեջ առնված:

Ենկայացումը թողեց ամենալավ տպավորություն. մի տեսակ գորելինային Անգլիա, 18-րդ դարի «Հին, ուրախ Անգլիանց:

— Հավ ներկայացում է, ոճի մեջ կատարելապես մաքուր, ամեն բան իր տեղը:

Այն կարծիքը կար, թե Աճեմյանն աշքի շի ընկնում իր արվեստի տեսության իմացությամբ:

Ես ուզում եմ փարատել թյուր կարծիքը: Որ Աճեմյանը տեսաբանելու սեր չուներ՝ այնքան ճիշտ է, որ հերքելու հարկ չկա: Բայց երբ տեղը գալիս էր՝ թատրոնի բազմակննիու տեսությանը քաջատեղյակ արվեստագետն իսկույն երևում էր: Այս դեպքում ասածու հաստատելու համար պետք է ապավինեմ ոչ թե իմ հուշային գրառումներին, այլ իր իսկ ձեռքով գրված (և շմերենագրված) գրություններին, որ պահպանվել են իր թղթերում:

Դրանցից մեկը մեծ գրախոսություն է (այսպիս ասած,

ներքին գրախոսություն՝ հրատարակչության համար) թատերագետ Սուրեն Հարությունյանի «Ստանիսլավսկու սիստեմը և հայ թատրոնը» աշխատության վերաբերյալ Զեռագիրը տարեթիվ չունի, բայց քանի որ աշխատությունը գրվել է մեծ արվեստագետի ծննդյան 100-ամյակի առիթով լույս ընծայելու համար՝ կարելի է կուանել՝ դրված է 1962-ին կամ 63-ին։

Մերժողական խոսք ասելու մեջ դժվարացող Աննեմյանն այստեղ մերժող է կատարելապես։ Քարը քարի վրա չի թողնում, և՛ իրավամբ։ Ստանիսլավսկու հայտնի ձևակերպումներից մեկը՝ «Жизнь человека—роль», Ս. Հարությունյանը թարգմանել է՝ «ղերի ոգու մարդկային կյանք», որ անիմաստ է, — գրել է Աննեմյանը, — պետք է լինի «ղերի—մարդկային ոգու կյանքը»։ Եթե աշխատության հեղինակը գրում է՝ «Չղիներ ապրումի թատրոնը կլիներ բեմ՝ առանց բովանդակության, կլիներ ձեզ առանց պարունակության, թատրոնը չէր լինի։ Ապրումը բնմարվեստի ոչ միայն նյութն է, այլև էությունը», ապա, նկատում է գրախոսը, «ապրումը դիտվում է իրեւ նպատակ, ապրում հանուն ապրումի»։ Գրախոսը մի առ մի ջրում է թատերագետի սխալ դատողությունները. գերիննդիրը Ստանիսլավսկու սիստեմի ոչ թե մի բաղկացուցիչ մասն է, այլ «ողջ սիստեմի պսակը», հակագործողությունը ոչ թե ցանկալի մի քանի է («ավելի լավ, որ կա հակագործողություն», — գրում է թատերագետը), այլ այնպիսի անհրաժեշտություն, առանց որի «դրամատիկական կամ բնմական գործողություն լինել չի կարող ընդհանրապես», Ստանիսլավսկին ոչ թե «հիմնավոր պատճեղ է բարձրացրել» վերապրումի և ցուցադրման սկզբունքների միջև, այլ վերջինիս գոյությունն ընդունել է, գրելով՝ «ղերի ցուցադրումը, որ թե լաղրված է իսկական ապրումների պրոցեսով՝ պետք է ըն-

դունել իրրև ստեղծագործություն, իշրև արվեստ», «Ես ավելի ու ավելի եմ համոզվում, որ Եերսպիր զգացմունքներով կարելի է խաղալ միայն հինգ-տասը բապե, մնացած բոլորը՝ միայն տեսինիկայով»:

Դետք չեր լինի այսքան ժանրանալ այս գրախոսության վրա, եթե սա չլիներ Աճեմյանի թատերական դավանանքը ցույց տալու տեսականորեն մանրամասն հիմնավորված թերևս միակ հնարավորությունը:

Դերասանական արվեստի և եսության գլխավոր հանգույցը դերը վերապրելու կամ ցուցադրելու սկզբունքների միջն կողմնորոշվելու մեջ է: Դեռ 18-րդ դարի սկզբից ևն ծայր առնել վեճներն այդ սկզբունքների շուրջը, և դրանք շնոր մարում մինչև օրս: Կան թատրոնի մարդիկ, որ մենքի երդվալ կողմնակիցն են, կան՝ մյուսի, կան և գործիչներ՝ դերասաններ, բեմադրիչներ, որոնց դավանանքն այդ երկուսի համադրումն է: Աճեմյանը պատկանում էր վերջիններին թվին:

Այդպիս էր մտածում Ռուբեն Սիմոնովը՝ Եվգենի Վախիթանգովի մերձավորագույն աշակերտը և Մոսկվայի հայկական դրամատիկական ստուդիայի ղեկավարը, այն ստուդիայի, որի սանն էր եղել նաև Աճեմյանը: Ժամանակակից ուսու թատրոնի խոշոր գործիչներից միայն Սիմոնովն էր, որ այդ համագրությունը ոչ միայն կիրառում էր կյանքում իրրև դերասան և բեմադրիչ, այլև այաշտպանում այդ սկզբունքը տեսականորեն (կարելի է համոզվել՝ կարդալով նրա «Վախիթանգովի հետ» գիրքը):

Կարելի է վստահ ասել՝ Սիմոնովի այդ դավանանքի ակունքը Վախիթանգովն էր՝ իր գործնականով (խաղերով ու բեմադրական արվեստով) և տեսականով (հոդվածներով): Նույն վստահությամբ կարելի է ասել՝ Աճեմյանինը նույն-

պես: Այդ դավանանքը նրա մեջ արմատ էր գցել 1925—26 թվականներից, երբ նա Ռուբեն Սիմոնովի աշակերտն էր և վախթանգովի բնմաղբությունների հանդիսատեսը:

Այնպես որ՝ այս գրախոսության մեջ Աճեմյանն իր դավանանքն էր պաշտպանում ընդզեմ Սուրեն Հարությունյանի ուղղափառ կողմնորոշման: Եվ այն ասույթները, որ Աճեմյանը Ստանիլավսկուց րերում է հօգուտ իր դավանանքի, և միշտ էլ վարվում է, Ստանիլավսկին կյանքի վերջին տարիներին է ասել, իսկ դրանից տարիներ առաջ նա իրոք «հիմնավոր պատճեն» էր կանգնեցնեմ այդ երկու սկզբունքների միջև: Աճեմյանն իր բանավեճի մեջ հենվում է «ուշ Ստանիլավսկու» վրա:

Ուրիշ իրավացի դատողություններ էլ կան Աճեմյանի գրախոսության մեջ, արմատական սխալ է թույլ տալիս աշխատության հեղինակը, գրելով, թե «Ստանիլավսկին հայ թատրոնում էր, երբ զեր չկար ոչ Գեղարվեստական թատրոնը, ոչ առավել ևս սիստեմը», քանի որ զրանով ի շիր է զառնում բեմական արվեստի մեծ բարեփոխիչ զերը, տեսակետ, որ ավելի մեծ իրավունքով կարող էին հայտնել ուստի թատերագետները, բայց «ո՞ր ոռու թատերագետի մտքում կարող է ծագել նման օրիգինալ հղացում...»:

Վերջապես, Աճեմյանը թատերագետին մեղադրում է ժամանակակից հայ թատրոնի և հատկապես իր ստեղծագործական փորձի, իր «Հատակում», «Պատվի համար», «Ժայռ», «Բալենու այգին» բեմադրությունները (Ստանիլավսկու սկզբանին լավագույն կիրառումները) կատարելապես անտեսելու մեջ: Երևի հենց դա է բարկացրել Աճեմյանին և շարժել նրա գրիչն այս գրախոսությունը և զրա մեջ այսպիսի տողեր գրելիս. «Առենք, հեղինակը ոեժիսոր Աճեմյանի մա-

արին խոսնելիս ի վիճակի չէ անաշառության բարձր դիրքերի վրա կանգնելու, «Բնեկ. Հարությունյանն ընտրում է կենտրոնախույս ճանապարհ, որով նպատակի մատուցներին անդամ չի հասնում», «Մեր խորհուրդն է՝ գրվածը համարել անվավեր, և նորից ձեռնարկել այդ շահնեկան թեմայի մշակումը»:

Անհմանը երբեք չէր եղել այսրան անողոք, ու իր խառնվածքից հեռու բան էր, բայց տեղը եկել էր (ավելի ճիշտ՝ բարկությունը) և հազարից մի անդամ եղավ այդպիսին: Դրա շնորհիլ է, որ այսօր ծանոթանում ենք տեսարան Անհմանին:

Արվեստագետի թղթերում մի քանի մատիտագիր թերթիկ է պահպանվել, որոնք վերաբերում են ոնքիսորական արվեստին: «Ռեժիսորան և ժամանակակից կյանքը» վերնագիրը ցույց է տալիս, որ այդ սեազիր էջերը գրվել են իրեն թեզեր այդ հարցին նվիրված բանավեճում ելույթ ունենալու համար:

Մեջ եմ բերում գրի առնված մտքերից մի քանիսը.

«Ռեժիսորը իրեն ստեղծագործական ուրույն զեմք նոր նրեւութ է, բայց արդեն պատմական անհրաժեշտության ուժով նվաճել է իր կարենոր և լիիրավ իրավունքը»:

«Ռեժիսորը պետք է ունենա «մածողի, հաստատ բաղադրական-գաղափարական համոզմունքների վրա կանգնած լինելու անխոտոր կամք, ցանկություն, և իր համոզմունքների կրքու պրոպագանդիստ...»:

«Այսուհետեւ մենք չակետը է հրաժարվենք լավ տրադիցիաներից, սակայն այդ արագիցիաները պետք է ներծծել և տարրալուծել՝ ստեղծելով բալորովին այլ որակ, այլ աստիճան, իսկ երբ այդ տրագիցիան կա և մնում է իրեն անխառն մի կարծրություն, այդ տրագիցիան միշտ իրեն մի ծանրություն կախվում է մեր թերերից, և այլևս սալառնելու մասին խոսք չի կարող լինելու:

«Ռեժիսորը պետք է ասելք ունենա «անդիսատեսին,

ինչպես ամեն մի արվեստակետ. եթե շունի, ապա ինչո՞ւ և ինչպե՞ս է նա ստեղծագործում։ Իսկ մեզ մոտ կան մինչև իսկ նորմաներ՝ յուրաքանչյուր ուժիսոր պարտավոր է այսքան ներկայացում տալ տարվա ընթացքում, գրողի, երաժշտի, նկարչի նկատմամբ այս պահանջը խորի է հեշտմ, իսկ ուժիսորի նկատմամբ շատ օրինական։

Այսպիսով շատ հեշտ է դառնալ արհեստավոր, այսինքն՝ ուժիսոր, որ գիտե շատ էլեմենտար գաղտնիքներ և կարող է ուկազմակերպել» ներկայացում — այս ճանապարհը կործանիլ է ուժիսորի համար։

«Առանց լավ պիհսի շատ զմշար է ստեղծել լավ ներկայացում, ուստի ուժիսորի համար կենսական հարց է լավ պիհսների ստեղծման գործը։ Նա ինքը պետք է լինի նախաձեռնողը այս հարցում, իհարկե, առանց պրետենզիաների, հարակից հեղինակ համարվելու գծում հաշիվների։

Եվս մի ձեռագիր, այս անգամ մաքուր մաքրագիր։ Աճեմյանի ելույթը Սունդուկյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հորելլանական երեկութին (1976, մայիսի 27)։ Այստեղ կա արվեստագետի համոզումը վկայող մի կարևոր միտք։ Նրան ոգբազեցրել ու հիացրել է այն օրգանական կապը, որ նա տեսել է մեծ թատերագրի անձնավորության և ստեղծագործության միջև։

«Ինձ թվում է, — գրել է Աճեմյանը, — որ եթե Սունդուկյանը մայրական կաթի հնատ յուրացրած լիներ բարության և մարդկայնության ավանդները, եթե շունենար հոգու մաքրություն և գեղեցկություն, ապա նրա ստեղծագործությունը չեր կրի այդ սրանչելի հատկությունների կնիքը... Ինչպես մարդն է, այնպես էլ նրա գործերն են ու ստեղծագործությունը... Սունդուկյանի ստեղծագործությունն իր միտումներով ազ-

Նիվ է և գեղեցիկ այնպես, ուսանելի և օրինակելի է այնպես, ինչպես եղել է ինքն իր շովանդակ նկարագրով: ... Անսահման սերը դեպի մարդը, մեկ ուրիշի վիշտն ու հոգսն իր անձնականի պես ապրելու հազվագյուտ առաքինությունը՝ սա է Սունդուկյանի ստեղծագործության հիմքն ու հավատամբը»:

Ամեն մի արվեստագետի մարդկային և ստեղծագործական նկարագրիրը հասկանալու համար կարենոր է իմանալ, թե նա ինչ կարծիքի է եղել իր արվեստակիցների մասին, ինչպես է գնահատել իր ժամանակակիցներին, իր հետ, իր կողքին աշխատող մարդկանց գործը:

Վարդան Աճեմյանն արվեստակիցների մասին շատ է գրել, ավելին շատ, քան մեկ ուրիշը: Մենք գործ ունենք մի արվեստագետի հետ, որ ինչքան էլ բազմազբաղ, առիթն եկած դեպքում չի ծովացել գրելու արվեստակիցների մասին, արժեքավորելու նրանց գործը՝ անկախ այն պարագայից, թե անձնապես ինչ հարաբերությունների մեջ է գտնվել նրանց հետ: Ամեն մի կարծիք բնորոշում է ոչ միայն բնորոշվող անձին, այլև լնորոշողին: Այն կարծիքները, որ Աճեմյանը հայտնել է իր ժամանակի բնմադրիչների ու դերասանների մասին, ի հայտ են բերում իր նկարագրի հատկանիշները նույնպես:

Սուրեն Խաչատրյանը՝ Արամ Խաչատրյանի ավագ եղբայրը, որ բացառիկ դեր է խաղացել մեծ երաժշտի կյանքում՝ նրան Մոսկվա բերելով և մասնագիտական հիմնավոր կրթություն տալով, ուստի թատրոնի գործիչ էր: Նա մեկն էր ուսմշակույթի այն հայ գործիչներից, որ այլրում էր իր ժառանգության օգտակար լինելու, նրա մշակույթը բարձրացնելու մզումներով: Ես շատ եմ հավանում Սուրեն Խաչատրյանի մասին Աճեմյանի գրածը և ուզում եմ, որ ընթերցողս էլ համանի: Ահա մի-երեսու բազվածքը. «Ես արդեն կենքնականի նոր

կազմակերպված պետական թատրոնի ռեժիսորն էի, ըստ
էության նրա գեղարվեստական ղեկավարը։ Իմ այդ պար-
տականությունների պահանջով եկել էի Երևան։ Այդ տարինն-
բին մայրաքաղաքի միակ վայրը, ուր կարելի էր երեկո անց-
կացնել— հանդիպել գրողներին, արվեստի մարդկանց, գրու-
ցել, երաժշտություն լսել— Կոմունարների այդին էր։ Հենց
այնտեղ էլ ինձ ծանոթացրին Մոսկվայից նոր ժամանած Սու-
րեն Խլիչ Խաչատրյանի հետ։ Ս. Խաչատրյանը համարելի և
հմայիչ մարդու տպավորություն թողեց. մեզմ ու մտերմիկ
խոսելու նրա եղանակը, թախծւու խոշոր աշքերը, անշափ կիրիթ,
ուշագիր վերաբերմունքը նոր ծանոթացած մարդուն ներշն-
շում էին ազատ, անկաշկանող վարվեցողության։

«Մեր այս երշանիկ հանգիպման արդյունքն Եղավ այն,
որ նույն տարվա աշնանը (1932 թվին) Սուրեն Խաչատրյանը
Մոսկվայից եկավ Լենինական՝ քեմադրելու կունաշարուկու և
Դեյլի Շնապունինի արշավանքը պինսը, որ ընտրել էր ինքը։

Թատրոնը ստեղծեց լավագույն պայմաններ իր հայրենի
արվեստին ծառայելու ազնիվ ձգումով տարված արվեստա-
գետի համար՝ քաջ դիտակցելով, որ անկախ ապագա ներկա-
յացման հաջողությունից մեզ համար առավել թանկ էր այն
հազվագեղ առիթը, որով թատրոնը բախտ կռւնենա սերտորեն
մերձենալու Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի ստեղ-
ծագործական սկզբունքներին, որոնց երդվալ ջատագովն էր
Ս. Խաչատրյանը»։

Նա Աճեմյանին հրավիրել է իր մոտ՝ հյուրանոց. «... Եթե
ներս մտա իր համարը՝ նա Մոսկվայից հետը բերած փոքրիկ
կլավինսինի վրա նվագում էր եվրոպական կլասիկ մեղեղի-
ներ... Ես խնդրեցի շարունակել նվագը, նա սիրով նվագեց
նոր կտորներ, խոսեց Մոսկվայի երաժշտական կյանքից, նոր

գրված հետաքրքիր գործերի մւսին և առանձին հպարտությամբ հայտնեց եղբոր՝ Արամ Խաչատրյանի հաջողությունների մասին...»:

Հենց այստեղ էլ բնմադրիչն Աճեմյանին համոզել է հանձնառնել պիեսի գլխավոր՝ Նապոլեոնի դերը: Այս առիթով Աճեմյանն արել է մի խոստովանություն, որ երեւէ չէր արել. դա եղավ իմ խաղացած «հշանակալից զերերից մեկը — և վերջինդերը — ափսոս, որ անշափ ծանրաբեռնված լինելով ոնժիսորական աշխատանքով՝ ակամա թողեցի դերասանական իմ գործը, որն սկսված էր լուրջ հաջողություններով»:

Կիրթ ու գեղեցիկ հոգու տեր այս արվեստագետի մասին գրված էջերի¹ մեջ Աճեմյանի գրածը լավագույններից է:

Աճեմյանը շատ տարիներ աշխատել է բնմադրիչ Արմեն Գուլակյանի հետ, և հեշտ ու հարթ շնորհանք նրանց հարարերությունները: Ավագ արվեստակցի մահվանից տարիներ անց Աճեմյանը քանիցս զրել ու խռուել է նրա վաստակի մասին՝ երեմն այնպիսի բնորոշումներով, որ արվեստարանական որակ ունեն: Այսպէս, նա մեծապես գնահատել է «Խաթարալալի» այն բնմադրությունը, որ Գուլակյանը ստեղծել էր 1927-ին, «Ես տեսա ու շատ հավանացի այդ ներկայացումը: Նա հետագայում էլ մի քանի անգամ վերաբեմադրեց «Խաթարալալ»», բայց, իմ տպավորությամբ, լավագույնը այդ առաջինն էր: Հետագայում իր «Խաթարալալի» նոր բնմադրություններում նա տեսավ «առաջավոր ինտելիգենտի ող-

¹ Դրանք հրապարակվել են Բ. Հարությունյանի կազմած «Սույն Խաչատուրյան: Հայոց պատմություն» գրքում (Երևան, 1962): Աճեմյանի գրածը առ անդ է գտել այս գրքում: Ես մեջ-բերումներեւ արել եմ հայերեն ձեռագրից, որ իր թղթերի մեջ է:

քերգություն» և «տպեղ աղջկա դառն ճակատագիր», որը, իմ կարծիքով, սոցիոլոգիզմի շորշովն էր, մինչդեռ «Խաթարաւալան» վառ, ուրախ պատմություն է, Զամբախովներին ժանակելու մի լավ պատեհություն։ Եթե ինձ վիճակվի «Խաթարաւալան» բնմադրել, կդնամ, ահա, այս ճանապարհով¹։

Այս միտքը խորք ունի, եթե փակագծերը բանանք, ի հայտ կդա այն պատմական ճշմարտությունը, որ 1927-ի «Խաթարաւալան» բնմադրված էր 20-ական թվականների թատրոնական դեղագիտության աղատ ոգով, բնմական պայմանականությունների անկաշկանդ կիրառմամբ։ Իսկ հետագա տարիներին երկրի հասարակական և գեղարվեստական կյանքի անլուր կաշկանդումները կաղապարեցին ամեն ինչ, գրականությունն ու արվեստն էլ հետք Դա ծանր անդրադարձ հատկապես այն արվեստագետների ճակատագրի վրա, որոնք ոչ թե դիմադրեցին, այլ եռանդով ընդառաջ գնացին այն պարտադրվող հոսանքին, որ կարճ ասում ենք «անհատի պաշտամունքի» պարտադրանք, լավ է ասել՝ նզումք։ Եթե զրադու դարձան նաև տաղանդավոր մարդիկ, ինչպես Նաիրի Զարյանը գրականության, Արա Սարգսյանը՝ կերպարվեստի մեջ, Արմեն Գուլակյանը՝ թատրոնում... Մարդկանց տաղանդը թոշնեց կեղծ դադախարների բոնի պարտադրանքից, ինչպես տերեւը՝ խորշակից։ Պատահական է, արդյոք, ինչքա՞ն քիչ մնայուն արժեքներ ստեղծվեցին 30-ական, 40-ական թվականների խորհրդային արվեստում։

Անեմյանն այս ամենը չի ասում, և չեր էլ կարող ասել, այլ զգուշորեն ակնարկում է միայն, ինչպես հետեւյալ տողերում. «Աշքի ընկնող կազմակերպիչ էր։ Գուլակյանը զիտեր

գործը զլիսավորել ամենայն պատճեամբ ու մանրախնդրությամբ։ Անշուշտ դրան նպաստում էր ժամանակը, դժբախտարար երբեմն անցանկալի երանգներ տալով նրա ղեկավարման ռճինս։ Այս ամենով հանդերձ, Աճեմյանն արվեստագետի վաստակը գնահատում է բարձր, տալով նրան ստույգ բնորոշումներ։ «Նա թատրոն էր գալիս նախապեսիմանալով, թե ինչ է անելու, իր հետ բերում էր բոլոր բնմավիճակները, շարժումները, անգամ ժնստերը։ Ներկայացումը նա հիմնականում ստեղծում էր տանը, իր գրասեղանի մոտ ... նա ծնվել էր ռեժիսոր ու բեմ էր մտնում ոչ թե սպիտակ ձեռնոցներով, այլ սևագործ քանվորի պես, որ ամեն ինչի հետ գործ ունի, ամեն մանրութի խառնվում է, կարճ ասած բեմի և տերն էր, և ծառան։ ... Գուշակյանի արվեստը ժամանակի ծնունդն էր, արտահայտում էր այդ ժամանակի ռգին՝ ակտիվ ու շիտակ դրսեորումներով։ Եվ նրա՝ տաղանդավոր ռեժիսորի ու թատերական գործշի, գրական-մշակութային լայն հետաքրքրությունների տեսք ձարդու վաստակը կարելի է կշռել միայն այդ բուռն, անհանգիստ ժամանակը վերհիշելով։»

Սրանք ամենաճիշտ խոսքերն են, որ գրվել են Արմեն Գուլակյանի մասին։

Բեմադրիչ և դեռասան, թատերական ինստիտուտի հիմնադիր և երկարամյա տնօրեն Վավիկ Վարդանյանը, թատերական ասպարեզում իմ տեսած ամենակիրթ մարդկանցից մեկը՝ Աճեմյանի աշքում «օրինակելի» մարդ էր ու քաղաքացիության արվեստագետի մահվան առիթով ասած խոսքում Աճեմյանն այսպես է բնութագրել նրան։ «Երկար տարիներ մենք սովոր էինք տեսնել նրան թատրոն կոչվող արվեստի բարձր ու գժվարին կառույցներում, ուր նա իր եզակի ունակությունները սփռում էր այդ արվեստի բոլոր մասերում։»

... Ունենալով արվեստի խոր ու լայն գիտելիքներ, օժաված լինելով ստեղծագործական-կազմակերպչական նախանձելի կարողություններով նա ժավալեց շատ ավելի լայն գործունեություն՝ հանդես բերելով քաղաքացիական բարձր արժանիքներ, մեծ գաղափարներին ժառայիլու ազնիվ գգուում, ժողովրդին օգտակար դառնալու անսահման ցանկություն»:

Ամեմյանին առիթ է ներկայացել գրելու նաև կրտսեր արվեստակցի՝ բնմադրիշ Հրաչյա Ղափլանյանի մասին և գնահատելու նրա գործը: Առիթը Ղափլանյանի մասին պատրաստված ժողովածուն էր, որի մեջ ուրիշ գործիչների խոսքերի շարքում տեղ է գտել նաև Ամեմյանի խոսքը¹: Ասել, թե Ամեմյանի և Ղափլանյանի հարաբերությունները թեթև ու անկնճիռ շին՝ նշանակում է քիչ բան ասել: Կրտսերի մեջ ինչ-ինչ հատկություններ ավագ արվեստագիտին դուք շեն գալիս բնավ, բայց դա չէր խանգարում, որ նա արժեքավորի գնահատության արժանին: Ահա և նա գրել է. «Կարծես երեկ էր, որ կենինականի թատրոնում բնմադրում էի վ. Գուսեի «Փառքը»², ուր փոքրամարմին և թարայ մի պատանի առաջին անգամ ոտք էր դնելու բնմ՝ խաղալով այդ ներկայացման մեջ պիոնների ու աննշան դերը: Պատանին արդարացրեց իմ սպասելիքները, նրան վստահվեցին նոր դերեր: Այսպիսով նա ընդմիշտ կապվեց թատրոնի հետ՝ դառնալու համար այդ արվեստի նշանավոր դիմքերից մեկը:

Այդ պատանին Հրաչյա Ղափլանյանն էր:

1 «Родная Капланян. Сборник», Հայկական թատրական ընկերության հրատարակություն, 1983, էջ 16:

2 Այդ պիոնը բնմադրվել է 1936-ին:

Արտախ ևմ, որ նա իր քեմական մկրտությունը ստացավ իմ ձեռքով և իմ ավագանում...

Անցել է երեսունհինգ տարի. այդ տարիները Ղափլանյանի համար եղան աշխույժ գործունեության ու վերելքի տարիները և ապա՝ «Այս վերընթաց ուղին Ղափլանյանը հաղթահարեց շնորհիվ իր ստեղծագործական ու կազմակերպչական տաղանդի»:

Ավելի հետաքրքիր են Աճեմյանի կարծիքներն իր հետ աշխատած գերասանների մասին, հետաքրքիր այն առումով, որ ցույց են տալիս, թե նա ինչն է սիրել, զնա՞նատել, աբժեքավորել քեմական արվեստում, ուրիշ խոսքով՝ հենց իր՝ Աճեմյանի ստեղծագործական նկարագիրը ճանալելու առումով: Եվ սուազին հատկանիշը, որ այդ կարծիքների շարքն ի ցույց է հանում Աճեմյանի նկարագրի մեջ՝ ժողովրդական հիմքի ըմբռոնումն է իրեն արվեստի բարձրագույն որակի հատկանիշ: Երկրորդը՝ հնիթագիտակցականի, ինտուիցիայի կարևորության Հանուշումն անձնավորման արվեստի մեջ:

Ես, որ զրոյների և արտիստների դիմանկարներ դրելու ուշադին փորձ ունեմ, զրել եմ մեր բոլոր աշխի ընկնող գերասանների դիմանկարները¹, ամենից շատ զժվարացել եմ նրանցից ամեն մեկի յուղահատկությունը, միայն իրեն հատուկ նրագիծը գտնելիս, հաճույքով եմ նկատում, թե ու ինչպիս է արել Աճեմյանը: Թատերագիտական հմտություն, որ հանդես է բերել քեմադրիչը: Այնպես որ, ինչպես խոսում ենք Աճեմյան-դիմանկարչի մասին՝ աշքի առաջ ունենալով նրա կատականկարները, մի որոշ իրավունքով էլ կարող ենք խոսել

¹ Հետաքրքրվող կարող է ժամանակակի. ուշագնական թատրոնի համարությունն, Երևան, 1967:

Աճեմյան-թատերագետի, մինչև իսկ նրա գրական ձիրքի մասին՝ աշըի առաջ ունենալով դերասաններին տված նրա բնութագրություններն ամենաուրախ և ամենատիտուր առիթներով:

Համոզվելու համար քաղվածքներ անհմ ձեռագրերից:

Հասմիկի մասին. «Երբ Հասմիկն էր բեմի վրա, բեմը դադարում էր թատրոն լինելուց, փոխարենը իշխում էր ճշմարիտ կյանքը: Երբ Հասմիկն էր բեմի վրա, ամենասրողված կեղծիքն անգամ դառնում էր բացահայտ: Նա ճշմարտության կողմնացուց էր իր խաղընկերների և սեժիսորների համար: ... Հասմիկի ստեղծագործական այս թոփշըները պայմանագործ էին հուճկու տաղանդով, անխառն ունակիզմի խաղառնով, ևնթաղիտակցական հարուստ աշխարհով և, անշուշտ աղդային արվեստի լավագույն ավանդույթներով»:

Սուրեն Սուրենյանի՝ իր սիրելի արվեստակցի մասին, որի հետ աշխատել էր Հենինականի թատրոնում. «Սուրենյանը ուրիշ էր կյանքում, ուրիշ բեմի վրա. Նրան տեսնելով բեմից դուրս՝ չէր կարելի կռահել, որ նա արտիստ է — խոհուն, համեստ, աննկատելի, կորագլուխ, մեղմաձայն այդ երիտասարդը բեմի վրա ձեռք էր բերում նոր հասակ, նոր կերպարանը ու մարմնաձև — բեմական ձայն ու շարժման թափությանը... Ծիալիստականի և ոռմանտիկականի իսկական սինթեզ էր նրա արվեստը»:

Հենինական քաղաքը հայեցի բնավորությամբ, իր ավանդական, գուցի և կոպտավուն բարքերով, իր թատերասիրուաթյամբ ու թատրոնով, այդ թատրոնի աշըի ընկնող դերասաններով Աճեմյանի մեջ հարուցում էին կաթողին զգացմունքներ: Ամենից ավելի՝ Առն Զոհրաբյանը: Եվ ամենից լավ նրա մասին է գրել. «Այսօրվա պես հիշում եմ 32 թվի սեպտեմբերի 17-ին, առավոտ կանուխ կենինականի թատրոնի ոյունա-

զարդ մուտքին մոտեցավ միջահասակ, ամբակազմ, վարդագույն դեմքով, կապույտ աշբերով մի տղամարդ՝ ճամպրուկը ձեռքին։ Դիմելով ինձ, Հարցրեց. «Աճեմյանը թատրոնումն էս Երբ ասացի՝ Աճեմյանը ես եմ, նա կարծես վիրավորվեց, և իսկույն ավելացրեց. «Ես ոեժիսոր ընկեր Վարդան Աճեմյանին եմ ուզում տեսնելու Ռեժիսոր Վարդան Աճեմյանը ես եմ, — պատասխանեցի. Նրա կապույտ աշքերը խոշորացան, ապա բոլորովին փակվեցին. Հասկացա, որ իմ տեսքից խոր հիասթափություն է ապրում անծանոթ մարդը. Լուսթյունը խախտելով Հարցրեցի՝ ի՞նչ գործով եք ուզում ինձ տեսնել: Նա դանդաղ սկսեց գրանները խուզարկել և վերջապես պարզեց ինձ մի հեռագիր։

— Բաթում... Լևոն Զոհրաբյանին. դուք հրավիրվում եք Լենինականի պետական թատրոն իրեն դերասան, եթե համաձայն եք՝ պայմանների մասին կարող ենք բանակցել։ Աճեմյան։

Ամեն ինչ հասկացաւ

Իմ հեռագրին ի պատասխան անձամբ ինքն է եկել — Լևոն Զոհրաբյանը։

Այսպես է սկսվում այն խոսքը, որ Հեղինակը կարգացել է 1973-ի մարտի 24-ին՝ Լենինականի թատրոնում, դերասանի ծննդյան 80-ամյակին նվիրված երեկույթին, նրա մահվանից հետո։ Այս ծիծաղաշարժ նախարանից հնտո Աճեմյանը պատմել է, թե ինչպես Զոհրաբյանը նախ հիասթափեցրել է թատերախմբին, ապա աստիճանաբար մերվել է նրան ու դարձել թատրոնի դերասանական առաջին անուններից մեկը. «Զոհրաբյանի եղակի աշխատասիրությունն ու հզոր տաղանդը, կրքոտ նվիրվածությունն իր արվեստին և հանրագիտական դր, կրքոտ նվիրվածությունն իր արվեստին և հանրագիտական կուլտուրան արմատավորվեցին արգասավոր հողի վրա».

...Համեստությունը երբեք Արեց մեծ դերասանին, չժտածեց
անգամ տեղափոխվել մայրաքաղաք, որի թատրոնի դռները
իր առջև միշտ բաց էին», «Ես երջանիկ եմ, հպարտ, որ բո-
լորովին երիտասարդ հանդիպեցի Զոհրաբյանին, պատիվ
ունեցա լինել նրա դերուսուցը, նրա բնմական ուսուցիչը:
Բայց ես ավելի շատ եմ սովորել նրանից, քան նա ինձնեց, «Բեմական սուսն իրական ու ճշմարիտ կյանքի վերածնուու-
նըա ուժն իր դերասանական դպրոցի մեջ էր, դպրոց, ուր ազ-
գային թատրոնի լավագույն ավանդները հարստանում էին
ուսական թատրոնի ու գրականության բարձր ոճալիզմով»:
Կատարենապես անսխալ բնորոշումներ:

Ի՞նչն է Աճեմյանին հրապուրել Թլդա Գուլազյանի մեջ-
աչն, որ նա «մեր ազգային թատրոնի լավագույն աշխանդների
զգոն պահապանն է», նրա «վճիռ վարպետությունը», «գու-
նագեղ թատերայնությունը, որուի Գուլազյանի արմեսաը շա-
հեկանորնե տարբերվում է անցյալ ու ներկա մեր նույնիսկ
անվանի դերասան-դերասանուհիներից», այն, որ «նա բնմը
դարձնում է ոչ միայն կյանքի բնորոշ մի պատկեր, այլև տո-
նահանդես»:

Աճեմյանը գնահատության խոսք է ասել դերասան Թաթուլ
Գիլաբյանի մասին՝ նրա մեջ տեսնելով «...հումորի, ոիթմի,
ճկումության, խոսքի արտաքերման, մարմնական տեխնիկա-
յի, հանդիսատեսին վարակելու հատկությունները», այն, որ
նրա «արվեստը ժողովրդական է— նա միշտ գտնում է ժողո-
վրդին համեստ ժողովրդական է— նա միշտ գտնում է ժողո-
վրդին համեստ ժողովրդական է»:

1972-ի ապրիլի 26-ին կայացել է դերասան Ժան Էլոյա-
նի՝ Աճեմյանի ամենամտերիմ մարդկանցից մեկի 60-ամյա-

կին նվիրված պատվո երեկոն։ Աճեմյանն իր խոսքում ամենից բարձր նրա ասմունքն է գնահատել, որ իսկապես արժանի էր հիացմունքի և գնահատության ամենաբարձր շափանիշներով։ «Նա միաժամանակ ասմունքի վարպետ է — վարպետ, բառի ամենասպառիշ հասկոցողությամբ... Ո՞վ չի լսել նրա «Սասունցի Դավիթը» և ո՞վ չի հիացել մեր էպոսի էլույանական մեկնաբանությամբ ու չի վարակվել արտիստի վարակիչ հողականությամբ։ «Սասուն ծռնրի» էպիթական ողջ տոհմը ժամանի հետ շրջել է Հայուսատանի ամենահեռավոր անկյունները, ինչպես նաև Հայուսատանից հեռու՝ սփյուռքում։ ... վերջապես, էլույանի սրանչելի պատումները, ուր իրար են ձուլվում արտիստն ու գրական հեղինակը։ Մեր խորին համոզմամբ՝ ժաման էլույանն իր, ինչպես ասում են, ասմունքի ամպլուայում եղել ու մնում է իրքն անկրկնելի երևույթու։

Ասում են՝ լավ գիրքը, լավ ներկայացումն այն է, որ կուղենաս երկրորդ անգամ էլ կարդալ, անսնել։ Խոստովանանք լինի՝ ևս էլույանի բազում և բազմապիսի ասմունքային ելույթները շատ եմ լսել ու երբեք չեմ ձանձրացել, կամեցել եմ լսել իրեն նորից ու նորից։ Ասածու նրա հորինած հումորեսկ-ներին չէ միայն, որ վերաբերում է դրանք էլույանը քննի սեղաններին էլ ասում էր՝ հարուցելով անդիմադրելի ծիծաղ¹, այլ նաև զուտ ասմունքային գործերին՝ «Սասունցի Դավիթի»։

¹Ի դեպ, Հայկական թատերական ընկերությունը 1986-ին լույս ընծառեց ժամանակի հորինած անհեղոտաների զրբույթը՝ «Մանրապատումներ» վեհրապրու։ Սայրահեղորդն զդուշամիտ գրաքննությունը որքան էլ խուզեցու սակերտ էլույանի տերատը (դա ևս ասում եմ՝ զրբույթի խմբագիրը լինելով), այդ ժամանակատումներն ընթերցելիս էլ բավականություն նն պատճեռում՝ հեղինակի գրական ձիրքի պարզ վեայտությունը։

ովերը Հայաստանի վեպի ոգեշունչ էջերի ոգեշունչ կատարումներին:

Այսօրվա այս հիշում եմ Աճեմյանին՝ կերկերուն ձայնով Ավետ Ավետիսյանին հրաժեշտի վերջին խոսքն ասելիս 1971-ի ապրիլի 2-ին. «Վերջին երկու տասնամյակներին մեր մայր թատրոնը կրեց ժանր, անդառնալի կորուստներ, ինքներս աղքատացանք և շուրջորեն հարստացավ այս պանթեոնը»: Եվ այստեղ ևս ստույգ բնութագրումներ. «Թարձրանալով կյանքի հատակից սեփական ուժերով, աներևակայելի ինքնանվիրումով նա հասավ դերասանական արվեստի բարձունքներին: Ավետ Ավետիսյանին շվիճակվեց սովորել արվեստի դպրոցներում, նրա համալսարանը եղավ ճշմարիտ կյանքը, բնությունից օժտված լինելով հազվագյուտ տաղանդով և արտակարգ ենթադիտակցոթյան զգացումով, նա բեմական սուտը դարձնում էր ճշմարիտ իրականություն:

Նրա արտիստական նկարագիրը հաստատում է այն մոռացվող ճշմարտությունը, որ եթև օժտված չեն բնատուր ձիրուով ոտք մի դիր արվեստի ուղին:

Մեր մեծ արտիստի արվեստն արմատավորված էր ազգային ոգու, ազգային մշակույթի վրա. Նրա ստեղծագործական տարերը Սունդուկյանն էր, մեր դերասաններն էին: ... Թատրոնից դուրս նա կյանք շուներ: ... Բեմ բարձրանալը նրա համար սրբազն արարողություն էր, կարծես իր խնդիրն էր ոչ թե գեղարվեստի հաճույք պատճառն Հանդիսատեսին, այլ իր խաղից էր կախված հանդիսատեսի բախտն ու ճակատագիրը:

Որպան կարողացել եմ նկատել, Աճեմյանն իր սերնդի (մոռավորապես) արվեստակիցներից շատերին էր և՛ հարգում, և՛ գնահատում, բայց քերին էր սիրում ի սրտեւ Այդ

Քչերից էին Լևոն Զոհրաբյանը, Ժան Էլոյանը, նաև Թադևոս Սարյանը: Միմյանց տուն գնալ-գալ կարծեմ թե շունեին, — դա առհասարակ օտար էր Աճեմյանի բնավորությանը, — խոսքը վերաբերում է Հոգեհարազատությանը: Դրա հիմքը Սարյանի կիրթ ու մեղմաբարո խառնվածքն էր, շատ հեռվից՝ 1928-ից եկող ընկերությունն էր, բայց ամենից ավելի՝ նրա տաղանդի բնույթը: Ես սիրում եմ ամեն մի հարմար առիթով մտարերել Դերենիկ Դեմիքրանի սմբամիտ խաղի» տեսությունը՝ զրա մեջ տեսնելով գերասանական արվեստի գնահատության զիսավոր շափանիշը. դա այն է, երբ գերասանը կարծես կատարելապես անտեղյակ է, թե ինչ է ասելու կամ անելու խաղի ամեն մի հաջորդ պահին: Ուրիշ խոսքով դա հենց այն է, ինչ կոչվում է ստեղծաբան՝ իմպրովիդացիոն խաղ՝ ամենից թանկը, փնտրվածը, հազվագյուտը դերասանի արվեստում: Թադևոս Սարյանի տաղանդի այդ յուրահատկությունն էր հրապուրում Աճեմյանին: Չեմ հիշում մեկ ուրիշ դեպք, որ Աճեմյանն այդ աստիճան մտահոգվի մի գերասանի հակատագրով, թեքերը քշտած՝ նրա առաջ ասպարեզ բացելով:

Ահա մի քաղվածք ընկերոց թագման մահախոսականից. «Իր գործունեության վերջին 15 տարիներին Սարյանը հասավ փառակոր հաջողությունների, հաստատելով գերասանական իր անկրկնելի տաղանդի մեծությունն ու հմայքը: Նրա գերասանական առաջին իսկ ելույթը դարձավ մեծ հայտնություն, բացառիկ մի երևոյթ դերասանական աշխարհում:

Ինքնատիպ տաղանդը, անբացատրելի, բայց զարմանալի վարակիչ հումորը, բարձր կուլտուրան, նուրբ ճաշակը, բանաստեղծական խորունկ ներքինն ու արտակարգ երաժշտականությունը՝ նրան իսկույն կանգնեցրին մեր թատրոնի խո-

շոր վարպետների շարքում, և տարածվեց նրա համբավը, և ժողովուրդը շռայլորեն սիրեց իսկապես ժողովրդական արտիստինք:

Այս խոսքի մեջ չկա մազաշափ իսկ շափազանցում:

Մի միակ առիթ էլ եղել է, որ Աճեմյանը մի շատ համառոտ խոսք ասի իր կնոջ՝ դերասանուհի Արուս Ասրյանի մասին (ձեռագիրը թվագրված է՝ 11 մարտի, 1973 թ.): Սա եղակի փաստաթուղթ է զուտ մարդկային առումով՝ Աճեմյանի պարկեցտ նկարագիրը հասկանալու համար. «Արուսը եղավ և իմ կյանքի ընկերը, այդ հասկացողության իդեալական ըմբռնումով»: Նա դարձավ իմ կյանքի և ստեղծագործական կենսագրության անբաժանելի մաւր, Ռատի երախտապարտ եմ նրան, շա՞տ եմ երախտապարտ եղակի դերասանուհուն, եղակի կնոջը:

Մեր այս միությունը, խոստվանում եմ, գործել է իմ օգտին, փոխարենը տուժել է դերասանուհին:

Ահա, առաջին անգամն է, որ փորձում եմ խոսել դերասանուհի Ասրյանի մասին, և դժվար է ինձ համար անկաշկանդ դրվագել նրան ըստ իր արժանիքների: Ու դարձյալ մնում եմ նրա պարտապանը:

Արուս Ասրյանը վաստակել էր երախտագիտական այս վերաբերմունքի իրավունքն իր խոնարհ ու համեստ ընավորությամբ, պարկեցտ վարքագծով: Ես, որ տարիներ եղել եմ Աճեմյանների, ինչպես ասում են, տանու մարդը, շեմ հիշում մի դեպք, որ Ասրյանը շափազանց ակտիվ միջամուխ լինի ամուսնու բազմակնճիռ գործերին: Մեր վեճ ու զրույցի ընթացքում կասեր իր խոսքը, չեր թաքցնի իր երրեմն դրվատական, ավելի համախ՝ քննադատական վերաբերմունքը և կքաշվեր մի կողմէ: Տաղանդավոր դերասանուհի՝ չեր խոսի իր

ստեղծագործական իրավումքներից: Ինչ վերաբերում է Աճեմյանի այն խոստովանությանը, թե իրենց միությունից շահել է ինքը, իսկ կինը՝ տուժել, ապա դա այնքան էլ այդպես չէ. շի կարելի ասել, թե բնմադրիչ Աճեմյանը բնավ չեր մտահոգվում դերասանունի կնոջ ստեղծագործական բախտով: Աճեմյանն ինձ հանձնարարեց «Մաղամ Սան-Ժեն» պիեսը թարգմանել Արուս Ասրյանի համար (ուրիշ բան, որ Ասրյանը խելացի եղավ և շուտքեց խաղալ գլխավոր հերոսուհու շահեկան դերը, որ բաժին ընկավ Մետաքսյա Սիմոնյանին): Հանձնարարեց թարգմանել «Հիշիր վաղվա օրդ» պիեսը՝ Ասրյանի համար (այդ պիեսի բնմադրության մեջ հիանալի զույգ կազմեցին Արուս Ասրյանը և Գեղամ Հարությունյանը): Թվում է ինձ, որ «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգության ընտրության մեջ ևս դեր է խաղացել այն պարագան, որ Ասրյանը հանդես գաղալակի աշխի ընկնող դերում: Զիմ նկատել, որ թատրոնի խաղացանկի մեջ Ասրյանի ամպլուային սաղական մի դեր Աճեմյանը հանձնարարեց մեկ ուրիշին:

Այնպես որ, Աճեմյանի խոստովանությունը չուներ փառական ամուր հիմք: Բայց այս դեպքում էականը դա չէ, այլ խոստովանողի ասպեկտական գեղեցիկ նկարագիրը:

Այսքանից հետո հետաքրքիր է իմանալ, թե Աճեմյանն ինչ էր մտածում իր արվեստի և ստեղծագործության մասին: Դրա համար ավլալներ քիչ կան: Արվեստագետն այնքան քիչ է խոսել ու գրել իր մասին (դա դուրս էր իր նախասիրությունների շրջանակից), որ հետաքրքրություն է ներկայացնում նույնիսկ մատիտագիր այն էջը, ուր նա նշումներ է արել իրեն նվիրված կինոնկարի մասին:

«Վարդան Աճեմյան» մեկ ժամանոց վավերագրական կինոնկարի (1970) վերաբերյալ Աճեմյանն արել է մի շարք դի-

առղություններու Այսպես. ինչո՞ւ կինոնկարը սկսել «Աշխարհն, այս՝ շուրջ է եկել» հերկայացմամբ և մեծ տեղ տալ դրան, ինչո՞ւ սկզբում տեղ տուր իր ծաղրանկարներին՝ «Իսնկարի՞շ եմ», Ռուբեն Սիմոնովի հետ Մոսկվայում արված նկարահանման վերաբերյալ՝ «Ինչո՞ւ նրան դարձնել իմ միակ ու հիմնական ուսուցիչը», շատ տեղ է տրված «Պատմի համարի» փորձերին՝ կրծառել, Հաղարծինում նկարված տեսարանը երկար է՝ սեղմել, «Փինալը տիսուր է — կարծես մեռել եմ», նկարի երկրորդ կեսը պետք է ավելի աշխույժ գնա և տողորված լավատեսությամբ:

Սրանք դիտողություններ են՝ ավել կամ պակաս շափով ճիշտու Դրանց հաջորդում են իր ցանկությունները՝ ինչ կուզենար, որ լիներ կինոնկարում։ Դրանք են արտագրում եմ նույնությամբ։

«Առաջին և վերջին ֆիլմն է իմ մասին — ուրիշմեն — կըքառատվող կաղրերը լրացնեն։

Ինչո՞ւ չկան։

1. Արելյան, Արուս, Հասմիկ, Վաղարշյան, Գուլազյան, Զանան, Խաչանյան, Դանիելյան, Թավրիզյան, Շարա, Տաթեկ, Գոհար, Խսեցիկ, Սարյան, Դեմիքրեյան, Շիրվանդադե, Չարենց, ուրիշներու Կ. Ստանիսլավսկի, Վ. Մելիքջոլդ, Վահանգով և ուրիշներ։

2. Ինչո՞ւ չկան — հանդիսատես, ժողովուրդ, տարբեր հասակներ...

3. Չկա դեկադան, Մոսկվան ընդհանրապես։

4. Չկա օպերան, մուզկոմեդիան, սիյուռքը։

5. «Ժայռ», «Հատակում», «Բալենու այդին», «Դեպի ապահնա», «Երկիր հայրենի», «Նամուս», «Դավիթ-Բեկ», «Կրե-

շինսկի», «Դատական գործ», «Երիտասարդ գվարդիա», «Էլի՛
մեկ զոհ», «Քառու» և այլն, «Ֆրոնտ» և «Աղատաշունչ Հողմը»:

Ե. Իմ մանկավարժական գործունեությունը՝ ինստիտուտը,
իմ պատրաստած դերասանները — 100, իմ պատրաստած ու-
ժիսորները — 60»:

Այս նշումները մեզ հետաքրքրում են ոչ թե իրականաց-
ման հնարավորությամբ (այս ամենը ցույց տալու համար
հարկավոր կլինիկ ևս երկու այդպիսի կինոնկար, և հետո՝
այդ դեմքերը, ներկայացումները, թեմաները ցույց տալու
համար պետք էր համապատասխան «կինոնյութ»), որ գոյու-
թյուն շունի, դժբախտաբար. հայկական վավերագրական ժա-
պավենը նման նյութերով աղքատիկ է շափազանց), այլ այն
պարագայով, թե արվեստագետը որքան լայն կապերի մեջ է
տևել իրեն, ի՞նչն է իր գործունեության մեջ համարել հա-
տուկ գնահատության արժանի:

Ուրիշ խոսքով՝ կարևոր այստեղ արվեստագետի ինքնա-
ճանաշողությունն է: Եվ դա, իր հերթին, նպաստում է արվես-
տագետի ճանաշմանը մեր կողմից, իսկ դա դյուրին բան չէ,
երբ գործ ունենք վարդան Աննմյանի նման բարդ և հակասա-
կան բնավորության հետ:

Հուսով եմ՝ կնպաստեն նաև իմ այս գրառումները, որ եր-
բեմն-երբեմն արել եմ ժամանակին:

Գրառումներ, որ ներկայացնում են
Աննմյանի բնավորությունը

1957, դեկտեմբերի 10:

Իր տանը: Վաղը պետք է Մոսկվա մեկնի ևս մի խորհր-
դակցության:

Դժգո՞հ է իր բազմադրաղ վիճակից:

— Հենինականում կարելի էր լավ աշխատել, ո՞չ ուսուո,
ո՞չ կինոնստուդիա, ո՞չ տեղեվիզորի ջուր չի, որ արտասահ-
մանում ռեժիսորները խումբն առած մեկնում են հեռու տեղ,
ներկայացումը պատրաստում՝ բերում: Թե չէ Զանիբեկյանի
փորձի կետին՝ դնամ հեռախոսում ուսուցիչի հետ: Էսպիս աշ-
խատել կլինի՞:

Ասում է՝ Զանիբեկյանին նմանվելով: Հեղնանըը շեմ ըն-
դունում: Դա Զանիբեկյանի մեղքը չի, այլ կարիքը: Ահազին
ընտանիք է պահում: Զերն ուրիշ՝ երեք հոգի եր, երեք էլ աշ-
խատում եր: Խոկ Զեր պատճառով թատրոնի գործերը թի՞շ են
խանդարում: Կարո՞ղ է հերքել:

— Դե, ես էլ շարունակ զբաղված եմ ուրիշների արածը
սարքելով, էստեղ-էնտեղ ժողովների, խօկական գործի, կար-
դալու ժամանակ էլ չի մնում: Հանդիսատ, մտածված աշխա-
տանքի հայիվ մի-երկու դեպք է եղել:

Ինչ որ ճիշտ է, ճիշտ է: Ամենից վատը՝ այնքան ենք
վարժվել, որ անքնական վիճակն ընկալում ենք իրեն բնա-
կանոն վիճակ:

1961, Հուլիսի 22—27:

Մի խմբով (Աննելյանը, Արտաշես Հովսեփյանը, Լևոն Ներ-
սիսյանը, Լևոն Խալաթյանը, Արտաշես Բաբայանը և ես) մեկ-
նեցինք Լևոնային Ղարաբաղ՝ Ստեփանակերտ:

Մտքում տպագրուել է, թե ինչպիսի հետաքրքրությամբ,
վառվուն աշքերով Աճեմյանն ինքնաթիւից զննում էր հա-
րավային Հայաստանը: Փոքր սավառնակի մեջ երեխայի պես
մի պատռւանից մյուսն էր նետվում ավելի լավ դիտելու
նրան ցույց էին տալիս, և ցածր թոշող ինքնաթիւից լավ երե-

վում էին Եղեգնաձորի, Սիսիանի, Դորիսի շրջանների, ապա և Ղարաբաղի գյուղերը... Առաջին անգամ էր տեսնում:

Ստեփանակերտի թատրոնում դիտեցինք ներկայացումների մի շարք: Քննարկեցինք: Մեր բավական խիստ ելույթներից հետո Աճեմյանը մի լավ գովեց ներկայացումները և բնմադրիչ իւզան Հովհաննիսյանին: Մեր կշտամբանցին ի պատասխան՝

— Բա ինչպե՞ս, դուք պայմանները հաշվի չեք առնում, տարեկան 400 ներկայացում են տուիս, Հե՞շտ է:

Հուլիսի 26-ին կայացավ Հանդիպման երեկո Աճեմյանի հետ: Անեղում ասաց շնորհակալության ջերմագին խոսք՝ «Մի-րեի՛ դարարաղցիներ....», պատմեց իր տպավորությունները, խոստացավ օգտակար լինել Ստեփանակերտի թատրոնին:

Եղանք սարալանցին փոված Շուշիի ճեփ-ճերմակ ավերակ-ներում: Մտարերեցի վաղարշանի հիշողությունները Շուշիի քաղաքային կենցաղի մասին, որ իր հուշապատճեմի ամենալավ էջերն են, Ռաֆայել Խորայելլանի քատողությունները Շու-շիի ինքնատիպ ճարտարապետության մասին: Առանց տըրտմության շքը կարեիր նայել, թե ինչպիս բուլղողերները հորեղալով հարթում, գետնին էին Հավասարեցնում ավերակները...

Տըրտմությունը վարատեց մի երեխա՝

— Դուք հա՞յ եք, թե երեխանցի:

1963, մարտի 14:

Այսօր է վերադարձել մոսկովյան հերթական խորհրդակեցությունից (աշնանից ի վեր սա կարծեմ հինգերորդն է, իսկապես որ «շրի ճամփա...»): Այս անգամ ևս՝ Հանդիպում նիկիտա Սերգեևիշ երուշովի հետ: Մասնակից են եղել նշա-

նավոր մարդիկ՝ Շոլոխով, էրենբուրգ, Ռոմմ և ուրիշներ: Ի՞նչ է մտածում:

— Դիտե՞ս ինչ, չենք կարողանում դրսի հետ ոտք մեկնել, այդ պատճառով էլ՝ ձեզ պետք չի, ձեզ համար չի... Ոնց որ տելեվիզորի մոտից թշես երեխաներին՝ սա ձեզ համար չի, գնացե՞ք քնելու...

Պատմում է, թե ինչպես իրեն շփոթում են Ռուբեն Սիմոնովի հետ (իրոք, տարիք առնելով, նրանք շատ են նմանվել միմյանց):

Հանդիպել է Դրիգոր Բոյաջիկին, պատմել իր մտահոգությունները, նա էլ թե՝ главное здоровье, дорогой... (նրեւ, ճիշտ է ասել՝ իր առողջական վիճակից ելնելով):

Վերստին տեսնվել է Բորիս Ռավենսկիին հետ Պոչկինի թատրոնում դիտել է նրա «Ռոմանյոլա» բեմադրությունը և սաստիկ բարկացել արվեստակցի վրա, թե սա ինչ շմտածված ու պերտուար է՝ «Свинные хвостики», «День рождения Терезы», «Романела»...

Ինչքա՞ն դուրին է ուրիշի թերին նկատելն ու քննադատելը...

Պայմանավորվել են, թե ինչ պիեսներ են բեմադրելու միմյանց թատրոններում՝ փոխադարձաբար: Ինչպես և սպասում էին դրանցից ոչ մեկը գլուխ շեկավ:

1963, մարտ:

Պրոսպեր Մերիմեի պիեսներն է փորձում: Դիտում եմ մի առանձին հետաքրքրությամբ, որովհետեւ Աճեմյանն այստեղ հետապնդում է դորժող անձանց հեղնական վերաբերմունքով անձնավորելու խնդիր, վախթանգովի ու կրքայադուստր Տու-

բանդուտի» նման։ Պիեսները հուշում էին այդօրինակ խաղառն։

Դրանից մի ամիս առաջ ինձ հանձնարարել էր շտապ թարգմանել Մերիմեի փոքր պիեսներից երեքը՝ «Սուրբ ընծաների կառեթը», «Պատահականություն», «Աֆրիկական սեր», գործ, որ ևս արեցի բավականությամբ։ Աճեմյանի ռեժիսորական կուրսի շրջանավարտներից երեքը (Հրաչիկ Աշուղյան, Գևորգ Սարգսյան, Միհրան Զանիկյան) պետք է բեմադրեին։ Նրանք արել էին իրենց գործը, և հիմա կուրսի ղեկավարը «կարգի էր բերում» արվածը։

Սովորաբար, ուրիշների բեմադրության վրա Աճեմյանն աշխատում էր հաճույքով, թեթևորեն, իրեն ոչնչով լկացկանդելով։ Այստեղ էլ՝ նույնը։ Պետք էր տեսնել, թե նա ինչպես էր ցուցադրում այդօրինակ խաղը։ Դերասանները հրապուրվեցին անսովոր առաջադրանքով և հասան ցանկալի արդյունքի։ Հատկապես Վարդուչի Վարդերեսյանը (դոնյա Մարիա «Պատահականության» մեջ)։ Ի վերջո, դուրս եկավ մի ինքնատիպ ներկայացում, որի գրավիլ կողմը հենց այդ հետնախաղն էր։ Բայց ներկայացումը բնագ ընդունելություն չգտավ։ Պատճառը հարցրի իրենից։ Պատասխանեց բարկությամբ՝ որովհետև անպետք հանդիսատես է։

Բարկության պահին այդպես էլ կարող էր ասել։

1963, ապրիլի 13։

Մեկնում ենք Ստեփանակերտ թատրոնի ավտոմեքենայով։ Նպատակը՝ Աճեմյանը պետք է աշխատի կուրսի շրջանավարտ ռեժիսոր Նելլի Բաբայանի «Վենետիկյան երկվորյակներ» դիպլոմային բեմադրության վրա, իսկ 18-ին Ստեփանակերտից

պետք է մեկնեինք թթիլիսի՝ գաղափարական աշխատողների
անդրկովկասյան խորհրդակցության:

Ճանապարհը երկար է, ավելի քան չորս շաբաթ կիշտմետր
Կիրովաբադ որ հասանք, պատահեց անդուր մի դեպք,
որի ժամանակ երևաց Աճեմյանի քաշվող բնավորությունը:
Քաղաքի կենտրոնում նա կանգնեցրեց մերենան, մտավ խա-
նութ ատամի խոզանակ գնելու: Ես էլ իր հետեմից Երբ դուրս
եկանք՝ տեսանք մեր վարորդին միլիցիոների հետ կովկաս:
Միջամտեցի՝ ի՞նչ է պատահել: Դու մի ասի այդտեղ մերենա
կանգնեցնել չեր կարելի: Միլիցիոները դիտողություն է արել,
վարորդի ասելով՝ ավելի կոպտորեն, քան կարելի էր թույլ
տալ օտար տեղից եկողի նկատմամբ: Մեր վարորդը պատաս-
խանել է, միլիցիոների ասելով ավելի կոպտորեն, քան կարելի
էր օրենքի ներկայացուցի նկատմամբ: Մարդիկ են համար-
վել, կոհիվը տաքանում է: Մեր վարորդը, մի շատ համարձակ
տղա, չի ուզում զիշել, վրա է քշում: Օրենքի ներկայացուցիչը,
իր լավագույն զգացմունքները վիրավորված համարելով, այն
էլ համարդարացիների ներկայությամբ, միակ ելքը տես-
նում է տղային կալանելու մեջ: Ես հաշտեցնելու ապարդյուն
ջանքեր եմ անում: Աճեմյանը՝ հե՛շ, նայում է հույժ կրավո-
րական տեսքով, կարծես կատարվող դեպքերի հետ հուավոր
առնչություն իսկ չունի: Ա՛յ քեզ բնավորություն:

Մեր վարորդին տանում են մոտակա քաղմասը: Ես հետե-
վում եմ նրանց: Միլիցիոները զեկուցում է քաղմասի պետին:
Ես աղբեջաներեն շեմ հասկանում, քայլ տեսնում եմ, որ
գործը բարդանում է: Վերադարձա Աճեմյանի մոտ՝ գնա՞նք,
ցույց կտաք դեպուտատաւության նշանը, կասեթ կառավարու-
թյան անդամ եք, հյուր մարդիկ ենք, քաղաքի երթևեկությանն
անծանոթ և այլն: Զուտվ տարա: Ներս մտանք: Ես Աճեմյա-

նին մղում եմ առաջ: Քաղմասի պետք զարմանքով նայեց կարճահասակ, բայց պատկառելի տեսքով մարդուն՝ սա ո՞վէ: Մա՛ ոչ մի ձայն: Ես խոսում եմ իր փոխարեն, դեպուտատության նշանը մատնացուց անելով: Դա տպավորություն է գործում: Ի վերջո Աճեմյանը ևս մի քանի բառ ասաց: Քաղմասի պետք, տարիք առած մի լուրջ մարդ, իսկույն կողմնորոշվեց, վեճն անուշի կապեց, թե զոնադ մարդիկ են, անհարմար է... Մի խոսքով, քաղմասից դուրս եկանք հաղթանակած հաշուությամբ:

Չարունակում ենք մեր երկար ճանապարհը: Վարսրդը պատմում է ինչն ինչպես է եղել, Աճեմյանը քահ-քահ ծիծաղում է, իսկ ես մտածում եմ այն մասին, որ առանց այդ դեպքն էլ զիտեմ՝ ինչքա՞ն անօգնական է Աճեմյանն իր ոլորտից դուրս, աջակցության կարուտ: Մինչդեռ իր ոլորտում, իր գործի մեջ՝ կրակի կտոր...

Դա վերստին երեաց ու ենեալ երկվորյակներին մի քանի փորձի ընթացքում՝ մեծագույն հաճույք պատճառելով զերակատարներին և այն մտրդկանց, որ զիտում էին փորձերը:

Ստեփանակերտում մի կարգին ճաշարան շկար, ամեն օր ճաշում էինք զերասաններից մեկի տանը: Ի՞նչն էր զարմանք և բավականություն պատճառում սակավապես Աճեմյանին: Բանջարեղեն ուտեստների առատությունը և այնպիսի բաղմազանությունը, որ անուններն անգամ դժվար էր հիշել: Ապրիլի կեսերն էր: Ինչքա՞ն բարիքներ է պարզում դարնանային Արցախի բնությունն իր զավակներին:

Երբ վերադառնում էինք հյուրանոց, շգիտեմ ինչու, շարունակ Պարոնյան էր արտասանում: Նուրբ, սահնուն, մաքուր խոսքի ինչպիսի՝ թեթև ու խորունկ իմաստավորում: Ինչո՞ւ բեմից այդպես չի հնչում:

— Ներկայացման մեջ անհնար է նորությունները տեղ հասցնել, կորուստներն անխուսափելի են:

Թե ինչո՞ւ, այդպես էլ շիմացա:

1963, նոյեմբերի 22:

Աճեմյանին նվիրված երեկույթ բժշկական ինստիտուտում (անատոմիկումի բոլորակ դահլիճում, որտեղ, ի դեպ, 1942-ին մի քանի ամիս դասի եմ նստել իրքն ուսանող): Զեկուցողը ես էի: Երեկույթն անցավ չերմ տրամադրությամբ: Վերջում խոսք առավ Աճեմյանը՝

— Զեկուցողը շատ հատկանիշներ թվեց, բայց լասաց, որ Աճեմյանը խոսել զգիտի...

Ասաց այդպես, բայց խոսեց հիանալի:

Եվ առհասարակ Աճեմյանը լավ հռետոր էր, եթե դրա արտաքին հատկանիշները նկատի շառնենք:

1964, մայիսի 31:

Մոսկվայում, Երմոլովայի անվան թատրոնում փորձում է «Պադտասարը»: Վերադառնում եմ «Մոսկվա» հյուրանոց, տեսնեմ Մարքսի արձանի մոտ նստարանին գրեթե ծալապատիկ նստած է՝ համբիլը ձեռքին: Ի՞նչ եք անում:

— Նայում եմ սիրուն կանանց ու դարմանում, թե սրանք ո՞նց են լինում... Հիշում եմ 20-ական թվականների Մոսկվան՝ ի՞նչ մարդիկ էին, ինչքա՞ն զվարիթ, հիմա ժամացող մարդ չեմ տեսնում: Ե՞րբ պիտի տուն գնանք, էստեղ մի ժամ էլ չի կարելի մնալ, եթե գործ չունենաս:

1966, ապրիլի 7:

Թատրոնի գեղարվեստական խորհրդի նիստում քննարկ-

վում է Զորայր Խալափյանի «Հրաշք երեխան» պիեսը խաղացանկ մուծելու խնդիրը։ Հայտնվում են թեր և դեմ կարծիքներ, բայց ամենքը միաձայն հենց այն են ասում, թե պիեսների մտածված ընտրությունը չի արվում, պատահականությունները շատ են, թատրոնը լավ չի աշխատում և այլն, և այլն։

Եվ մեկ էլ, խորհրդի նախագահը, նույն ինքը գլխավոր բեմադրիչ Վարդան Աճեմյանը վեր է կենում և թունդ մեղադրանք կարդում մյուսներին՝

— Այս՝, էսպես չի լինի, խումբը պարապ է, պետք է գործի դնել, սխալ ընտրություններ են արվում, պիեսներում գործող անձինք քիչ են, քանի՛ մարդ կարելի է զբաղեցնել՝ շատ քիչ, այսպես չի կարելի...

Եվ այն, և այն, կարծես ինքը չի գործի տերը և առաջին պատասխանատուն։

ԱՇ քեզ բնավորություն։

1966, գեկտեմբերի 31:

Օլգա Գուլազյանի հորելլանական երեկոյից հետո։ Անգույն, անհամ, գավառական երեկույթ։ Բարկությանս շափ չկա՝ ամոր չի՝, էսպես հորելլան կանե՞ն։ Ախր սա ձեր բոլորի հորելլանն է, ասպարեզի պատիվն է, ձեր արժանապատվությունը...

— Իհարկե՛, բայց ինչ անենք, մենք հո չենք անում, մինիստրությունն է անում, իրենք են որոշում՝ զեկուցում, ելույթներ...

Կատարելապես խախուս պատճառաբանություններ։ Հայկական սովորական անհոգ ու անհոգի վերաբերմունք։ Այդպես էլ ասացի։ Առաջին դեպքը չէր ու վերջինն էլ չէր լինելու։

Պատասխանում է շատ հանգիստ, կարծես եղածն իրեն չի վերաբերում:

1967, փետրվարի 5:

Թատրոնում կայացած «խռովնիքը ինական» ժողովից հետո: Ինչ միայն շեն ասել թատրոնի վիճակի և նրա դեկավարության, ամենից շատ՝ Անեմյանի հասցեին:

Ճիշտ են վարպետ՝ վիճակը խայտառակ է, մարդիկ կատարելապես պարապ են:

— Որպես թե իրենց մասին շեն խոսում, բայց ամեն մեկն իր անձնական շահի հետեւից է ընկած:

Թույլ արդարացում է և դրությունը չի փոխում: Շփոթված է, գունատ:

— Դիմում կտամ, կզրեմ՝ նկատի ունենալով կողեկտիվի այս հոգեբանությունը խնդրում եմ ինձ աղատեք Սունդուկյանի թատրոնում աշխատելուց:

Գրե՞ց: Ի՞նարկե, ոչ ո՞ւր էր այդքան վճռաւկանություն:

Ուրեմն ի՞նչ՝ անվճռական լինելը նրա բնավորության գի՞ծն է:

Այո, ամենաբնորոշ գծերից մեկը:

1967, ապրիլի 11:

Կյանքիս ուրախ օրերից մեկը. «Թումանյանի աշխարհ» մենապրոթյունը գրականության ինստիտուտում պաշտպանել եմ իրեն դոկտորական դիսերտացիա: Եղավ մի անվեճ, անսավեր, ուրախ պաշտպանություն, ավելի ճիշտ՝ թումանյանական հանդես՝ ինձ համար սիրելի ընդդիմախոսներ Խորեն Սարգսյանի, Սողոմոն Սողոմոնյանի, Սուրեն Աղարարյանի շնորհիվ: Այն ժամանակ՝ «հետպաշտպանական բանկետներն»

արդելված չէին: Մորս դրդումով և իր տանը (Ալավերդյան փողոց 79) մի մեծ, մարդաշատ քեֆ արինք: Մեծապես հարգելի շատ մարդիկ կային, նաև Աշխեն Թումանյանը՝ բանաստեղծի ավագ դուռարը: Թամադան Սոզոմոնյանն էր՝ անման թամադա, համարձակ սրամտությունների շատրվան:

Այս ամենը պատմում եմ ոչ թի իմ ամենաուրախ օրերից մեկը մտարենելու, թեև դա էլ մի աններելի մեղք չէ, այլ ներկայացնելու այն պայմանները, երբ կատարվեց հետեւյալը. քեֆի թունդ պահին տեղից վեր կացավ Աճեմյանը և կանգնեց բաժակաճառ ասողի դիրքով: Բոլորը զարմացած դարձան նրա կողմը՝ Աճեմյանը և բաժակաճառու: Նա բաժակ բարձրացրեց Պարույր Սևակի և նելի Մենազարիշվիլու կենացը: Ինչ շասաց՝ բնականաբար շեմ հիշում, բայց լավ հիշում եմ իր ողեշունչ հուզմունքը, խոսքի սրտալի հեշերանդը, հիացումից փայլող աշքերը: Սակավախոս արվեստագետն այս անգամ շուալախոս եղավ:

Աճեմյանի հետ քեֆի սեղաններ շատ եմ նստել, անհաջիկ անդամներ, բայց առաջին և վերջին անգամն էր, որ լսեցի նրա բաժակաճառը:

Դա մի բան նշանակում էր երեխ: Իր հարգանքը Պարույրի հանդեպ:

1967, Հոկտեմբերի 25:

Հրաշյա Ղափլանյանի հետ լեզու շի գտնում: Ախր ինչո՞ւ, պատճառն ի՞նչ է, տղան մոտ-մոտ է անում, դուք հեռու եք քաշվում:

— Եղանս շի:

Փորձում եմ հիմնավորել ասածս:

— Ես գիտեմ ինչ եմ ասում. ում ասես տանում կտոր-

ներ է ցույց տալիս¹, ոեկլամ անում, ինձ՝ չէ՛... Ամռանը ներկայացումներ ցուցադրեց, ինձ շհրավիրեց: Իր թատրոնի ծրագրի մեջ տողելու համար բան գրելու միջնորդ է ուղարկում Առն Թուխիկյանին, ինչո՞ւ ինքը չի դալիս, ասում...

— Վախենում է մերժեք:

— Ինչո՞ւ պիտի մերժեմ, ինչպե՞ս կարող եմ մերժել: Հիմի էլ ականչն է ընկել երիտասարդական թատրոնի² պատմությունը, մարդիկ է ուղարկում՝ ի՞նչ կարիք կա, թող գա ինձ մոտ ինչ ուղում է բեմադրի...

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք:

— Չեմ հավատում, ճիշտ մարդ չի:

Ինչ էլ լինի, շպիտի պատմություն դարձնել, դրանից ի՞նչ օգուտ, նա էլ թող իր գործն անի: Բարկացավ՝

— Անում է անի՛, վերջապես՝ ինձնից ի՞նչ ևս ուղում:

Ուզում եմ արվեստագետների համերաշխություն հանուն ազգային մշակույթի, ուրիշ ի՞նչ պիտի ուղեմ:

1967, նոյեմբերի 27:

Հր. Դափլանյանի թատրոն-ստուդիայի առաջին՝ «Լավատեսական ողբերգություն» ներկայացումը Սոմդուկյանի անվան թատրոնում տեսնելուց հետո.

— Եօզօրանե, էսքա՛ն միջոցներ ծախսել, հազար մարդ հրավիրել և սա՞ ցույց տալ: Էստեղից-էնտեղից վերցված դերասաններ և խնդրեմ՝ ստուդիա: Դուք էլ՝ հե՛...

1 Խոսքը վերաբերում է Երևանի դրամատիկական թատրոնի փորձերին:

2 Անելյանը մտագիր էր գրադպել «Արշակուս» երիտասարդական թատրոնի գործերով, որ իրոք մտադրություն էլ մնաց:

իրոք, ներկայացումը հավանելու բան չէր. շափազանց մեծ հավակնություն, բեմադրական շափազանց շոայլ միջոցներ և ներքուստ փուլ ներկայացում: Բայց, ասում եմ, առաջինն անհաջող է, մյուսը կլինի հաջող, կարևորը երկրորդ դրամատիկական թատրոն հիմնելու իրողությունն է: Կարելի՞ է շգնահատել:

— Մեկ է, բան դուրս չի՞ գա:

Սխալվում էր շարաշար: Երկրորդ դրամատիկականը ստեղծվեց և զարգացավ իրոք իր դեմքն ու դիմագիծն ունեցող թատերական միավոր:

1968, փետրվարի 8:

Գեորգի Տովստոնոգովը գտնվում է Երևանում: Եկել է տեսնելու ինչպես են ընթանում «Ապուշը» ներկայացման վերջին փորձերը (բեմադրիչը Երվանդ Ղազանչյանն է, որ իր մոտ ստամուր է եղել լենինգրադում՝ Դրամատիկական մեծ թատրոնում): Տովստոնոգովը խոսեց վերջին փորձից ստացած իր տպավորության մասին (հաջորդ օրերին մի քանի փորձ էլ ինքն արեց): Խոսեց հետաքրքիր և խելացի: Աճեմյանը հավանում է նաև անձը.

— Ֆասոններ չի բանեցնում:

1968, փետրվարի 12:

Մի-երկու օր Տովստոնոգովի հետ շրջել է Երևանի մոտակայքում: Գո՞հ մնաց:

— Ինչո՞ւ պիտի գոհ լննար: Այդը լիճ գնացինք: Կաթողիկոսի մուտ էլ տարանք, նա էլ, հինգ վանականներով, պահեց ճաշի:

1968, փետրվարի 22:

Ներկա եղաւ Մխիթար Դավթյան—Վարդան Աճեմյան դիա-
լոգին, որ ավելի կովկի էր նման:

ԴԱՎԹՅԱՆ— Վազր չէ մյուս օրը «Քաջ Նազարը» սկսիր:
ԱՃԵՄՅԱՆ— Բա «Պատվի համարը»: Չեմ ուզում Զանի-
բեկյանի հետ կովկել:

ԴԱՎԹՅԱՆ— Միանքամից ասա, որ վախենում ես «Նա-
զարից»՝ «Պատվի համարը» հիմա էլ թող ուրիշն անի, Հո 39
թվի ներկայացումից լավը չե՞ս անելու:

ԱՃԵՄՅԱՆ— Հենց հետաքրքիր է, թե հիմի ո՞նց դուրս
կգա:

ԴԱՎԹՅԱՆ— Դա էլ թող Հրաշիկն անի:

ԱՃԵՄՅԱՆ— Ոչ մի գեպում, ինչո՞ւ:

ԴԱՎԹՅԱՆ— Մոնոպոլիա Հո չի՞ն, էղբան էլ խանդու լինի՞ն
մարդ:

Ինչ որ ճիշտ է, ճիշտ է:

ԱՃԵՄՅԱՆը «Պատվի համարը» սկսեց, բավական շատ փոր-
ձեր արեց և կհս ճանապարհին լրեց գործը: Էլ Զանիբեկյա՞ն
կղիմանա:

Սա էլ էսպես:

1971, մայիսի 7:

Ինչպես պատահեց, իսկ ոընտանյոք հանգերձ», Աճեմյանը
և մոռկովյան թատերական քննադատ Ալեքսանդր Սվորովինը
մեկնեցինք Գառնի-Գեղարդ: Ասեմ ի միջի այլոց, Սվորովինը,
մի վառ անհատականություն և բանիմաց մասնագետ, մեկն
էր այն սակավաթիվ մոսկովյան քննադատներից, որ խորա-
պես գնահատում էր Աճեմյանի արվեստը և որին արվեստա-
գետը սիրում էր ու վստահում:

Հիանալի ժամանակ անցկացրինք: Մինչև Գեղարդ՝ ուրախ ու դյուրաշաբաթ, Աճեմյանը Գեղարդում դարձավ ինքնամփոփու անհաղորդ: Մոմեր առավ և «էջմիածին» ամսագրի մի քանի համար Տաճարից շի շուապում դուրս գալ:

— Մարդ պիտի գա ու էստեղ էլ ապրի...

1973, մայիսի 27—հունիսի 2:

Մեկնեցինք Մոսկվա, առիթը ծանրակշիռ է՝ թատրոնի համաշխարհային կոնգրես, այն էլ՝ Միությունների տան սյունագարդ գահինում: Հոգնած է, մեծաշուրջ հանդիսություններին, անցուղարձին անհաղորդ: Բայց ներկայացումներ դիտում է հաճույքով:

Մայիսի 28-ին զիտեցինք Ա. Տոլստոյի «Ֆեոդոր Իոաննովիչ արքան» ողբերգության պրեմիերան Փոքր թատրոնում (Բ. Ռավենսոնի բեմադրությամբ, գլխավոր գերում՝ Ի. Սմոկտունովսկի): Մենք՝ Ռուբեն Ջարյանը, Խորեն Արրահամյանը և ևս, ինչպես ամբողջ Հանդիսասրահը, ներկայացումն ընդունում ենք դոհունակությամբ: Աճեմյանը և՛ հավանում է, և՛ շի հավանում:

— Երևում է, որ ոեժիսոր է: Մմոկտունովսկին հետաքրքրիր է, բայց շի բացված: Դերակատարներն իրար շեն բռնում: Ներկայացումը հում է:

— Արդիական պիես է:

— Արդիական ներկայացումը պետք է լինի, ոչ թե պիեսը: Փայլուն պարագորս:

Ավարտից հետո հանդիպեցինք բեմադրիչին, շնորհակալ հղանք հրավերի համար (անհնար էր տումա ճարել): Սա ևս՝ Մմոկտունովսկին դեռ շի բացված, դեռ շատ աշխատանք կա անելու:

30-ին դիտեցինք «Դոն Ֆուան» ներկայացումը (Մալայա Բրոննայա փողոցի թատրոն, Ա. էֆրոսի բնմադրությամբ): Միապաղազ ներկայացում, թույլ տպավորություն: Ամբողջ գործողությունը, չգիտես ինչու, կատարվում է ախոռում (թե՞ մարագում): Դա զարմացնում-զայրացնում էր Աճեմյանին՝

— Էֆրամի ի՞նչն են գովում՝ շեմ հասկանում։ Էստեղ էլ բռնել գործողությունը խցկել է ախոռ։ Խնձո՞ւ ախոռ, եղբա՞ր։

Եվ մնում, մնում, էլի առում էր՝

— Ինչու այսուհետեւ ակադեմիայի պարբերությունը կազմակերպված է առաջարկություններու համար:

Ի պաշտպանություն էֆրոսի ևս վկայակողում էի նրա
ուրիշ բեմադրությունները, Աճեմյանը վերստին՝

— Ինչու ախոռ...

31-ին «Սովորեմեննիկ» թատրոնում դիտեցինք Ալբատռուկի և Մուհամեդջանովի «Ֆուձիյամայի բարձունքում» պիեսը՝ Անգույն պիես, անգույն դերակատարներով:

— Սա՞ էր, որ էսքան գովում են, էսպես լինդունում։ Ինք-նագործ խումբ։

Հետաքրքիր չէ՞ր, որ բնմը բերել էին դահլիճի մեջտեղ:

— Նորություն չի, էնքա՞ն է արված։ Հե՞լ բան։

«Հե՞ լ բան», — իր սիրած քամահրական խոսքը:

Հունիսի 1-ին՝ «Համլետը» Տագանկայի թատրոնում, Յու. Լյուբիմովի բեմադրությամբ, գլխավոր դերում՝ Վլադիմիր Վիսոցկի:

— Ա՞յլ օրիգինալ ներկայացում: Չոր են խաղում, սա մեր իմացած Երսապիրը չէ, բայց շատ հետաքրքիր է՝ սուր, համարձակ, անսպասելի...

Ներկայացումից հետո տուն դառնալիս ասում եմ՝ Զեր Ներկայացումներում այնպես է, որ մեկի մեջ մի լավ գերա-

կատար կա, մյուսում մեկ ուրիշը: Ոչ մի տեղ չեն հավաքվում, բռնմցք չեն կազմում, ինչպես Վախթանգովի թատրոնում: Խորեն Աբրահամյանը համամիտ է՝ ճիշտ է, էլի:

— Ո՞վ է ասում ճիշտ չէ, իզուր Վախթանգովի թատրոնի պես չենք վարվում, աշխատում ենք սրա՞ն էլ մի բան տալ, նրան էլ... Ա՛յ, գտեք մի պիես բոլորին հավաքենք:

Խորեն Աբրահամյանը շատ վճռական՝ «Խոանն Ահեղի մահը»: Ես՝ ինչո՞ւ ոչ:

Ոչ մի արձագանք: Եվ իզուր:

1973, նոյեմբերի 21:

Սարգիս Բայանգուրը, կինս և ես գնացինք անառողջ Աճեմյանին տեսնելու: Տրամադրությունը լավ էր: Ինչպես եղավ, խոսք բացվեց դերասանների ու նրանց յուրահատկությունների մասին: Խոսում էր անկեղծ և համույթով:

— Դերասանը դերասանություն շպիտի անի: Երբ Արուս Ռուկանյանը մտավ «Ռուս մարդիկ»՝ պիեսի փորձերի մեջ՝ չուզենալով, տերսարը շիմանալով՝ շափազանց հուզիչ էր: Զարմանալի՞: Տերսարը սովորեց, յուրացրեց՝ էլ էն չէր: Ներկայացման մեջ առաջին փորձերի հուզմունքից բան չէր մնացել:

— Երբ Փափազյանը փորձասենյակում արթա կիր էր փորձում՝ ես ապշած, ձեռներս կախ, լսում էի: Ասում էին՝ ինչո՞ւ ոշինչ չես ասում, չես միջամտում: Ի՞նչ միջամտեմ, ամեն ինչ կատարյալ է: Երբ բեմ իջանք՝ ամեն ինչ կորավ: Մերացել էր, ինչո՞ր ազդում էր փոքր տեղում՝ մեծում կորչում էր:

1 Կ. Սիմոնովի «Ռուս մարդիկ» պիեսը բեմադրվել է 1942-ին (բեմադրիչ՝ վ. Վարդանյան): Մարիա Նիկոլաևնայի դերը վերցինը եղավ՝ դերասանունու կանոնավոր:

— Ջանիբեկյանը մինչև վերջ էլ շնասկացավ ի՞նչ պիտի խաղա, ի՞նչ չէ: Հիմա ուզում է «Ժլատը» խաղալ, էդ կռմպ-լեկցիայով ի՞նչ ժլատ...

1973, նոյեմբերի 26:

Չորրորդ բաժանմունքի հիմանքանոցի սենյակում նստած է մահմակալին, մի ուղը տակին, ինչպես մի Պաղտասար աղքար: Գունատ է, տխուր, խեղճացած:

Կատակի եմ տալիս՝ աղատ եթ, մտածելու շատ ժամանակ ունեք:

— Ոչինչ չեմ մտածում, արսոլլուս:

Միզանսցեններ չե՞ն կովում մոքի մեջ:

— Ո՞չ մի միզանսցեն: Չեմ էլ կարդում, հանգիստ եմ ուզում:

— Նիրվանա՞:

— Նիրվանա՞:

Եկավ տիկին Արօւսը: Նրա կոչման լուրը հաստատ է, բայց էլի տրտնշալով է խոսում: Անհմանը՝

— Գարդ անողին գարդ շի պակսիլ:

Ավելացնում եմ. քեֆ անողին՝ քեֆ:

Այսուղ քեֆը բացվեց, վարակիլ հրճվանքով պատմեց Արուս Ասրյանի և Բարեկեն Ներսիսյանի կոչումների իրոք որ զվարճալի պատմությունները: Արժե դրանք մտաբերել: Ճիշտ այնպես, ինչպես լսել եմ: Արուս Ասրյանին զանգահարում են և ասում, թե Անտոն Թուշինյանն ուզում է շնորհավորել իրեն Խորհրդային Միության ժողովրդական արտիստի կոչում ստանալու առթիվ:

Արուսը թե՛ ես մեծ կին եմ, եթե ինձ չեք հարգում, գոնե տարիքս հարգեցեք:

Ու լսափողը ցած է դնում: Դու մի ասի Քոշինյանի քարտուղարն է լինում զանգ տվողը: Քիչ անց, նորից զանգ՝ Արուեստականը, շնորհավորում եմ...

Կարծում է էլի ձեռ են առնում, կանչում է հարևանուհուն, խելթ-խելթի են տալիս, երբ իր աղան՝ Ալեքսանդր Աճեմյանը, հեռախոսով հաստատում է լուրջ: Այստեղ միայն Արուեստականը, որ լունցի է, միշտամտեց.

— Լոռեցի՛ է, է՛, լոռեցի, ինչքան լինի, ուզեց առաջիննինը շնորհավորել:

Հետո Բարկեն Ներսիսյանի պատմությունն արեց՝ է՛լ ավելի զվարճալի: Սա նարդի խաղալիս է լինում, երբ երեխան գալիս է թե՝ քեզ Քոշինյանը կանչում է հեռախոսի մոտ Բարկենը դառնում է կնոջը՝ գնա տես ինչ են ուզում, երեխան չի հասկացնէլ: Կինը դնում է, գալիս, թե՝ իրոք: Բարկենն իսկույն տեղից վեր է կենում ասելով՝ սա եր պակաս մեր զլխից, էս փորձանքը, ևս ի՞նչ մեղք ունեմ, տերսոն եր էդպես:

(Բանը վերաբերում է հետևյալներին. «Հանրապետության նախագահը» պիեսում կենինը, որի դերն անձնավորում էր Բարկեն Ներսիսյանը, առում է Մյասնիկյանին. «Ասում են Հայաստանի զեկալարների միջև տարածայնություններ կան...», որ դաշնինն ընդունել է մի առանձին աշխուժությամբ, խոսքը զուգորդելով օրվա վիճակի հետո Զգուշացրել են, որ դերասանն այլևս այդ խոսքը չասի: Իսկ նա մոռացել է, ասել է այնպես, ինչպես տեքստը սովորել է):

Բարկեն Ներսիսյանը վերցնում է խոսափողը և լսում շնորհավորանքի ջերմ խոսքեր:

Ես՝ կուռմների թուղթ հակառակորդս, զարմանում եմ՝

մարդիկ ինչքա՞ն մեծ նշանակություն են տալիս կոչումներին, պատկերացնո՞ւմ եք, ասեին՝ ժողովրդական արտիստ Պետրոս Աղամյան։ Անհմյանը՝

— Ասա է՛, ասա՛...

Կողքի սեղանին միայն մի գիրք կա՝ Եվրիպիդեսի ողբերդությունների գիրքը։ Սա չէ՞ հույն ողբերգակներից ամենամիանը, շոշափելին։

— Ի՞նչարկե՞՛, հասկանալի Հարարերություններ, հոգեբանություն։

Ներկայացումը (նկատի ունեմ՝ «Իֆիդենիան») տեսանո՞ւմ է։

— Որոշ բաներ շատ լավ, բաներ էլ կան՝ բոլորովին։

1974, դեկտեմբերի 9։

«Իֆիդենիան Ավլիսում» ներկայացման փորձերը։

Աշխատում է աճեմյանական նույն նվիրումով, եռանդով, ոգևորությամբ։ Մարդ, որ իր գործի, իր տարերքի մեջ դառնում է անթերի գեղեցիկ։

Նիկողայոս Նիկողոսյանը, որ ներկայացման նկարիչն է, հույժ էքսցենտրիկ խառնվածք, շարունակ խառնվում է գործին՝ զվարճություն պատճառելով բնմադրիշին։ Քանդակագործի արտասովոր վաս, բայց և ցարուցրիվ բնավորությունն Աճեմյանին դուր է դալիս և ծիծաղեցնում։

— Ասաց թե խաչի ենք գնալու հորբուրիս տուն, հետո թե՝ քեռուս տղայի։ Հետո էլ տարավ մի տում՝ լիբը բեղավոր մարդկանցով։ Մանոթացրեց մի երիտասարդի հետ՝ տան տերն է, — ասաց։ Սա էլ թե՝ ևս առաջին անգամն եմ լինում

այս տանը: Էղակնս էլ շիմացա ո՞ւմ տանն ենք, ո՞վ է մեզ
հրավիրել: Կոլլան էլ շիմացավ... հա՛, հա՛, հա՛:

Նիկողոսյանը լսում, ինքն էլ է ծիծաղում:

1976, Հունվարի 17:

Ուուրեն Զարյանը, Անոն Խալաթյանը և ես գնացինք գե-
ղարվեստա-թատերական ինստիտուտ «Առամնարույժն» արե-
վելլան» թատերախաղի վերջին փորձերից մեկը դիտելուր
Մտանք դահլիճ, մութի մեջ մեզ չնկատեց:

Փորձում էր ոգկորված: Հղկում էր գրեթե պատրաստ ներ-
կայացումը, նուրբ դիտողություններ անելով հատկապես խոս-
քի վերաբերյալ: Հետո ամբողջությամբ փորձեց վերջին տե-
սարանը՝ դիմակներով: Երիտասարդական թափ և ավյուն,
ծիծաղը հորդում է բեմից: Այդքան փոքր բեմ և կատակեր-
գական մեծ ներկայացման տպավորություն: Ո՞վ կասի, թե-
յոթանասունմեկ տարեկան է արվեստագետը:

Հետո ուշ ժամին գնացինք իր տուն: Համեստ ընթրիք,
ընտիր խմիլք և սրտաբաց զրույց, ինչպես միշտ: Զարյանը՝
ինչո՞ւ թատրոնում էլ նույն թափով շի աշխատում: Թե՛ նրանք
հիմա ինձ շնոր լսում:

Արվեստագետի վիշտը:

Չեմ տեսել մի արվեստագետ, որ այնքան շատ հղացում-
ներ ունենար և թողներ անկատար. Աճեմյանն իմ աշբում
մտադրությունների, մտահղացումների, ծրագրերի մի անվեր-
ջանալի շահեմարան էր: Չէի հասկանում, թե այդքան մեծ կին-
սափորձի տեր, լրջախոհ՝ մարդ՝ ինչպես կարող էր միամիտ,
տղայաբար միամիտ լինել՝ այդքան դյուրությամբ օդեղեն

ամրոցներ կառուցելու և նույնպիսի դյուրությամբ մոռացության մատնելու համար:

Դա իր բնավորությունն էր, բնավորության հիմնորոշ գծերից մեկը: Եվ այն մարդիկ, -- թիշ չէին դրանք, -- որ վստահություն շունեին նրա խոսքի ու խոստման վրա և ասում էին, թե Աճեմյանը խարում է իրենց՝ ճիշտ էին ասում, բայց չէին հասկանում, որ դա դիտումնավոր խարելը չէր. Աճեմյանն ամենից առաջ ինքն իրեն էր խարում: Միանգամայն անկեղծորեն, խոսք ու խոստում տալիս բնավ շկարծելով, թե դրանք խոսք ու խոստում էլ կմնան:

Սա էր ակոնքն այն անվերջանալի մեծ ու փոքր գժտությունների, ընդհարումների և բախումների, որոնք առհասարակ անպակաս են բնմադրիչի, հատկապես գլխավոր բնմադրիչի կյանքից՝ այդ տարաբախտ մասնագիտության պատճառով, առավել ևս՝ Աճեմյանի կյանքից՝ իր բազմախոստում բնավորության պատճառով:

Եվ եթե ևս հիմա ուզում եմ ներկայացնել իմ վկայություններն Աճեմյանի անկատար մնացած հղացումների ու մտադրությունների մասին, ապա դրա նպատակն արվեստագետի բնավորության այդ հատկանիշը ցույց տալին է: Ոչ միայն դա: Պակաս կարենոր չէ, գուցեն և ավելի կարենոր է մյուս նպատակը՝ թատրոնի պատմության էջերին հանձնել մտադրությունների ու մտահղացումների այն թանկագին հատիկները, որ ունեն ստեղծագործական արժեք: Ի՞նչ իմանաս, գուցե դրանք հարկավոր գան հետնորդներին (եթե միայն նրանք լինեն այնքան ուշիմ, որ յուրացնեն ու գործի դնեն իրենց մեծ նախորդի մտքերն ու մտահղացումները. գեղարվեստական մշակույթի զարգացումն ուրիշ կերպ չի լինում): Եվ այսպես՝

Գրառումներ, որ պատմում են
Անեմյանի անկատար մնացած
հղացումների մասին

1962, փետրվարի 3:

Ուշ երեկոյան հեռախոսի ձայն.

— 9½-ին եղիր այգու դռանը:

«Սևան» հյուրանոցի դիմացի այգու մասին է խոսքը (այն
ժամանակ ես ապրում էի Մարքսի փողոցում, «Հյուրանոցի
մոտ):

Սովորության հսկման՝ եկավ ճիշտ ժամին:

— Էստեղ մտնենք, էնտեղ կիսանգարեն:

Այսինքն՝ «Սևան» ռեստորան, «Արմենիայում» կիսանգա-
րեն:

Առաջիկա անելիքների մասին է ուզում խոսել (արդեն
քանիներո՞րդ անգամ):

— Ուրեմն, էսպես, վճռված է: Հերթով «Բոմեռ» և Զու-
լիստ, «Պիկո», «Անուշ», «Պաղտասար աղբար», «Քաջ Նա-
զար»:

— Երեք տարիվա գործ առնվազն:

— Դեռ Մոսկվայում Սարոյան զնելու հարցը կա¹, միայն
թե դերասաններ չեմ տեսնում: Մեր-Գրեգոր շկատ Ուզում եմ
Աստանգովին հրավիրել, մի բան, որ վախթանգովի թատրո-
նում գործ չի անում: Բակական իր դերն է: Զոնիի բանը հեշտ
է, բնն-Ալեքսանդրը հեշտ չի:

¹ Խոսքը վերաբերում է Բ. Ռավենսկիին հրավերով «Պաշկինի անգան
թատրոն» շեմ սիրու լեռներում է» պիեսը բեմադրելուն, որ ինչ-ինչ
պատճառներով ի կատար շածվեց:

— Ըստուարդը շի՞ կարող:

— Հաճելի շի նայվում, զլուխը փոքր է, արովինցիաբ տեսք ունի: Հիմա ի՞նչ ես ասում:

Սարոյանը՝ ոչ մի կասկած, «Պեպոն»՝ նույնպես,— ասացի: — «Պաղտասարից» ձեռ քաշեք (նորաստեղծ օպերայի մասին էր խոսքը, որի լիբրետոն գրել էր Գուրգեն Բորյանը՝ կարծեմ, Զավեն Վարդանյանի հետ, երաժշտությունը՝ Անդրեյ Բաբակը): Դրանք արևմտահայ կովուրայի հետ կապ չունեն: Հետո՝ նոր գործ է, հաղար բան կունենա շտկելու, ահագին ծավալի աշխատանք...

— Ճիշտ ես ասում, չպիտի անեմ: Մերժել չեմ կարողանում: Դեռ Մահարու պիեսն էլ պիտի անեմ, անհարմար է, չէ՞:

Ես վերապահ վերաբերմունք ունեի այդ գործի հանդեպ: Հարցը, թե «Ռոմեոն և Ջուլիետի» ի՞նչն է ոգևորում իրեն:

— Պիտի թեթևացնեմ, դարձնեմ ժամանակակից...

Այնքան ոգեշնչված էր խոսում, որ սիրու շարի տարակուսանքով սիրու կոտրել՝ զլխավոր դերերի ո՞ր կատարողներով... Եվ սխալ վարվեցի: Ուկորվեցի և ոգևորեցի «Անուշով»՝ ինչ որ օպերայում արել եք՝ հերիք է, Պարոնյան էլ արել եք՝ «Թափառնիկոսը»: «Անուշ» է միայն, որ սպասում է նոր մեկնության:

— «Անուշի» համար դիրիժո՞ր է պետք, դիրիժո՞ր: Իիթմերը պետք է փոխվեն, թարմանան: Ճկուն, հասկացող դիրիժոր, թավրիզյանի պես: Հիմա ի՞նչ...

Ես արդեն գրել եմ, որ «Անուշի» նոր բեմադրության բախտը բերեց: Աճեմյանն այդ գործն արեց, իր սրտի ուղած դիրիժորով, որ 04ան Գուրյանը նղավ (1969-ին, թումանյանի ծննդյան 100-ամյակի օրերին).

իրքն թե ծրագրվածը բիշ էր, ավելացրեց.

— Կրկեսում էլ մի բան պիտի անեմ՝ անտիկ¹: Հակոբ Խանջյանի մոտ էի, ասում է՝ յ մենա իдея, օպերայում կամ համերգային դահլիճում բնմադրենք «Վարդանանքը»՝ երաժշտությամբ ու երգչախմբով: Ես «Արա Գեղեցիկն» առաջարկեցի:

Այսպես, դա էլ ավելացավ ծրագրին:

Այդ օրերին կարգացել էի մի շատ Հևտաքրքրական գիրք Մ. Բ. Խաջետլաշե «Սբանական ազգային պարագաներ և առաջանակավորապես ստանալով կենինգրադի գլխավոր գրադարանից»: Պատմում էի գրքի բովանդակությունը, լսում էր հափշտակությամբ, մանավանդ, վանին վերաբերող դեպքեր էլ կային պատմածիս մեջ ինչը ենք բացառիկ բան էր՝ թուրք գաղտնի մասին, բայց այս մեկը բացառիկ բան էր՝ թուրք գաղտնի ոստիկանության պետի՝ դեպքերի մասնակցի և ականատեսի բացահայտումներն ու խոստովանությունները, որ սկզբնազրյուրի արժեքը ունեն: Ինչե՞ր են գրված այդ գրքի մեջ՝ ի՞նչ ոճիրներ, արյունալի դեպքեր, ինչը թափված արյուն, նաև հայի արյուն: Հեղինակը գրել է, թե սովորանք հայ կնոջից ծնված լինելու վարկածը փարատելու համար ավելի ու ավելի դաժանաբարո է եղել հայերի նկատմամբ: Դիրք, որ լեցուն է արևելյան նննդամիտ դիվանագիտության, ահ ու սարսափի, կեղծիքի, խարեռության, կաշառակերության

1 ՀՅՀԵԼԵՆԻ, որ այդ ժամանակ Սունդուկյանի անվան թատրոնի շնչեն այլրդել էր՝ Աճեմյանին գրկելով իր լավագույն տարիներն կարդին աշխատելու հետագարությունից:

դրվագներով։ Ընդունելության ժամանակ սուլթանը պատի պնակախված գորգի հետևից է լսել ու խօսել, որ փագիշահի սուրբ երեսը շտեսնեն։ Ճարտարապետի հետ նորանոր գաղտնարաններ է սարքել, որ ոչ ոք չիմանա, թե դիշերը որտեղ է քննելու Ռւնեցել է իր նմանակները, որ մոլորեցնի դավադիրներին։ Ինքը՝ ոստիկանապետն էլ ունեցել է նմանակներ, որոնցից մեկին սպանել են, կարծելով թե ինքն է։

Լսեց-լսեց ուշադիր և ասաց.

— Դու պատմում ես, ես մտածում եմ «Քաջ Նազարը» բնագրելու մասին։ Գիտես ինչե՞ր կարելի է անել, եթե թողնեն։ Գորգի հետևից զուրս լգալը, նմանակները... ի՞նչ հետաքրքրիր կլինի՝ երկու Քաջ Նազար, սրանք իրար հետ... Բայց թե կենցաղն ու պայմանականությունն իրար խանգարում են, կամ մեկով պետք է լուծել, կամ մյասով։ Չէ՞ ։ «Քաջ Նազարը» շատ հետաքրքիր կլինի...

Մեր զրույցը տեսց մինչև ուշ գիշեր, արդեն զուրսը՝ ամայի փողոցում։

Ես շատ եմ Աճեմյանի հետ ծանրութեթև արել իր ծրագրերը, բայց երբեք նրան այդքան ինքնավստահ, լեցուն, ողելորված չէի տեսել։ Ուստի և զրի առա ասածները։

1962, 25 նոյեմբերի

Լենինականի հյուրանոցում (մեկնել ենք Լեռն Զոհբարյանի հոբելյանին) երկուսով ենք միայն։

— Ամեն ինչ Ստանիսլավսկուց է գալիս՝ և՛ Մեյերհոլդ, և՛ Վախտանգով, և՛ Թափրով... Ոչ մի ասածին հակառակվել չեմ կարող։

— Ինչո՞ւ

— Ելնում է համաշխարհային կուլտուրայից: Մեծ կրթության տեր մարդ է, ոտից գլուխ տրված արվեստին:

Քուն մտնելիս՝

— Էս բեմի վրա կարգին բան չի արվի¹: «Արայից» հետո «Քաջ Նաղարը» կանեմ, կրկեսում՝ «Մակրել» մինչև նոր շենքը լինի: Չորսհարյուրանոց դահլիճում ի՞նչ Շերսպիր:

Նորից ու վերստին՝ ավաղի վրա կառուցված ծրագրեր:

1964, ապրիլի 2:

Ինչո՞ւ Բրեխտ չի բեմադրում:

— Բրեխտը մոտ չի սրտիու: Իմ արվեստը կարծես մոտ է նրան՝ բնականն ու պայմանականն իրար հետ, բայց պիեսները չեն զերմացնում: Հետո՝ տեղ չեն հասնի:

Գեթ մի փորձ արե՞ց, որ երևա՞ կհասնի², թե ոչ:

Բրեխտի գործերից իրեն դուր էր գալիս «Не тот солдат, а этот» պիեսը:

— Որ բեմադրեմ՝ դա կրեմադրեմ:
Իշարկե, չըրեմադրեց:

1967, սեպտեմբերի 4:

Արուս Ասրյանի հետ նոր է վերադարձել Վոլգա-Դոն 22-օրյա ուղևորությունից: Ի՞նչ զարմանք՝ ճամփորդելու ոիսկը: Տպավորությունների մեջ էականը Ռուսաստանի խորքերը ճանաշելու բավականությունն է: Հետո անցավ իր հերթական դործերին: Կակսի Զ. Պարյանի պիեսը³: Եթե պատրաստ լինի:

1 Այդ ժամանակ Սովորուելանի անվան թատրոնն ապաստանել էր Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի շենքում՝ մինչև իր նոր շենքի կառուցումը:

2 Խոսքը վերաբերում է «Հանրապետության նախագահին»:

Այլապես՝ «Հին աւտովածները», եթե թույլ տան: Եվ մեկ էլ՝ «Արշալույս» երիտասարդական թատրոնը ձեռքն առնելու մասին, եթե անգ լինի, մի փոքրիկ թատրոն: Իմ տարակուսանքը՝ դերասաններ չկան:

— Ուի՞նչ, հենց որ զնամ՝ կլինեն:

Ինձ դուր եկավ իր անհիմն վստահությունը, և ամենից կարեռը՝ արվեստագետի մտահոգությունը թատերական նոր սերնդի վիճակով: Աւրիշ բան, որ դրանից էլ բան դուրս չեկավ:

1967, հոկտեմբերի 25:

Հին ընկերոջ՝ Կարոն Դեղձունյանի (նույնպես վանեցի) հետ Ամեմյանին տարանք Օշական՝ մեր լավ բարեկամ բժիշկ Լևոնի տուն: Են, բարեկարգ տուն, փարթամ այգու մեջ:

Առանց տանտիրոջը հարցնելու, քթի տակ դնդնալով, իշավ ընդարձակ նկուղը՝ լեցուն շոայլ բնաշխարհի աշնանային բարիքներով: Նայում է շուրջը լոր երեխայական զարմանքով, ձեռքը մեկնում է դարսված լավաշներին, մի կտոր պոկում-ուտում:

— Հըմ, էսպե՞ս էլ կարելի է ապրել...

Անդորր, հանգիստ կյանքի կարուտն էր խոսում նրա մեջ: Բայց միտքն իր գործերի հետ է:

— «Արշալույսը» պիտի զարձնել ուսումնական թատրոն: Ոչ թե սովորական բեմադրություններ՝ դեկորներով, բաներով, այլ ստուդիական թեթեւ ներկայացումներ: 10—12 հիմնական կազմ, մյուսները վերջին կուրսի ուսանողներ: Էստեղէնտերենդիտան, ծախսերը ծածկեն, ուժեղանան մինչև երիտասարդական պալատը պատրաստ լինի:

Եվս մի գեղեցիկ ծրագիր: Թերահավատ ևմ, բայց, իհարկե, ոչինչ չեմ ասում: Խնչո՞ւ սիրու կոտրել:

1967, դեկտեմբերի 19:

Իր տանն ենք՝ Խաչիկ Դաշտենցը, Սուրեն Աղաբարյանը,
Ժան Էլոյանը:

Պատմեց Զարենցի հետ ունեցած հանդիպումների մասին,
այն գեպքը, երբ հարրած գնացել են բժիշկ Ստեփան Բաղդա-
սարյանի («Արյունոտ անապատը» պիեսի հեղինակի) տուն:
Սա կարդացել է իր նոր պիեսը, Զարենցը լսել է ձեռ առնելով:

Մտքով պատրաստվում է «Քաջ Նազարին»:

— Էնպիս սովորական՝ իսկույն կարելի է բեմադրել: Պետք
է օրիգինալ բան առել:

Սա է ծրագիրը. 1968-ին՝ «Քաջ Նազար», «Հին աստված-
ներ», 1969-ին՝ «Անուշ» և մի ներկայացում թումանյանի եր-
կերի հիման վրա:

— Թումանյանը տեսնում էմ, բայց «Քաջ Նազար»...

Ո՞չ մեկը տեսավ, ո՞չ մյուսը: Մրագրից մեկը կատարվեց՝
«Անուշ» օպերայի բեմադրությունը, որ ցուցադրվում է մինչև
այժմ:

Մինչդեռ՝ ահա մեջբերում նոր թատերաշրջանի բացման իր
ծրագրային ճառակաց (Ճեռադիրն ինձ մոտ է). «... թատրոնը
նոպատակ է դրել մասնակցելու թումանյանի մեծ հորելլանին
հատուկ ներկայացումով! Այդ ներկայացման նյութ հն ծառա-
յելու մեծ բանաստեղծի գործերը, որոնց համադրումով պետք
է ստեղծվի հորելլանական ներկայացումը. այստեղ պահանջ-
վում էն թատերական նոր ձևեր՝ արտահայտչական նոր հնա-
րանքներ:

Վաղուցվա մեր ցանկությունն է բեմադրել Դեմիրճյանի
«Քաջ Նազար»: Այս տարի, վերջապես, մենք դա կներկա-
յացնենք:

Ի՞նչ մեծ տարածություն ծրագրի և գործի միջև:

1968, մարտի 1:

Առաջի՞՝ «Արշալույսի» մասին մւածո՞ւմ եք, թե չէ, ոգեգըրեցիք երեխաներին ու թողեցիք, մեղք են, չէ՞:

— Ե՛, մեկը, որ հետաքրքիր էր՝ Քոթանջյան Ռաֆիկը, գոց Մոսկվա սովորելու, մյուսը՝ «Կարինե» կինոնկարիտղան, էստեղ կիսադաւ էլ մարդ չի մնում: Ասել եմ՝ մեկմեկ կզամ, կոնսուլտացիա և այլն:

Անլուրջ վերաբերմունք, ահա՝ թե ինչ:

1972, մայիսի 15:

Իր տանը: Մտածում ենք մի լավ պիես Արուս Ասրյանի համար: Ինչո՞ւ Սեիջը չուզեց (հիշեցրի «Այս տարօրինակ միստ Սեիջը» ամերիկյան պիեսը): Ասրյանը՝

— Ի՞չ:

Աճեմյանը՝

— Կուրա՞մը:

Նկատի ուներ Բ. Բրեխտի «Կուրամ մայրիկը» և իր զավակները զրաման: Ես տարօրացնում եմ՝ էլ ի՞նչ կա դեսուզեն ընկնելու, հարմար է ամեն ինչով, լուրջ զեր, լուրջ պիես, թատրոնն առաջ մղող գործ...

Ասրյանը՝

— Հանդիսատեսից եմ վախենում:

Վատահեցնում եմ՝ դուք կունենաք ամենալավ՝ զանդիսատեսը: Կարծես թե համաձայնում է: Կարծես թե: Հարցնում եմ՝ ինչո՞ւ 62-ին «Մադամ Սան-Ժենը» լիսադացիք, ինձ շտափթարգմանել տվիք ու լիսադացիք:

— Այդ դերի համար արդեն պառավել էի:

Ինչ որ ճիշտ է՝ ճիշտ է: Իսկ Մետաքսյա Սիմոնյանի Սանժենը հավանո՞ւմ է:

— Եթե ժողովրդին բռնել է, Հանդիսատեսը հավանում է, ուրեմն լավ է: Մի քիչ հասարակ բաներ կան մեջը, ավելի բարձր պիտի լինի....

«Կուրած մայրիկը» մնաց ու մնաց: Ինչո՞ւ Աճեմյանն ի կատար չածեց իր իսկ առաջարկը: Ո՞վ իմանա:

1974, մայիսի 16:

Տխուր ենք շափազանց՝ սասացել ենք Գրիգոր Բոյաչինի մահվան լուրք Անտրամադիր է ամեն ինչի հանդեպ.

— Աշխատելու հավաս չկա, Հանձնվել եմ ծովության, այս տարի միայն «Իֆիդենիան»:

Դա հենց Բոյաչինի առաջարկն էր:

Լավ չէ՞ր լինի ցուցադրել Գառնիի վերակառուցված տաճարի բացման հանդեսին: Աշխաժանում է.

— Կարելի է, ձայնը պետք է ռադիոյով բարձրացվի: Միայն թե սանդուղքները բարձր են, ո՞նց պիտի շարժվեն:

Դա էլ չարգեց:

Հիմա մի երկար պատմություն պիտի անհմ Աճեմյանին մի անկատար հղացման մասին, անկատար՝ այս դեպքում ոչ իր մեղքով: Անում եմ այդ պատմությունն իբրև պարտք ոչ միայն Աճեմյանի, այլև Հեղինակի հանդեպ մի թատերագրական գործի, որով հիացած էր Աճեմյանը և որի անունը ոչ ոք չգիտե ու չի էլ իմանա, եթե ես չգրեմ. Սիմոն Սիմոնյան՝ «Կանգովի... խաչաձևելի», ենթավերնագիրը՝ «Հայ ժողովուրդի ծննդյան 100000-ամյակի տոնակատարությունը», Ժանրը՝ «Հայոց երգիծական պատմություն»:

Պատմեմ, թե այդ գործն ինչպիս էր ընկել Աճեմյանի ձեռքը:

Պատահեց այնպես, 1975-ի վաղ գարնանը, ծննդյան 70-ամյակի առիթով, կիբանանի «Գրական շրջանակի», ավելի ստույգ՝ նրա ղեկավար, քանաստեղծ Գառնիկ Աղղարյանի հրավերով Աճեմյանը մեկնեց Բեյրութ (ի դեպ, նույն ինքնաթիռով, որով տուն էր գառնում գրող Անդրանիկ Մառուկյանը՝ վերին աստիճանի գրավիչ մի անհատականություն, որի հետ շատ մտերիմ էր Աճեմյանը, ես՝ նույնպես):

Վերադարձավ մեկ ամսից՝ շափազանց գոհունակ, վառ տպավորություններով մշակութային հարուստ կյանքով ապրող հայահոծ ծագկուն գաղութից, նրա աշրի ընկնող գործիշներից, իր հանդեպ հանդես բերված վերաբերմունքից, Բեյրութից առհասարակ, որին Մերձավոր Արևելքի Փարիզ էին կոչում: Նա շգիտեր, ոչ ոք շգիտեր ու չեր կարող կուածել, որ դա Բեյրութի վերջին երջանիկ տարին է. նույն թվի աշխանից սկսվեց կիբանանի վաճառաշահ մայրաքաղաքի ողքերգությունը, որ շարունակվում է մինչև օրս: 1975-ից ծայր առան փառաշուր քաղաքն ավերակների վերածող պատերազմական դեպքերը, զնդակոծություններն ու թնդանոթաձգությունները, որոնց ժայները շեն լուսմ մինչև հիմա՝ ի մեծ դըժբախտություն կիրանանի արար ժողովրդի և հայկական արտասահմանի ամենամեծ գաղութի: Երբ Աճեմյանն այնտեղ էր՝ այդ ամենի նախանշաններն անդամ չկային, ուստի և հասկանալի պիտի լիներ Աճեմյանի զարմանքն ու հիացումն այդ քաղաքով: Դա ինձ համար հասկանալի դարձավ շատ ավելի ուշ, երբ 1981-ի աշնանն իրու դասախոս, Հայկապյան կոլեջի հրավերով, երկու ամիս գտնվում էի պատերազմական թոհուրունով բռնկված, կյանքի բնականոն ընթացքից դուրս ընկած Բեյրութում. պատկերացնում էի, թե ինչպիսին պետք է եղած լիներ քաղաքը խաղաղ ժամանակ: Ինչո՞ւ միայն

պատկերացնում; մարդիկ պատմում էին, որ գաղութում այնքան շատ հանդեսներ, ասուլիսներ, հավաքույթներ, ներկայացումներ, համերգներ էին լինում, որ միմյանց շխանգարելու համար հրավիրատոմսերի վրա հատուկ նշում էին՝ «Կիսնդրվի շխաչաձևելել», ասել է թե նույն երեկոն զգրավելու Այստեղից էլ Սիմոն Սիմոնյանի «Հայոց երգիծական պատմության» վերնագիրը «Կիսնդրվի... խաչաձևելել» ճիշտ հակառակ իմաստով (կախման կետն էլ դա է ասում):

Ի շարու այլևայլ տպագորությունների, քշախոս և գերազրական աստիճանների սեր չունեցող Անհմյանը գրող, բանասեր, լեզվագետ, պատմագետ Սիմոն Սիմոնյանի հասցեին մակղիրներ չեր խնայում՝ օ՛, Սիմոնը, այդքա՞ն էլ օրիգինալ մա՞րդ՝ անզսպելիորեն եռանդուն, ամենագետ, երևակայությունն անսահման...

1981-ին, երբ Բեյրութում ծանոթացա ու մտերմացա Սիմոն Սիմոնյանի հետ, տեսա, որ արվեստագետը բնավ չեր շափականցրել: Նրա գրական ահագին արտադրանքի մեջ ինձ դրավեց հատկապես «Անո և ճակատագիր» մեծ հատորը (պատմվածքներ իր հայրենի Սասնա կյանքից) և հիշածս թատերագրական երկը, որ 1978-ին տպագրվել է հեղինակի սեփական «Սևան» տպարանում (Ամեմյանը 1975-ին դրա ձեռագիրն էր կարդացել): Վախճանվեց գրողը 1986-ի ամուսնը, երբ, շնայած պատկառելի տարիքին, հրավիրը գրպանում, երևան դալու պատրաստության հրճվանքի մեջ էր (դա եսդիտեմ իր վերջին նամակներից):

Հիրավի, զորեղ երևակայության գործ է՝ գրել հայոց բազմադրյան և բազմակնճիռ պատմությունն ընդգրկող մի պիես, որի գործող անձանց թվարկումն իսկ ցույց կտա գրվածքի հույժ պարագորսալ բնույթը՝ Հայկ և Բել, Շամիրամ և Արա-

Գեղեցիկ, Մեծն Տիգրան և Դրիգոր Լուսավորիչ, Ներոն և Ստալին, Գալուստ Գյուլբենկյան և Ալեքսանդր Մանթաշև Վասակ Սյունեցի և Վարդան Մամիկոնյան, Սասունցի Դավիթ և Փոքր ՄՀՆԲ, Նիկողայոս Աղոնց, Տերյան, Չարենց... Մի խոսքով, պատմական դեմքեր, որ կամ հյուսել են Հայոց պատմությունը, կամ նիրգործություն են ունեցել նրա ընթացքի վրա, կամ էլ նրա մհկնարանն ու իմաստավորողն են եղել: Ճրի պես իմանալով Հայոց բազմարարդ պատմությունը, հեղինակը կապ է դտել տարաբնույթ պատմական գևաբերի ու դեմքերի միջև՝ զրանց տալαιվ անսպասելիորեն պարագործակ, մեր աշխամ երրիմն ընդունելի, երբեմն մերժելի, բայց մշտապես երգիծական գումավորում: Դրա ոլորտից դուրս չի մնում նույնիսկ Դրիգոր Լուսավորիչը: Հանդեսի հերթական նիստերից մեջ նախադաշներին, նույնիր ունդաւնից ները ծալ ի ծալ վեր առավ ձախ ձեռքով, վասնդի իր աջ ձեռքը կատրված էր և կդանվեր թե՛ էջմիածնի և թե՛ Անթիլիասի գանձատուներուն մեջ: Եկեղեց թե երկու հատ աջ ձեռքեր ունեցած էր»:

Հեղինակը, կարծես, նպատակ է զրել հերթելու Հայոց պատմության ավանդական պատկերացումները, վաղուց ի վեր արմատ դցած մեկնությունները հենց իրենց՝ այդ պատմության գլխավոր դերծող անձանց բերանով: Ըստ որում, և դա է հետաքրքիրը, նրանք դա անում են պատմության ընթացքի հետագա տրամաբանությունից հենվով: Բելն, օրինակ, ճակատագրական սխալ է համարում Հայկ Նահապետի բռնած ուղնգիծը, որ նա լրել էր իր «տաք ու ցորենաշատ» երկիրը և հաստատվել ցուրտ ու սառնամանեաց երկրին մեջ, ուր պատահնեցան տաճապարամբա դժբախտությունները հայ ժողովորդինք: Եթե նա մնար Բարելոնում՝ «կրնայինք ավարտել

Աշտարակը և ապա այնտեղ հիմնել թագավորություն մը, հայ և բարելական ժողովուրդների ձուլմամբ, և մինչև հիմա տեսիլու Այդպիսով, Հայկը «գաղթականությամբ կազմեց իր ժողովուրդը և գաղթականությամբ ալ շարունակվեցավ իր ժողովուրդը մինչև հիմաՅ:

Նույն միտքն է զարգացնում և Շամիրամը: Հորելլանական հանդեսի մեծաթիվ մասնակիցները սքանչանում են Շամիրամի գեղեցկությամբ, առիթ տալով նրան ասելու, թե Արան «շկրցավ սիրել նույնինսկ ինձի պես թագուհի մը»: Դա ներկաներին դրզում է դառնալ դեպի Արա Գեղեցիկը և գոշել՝ «Ախմամայի...»: Շամիրամը, ոգևորված, շարունակում է. «Արան մերժեց իմ սերս, ես իրեն խստացած էի իմ թագավորությունս, սիրուս ետք: Անիկա պիտի ըլլար արքան երկու երկիրներու՝ Արարատի երկրին ու Ասորեստանի...», «Արան, նուարդ խանումի համար, կորսնցուց երկու թագավորություններ և Մոսուլի քարյուղի հանքերուն ամբողջությունը»: Եվ ի՞նչ, Արայի վարքագիծն օգտակա՞ր եղավ իր հաջորդներին: Բնավ. «Այնուշետև բազմաթիվ հայեր ամուսնացան օտարեներու հետ և պահանջեցին դրամօժիտ: Այսօր իսկ բազմաթիվ հայեր կամուսնանան օտարուհիների հետ»:

Մեծն Տիգրանն էլ իր ելույթի մեջ սեփական «սխալներն» է խոստովանում. «Եթե փոխանակ օտար ու հեռավոր երկիրներու մեջ ուժերս սպառելու, մնացած լինեի հայրենիքիս մեջ և գործած ըլլայի հոն, կերտած պիտի ըլլայի ինքնամփոփ, հզոր ու հավիտենական պատմություն մը»:

Ներըն կայսրն էլ իր կովաններն ունի: «Ես է, որ Հայաստանին շնորհեցի թագավորություն, որ տնեց 320 տարի... որ կործանվեցավ շնորհիվ քրիստոնյա և բարեպաշտ Մեծն թեոդոսի, զոր իրրե սուրբ կհիշատակեք ձեր պատարագներուն

բնմացքին:— Զայրացած ասում է Ներոնն իր ելույթում:—
Վո՞, հիմարագո՞ւյն հայեր, իմ հիմնածա քանդեց Սուրբն
թեզոս: Զիս կանիծեք և զայն կօրհնաբանեք: Զեր թագավոր-
քությունը հիմնողը կնզովեք, իսկ միննույն թագավորությունը
պարսիկներու հետ բաժնողը՝ կսրբաբանեք... Դուք լավ գիտեք
ձեր բարերարները ատել, իսկ օրհնաբանել՝ ձեզ ոշնչացնող-
ները: Կայսրը չի մոռանում հիշեցնել, որ ինքն իր ձեռքով
է թագադրել Արշակունի առաջին թագավորին, ինքն է վերա-
կառուցել Արտաշատ մայրաքաղաքը, ինքն է կառուցել Գառնիի
տաճարը՝ «... իմ պետական գանձիս հաշվույն: Միլիոններ
ու միլիոններ ծախսեցի ձեզի համար: Զեր ո՞ր իշխանն ու
թագավորը կամ հայազգի ո՞ր բյուզանդական կայսրը ինձմեն
ավելի բարիք բերավ Հայաստանին: Փաստեցեք և ապա՝
որ... դուք պետք է սրբագրել տայիր պատմության մեջ ինձի
հատկացված ու էջերը: Եվ բյուզանդական թեզոսս կայսրը
չի ժխտում ներոնի ասածը, հակառակը՝ անդրշիրիմյան աշ-
խարհում խիղճը նրան տանջում է այն պատճառով, որ ինքն
անիբավություն է գործել հայերի գեմ, իսկ հայերն իրեն
օրհներգում են վատարանելու փոխարեն, նույնիսկ Տեղ
Աստված իրեն շարունակ կշտամբում է դրա համար. «Իրա-
պես հայ ժողովուրդը ավանակի անմտություն ունի իր իրավ
թշնամիներուն և իր իրավ բարեկամներուն հանդեպ: Ես քրիս-
տոնյա էի, բարեպաշտ և սուրբ, բայց եղա հայավեաս. Ներոն
հեթանոս էր, շար և հիմար, բայց եղավ հայասեր»:

Եվ այսպիս խոսք են առնում ուրիշ-ուրիշ պատմական դեմ-
քեր և զարգացնում տեսակետներ, որոնք բնավ նման չեն
մեր հմացածներին: Եվ այդ տեսակետները հայտնվում են ոչ
թե դրանց հետ անպայման համաձայն լինելու, այլ անպայ-
ման երկարություն բորբոքելու, միտք շարժելու, հայոց

«Ախալաշատ» պատմությունը նորից և վերստին իմաստավուրելու համար: Հեղինակի նպատակն էլ, ըստ երևույթին, հենց դա է եղել: Նույնը չե՞ն Բնինարդ Շոռի պարագործալից պիեսները, հենց «Կեսարն ու Կլեոպատրան»: Այս առողջով Սիմոն Սիմոնյանի գործն առանձնանում է հայ թատերագրության, թերևս ոչ միայն թատերագրության մեջ իրք բացառիկ մի երկի:

Ես լավ հասկանում եմ, թե այդ թատերախաղի ինչն էր հրապուրում Աճեմյանին, բայց շատ էլ հասկանալի չէ, թե այդքան մեծ ընդդրկում ունեցող խոսքառատ գրվածքն ինչպես կարող էր բեմական մարմնացում առնել, ինչպես էր գրական նյութը տեսնում բեմում: Ինքը, երկի, տեսնում էր: այլապես չէր ասի՝ «Որ թողնեն, ամեն ինչ մի կողմ կդնեմ սա կանեմ...»:

Այս պատմությունն անելով կամեցա ընթերցողիս պատկերացում տալ, թե կյանքի վերջին տարիներին էլի ինչն էր, որ զրադեցնում, անհանգստացնում էր արվեստագետի կարծես թե այլևս հոգնած միտքը: Եվ դրա հետ միասին՝ դադար տալ ժամանակակից հայ թատերագրության այս ինքնատիպ երկի մասին:

Հիմա պետք է մեկ ուրիշ շեղում անեմ՝ պատմեմ Աճեմյանի և մի անկատար մնացած ցանկության՝ Գուրգեն Մահարու «Մարդը մարդուն» պիեսը բեմադրելու շիրականացած մտադրության մասին, բայց ավելի շատ՝ Աճեմյանի և Մահարու բացառիկորեն գեղեցիկ, կաթողին մտերմության:

Ասեմ, եթե միայն շեմ ասել մինչև հիմա, Աճեմյանն ուներ շատ մեծ ջրչապատ, բայց շատ էլ քիչ մտերիմներ, և այդ թշերի մեջ առաջին անունն էր Գուրգեն Մահարին:

«Հուզական» բնավորություն չէր Աճեմյանը: Մեր անհա-

մար հանդիպումների մեջ շեմ հիշում նրա լազը նույնիսկ ամենավշտալի պահերին, արցունք շեմ տեսել իր աշքերին։ Մի օր, թաղումից տուն դառնալիս, հարցրի՝ զսպվածությո՞ւն է դա, թե անտարերթություն։ Թմծիծաղ տվեց՝ հա՛, էգակե՛ս է՛ Զասաց՝ որպե՞ս Բայց ավելացրեց, թե վերջերս մի վավերապրական կինոնկար էի նայում՝ «ՄԽԱՏ-ի վարպետները», արցունքները թափվում էին աշքերիցս...

Գուրգեն Մահարին նույնպես «Հուզական» խառնվածք չէր, նա էլ անարցունք էր վշտանում, ավելին՝ վշտանում էր հումորով, ժպիտով։ Անվրեպ ինքնարնութագրում է «Երիտասարդության սեմին» գրքի վերջին տողերը. «Ժպտալով էլ կմեռնես ևս գիտեմ քո անտանելի բնավորությունը»։

Ինչ կարելի է պատկերացնել ավելի զարհութելի, քան 37 թվի զոհերի արսորական կյանքը, բայց կարդացեք Մահարու «Սաղկած փշալարեր» գիրքը՝ ծայրեիծայր հումոր (դա Անդրանիկ Սառուկյանն է հրապարակել իր «Նախրի» հանդեսում, առանձին գրքով առաջին անգամ լույս է տեսել Բեյրութում, 1986-ին)։

Ինչքա՞ն եմ լսել երկու Աճեմյանների պատմություններն անցած-գնացած օրերից։ Ուրախ բան քիչ կար դրանց մեջ, և ինչո՞ւ պիտի լիներ՝ Սիփան լեռան ստորոտում անցած վաղ մանկության պայծառ օրերից հետո՝ ջարդ, գաղթ, սով, որբանոցային կյանք, Մահարու բանտարկությունը, աքսորը... եվ էլի մտարերում էին ծիծաղով, ամենաքիշը՝ ժպիտով, դա էր նրանց մտածողության ձևը, որ նրանց մտերմացնում էր ավելի։

Գրականության մեջ նշվում է, թե վարդան և Գուրգեն Աճեմյանները երկու եղբոր զավակներ էին։ Մահարին էլ կարճ՝ այդպես է պրել։ Այդպես չէ։ Գրեմ ստույգը. Օհաննես

աղան ունեցել է երկու որդի՝ Համբարձում և Գրիգոր։ Համբարձումն ունեցել է Մկրտիչ որդի, որի զավակն էր Վարդանը։ Իսկ Գուրգենը որդին էր Գրիգորի։ Առաջինն, ուրեմն, Օհաննեսի ծոռն էր, երկրորդը՝ թոռը։

Սա՛ իրքն ճշտում, բայց էականը դա լէր, այլ այն, որ նրանք, գրեթե հասակակիցներ (Գուրգենը 1903-ի ծնունդ էր, Վարդանը՝ 1905-ի), միասին էին անցրել իրենց ռուկեժամանկությունը»։

Մանկություն իմ ռոկեժամ,

Մանկություն իմ, որ անցար

նոր ձլած արտից...

Նրանք միմյանց մեջ իրենց մանկությունն էին սիրում, իրենց հերթափայլին վանն էին սիրում, իրենց Ալգեստանները, Սիփանը։ Իրենց համատեղ ապրած երիտասարդությունը¹։

1 Գրեմիս, երբ թերթում էի անցյալ տարգա ամսագրերը, աշխատ ընկազ մի հուշագրություն շքեղ վերնագրով։ «Հերթափայլն աշխարհի լուսաբացը։ Հեղինակ՝ Արտավազը Արքանամքան, որ վերապատճել է ուսուցչուհի Թեոդրիկ Ենիքակունու (Խուրանոյանի) հուշերը։ Այստեղ իմ շարուդրանքում հիշվելու արժանիք մի դրվագ կա։ 1926-ի հոկտեմբերի 22-ի ավերից երկրաշարժից հետո հենրեական է զայլին Զարենցը մի քանի դրոշի հետ։ Այցելում հե հիմանդրանոցում պատկած Շուշանիկ Կուրդինյանին, այնուհետեւ։

— Այժմ զնանք մեզ մոռ,— ասաց Գուրգեն Մահարին Հիմանդրանոցից զուրս գալուց հետո։ — Մոսկվայից արձակուրդ է եկել Հորեցը որս որդին՝ Վարդան Անձմյանը։

— Այն դերասանն ու նկարինը, — Հարցրեց Զարենցը։

— Հենց նա։ Մովասամ է մենք։

Գուրգեն Մահարին հարկացը տուեց գտնվում էր նույն շենքում, որտեղ ապրում էր Մահարին։ Հարեաններ էին։

Հասակ առած տղամարդիկ՝ նրանք նման էին շարաճճի մանուկների։ Ջրուցի ժամանակ հանկարծ մեկը կասեր.

— Քրմփո՞ստ մեռել ա՛...

Քահ-քահ՝ կծիծաղեին երկուսով։ Հարցնում էի՝ դա ի՞նչ է նշանակում։ Զիին ասում։ Թե՛ մենք էլ շգիտենք։ Տարիներ անց բացատրությունը հայտնվեց Մահարու գրած «Էկարդան Աճեմյանի հետ» ուրախ-տրտում հուշերում։ Երեխաները հավաքվել են պատշզամբում «Բատրին խաղալու»։

«Ի՞նչ էինք խաղում, — հարցրեք Վարդանին։ Նրա կարգադրությամբ մենք բոլորս նստուում էինք այստեղ-այնտեղ, զինված փայտերով և համբերությամբ։ Խորին լոռություն, Պատշզամբում հայտնվում էր Վարդանը և հանդիսավոր ասում։

— Քրմփո՞ստ մեռել ա՛...

Ու բարձրանում էր մի անտանելի վայնասուն ու աղմուկ։ Ճշում էինք, դոփում ու աղմկում և... և երեի վարագույքն իշնում էր ու ներկայացումը վերջանում։ Ի՞նչ «Քրմփոստ» էր այդ և որտեղից էր մտել Վարդանի գլուխը, ևս շգիտեմ։ ինչ էլ որ լինի, երեկի այդ պետք է համարել Վարդանի առաջին բեմադրությունը։ Այս բեմադրությունը նշանավոր էր և նրանով, որ նա և պիհեսի հեղինակն էր, և ոեժիսորը, և դերակատարը՝ միաժամանակ։ Ինչ անենք, որ ներկայացումը տևում էր ընդամենը տաս-տասնհինգ դժոխային բռպեկ...

Վարդան Աճեմյանը մեզ դիմավորեց մուտքի առաջ։ Ռոբախ-Ժապան, կորճ աղա էր։ Հրավիրեց ներս։ Մալլը պարզապես ցնծությամբ ընդունեց Զարնցինցին։ Զրուցն ու հաշկերությը տևեց մինչև ուշ գիշեր։

Հաշորդ օրը ցերեկվա գնացրով մենք Զարնցին ու Արփիկին ճանապարհեցինք Երևան։ («Առվետական գրականություն», 1986, № 12, էջ 96)։

Հետո... հետո ի՞նչ պատահեց. մի վիթխարի սկզբանուր իջավ ամրող քաղաքի վրա, մի օրվա մեջ դատարկեց վանը, և փոքր ու մեծ վանեցիները բռնեցին իգղիրի, էջմիածնի, Երևանի ճանապարհը:

— Քրմփո՞ստ, մեռել ա՞...¹!

Ասված է՝ տաղանդը հասուն տարիքում երեխա մնալու, մանկությունը շկորցնելու հատկությունն է, մանկաբար զարմանալու, հիանալու հատկությունը։ Աճեմյանների դեպքն էլ դրա հաստատումն էր։ Եթե Վարդան Աճեմյանը մի բան շատ ուներ, ապա տիկնիկներն էին, — այստեղից այնտեղից առած, — որոնցով լեցուն էր իր տանը գրված ոռյալի ամբողջ մակերեսը։ Զեռը կառներ որևէ մեկը՝ կնայեր հրճվանքով։ Մահարին ընտիր գրվածքներ շատ ունի, բայց ամենից հուզիլը «Մանկություն և պատանեկությունն» է՝ մանկան հոգերանության անխարդախ արտացոլմամբ։ Աճեմյանի բեմադրություններում բիշ բան կա երեխայական անկեղծությամբ արված։

Թվում է՝ այսօրինակ բնավորություններն ասող-խոսող պիտի լինեին։ Միանդամայն հակառակը։

Մեկ էլ (այդպես հաճախ էր լինում) Աճեմյանը կընդհատեր զրուցը և՝ չգնա՞նք Գուրգեն-խանի մոտ։ Կարծես անհետաձգելի բան ուներ ամելու։ Կզնայինը, Կնստեին անխոսիրար երեսի նայելով։ Այդպես երկար ժամանակ նրանք «խոսում» էին առանց խոսելու, նման ամերիկահայ բանաստեղծունի Գայանա Տեր-Հովհաննիսյանի գրածին։ Երբ երկու հայ

¹ Այս հուշագրությունը, որ Դուրգեն Մահարին գրած վառ էջերից է, առողագրվել է «Սովորական արքեստ» ամսագրում (1973, № 7):

լուր նստած են իրար հետ՝ դա չի նշանակում, թե նրանք չեն խռում:

Բավականություններից մեծագույնը չէր նրանց «զրուց-ների» ունկնդիր լինելը։ Առանց այն էլ խոսքաշեն մարդիկ չեին, նրանք չեին պատկանում քեզի սեղանը խոսք ու զրուց-ցով զարդարող մարդկանց թվին, բայց կարող էին լինել և կատարելապես անխոս։ կարծես իրենց խոսքն ու սրամտությունը թարցնում, պահում էին գրվածքների ու բեմադրությունների մեջ շաղ տալու համար։ Ես՝ հակառակ խառնվածքի մարդ՝ արի՝ ու դիմացիր Եվ ինչո՞ւ էր Աճեմյանն ինձ անպայման քարշ տալիս իր հետ։ Որ մենակ չգնա՞։ Այո՛ Բայց ուրիշ պատճառներ էլ կային։ Մեկ, որ իմ ներկայությունն անհաճելի չէր Մահարուն և ապա՝ ես, նրանց լոռությանը շղիմա-նալով, ստիպում էի, որ խռոն, բացվեն, մտարերեն։

Մեր մտերմությունը նախապատմություն ուներ։

Գուրգեն Մահարին, ինչպես Վաղարշակ Նորենցը, Մկրտիչ Արմենը, Վահրամ Ալաղանը, առաջին անգամ արսորից ազատ-վեցին ու Երևան եկան 1947-ին, իրենց ազատազրկման տա-սը տարվա ժամկետը լրանալուց հետո՝ օրինական կարգով (իբրև թե ազատազրկումն օրինական կարգով էր արված)։ Նրանց հետ շփումներ ունենալն այնքան էլ անվտանգ բան չէր. ո՞վ ժամանակներ, ո՞վ բարքեր... Զարենցի երգիծական վերաբաղրությամբ՝ օ տե՛մպորա, օ մո՛ռես, օ Զանգեղու-րոգորիս... («Կապկազ. թամաշավ»)։

Զգողական ուժ ունեին ազատագրված արսորականները, ամենից շատ «Մանկության ու պատանեկության», «Մրգա-հասի» հեղինակը։ Եվ, ոչինչ հաշվի շառնելով, դեպի Մահա-րին էին ճգվում երիտասարդները՝ Դավթյան Վահագնը, Հովհաննիսյան Հրաշիկը, Աղաբարյան Սուրիկը, Թամրազյան

Հրանտը... նաև ես՝ Աճեմյանից անկախ և մանավանդ՝ կախված: Բնականաբար՝ խմիչքի պարտադիր ուղղեցությամբ, որի հանդեպ, մեղմ ասած, անտարբեր շէինը ոչ մեկս, Մահարին էլ մեզ հետ (միակ ժուժկալն Աճեմյանն էր): Մեր հանդիպումներն անցնում էին շափառանց հետաքրքիր, որովհետև շփման եղբերը շատ էին:

Օրերից մի օր էլ, կարծեմ թե երկու տարի անց, մեր անմեղ մեղավորներին արսորեցին վերստին: Ինչո՞ւ, պատմառն ի՞նչ էր, իրավական ի՞նչ հիմքով՝ հարցնողն ո՞վ էր. օ տե՛մպորա, օ մո՛ռես...

Եվ մեկ էլ, ճիշտ նույն կազմով, արսորականները կրկին անգամ վերադարձան 1954-ին՝ հանճարեղ առաջնորդի, ժողովուրդների հոր, բոլոր ժամանակների մեծագույն զորավարի անժամանակ, իրոր որ անժամանակ՝ ոչ թե վաղաժամի, այլ հակառակ իմաստով, մահվանից հետո:

Նախքան բնակարան ստանալը Մահարին, կնոջ՝ լիտվուճի Անտոնինայի (արսորում էին ամուսնացել) և որդու հետ, ապրում էր «Խնտուրիստ» (այժմ «Երևան») հյուրանոցում: Ինչ կարող էր լինել ավելի հիշտ ու հարմար: Աճեմյանն իր կըրտսեր ընկերներին (ես էի, Սարիր Թիգակը, Սարգիս Արուտչյանը, Մարտ Մարինոսյանը) առած զրադեցնում էր սեղանը և՝ Մահարուն կանչեց: Ինչքան էլ հիվանդ լիներ գրողը, ինչքան էլ հոգատար կինը դիմադրեր, դեմ լիներ «Ժյուրիի նիստերին» (այդպես էինք կոչում մեր հավաքները), Մահարին գալիս էր հաճույքով, նստում, օղու բաժակն իսկույն հայտնվում էր առաջին: Եվ ինչպես կարող էր շգալ, այդքան տարիներ հեռուներում թափառած, օտարություն քաշած մարդն ինչպես կարող էր շուղենալ Աճեմյանի հետ, իր արգեստի երիտասարդ երկրպագուների հետ լինել: Կարդին

մտերմության էր ստեղծվել: Իր երկերի նոր լույս տեսած հատորը Մահարին նվիրեց «Ժյուրիի» բոլոր անդամներին:

1957-ի մայիսի 14-ին ևս գրողների տանը զեկուցում կարդացի Մահարու ստեղծագործության մասին՝ 1956-ի վերջին լույս տեսած «Երիտասարդության սեմին» երկերի ժողովածությունը: Դա, կարծիք, գրողի երկերի բննարկմանը նվիրված առաջին և վերջին երեկությը եղավ գրողների տանը՝ արսորից վերադառնալուց հետո: Իմ զեկուցումը՝ «Մահարու գրից» վերնագրով, լույս տեսավ մեր գրական ամսագրում և իմ հոդվածների գրքում¹:

Անցան ժամանակներ, Մահարին բնակարան ստացավ, նյութապես ապահովվեց, դարձավ Երևանի սովորական մի բնակիչ, կարծես ո՞չ աքսոր էր եղել, ո՞չ բան: Գրավեց իր տեղը «գրական դիրքերում», ինչպես ասում են՝ կրակի առաջին գծում: Ամենից մարտական, ամենից շատ կրակահերթ արձակող, միայն իրեն պատկանող, մինչև օրս թափուր մնացած տեղը. մշտապես համարձակ ու նախահարձակ, անողոք, բարեկամ ու հակառակորդ շհարցնող, ոչ ոքի, մանավանդ քննադատներին շխնայող: Ինձ ևս՝ իր մտերիմներից մեկին: Քանի՛ անգամ է հեգնել, այպահնել առօրյա քննադատությամբ շզբաղվելուս համար: Ահա մի նմուշ. «Լեռն Հախվերդյանը գործն այսպես է դրել, որ պետք է խոնարհարար շնորհակալություն հայտնես, երբ նա առիթից առիթ մոտենում է այս կամ այն գրողին... Զէ» որ նա զբաղված է, արվեստարան է, թատերագիտ...»²

Նման բանները չէին խանդարում, որ մեր հարաբերություն-

1 Հետաքրքրվաղի համար. «Երկեր» և կերպարներ, Երևան, 1964, էջ 107:

2 «Գրական թերթ», 1964, 30 հոկտեմբերի:

ՆԵՐԻ շարունակվելին կատարելապես անստվեր, մինչեւ որ Մահարու մտքով անցավ պիես գրել: Եվ գրեց շատ արագ, ոտքի վրա, ինչպես գրում էր ամեն ինչ և, ինչպես միշտ, անփութ անհոգությամբ, որ իր տաղանդի հատկանիշն էր: Այդպես՝ դուրս կդար կամ մ առաջնակարգ գործ, կամ² ո՛չ առաջին կարգի: «Մարդը մարդուն» պիեսը հեռու էր առաջնակարգ լինելուց¹: Կարդացի, այդպես էլ ասացի: Հեղինակը, ինչպես հեղինակներն առհասարակ,— Մահարին էլ բացառություն չկազմեց, — ասած շընդունեց: Նպաստավոր կարծիքն, իհարկե՛, կընդուներ: Աճեմյանը շատ լավ էլ տեսնում էր, որ ես եմ իրավացին, բայց չէր ուզում խստավանել:

Երբ ես նրան բացատրեցի, թե ինչու այդ պիեսը համարում եմ Մահարու գրչին անարժան, մակերեսային գործ, իս համամայն շնորհվ:

— Եթե շարգելեն՝ կսկսեմ:

Անցան օրեր, ասում էր՝ դեռ Մահարու պիեսն էլ պիտի թեմադրեմ, անհարմար է, չէ՞...

Անհարմարության զգացումն էր տանջում նրան. Գուրգենիանը պիես գրի ու ինքը չընմադրի:

1965-ի ապրիլի 2-ն էր, գնացի Աճեմյանի տուն՝ բացատրություն տալու, թե ինչու երեկ չէի գնացել թատրոնի գեղարվեստական խորհրդի նիստի՝ Մահարու պիեսի քննարկմանը. դեմ խոսել չէի ուզում, կողմ խոսել՝ չէի կարող:

— Այդպես էլ հասկացա, ասացի՝ լենինական ես գնացել:

Սա էլ ձեզ գրողի, քննադատի, արվեստագետի հարաբերություններ՝ իրենց «նրբացուցիչ դեպք հանցանացներով»:

1 Հետաքրքրվողի համար. Գ. Մահարի «Հության ձայնը», Երևան, 1962, էջ 503.

Այդ օրը շատ ծիծաղեցինք Մահարու հեգնախառն հոգվածի վրա՝ զրված Սարգիս Մելիքսեթյանի «Մտերմական Շիրվանզագեն» հուշագրության մասին, որը, հոգվածագրի կարծիքով, շափաղանց էր դպուշամիտ:

Դեղարվեստական խորհուրդն, իհարկե, պիեսն ընդունել էր թայց դա բավական չեղավ գործին ընթացք տալու համար: Պատճառների մեջ երկրորդական չեր և այն, որ «վերևներում» էլ ոգերութած շէին պիեսով, բայց՝ զուտ «գաղափարական նկատառումներով»: Այնպես որ, Անհմյանն իրավացի էր, երբ մի խոսակցության ժամանակ պիեսը բեմ չհանելու պատճառներից մեկն էլ դա էր համարել:

Այդպես էլ պիեսը շրեմադրվեց, և չեմ կարող ասել, թե Մահարին շատ վշտացավ դրա պատճառով. վերջապես, թատերագրությունն իր բուն գործը չեր և ոչ էլ այդ պիեսն իր կյանքի գործը:

Վշտացավ, և անպատճելիորեն դառնագին, բոլորովին ուրիշ, անսպասելի պատճառով՝ իր բուն գործի, կյանքի գործի՝ «Այրվող այգեստաններ» վեպի:

Ընթերցող զանգվածը, հատկապես վանեցիները, ընդունեցին վեպը. ինչպես կարելի է գրել, որ եթե բզեզի բունը շրանդինք, այսինքն՝ ապստամբ Ահնեինք, կոտորած չեր լինի, ո՞ւր է վանի հերոսական ոգին, ո՞ւր են նրա քաջակորով հերոսները, ինքնապաշտպանության ոգեշունչ որվագները, փոխարենը՝ Օհաննես աղայի անքարո վարքագիծն ամենայն մանրամասնությամբ, սա՞ է վանեցին...

Հ «Առվետական արվեստ», 1968, № 2, էջ 24:

Մեղադրվում էր, և անխնա, ոլ թե արվեստագետը, այլ
քաղաքագետը:

Սրտի արյունով, հայրենիքի կորսայան մորմոքով զրված վեպ՝
և այսպիսի՝ մեղրանքներ: Սա ողբերգություն էր, հայ գրակա-
նության պատմության ամենառողբերգական էջերից մեկը:

Այս բազմակննիո խնդրի մեջ խորանալը մեղ շատ հեռու
կտաներ, դա մեր ազգային գիտակցության պատմության
շղթայի ամենից բարդ օղակներից մեկն է: Դրա տեղը Գուրգեն
Մահարու մասին գրվելիք գրքի մեջ է (խոստովանեմ՝ ես ուսեմ
այդ նպատակը): Այստեղ կասեմ այն նվազագույնը, որ չի
կարելի շասել:

Նախ Աճեմյանի վերաբերմունքը վկայեմ: Այս պատմու-
թյան ընթացքում նա մնում - մնում և ասում էր շվարած՝ հի-
մա ի՞նչ պետք է անել... վեպի մասին՝ հիանալի՝ վեպ է,
ինչպես է գրված՝ կենցաղը, մարդիկ, հարաբերությունները,
ոսկորուցինները: Վերջն է փշացրել՝ պատերազմ, կորիվ, Օհան-
նես աղան տանը նստած...

Ասեմ նաև այն, որ Մահարին մշակեց վեպը:

Ես մի նամակ ստացա Պալանգայից (կիտվա՝ կնոջ հայ-
րենիքը, ուր ամառները մեկնում էր գրողների ստեղծագործա-
կան տանը հանգստանալու): 1968-ի հունիսի 13-ի այդ նա-
մակում, որ սկսվում է «Սիրելի Լեոն Համառովիչ» մահարիա-
կան կոշականով, նա գրել է. «...Այդեստաններից մասին.—
ըստ բոլոր նկատողությունների հետ համաձայն եմ (զարմա-
ցա՞ր...), ևս շեմ մշակել վեպը, վերամշակել եմ և ներկա-
յացրել հատորային հրատարակությանը: Ես ոլ մի կասկած

1 Վեպի վերամշակած տարբերակը լույս տեսագ իրրե Դ. Մահարու
երկերի հինգհատողյա հրատարակության շորբորդ՝ «առորը» 1979-ին: Տեքստը
պատրաստել է Հայրական գրական ժառանգության նկատմամբ չափական

շունեմ, որ դու շատ գո՞ւ կլինես: Բայց ահա նոր պատմություն. Կհրատարակվի՞ առանց խմբագրական մկրատի, թե ոչ Առաջին ձայները լսեցի արդեն Երեանում.— «Արամին՝ ուս-բիլիտացիայի ես ենթարկելո». (վեպի վերջին մասում ալելացրել եմ տասը էջանոց մի գլուխ (ճիշտ է, ստացվեց շատ խիս և ուժեղ զլուխ...), ուր ես նկարագրել եմ Արամի վերջին գիշերը տեղահանվող Վանում, նրա ապրումները: Եվ ահա ծայր է առնում նոր զրույց մյուս ծայրից... Այդպես մտածողները կարծում են, որ Արամը պար պիտի գար, եթե Վանը դատարկվում էր... Եվ ի՞նչ կա զարմանալու, եթե մի այդպես մտածողի տան գրքի խմբագրությունը... Ազմկել, քննադատել բավական չէ, դու և քեզ նման մտածողներդ լուսնեցիներ չեք և պիտի հասկանաք, թե ինչ պայմանների մեջ է դրված գրողը...»

Այս մկրատի առկայությունը հենց քո նամակում էլ հիանալի կերպով երևում է. գրում ես, որ Փափազի մասին գրածս «Համով էր», բայց «մի լավ խուզեցի», գլուխդ Սարինյանի գիւղով ես տվել, որ «մուզկել ես», ին էլ «մի լավ...»:

Ի՞նչ արկեն, Մահարին իրավացի էր: Եվ՝ բոլոր առումներով՝ ինձ զարմանը և հիացմունք էր պատճառում ուժահատ մարդու այդքան զորեղ ստեղծագործական ոգին: Անհամար հիվանդություններն իրենց գործն էին անում, ոգին՝ իրենց Զի լինի որևէ շափազանցում՝ հերռակա՞ն ոգին, եթե ընդունենք, որ զրա միակ ասպարեզը ուազմի դաշտը չէ:

«Ոգին տեղի շտվեց, մարմինն էր, որ շղիմացավ:

Նախանձախեղիր զրուկանագիտ Գրիգոր Աճեմյանը: Հրատարակության մեջ նշված է. «Վեպը վերահրատարակման նախադատատելիս հաշվի են առնելի հեղինակի կողմից կատարված բոլոր մշտումները և հովվելումները: Արամ Մանուկյան— վանի ինքնապաշտպանիոն և վենակի հերու- մերից մեկը:»

Զարմանքը դա չէ, այլ այն, թե ինչպես է, որ այդքան զիմացավ։ Ողին պահեց մարմինը ևս մի տարի, մինչև որ 1969-ի հուլիսի 16-ին կյանքին հրաժեշտ տվին հոգի՞ն էլ, մարմինն էլ։ Պալանգայից բերին նրա դին և մեծ շուրջպահան տվին մայր հողին։

Դա վարդան Աճեմյանի (ոչ միայն նրա) կյանքի ամենածանր օրերից մեկն էր։

Գուրգեն Մահարին էլ դառնացած զնաց, նրան ևս շափուսացինք, շափուսացինք……

Մեր անողոք կյանքի անողոք արամարանությունը։



ԹԵԱՏՐՈՒՄ

ՎԵՐԶԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԿՈՐԱԳԻՍՅ

Ամինչ, ոչ մի իրողություն ինձ չի համակռւմ այնքան խորը հուզմունքով, իմ սիրտը չի ճմլվում այնպիսի կարեկցանքով, որքան մեծ և ազնիվ մարդու անկումը: Անկախ այն պարագայից, թէ անկման մեջ մեղքի որ բաժինն է պատկանում միշավայրին ու հանգամանքներին, որ բաժինը՝ հենց իրեն, իր բնավորությանը, վարքագծին:

Մարդկային մահկանացու կեցության ամենախորունկ իմաստավորումները նշանավոր ողբերգություններն են, և ողբերգական հերոսի խորտակման նախապատճառը ոչ միայն կյանքի հանգամանքներն են, այլև իր բնավորությունը, բայց դա չի խանգարում, որ կարեկից լինենք իր հանդեպ:

Նույնիսկ՝ ընդհակառակը:

Անտիգոնե, Մեղքա, Օթելլո, Համլետ, մեր Արա Գեղեցիկը...
ո՞րն է, որ չի ունեցել իր «ողբերգական մեղքը», բայց մենք
կարենից ենք նրանց հանդեպ, որովհետև իդեալի հերոսներ են
նրանք:

Պատմության մեջ, կյանքում՝ նույնը չէ։ Զորք Բայրոնի
վախճանը, Ալեքսանդր Պուշկինի վախճանը՝ այնքան անար-
դար ու անժամանակ, Եղիշե Չարենցի վախճանը՝ այնքան
սրտակեղեք, մեր իսկ աշքի առաջ Պարույր Սևակի խորտա-
կումը՝ այնքան անագորույն... Վախճաններ, որ այդպես չէին
լինի առանց իրենց անկասելի բնավորության միշտու-
թյան։

Եվ դա չի փոքրացնում, մեծացնում է մեր կարեկցանքն
անասելի, այնքան ավելի, որքան ավելի վսեմ, բարի, ազնիվ
են եղել այն իդեալները, որոնց համելու ճանապարհին ըն-
կել են նրանք։

Բարձր ոլորտներից մեր սովորական կեցությանը դառ-
նանք. մարդուն վերջին հրաժեշտը տալիս մենք ցավակից
ենք այնքան ավելի, որքան ավելի բարի է եղել նաև Սա է
կյանքի ու մահվան տրամաբանությունը, եթե միայն կարելի
է տրամաբանություն գտնել այդ անհմանալի բավիզներում։

Ես մեծ մահեր շատ եմ տեսել, բայց բոլորի կյանքի
գաղտնաբանները չեն, որ թափանցել եմ, որովհետև այնպես
չի եղել, որ մտած լինեմ նրանց կյանքի մեջ։

Կյա՞նք է, ապրել ենք, ինչպես պատահել է։ Հիշո՞ւմ եք
«Քառա» վեպի այն խոսքը, որ Սմբատն ասում է կնոջը.
«...մարդիկ ապրում են ոչ այնպես, ինչպես ցանկանում են,
այլ այնպես, ինչպես կարող են»։

Եղել են և նշանավոր մարդիկ, — նշանավոր՝ համենայն դեպս մեր հայ իրականության սահմաններում ու չափանիշներով, — որոնց կյանքի մեջ ես թեկուզն մի փոքր մասն եմ ունեցել. Ավետիք Խսահակյան, Վարդան Աճեմյան, Պարույր Սևակ, Ռաֆայէլ Խսրայելլյան, Գուրգեն Մահարի... Ծփումներ եմ ունեցել նրանց հետ մտերմաբար, թափանցել նրանց ներաշխարհը հանգամանքների բերումով՝ ակամա, առանց դրա նպատակն ունենալու:

Տարիներ անց միայն հասու եմ եղել, որ իրոք թափանցել եմ: Եվ, հասու լինելով, հոգուս պարտքն եմ համարել խոստովանել դա թղթի վրա, մտածելով, որ լավ չի լինի, եթե չանեմ, որովհետև այն, ինչ ես գիտեմ՝ ուրիշ ոչ ոք չգիտե, ուրիմն և նրանց թանկագին դիմանկարից կպակասի այն նրբագիծը, որ ինձ է պատկանում: Այդպես պետք է վարվի ամեն ոք, որ ունի դրա հազվագյուտ հնարավորությունը:

Ես ունեմ այդ հնարավորությունը վարդան Աճեմյանի վերաբերյալ՝ և առատորեն: Ուստի և գրում եմ այս գիրքը:

Ես ինձ օրորում եմ այն հույսով, որ մեր ազգային գեղարվեստական մշակույթի պատմությանն եմ հանձնում մի գիրք, որ ունի և արվեստաբանական, և բարոյական բովանդակություն, տալիս եմ մի վերին աստիճանի ինքնատիպ արվեստագետի գործի ու կյանքի պատկերը, որ իր ոգեշշունչ կողմերով պետք է ոգեշնչի հետնորդներին, ստվերուս կողմերով՝ լինի խրատական: Ինչ էլ որ լինի՝ նրանք կիմանան, թե ինչպես է ապրել, գործել և հասել իր վախճանին մի հայ մեծաշնորհ մարդ մեր ժամանակներում, մեր ժամանակի դրժկար հանգամանքներում: Իմ ճանաշողության սահմաններում և համեստ գնությամբ կճանաշվի մարդը, ժամանակը՝ նույնպես:

Ահա և հասել եմ գրքիս վերջին՝ հինգերորդ արարին, ոք ամենից անհանգիստն է, լարվածը, հուզախոռովը, ինչպես լինում են դրամայի վերջին արարները, և որ պետք է ներկայացնի արվեստագետի կյանքի վերջին տարիների կորագիծը, ինչպես եղել է: Ինչպես որ եղել է՝ անկախ այն պարագայից, թե դա որքանով է նպաստավոր կամ աննպաստ նրա կերպարի համար, առավել ևս՝ որ իրապես եղածն իր ճշմարտությամբ ի վերջո և վերջնական հաջվեկշուով իմ հերոսի օգախին է:

Ասենք, զրա մասին թող ընթերցողը դատի սևփական կոսհումով՝ դրվագ առ դրվագ կարդալով ժամանակին արածո զրառումները՝ դասավորված խստիվ ժամանակագրական կարգով:

«Եկեղին տարիների կորագիծ»՝ անորոշ է: Հարկավոր է ճշտել, ես աշքի առաջ ունեմ 1964-ից մինչև 1977-ի հունվարի 24-ը՝ մինչև Աճեմյանի մահն ընկած ժամանակամիջոցը:

Ինչո՞ւ:

Պատճառն այն է, որ իմ աշքում ուրիշ էր Աճեմյանը միեղև 64 թվականը, ուրիշ՝ դրանից հետո: 1964-ի «Մոմեռ և Զուլիկետ» ներկայացումից հետո արվեստագետի մեջ մի բան կորրվեց, նա կարծես թե կորցրեց ստեղծագործական ինքնավատահությունը: Մշտապես հաջողակ, ժպտերես, ինքնավատահութահ, անվերապահ հաղթանակների սովոր՝ նա իր կյանքի 60-րդ տարու շեմին փոխվեց իմ աշքում: Դրանից հետո էլ նա անհերքելի հաղթանակներ ունեցավ, բայց ավելի շատ պարտություն կրեց:

Եվ ընդհանուր զուգակշռի մեջ արդ տասներկու տարին ոչ թե վերելքի, այլ վայրէջքի տարիներ եղան:

Բնական, օրինաշափ է անխոսափելիորեն, որ այդպես էլ պետք է լիներ. ամեն սկիզբ ունի վերջ, ամեն վերելք՝ վայրէջք:

Ուրեմն, ի՞նչ զարմանք կամ ափսոսանք:

Զարմանքը շգիտեմ, բայց իմ խորին ափսոսանքն այն է, որ շատ բան կարող էր ուրիշ կերպ լինել, անպայման ուրիշ կերպ, եթե իր բնավորությունը մի քիչ ուրիշ լիներ և հայկական միջավայրը, երբեմն այնքան մանրախնդիր ու անողոք, մի փոքր այլ կերպ վարվեր նրա հետ:

Ես խոստացա իրողությունը ներկայացնել՝ մեկնությունը թողնելով ընթերցողին, բայց արդեն իսկ շնմ կարողանում խոստումս պահել: Սրանից հետո էլ դժվար թէ պահեմ: Բոլոր դերերից ամենալավը գուցե և անխռով դիտողի դերն է, բայց դա իմ դերը, թատերագիտորեն ասած՝ ամպլուան չէ:

Ի՞նչ որ է:

Պատրաստ եղեք կարդալու իմ ընդհատ-ընդհատ (ինչպես իմ հանդիպումներն են եղել) վկայությունների երկար շարքը և համակարգելու, իմաստավորելու ձեր մտքում:

Եվ այսպես...

1964, փետրվարի 4:

Գնացի թատրոն «Ռոմեո և Ջուլիետ» փորձերը դիտելու (Սունդուկյանի անվան թատրոնի խումբն այդ ժամանակ, ինչպես առիթ եղավ ասելու, մինչև իր նոր շենքի կառուցումը, ապաստանել էր Ստանիսլավսկու անվան թատրոնի շենքում):

Փորձում է ողբերգության առաջին մասը: Ինձ դուր է գալիս միջավայրը «հասարակացնելու» բնմադրիչի ակներև միտումը:

— Միտքս էն է, որ մինչև Թիբալտի սպանությունը կոմեդիա լինի: Խսկապես, ի՞նչ կա ոչ կոմեդիայի: Ուրախ հարաբերություններ, հետո միանգամից ամպը տրաքում է, ամենին ինչ շուռ է գալիս:

Ի վերջո դուրս եկավ մի ներկայացում, որի առաջին կեսը կրում էր մեծ արվեստի կնիքը, իսկ երկրորդը, որ հաջորդում է Թիբալտի սպանությանը և «ամեն ինչ շուռ է գալիս»՝ ազդեցություն չեր գործում: Ծովեռն (Խորեն Աբրահամյան) և Զուլիկետը (Մետաքսյա Սիմոնյան) շնորհանդեսում ապրումների ողբերգական շիկացման:

Դրա վատանգը երևում էր արդեն փորձերի ժամանակ: Ընումնոյի արտաքին պլաստիկան ու դինամիկան զգացմունքների ներքին պաշարով շեն հավասարակշռվում:

— Այո՞, պիտի՞ աշխատել: Պլաստիկան կոմպենսացիա տի՞ անի:

Կասկածում եմ, խելոք է, խաղում է հասկանալով, բայց սիրու էլ պետք է լինի, Ընումնոն զգացմունքի դեր է:

— Ֆրունզիկն էլ խելոք է, բայց զրանց մեջ մի ծուռ բան կա:

Եվ հետո՝ իբրև առարկություն.

— Թատրոնը լսելու արվեստ չի, տեսնելու արվեստ է: Առաջ աշբի համար է, հետո՝ ականջի: Այդպես էլ ասվում է՝ գործողություն:

Բնավ համաձայն շեղա, երկուսը պետք է լինեն հավասարապես, բանի որ խոսքն էլ գործողություն է, այդպես էլ ասվում է՝ խոսքի գործողություն:

1964, ապրիլի 15:

«Ծովեռն և Զուլիկետի» վերջին փորձերը:

Գլխավոր դերակատարները խաղում են գուտ վարպետությամբ։ Այդպիս, երեք, ամեն ինչ կարելի է խաղալ, բացի «Ռոմեո» և «Ջուլիետ»։

Մետաքսյան թարմություն շունի, տեխնիկայով է խաղում, հուզական թրթիռ, անկեղծություն չկատարում է թույնն այնպես է խմում, ասես ամեն օր թույն է խմել։ Սանր համաձայնություն՝

— Էդ ճիշտ է։

Միայն դա չէ, որ ճիշտ է։ Եվ ամենից ճիշտը՝ առանց թըրթըրություն զգացմունքների ընդունակ նորահաս դերակատարների ի՞նչ «Ռոմեո» և «Ջուլիետ»։

1964, Հունիսի 11։

Գնացի թատրոն։ Նախորդ օրը դիտել էի «Պաղտասար աղքարը»։ Գոճ շեմ։ Ներկայացումը մաշվել է։ Չի հակառակում։

— Բորբոսնել է, պետք է նորից անել։ Լավ է առում Սուրենը, թե Պաղտասար պետք է Խորենը լինի, Ֆրունզիկը՝ Կիպար։

Սիժաղում է իր օրիգինալ դատողություններով աշքի ընկնող նկարիչ Սուրեն Ստեփանյանի առաջարկի վրա, բայց և անիմաստ չի համարում։ Հետո էլ թե՝

— Արի «Ռոմեոն» նորից նայիր, փոփոխություններ եմ արել, ննջարանի պատկերը որ՝ հիմնովին փոխել եմ։ Պիտի մի անտրակատով վերջացնել, թե չէ վերջում բան չի մնում։

Այնպես կոտրված էր խոսում, որ համարձակություն շունեցա ասելու, թե դրանով դրությունը չի փոխվի, բանը գըլիավոր դերակատարներն են, ոչ թե բեմադրական լուծումները։

Կարծես Աճեմյանին ավելի վշտացնելու համար ներս ընկավ բուժետապան կինը, թե բաժակները տանում են, հատը վեց կողեկ արժի, էս ի՞նչ ժողովուրդ է: Աճեմյանը վրդովեց՝

— Բա ասո՞ւմ ես, բա արժի՝ դրանց համար տանջվել, շարշարվել, դե հիշիր էն հանդիսատեսին...

Այսինքն՝ մոռկովյան ուշիմ և ուշադիր, կիրթ, երախտագետ հանդիսատեսին: Հանդիսատեսը՝ թատրոն ստեղծող երրորդ պարտադիրը՝ դրական հիմքի և դերասանի հետ միասին: Այստեղ էլ սիրո շարի ասել, որ թատրոնն էլ իր հանդիսատեսն է ստեղծում իր ներկայացումներով: Առանց այն էլ սիրոը կոտրված էր:

1964, նոյեմբերի 8:

Իր տան եմ թատրոնում երկու օր տեսած այն ժողովից հետո, ուր քիչ է ասել՝ թունդ քննադատել, ժանր, անվայելուշ խոսքերով դատավիետել ևն գլխավոր բեմադրիչին:

Որոշել է այլևս շնորհ թատրոն: Որոշմանը հաստատ է մնացել միայն երկու օր:

— Կանչեցին մինիստրություն, պարտադրեցին, ասացին, որ իմ պահանջները կկատարվեն, համոզեցին: Այսօր Հակոբ Խանջյանը հավաքեց բոլորին, իրեն զիրեկատորի փոխարինող, ճառ ասաց, թե պետք է հենվենք ընդունակ ուժերի վրա, կան հանիրավի քիչ ստացողներ և հակառակը, պետք է կարգի բերենք և այլն:

Այսպիս, ամեն ինչ մնաց նույնությամբ: Նման վիճակներ ծնող պայմանները՝ նույնպիս:

1964, նոյեմբերի 24:

Մոռկավայից վերադարձել է անառողջ, ձեռքն ուսումնական:

տրամադիրը: Առաջին անգամ ստացած ծերացող մարդու տպավորություն: Դառնացած է թատրոնում տիրող տրամադրությունից, որ, մեղմ, ասած, ի նպաստ իրեն չէ:

— Չե՞մ գնա թատրոն:

Եվ մեկ էլ, կարծես այդ խոսքը շեր ասել՝

— Կարելի է Յակուտին և Լեկարսին¹ հրավիրել, թող խաղան մեր ներկայացման մեջ: Կարելի է և ներկայացումները փոխանակել:

Չարեց ո՞չ մեկը, ո՞չ մյուսը:

1964, գեկտեմբերի 5:

Սարգիս Բայանդուրի և Լուսն Ներսիսյանի հետ գնացինք հիշանդ Աճեմյանին տեսության: Առույգ է, կատակում է, բայց խորքում կա մի կոտրված բան, անփարատելի թախիծ:

— Կուզենայի թատրոնից դուրս գալ, բայց շեն թողնի: Իրո՞ք կուզենար:

1965, Հունվարի 5:

Գնացել ենք օդակայան թատերագետ Գրիգոր Բոյաշիկին զիմավորելու:

Նստում ենք սուրճի: Աթոռներից մեկը մեջք շունի:

— Ես էլ շունեմ մեջք, ոչ ոքի շի կարելի հավատալ: Բացի քեզնից:

Ասում է և ժպտում խորամանկ: Հեգնո՞ւմ է:

Ես արժանապատվության կոչ եմ անում՝ այդքա՞ն վիրա-

¹ Մուսկվայի օրբելովայի առևտնան թատրոնի «Պազտառ» ազգարանի աշխատացման Պազտառարի և Օգսենի դերակատարները:

վորեն և էլի՞՞ գնաս թատրոն։ Մի՛ գնա։ Զեր արժեքը գլխավոր
բեմադրիչի պաշտոնի մեջ չէ, այլ բեմադրիչի արվեստի, ամեն
տեղ էլ կարող եր բեմադրել։ Ասում էիր, չէ՞՝ ո՞ր փողոցի անկ-
յունում էլ կանգներ՝ թատրոն կստեղծվի, դե՛ կանգներ, էլի՞։

— Զե՞ն թողնի, ասում եմ։
Զե՞ն թողնի, թե չի ուզում։

1965, Հունվարի 7։

Ամեն ինչ ավարտվեց «գեղական կարգով»։
Նստած ենք «Արմենիա» հյուրանոցի Բոյաջիկին տրված
համարում, պատմում են երեկ ինչ է եղել. կուլտուրայի մի-
նիստրը թատրոնի ընդհանուր ժողովում ներկայացրել է թատ-
րոնի նոր դերիկտորին։ Հետո Աննելյանը մի հինգ րոպե խո-
սել է առաջիկա ծրագրերի մասին՝ կարծես ոչինչ չի պատա-
հել։ Տարակուսանքով նայում եմ իրեն՝ եղա՞վ։ Ժպտում է՝

— Ուրիշ կերպ լինել չեր կարող...
Ինչո՞ւ չեր կարող՝ չեմ հասկանում։

1965, Հունիսի 4։

«Արա Գեղեցիկի» դիտումին հաջորդեց գեղարվեստական
խորհրդի քննարկումը։ Ի շարս ուրիշների, ևս ևս քննադատում
եմ ներկայացումը՝ պարզունակ հակադրություններ, ավելորդ
փարթամություն, բեմադրական ճոխություն, չկա ողբերգա-
կան շունչ և այլն։

Մի քանի օր անց հանդիպեցինք։ Սաստիկ նեղացած է,
ևս ևս՝ ձեր գերին հո չե՞մ, լավ չի, ասում եմ լավ չի։ Մի քիչ
փափկում է՝

— Ասա կան այսպիսի թերություններ, բայց դու ոչ մի

լավ բան չես տեսնում: Խորհրդից դեռ տուն շհասած՝ ասում
են ներկայացումը ջարդել են:

Սա է Աճեմյանի դժգոհության վերին աստիճանը: Համե-
նայն դեպք՝ իմ հանդեպ:

1965, հունիսի 5:

Դնացի իր տուն վիճակն իմանալու. սանդուղքով բարձ-
րանալիս ընկել է, ոտքը սաւտիկ վնասել:

Բժիշկը եկավ, միջին տարիքի մի մարդ, զննեց և ասաց,
որ ապաքինմանը դեռ շատ պիտի սպասել: Անհանգստացավ՝
ինչպես թե, այնքան անհետաձգելի գործեր կան...

Դուրս եկավ, որ բժիշկը խելացի և կոպտորեն շիտակ
մարդ է:

— Դու հիմա պետք է ձեռներդ մեջքիդ ման գաս, մյուս-
ներն անեն՝ Աճեմյան երկրորդը, երրորդը, չորրորդը... Եթե
մի տասնհինգ Աճեմյան շլինի՝ դու ինչի՞ն ես պետք:

Այսպես պարզ ու հատու Բժիշկ,— ասացի,— ձեր այդ
խոսքը պակաս կարևոր չէ, քան բուժումը:

Բժիշկը գնաց, մինք մնացինք իրար երեսի նայելիս: Sh-
սա՞ր, ինչպես մատը դրեց վերքին, ա՞յ քեզ բժիշկ:

Եվ ի՞նչ եզրակացություն:

Ոչ մի, առաջին անգամը չէ, որ լսում էր նման կշտամ-
բանը, թեև ոչ այդ աստիճան անողոք:

1967, փետրվարի 9:

Հանդիպեցինք կուլտուրայի մինիստրությունում: Բարկա-
ցած ևտուառաջ է անում միշանցքում: Ի՞նչ է պատահել: Նա-
խարարը մերժել է իր ազատման դիմումը:

Թատրոնի գործերն իրոք լավ չեն, թատերախումբը դըժ-գոհում է, և իրավամբ, բայց զլխավոր բեմադրիչ Աճեմյանը մեղավոր համարում է թատրոնի տնօրեն Գուրգեն Զանիքեկյանին, իսկ վերջինս՝ զլխավոր ոնժիսոր Աճեմյանին:

Մինխտրն ի՞նչ ասաց:

— Ասում է կստեղծենք ոնժիսորական կուեգիա Զանիքեկյանի ղեկավարությամբ:

Աւրեմն, նպատակն այն է, որ Աճեմյանը զլխավոր բեմադրիչ լինի:

— Հա՛, էղակե՞ս է դուրս գալիս:

Աճեմյան-Զանիքեկյան ալլանսից էլ բան դուրս չեկավ Սրանց ջրերը մի առվով շնուրում էն գնում: Մեղավոր են և մեկը, և մյուսը: Ի վերջո կնճիռը լուծվեց՝ տնօրեն կարգվեց Մխիթար Դավթյանը, Աճեմյանը մնաց զլխավոր բեմադրիչ:

Սա, երեի, ամենից միշտն էր ստեղծված պայմաններում, թեև դա էլ ծնեց ուրիշ հակասություններ...

1967, մարտի 18:

Ենթադրվում էր, թե Ժորա Հարությունյանի «Ղազարը գնում է պատերազմ» կատակերգությունն ինքը պիտի բեմադրի: Պիեսը հավանում է, բայց երկու բան դուր շի գալիս՝ քաղաքական դիրքորոշման միագիծ կոպտությունը և ֆակտուրան, որ շատ է հասարակ, կենցաղային: Կարելի է երկու կերպ բեմադրել. մեկ՝ «մոդեռն», պիեսը մաքրելով, բարձրացնելով, բայց կենցաղը խանգարում է:

Հիշեցրի՝ կենցաղը շխանգարեց «նամուսի» հարսանիքին:

— Ես դեռ չհասա իմ ուղածին՝ պետք է լիներ ավելի անհանգիստ ենթատերատ, ավելի սահմուկեցնող հարսանիք: Այս-

տեղ էլ՝ լինի ոչ թե սովորական կենցաղ, այլ՝ մութ, մոմեր, խորհրդավոր միջավայր...

Ինձ տարօրինակ թվաց իր ասածը՝ անհնար է, պիեսը, զրեթե ֆարսային կատակերգություն, նման բաներ չի ընդունի օրգանապես:

Մտքովս անցավ, թե ինձ խոսեցնում է, կատակ է անում՝ մյուս կերպն ասելու համար.

— Մյուսը լուրոկային ներկայացում. ժողովրդական կենցաղ, բայց շեշտված, շափազանցված, շարուխն էլ շափազանցված: Գյուղական կենցաղ, բայց այնպես, որ թրիքն էլ հմայք ունենաւ: Մի անգամ տեսել եմ «Բլոխա»-ն կուստողիկի ձևավորմամբ՝ գմբեթավոր եկեղեցիներ, սարաֆաններ և այլն: Այստեղ էլ լավ նկարիչ է պետք:

Սա ուրիշ բան: Սա ոգևորեց ինձ: Թատերագիտական գրականությունից ինձ ծանոթ էր Ալ. Դիկիի բեմադրած և Բ. Կուստողիկի ձևավորած «կու» («Բլոխա») բեմադրությունը (արված 1925-ին՝ Լեսկովի Հայտնի պատմվածքի հիման վրա), 20-ական թվականների Մոսկվայի հոչակավոր ներկայացումներից մեկը: Աճեմյանը դա տեսել էր 1926-ին և ուժեղ տպավորություն առել: Հիմա տեղը եկել էր մտարենելու: Բայց նրան չվիճակվեց իրագործել այդ մտահղացումը: Թատրոնի տնօրեն Միխիթար Դավթյանը հարմար գտավ այդ պիեսի բեմադրությունը հանձնարարել Հրաչյա Ղափլանյանին, իսկ Աճեմյանին թողնել Ա. Պապայանի «Աշխարհն, այո՛, շուռ է եկել» կատակերգությունը (որի այս վերնագիրը գտնվեց Հետո, բեմադրելու ընթացքում): Եվ, ըստ երևոյթին, ճիշտ վարվեց, թեև Աճեմյանը բողոքեց դրա դեմ: Ղափլանյանի բեմադրությունը, Մհեր Մկրտչյանի գլխավոր դերակատարությամբ,

մեծ հաջողություն գտավ: Անեմյանի բնմադրության հաջողության մասին իր տեղում (նրբորդ գլուխ) արդեն ասել եմ:

1967, ապրիլի 1:

Թատրոնում, իր առանձնասենյակում: Արդեն հակասության մեջ է անօրեն Մխիթար Դավթյանի հետ: Յուց տվեց իր զիմումը, ավելի ճիշտ՝ բողոքը, թե ինչու Ժորա Հարությունյանի պիեսը տվել են ոչ թե իրեն, այլ Զափլանյանին, թե իրեն հաշվի չեն առնում և ինքը հետևություններ կանի:

Հետեւություններ շարեց:

1967, ապրիլի 28:

Դժգո՛ւ էր վիճակից էլ, «Բեկում» պիեսի բնմադրությունից էլ, Մխիթար Դավթյանից էլ:

Ասում եմ առանց խնայելու՝ դուք չպետք է հետ նայող արվեստագետ լինեիք, մինչդեռ, խնդրեմ՝ «Բեկումը», հիմի էլ մտադիր եք՝ «Խելթից պատուհասը», մողեռն բան չեք ուզում անել:

— Կարելի է հին գործը մողեռն անել և հակառակը:

Բայց պիեսի ընտրությունն էլ մի բան նշանակո՞ւմ է, թե ոչ:

— Իսկ ի՞նչ պիտի ընտրեի:

Բրեխտ, Միլեր, Ռիլյամս, Դյուրենմատ...

— Սրանից հետո կանեմ:

Հեղնանքով է ասում, իհարկե, և իզուր: Տուն է գնում: Ես թատրոնից դուրս եկա մի բառորդ ժամից: Տեսնեմ՝ փողոցում ձեռքը պարզած մեքենա է կանգնեցնում (անձնական օգտագործման մեքենա չունի այլնս): Տիսուր, շատ տիսուր էր դիտելը:

1967, Հոկտեմբերի 25:

— Մինիստրը¹ համոզում է լենինականի թատրոնում միքան անել, թատրոնի գործերը լավ շնչ:

Տեղն էր մտարեկելու մկան և ցախավնլի առակը:

— Ասում եմ դրանով բան դուրս չի գա, թեկուղ մի լավ ներկայացում լինի՝ հետո ի՞նչ: Ասում եմ մի կուրս տա, շորս տարում պատրաստեմ, հենց որ նոր շենքը պատրաստ լինի², տանեմ դնեմ՝ թատրոնը պատրաստ է: Հներից հազիվ հինգ-վեց մարդ միանան 1928-ին այդպես եղավ՝ ստուդիայով եկանք նստեցինք՝ գարձավ թատրոն:

Այս միտքն ինձ դուր եկավ իրրե ծրադրային գործունեության հազվագյուտ օրինակ: Բայց դա էլ ի կատար շածվեց: Դրա փոխարեն Աճեմյանը մի քանի տարի կապվեց Լենինականի թատրոնի հետ, աշխատեց թատրոնի բեմադրությունների վրա, ջլառելով առանց այն էլ հատնող ուժերը: Ճիշտ է, լենինականի թատրոնը շահեց դրանից, բայց այդ շահն ավելի փոքր էր, քան այն վնասը, որ դրա պատճառով կրեցին ինքը և Սունդուկյանի անվան թատրոնը:

1969, Հունվար:

1968-ի դեկտեմբերի 18-ին կայացել էր Ն. Զարյանի «Արտավագդ և Կլեոպատրա» ողբերգության առաջին ներկայացումը: Ակներե ձախողում՝ փրուն հայրենասիրությամբ, գործողության և գործող անձանց վարքագծի անտրամարան ընթացքով, անտանելիորեն վերամբարձ խոսքով և նույնապիս

1 Կուլտուրայի մինիստր Կամո Ռուզումյանը:

2 Ասմենականի թատրոնի հին շենքը նույնպես հրդեհի հարակ էր դարձել:

Հոյսությամբ։ Կարճ ասած՝ գործի դրված արտահայտչական միջոցների առատության և ներքին աղքատիկ բովանդակության աղաղակող հակասություն։ Անկասկած, պատճառը գրական հիմքն էր։ Մինչդեռ այդ բնմադրության հետ ինչը ն' հույսեր էին կազում՝ «Արա Գեղեցիկի» 1946-ի բնմադրության հաջողությունը կրկնելու, Երևանի հիմնադրման 2750-ամյակի համաժողովրդական տոնախմբության օրերին հընդունելու հեռանկարով։ Բնմադրությունը հորելյանին հասցել հաջողվեց, բայց գործը չհաջողվեց առասարակ։

Լեռն այս անգամ էլ մուկ ծնեց։

Հայտնի բան է՝ հաջողությունն ակունքն է համերաշխության, անհաջողությունը՝ գժտության։ Նաիրի Զարյանը, անասելի բռնկուն բնավորություն, «Դրական թերթում» հանդես եկավ բնմադրությունն աշխանող և իր գործը պահծացնող հայտարարությամբ։

Զեռքիս տակ է Ամեմյանի թղթերի միջից դուրս բերված սեագիրն իր մի ելույթի, որ, ըստ երևույթին 1969-ի սկզբին, կարդացել է թատերախմբի առաջ. «... թատրոնը սիրով ձեռնարկեց «Արտավազդ և Կլեոպատրացի» բնմադրության աշխատանքները, որն իրականացավ ստեղծագործական դժվարությունների հաղթահարման ճանապարհով։ Սո հայտնությունը պիտի անհմ, եթե ասեմ, որ Ն. Զարյանի այս գործը զիջում է նրա «Արա Գեղեցիկ» բարձրարվեստ ողբերգությանն ամեն իմաստներով։ Չեմ թարցնում, մեզ՝ թատրոնի աշխատողներիս համար շատ անսպասելի էր Ն. Զարյանի այն հայտարարությունը «Դրական թերթում», ուր նա այն միտքն է հայտնում, թե իր ամենասիրած կամ ամենասուժեղ բանաստեղծական գործը համարում է «Արտավազդ և Կլեոպատրան», ավելացնելով՝ «սակայն ոչ այն վիճակով, որ ներկայացվում է Պ.

Սունդուկյանի թատրոնի բեմից»։ Տարօրինակ էր կարգալ այդ տողերը, քանի որ աշխատանքը տարվել է հարգելի Հեղինակի հետ, իր անժիջական մասնակցությամբ և եթե փոփոխություններ են եղել, ապա այդ ամենը կատարել է ինքը Հեղինակը և, մեր կարծիքով, «մեր» ասելով նկատի ունենք և Հեղինակի կարծիքը, թատրոնում գրական-դրամատիկական գործը միայն շահել է»։

Այնուհետև թատրոնի ղեկավարը ներկայացրել է առաջիկայում բեմադրվելիք գործերի ցանկը։ Սաղաթել Հարությունյան՝ «Միայն մարդն է ուղիղ քայլում» պիեսը, «Օթելոն», «Պատվի համարը», «Քաջ Նազարը», թումանյանի երկերից բաղկացած մի բեմավորում։

Թատրոնի գործերը լավ չէին, և Անեմյանն ուներ դրա գիտակցությունը։ Ահա ձեզ մեջբերումներ նույնպես 1969-ի սկզբին գրված ձեռագրից, որ, ըստ երևութին, նախատեսվել է հրապարակել թերթում։ «Անցյալ թատերաշրջանից մենք ինքներս դժգոհ ենք. մեր սպասելիքները շարդարացան, պատճառները մեկից ավելի են...», «Երբ խոսք է լինում անցյալ տարվա մասին, մեզ համակում է ծանր և անդառնալի կորուստի զգացումը, որ ապրեց մեր կողեկտիվը և ապրում է մեծ վահրամ Փափազյանի մահով»։ Մեծերը գնում են, իսկ նրանց թափուր տեղերը լցնել գտնել արժանավոր փոխարինողներ, դժվարին հարց է դառնում։ Հայտնի է, որ թատրոնը գտնվում է իր գոյության կեսդարյա սեմին, երկար ժամանակ ապրում է բարձր դերասանական ուժերի ճգնաժամ։ Այսպես է լինում աշխարհի բոլոր թատրոններում։ Սունդուկյանի

1 Վահրամ Փափազյանը վախճանելց 1968-ի հունիսի 5-ին։

թատրոնը բացառություն կազմել չէր կարող, և հիմա մենք ապրում ենք այդ դժվարությունը: Այդ գործը պահանջում է ժամանակ, համբերություն, նոր բարձրացող ուժերի նկատմամբ հավատ և բարյացակամություն: Ես այս խոսքերն ուղղում եմ հատկապես այն թատերասերներին և թատրոնի տեսությամբ զբաղվող ընկերներին, որոնք շատ են խոսում այս մասին և երբեմն էլ անտեղի ցուցադրելով իրենց շշիմնավորված հոռետեսությունը: Մինչդեռ Սովորված թատրոնը զուրկ չէ ապագա խոստացող տաղանդավոր ուժերից:

Այս անուրախ նախարանից հետո՝ շոայլ խոստումներ. «... թատրոնը նպատակ է դրել մասնակցելու Թումանյանի մեծ հորելիյանին հատուկ ներկայացումով: Այդ ներկայացման նյութ է ծառայելու մեծ բանաստեղծի գործերը, որոնց համադրումով պետք է ստեղծվի հորելիյանական ներկայացումը: Այստեղ պահանջվում են թատերական նոր ձեեր— արտահայտչական նոր հնարանքներ: Վազուցված մեր ցանկությունն է բնմադրել Դեմիրճյանի «Քաջ Նազարը»: Այս տարի, վերջապես, մենք այն կիրականացնենք»:

Եվ ի՞նչ:

Եվ ոչինչ, դրանք իրրե խոստում էլ մնացին:

Խոստումներն ի կատար շաժելու պատճառները շատ են: Երկուողն իր մտահղացումներից: Եվ ապա՝ ուժերի ջատումը, ապակենտրոնացումը: Հենց նույն ձեռագրի շարունակության մեջ նա հաշվետու է եղել նաև կենինականի թատրոնի վիճակի մասին. «Թատրոնը հաջողությամբ բնմադրել է Շիրվանղադի «Չար ոգին», Օստրովսկու «Անտառը» և Մոլիերի «Տարտյուֆը»: Հատկապես «Անտառը» ներկայացումն իր արժանիքներով կարող է համարվել արվեստի երևոյթ հանրապետության թատերական կյանքում: Դերասաններ Փա-

շայանն ու Արդումանյանը, դերասանուհիներ թովմասյանն ու թամրազյանը ներկայանում են մեզ նոր արժանիքներով! ... այժմ թատրոնն աշխատում է Գր. Տեր-Գրիգորյանի՝ մեր անվանի կոմեղիոգրաֆի նոր ժամանակակից պիեսի վրա, որ կոչվում է «ԱՌ ներվեր, ներվեր»: Այս նոր թատերաշրջանում թատրոնը բեմադրում է նաև Շեքսպիրի «Մակբեթը» և Սարոյանի «Խաղողի այգին» հուզական պիեսը: Այսպիսով, երաշխիքներ կան, որ կենինականի թատրոնը նոր թատերաշրջանը կդարձնի ստեղծագործական իմաստով նշանակալից մի թատերաշրջանա:

Վերջին երկուսը բեմ շնանվեցին: Բայց ուրանալու բան չէ, որ մյուս երկուսը՝ «Անտառը» և «ԱՌ», ներվեր, ներվեր» ներկայացումները,— դրանց մեջ հանդես էր գալիս այնպիսի մի առաջնակարգ և իր արժանի ճանաչումն ու գնահատությունը շգտած մեծաշնորհ դերասան, որ Արգո Արդումանյանն էր,— մի-մի երեսովիթ դարձան թատրոնի կյանքում: Իհարկեն, Աճեմյանի մասնակցությունը թատրոնի գործերին (նա վերոհիշյալ բեմադրությունների հեղինակը չէր, բայց բոլորի վրա էլ աշխատել էր իրեն հատուկ նվիրումով) նոր շունչ տվեց թատրոնին: Բայց հիմա խոսքը վերաբերում է արվեստագետի ուժերի ապակենտրոնացմանը: Սունդուկյանի թատրոնի զրժվար վիճակը, որից դուրս գալու համար մի Աճեմյանն էլ բիշ էր, ապա և կենինականի թատրոնի լարում պահանջող գործերը, դասավանդումը գեղարվեստա-թատերական ինստիտուտում, Սունդուկյանի թատրոնի ստուդիայի գործերը, դրանց հետ՝ անհամար գործուղումներ, անհաշիվ խորհրդակցություններ, անպատճ ժողովներ... Այս պայմաններում հնարակո՞ր էր արվեստի մեջ մեծ գործ տեսնել: Ես զարմանում

էի՝ դեռ ինչպե՞ս էին, այնուամենայնիվ, մեծ գործեր ստեղծվում:

Եվ սա դեռ բոլորը չեն. ամենից վատը եղավ այն, որ Աճեմյանն իր իսկ ցանկությամբ կարգվեց Սունդուկյանի անվան թատրոնի դիրքեառոր:

1970, հունիսի 1:

Ինչպես նկատեցիր, երեսի, Աճեմյանն իր ստեղծագործական կյանքում սխալներ շատ է արել: Ե՞վ անխուսափելի, և՛ իսուսափելի: Սխալներ, որոնց մեջ ինքը գրեթե մասն շումներ, բայց նաև սխալներ, որոնց միակ մեղավորը հենց ինքն էր: Դրանցից ամենամեծը Սունդուկյանի անվան թատրոնի դիրքեառոր կարգվելու էր: Կամացին աներեր ընավորություն շունեցող մարդու համար դա համասար էր ինքնակործանման: Ինքնակամ կործանում, ուրիշ ոչի՞նչ:

Եվ ի՞նչն էր զրա պատճառը: Այստեղ իմ կարծիքը կարեղոր չէ, կարենորն իր կարծիքն է, որ հիմա կներկայացնեմ ամրողքությամբ, բառ առ բառ Ահա Աճեմյանի «գահակալական ճառը», որի սեագիրը գտնվեց իր թղթերի մեջ. «Ընկերներն երկու հիմնավոր պատճառներ ստիպեցին ինձ հռժարակամ ստանձնելու թատրոնի ընդհանուր զեկավարությունը:

Որո՞նք են պատճառները:

Մինչև օրս, անկախ թատրոնում իմ ունեցած իրավունքներից ու լիազորություններից, թատրոնի վիճակի համար առաջին պատասխանառու անձը միշտ ճանաչվել էմ ես, և յննադատության սկարները, որ կողմից էլ արձակված լինեին, թատրոնի ներսից թե զրսից, միշտ ուզզված են եղել ինձ, նախ և առաջ ինձ, և ես դա համարել եմ տրամաբանական: Պետք էր պարզություն մտցնել հարցերի մեջ և հնարավորություն

տալ իմ քննադատներին լինել մինչև վերջ արդարացի, իսկ
ինձ զրկել արդարանալու հիմքերից Այսինքն, իսկապես լի-
նել թատրոնի վիճակի համար առաջին պատասխանառու
անձը և ինձ վրա վերցնել դիրեկտորի իրավունքները:

Հայտնի է, որ երկիշխանությունը Երեք ցանկալի հետե-
վանքներ չի ունեցել: Սրանից հետո թատրոնի վատ վիճակի
համար մեղավորը կլինեմ ես և ինձ ուղղված պահանջները
կլինեն տեղին և արդարացի:

Երկրորդ պատճառը: Դա մեր թատրոնի վիճակը լավաց-
նելու իմ մեծ ցանկությունն է, որին ես կուղենայի նվիրել
իմ տարիների փորձը և իմ բոլոր հնարավորությունները:

Ես ձեզ խոստումներ շեմ անի, և դուք վաղուց եք կշտա-
ցել խոստումներից: Եվ եթե ես փորձեմ նկարագրել թատրոնի
հեռանկարը իմ պատկերացրած գույներով, դուք ձեր մըտ-
քում կասեր՝ շենք հավատում, և ունեք այդպիս դատելու իրա-
վունք, մանավանդ, որ Անեմյանը կազմակերպչական, վար-
չական կարողություններ շունեցող մարդու համբավ ունի: Սա-
կայն կարող եմ վստահեցնել ձեզ, որ, այնուամենայնիվ,
թատրոնի վիճակը եթե ես շկարողացաւ լավացնել՝ իմ պատճա-
ռով չի էլ վատանա եղած դրությունից: Իհարկե, դա մեզ չի
կարող ուրախացնել: Լավացնել, թատրոնի աշխատանքները,
լավացնել և դրա համար հավաքագրել մեր բոլոր ջանքերը:

Եվ այս ժողովը մենք պետք է ծառայեցնենք այդ գործին: Մեր օրակարգը ձևակերպված է՝ ոկազմակերպչական հարցեր»,
երևի այս ձևակերպումը շատ է ընդհանուր և անորոշ: Ոչինչ:
Մենք կունենանք ևս մի շարք խորհրդակցություններ՝ նվիր-
ված մեր հարցերին, իսկ հարցեր շատ կան:

Այսօր ես ուղում եմ ասել, թե որն է իմ և ձեր հիմնական
անելիքը, բուն խնդիրը, ինչ հարցերի լուծմանն է ուղղվելու

մեր ուշադրությունն ու կամքը, որով պիտի լավացնենք մեր
վիճակը:

Այդ հարցերը երեքն են՝

1 Ռեպերտուարը

2 Կատարողական որակի բարձրացում և հետևանք՝

3 Թատրոնը լայն ասպարեզ հանելը»:

Մա էր նորընծա գիրեկուրի առաջին ճառն ամբողջությամբ:

Ինձ զարմանք էր պատճառում Անեմյանի անստվեր վըստահությունն իր կառավարչական ունակությունների նկատմամբ: Մի մարդու համար, որ շուներ պարտադրող կամք ու կոշտություն, այն էլ մեր պայմաններում, աշխատանքային կարգապահությունը կյանքի օրենք շղարձրած հայոց միջամայրում, ստեղծագործական ինքնադատակարտման պես մի բան էր: Այդպես էի մտածում ոչ միայն ես, շատերն էին այդպես մտածում, կինը՝ Արուս Ասրյանը, նույնպես: Եվ չէինք թարցնում իրենից:

Բայց զուր չի ասում ժողովուրդը՝ ասողին լսող է պետք...

1970, Հունիսի 3:

Իր առանձնասենյակում: Սանրութեանն է անում թատրոնի հեռանկարային ժբագիրը: Արգեն բանիերո՞րդ անգամ: Ոչինչ այնքան չի մտահոգում թատրոնի վարչական ու գեղարվեստական միահեծան դեկավարին, այնքան չի զբաղեցնում նրա միտքը, որքան խաղացանկի հարցը: Եվ, տարօրինակ բան, ամենից շատ հենց այդտեղ է վրիպում:

Հյուսվեց շքեղ մի խաղացանկի: Գրի առա, որ շմոռանա՞:

Մ. Գորկի՝ «Հատակում» (ամենաբիտասարդ դերասանների համար):

Սարդու և Մոքա՞ «Մաղամ Սան-Ժեն» (Մատաքսյալի համար):

Դելմար՝ «Հիշիր վաղվա օրդ» (Արուսի համար):

Սարոյան՝ «Խաղողի այդին» (Սարոյանի գիծը պիտի շաբանակել):

Մի պիես, նվիրված Խորհրդացին Հայաստանի 50-ամյակին (Զ. Դարյանի «Հանրապետության նախագահ» եղավ):

Մոլիեր՝ «Քաղենին ազնվական»:

Լորկա՝ «Արյունուա հարսանիք»:

Հառակաման՝ «Մայրամուտից առաջ» (Զանիբեկյանի պահնջն է):

Շանթ՝ «Հին աստվածներ» (Եթե հնարավոր եղավ):

Եվրիպիդես՝ «Իֆիգենիան Ավլիսում»:

Շոռ՝ «Պիգմալիոն» (Էմարդուչու համար):

Չեխովի պիեսներից մեկը:

Շեքսպիր՝ «Համլետ»:

Կոռնել՝ «Միդա»:

Պարոնյան՝ «Ատամնաբույժն արևելյանց»:

Մոլիեր՝ «Ֆոն Ժուան» (Խորեն Աբրահամյանով և Մհեր Մկրտչյանով, սա իմ համառ առաջարկն էր):

Օստրովսկի՝ «Եկամտավոր պաշտոն»:

Շեքսպիր՝ «Ծիչարդ Երրորդ» (Բարեկին ներսիայանով):

Ուիլյամսի պիեսներից մեկը:

Պանյոլ՝ «Տոպազ»:

Տեսնենք ինչ գուրս կգա:

1970, հունիսի 16:

Երկու շաբաթ էլ չի անցել նախորդ ծրագրումից: Դրիգոր Բոյաչիկը, որ եկել է Երևան ներկայացումներ զինելու, հարց-

նում է, թե ինչ պետք է անի թատրոնն առաջիկայում։ Աճեմ-
յանը գրապահից հանում է իր ձեռքով գրված մի թուղթ (դա հի-
մա իմ գրասեղանին է) և ժանոթացնում։ Այս անդամ՝

Լորկայի պիեսը՝ հովիս:

Հասպամանի պիեսը՝ սեպտեմբեր:

«Հատակումը»՝ հոկտեմբեր:

«Խաղողի այգին»՝ նոյեմբեր-դեկտեմբեր:

Այսուհետեւ՝ Տշիշիր վազվա օրով, Մոլիերի պիեսներից մե-
կը, «Մադամ Սան-Ժեն», «Էլի մեկ զոհ», «Պազտասար աղ-
քար», «Իֆիգենիա», «Սիդ», «Աստամնաբուժն»։

Բոյացինը հավանություն է տալիս ծրագրին։ Ես զարմա-
նում եմ ծրագրի այդքան շուտափությունը փոփոխությունների
վրա։

1971, հոկտեմբերի 3:

Հիմի էլ թատրոնի բազում անկատար ծրագրերը թողած,
խոսում է «Ալմաստ» օպերայի բնմադրության հեռանկարի
մասին (Ա. Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակի առիթով)։
Սպասում է, թե ինչ կասեմ։ Իր սովորությունն է՝ համբերա-
տար լսել ուրիշների կարծիքները, հետո իրենն անել։ Ես
պայմենացի։ Քիլ է պատահել, որ իմ ավագ ընկերոջ հանդեպ
այդքան անողոք ու անզուսապ լինեմ։ Զեր ինչի՞ն է պետք,
թատրոնը ձեռից զնում է, Դուք՝ օպերա։ Դուք օպերայի պա-
տասխանատուն շեք, այլ թատրոնի։ Առանց էն էլ Զեր ամ-
բողջ ժամանակը վատնում եք անհարկավոր գործուղումների,
անպատճ գաստրոլների, անհեռանկար հորելլյանական ներ-
կայացումների-վրա։ Ինչքան լսում եմ՝ կամ քաղաքում շեք,
կամ գաստրոլների եք պատրաստվում։ Ո՞չ մի նոր բան, ո՞չ
մի շարժում։ Հիմի էլ սԱլմաստը։ Բա թատրոնը մեղք չի։

Հսեց-լսեց անխոս, ունեցա միամտություն կարծելու, թէ լոռությունը համաձայնության նշան է: Մինչդեռ՝

— Զեավորումն ո՞վ անի, Մինա՞սը:

Ո՞ւմ կասես: Թատրոնի վիճակը մի կողմ դրի և անցա օպերային՝ ունե՞ք մի նոր, օրիգինալ, շտեսնված մտահղացում: — Կմտածենք:

Բայց ե՞րբ, դրա ժամանակը շունեք: Սա «Անուշը» չի, սրա գործը դժվար է, Շտեյնբերգի ֆինալային պատկերը պիտի հանեք, վերադառնաք բնագրին: Նշանակում է, պիտի հեռանալ 39 թվի պատմա-հայրենասիրական մեկնարանությունից, հնչեցնեք իրեն խոհական-փիլիսոփայական դործ: Պատրաստ եք դրան: Պատրաստ չեք: Սա էլ չեղավ «Ռոմեո» և Ջուլիետի» պատմությունը: Վերջապես, Դուք էլ մեղք եք, չէ:

Ես հոգնեցի: Ինըք համաձայնեց: Ես ամփոփեցի՝ վազը կլսենք, որ Անեմյանն աշխատում է «Ալմաստի» բեմադրության վրա:

Միծագում է անդիմադրելի հմայիչ, ինչպես միշտ:

(Դեպքերից առաջ ընկնելով ավելացնեմ՝ դժբախտաբար, ես ճիշտ դուրս եկա, բեմադրությունն արվեստագետից խւեց վիթխարի ջանք, բայց ոչ մի տերեւ շավելացրեց իր դափնեպսակին):

1 Աղ. Սպիտակարյանի օպերան (ինչպես Թումանյանի պոմեր) ավարտվում է Թաթուլ Հշիմանի պարտությամբ: 1939-ին Հայ արգելուարի տատնօրյակին ցուցադրելու համար այդ հոռեանական ֆինալը համարվեց անընդունելիք, — ինչպէս կարելի է, — և կոմունիստոր Մարտիկինեան Շտեյնբերգին հանձնարարվեց զրան ևս մի պատկեր, որ օպերան-ավարտվում է Հայոց գորբերի հաղթանակով, իշխան Ռուբենի առաջնորդությամբ Հայոց գորբերը պարտության ևն մասնում պարսից շահին և հետ ևն առնում թմուկ բերդը:

1971, Հոկտեմբերի 17:

Ասել էր հաստատ, որ «Ալմաստ» օպերան շի բեմադրելու, որովհետև շունի նոր մտահղացում, մեկնարանության նոր տեսանկյուն շի գտնում: Բայց երր, պատահարար հանդիպելով 0Հան Գուրյանին, իմացա, որ բեմադրում են, Հուզված զարմանքով դնացի իր մոտ: Նոր մտահղացում գոյացա՞վ:

— Չէի ուզում, բայց ստիպեցին:

Ապա, կարծես ոչինչ շի պատահել՝

— Ասացի, որ Ալմաստը պետք է դրամատիկական սոպրանո լինի, շափաղանց հմայիլ, թե չէ ոչինչ դուրս շի գա: Ոչ թե Գոհար Գալաջյանը, այլ Օլգա Գարայյանը: 0Հանն իսկույն համաձայնեց:

Ժապտում է: Ես ընդհակառակը՝ Հորելլյանական ներկայացումն է ձեզ հրապուրում, պիտի որ կշտացած լինեք նման հանդեսներից:

— Հիմա՞ր բաներ ես ասում:

«Ալմաստից» հետո, այնտեղ զորավար է պետք, ոչ թե ոհժիսոր (ասացի դիտումնավոր շափաղանցմամբ), ո՛չ «Քաջ նազարի» ուժ կունենար, ո՛չ «Իֆիգենիայի», չահել չեք, վերշապես: Ապա միանգամայն անսպասելի՝ ինչո՞ւ եք փշացնում իմ կենսագրությունը...

— Ինչո՞ւ քոնք եռ ոչ իմը:

Կարծես շի ըմբռնում, թե ինչ եմ ասում: Շատ լավ էլ ըմբռնում է: Դե՛ արի ու հասկացիր այս մարդուն:

Մի թուղթ գրեցի, թե պարտավորվում է այս տարի, թե կուզե «Ալմաստից» հետո, սկսել «Քաջ նազարը», հետո՝ «Իֆիգենիան»:

Ժապիտը դեմքին ստորագրեց:

Պարտամուրհակը հիմա սեղանիս է:

1972, մարտի 4:

Ինձ թույլ եմ տալիս մտաքերելու մի վեճ, ուր նախահարակը ես էի:

Անառողջ էր: Գնացի տեսության: Բնականաբար՝ սուրճ և կոնյակ: Անխուսափելիորեն՝ թատրոնի վիճակը: Սովորականից դուրս՝ իմ դժգոհությունն իրենից. մեր մտերիմ հարաբերությունները մի կողմ դնենք, թատրոնի գնդարինստական խորհրդի անդամ եմ, ինչո՞ւ պիտի շիմանամ ինչ պիես է մըտնում ուսպերտուար: Էլ ի՞նչ խորհրդի, եթե խորհրդի շպիտի նոտենք նրա հետ: Ինչքա՞ն սխալներ չեին արվի, եթե...

— Ի՞նչ սխալներ:

Ժամանակին «Ծումեն և Ջուլիետը» շպիտի ընմադրվեր, այն ժամանակը «Ծիչարդ Երրորդինն» էր և դերակատարը կար՝ Բարեկեն Ներսիսյանը:

— Հիմա:

Հիմա էլ Օստրովսկուց «Правда хорошо»-ն եք ընտրել, մինչեւ դա մեզ մոտ բնակ չի հնչի, կարելի էր «Եկամտավոր պաշտոնը» կամ մի ուրիշը: Մոլիերից «Ժլատն»¹ եք սկսում, ի՞նչ ժլատության ժամանակն է, մինչդեռ «Դոն Շուանը», խնդրեմ, Խորեն Արրահամբանն ու Մհեր Մկրտչյանը պատրաստ կանգնած են, հաջողությունը երաշխավորված է նախապես:

— Ուրիշ:

Կամ նուրբ հոգերանական դրամա, ինչպես Ռեիլյամսի «Ապակե գաղանանոցը». ո՞չ Բրեխտ կա մեր թատրոնի ոհ-

1 Իրոք, Աճեմյանը ակսեց այդ պիեսի վրա աշխատել և հետո լրեց զործը՝ զլուավոր զերակատար Գուրզեն Զանիբը Հյանին տալով իրավացի և մոլեգին դժգոհության ևս մի անհերքելի առիթ:

սպերտուարում, ո՞ւ Ուիլյամս: Կամ էլ գեղանկարչական մեծ
կոտավ՝ «Քաջ Նազարը», տարիներով մտածել եք...

Արուս Ասրյանն ինձ զարմացրեց՝

— Այո՛, «Քաջ Նազարը», Պիտեր Բրուկի¹ «Ամառային գի-
շերվա երազի» պես:

Մեղադրյալը մի լավ ծիծագեց:

Վեճն ավարտվեց: Խաղացանկային վրիպումները շարու-
նակվեցին:

1972, ապրիլի 21:

Գնացել եմ թատրոն «Մադամ Սան-Ժեն» ներկայացման
տոմսեր վերցնելու (դրա տոմսերը դժվար էին ճարմում):
Տնօրինի առանձնասննյակումն են այդ պիեսի բեմադրիչ Կիմ
Արզումանյանը և գլխավոր դերակատարներից մեկը՝ Մամի-
կոն Մանուկյանը:

Տնօրենը, որ Ամենյանն է, իրար հետեւից թղթեր է կար-
դում, ստորագրում, դնում մի կողմ, այդպես անվերջ:

Հեղնեցի՝ ստորագրեթ, ստորագրեթ, իսկ ուրիշները թող
բեմադրեն:

— Ես որ շատորագրեմ՝ ուրիշները չեն բեմադրի:

Հակածարված՝ ժամանակին ուրիշները ստորագրում էին,
դուք՝ բեմադրում:

Մոտեցա տեսնեմ ինչ թղթեր են: Մեկը ձեռու ընկավ և ի՞նչ
(գրեցի, որ շմոռանամ). ինչ-որ առևտրական հիմնարկին
խնդրանք, որ թատրոնի բուֆետի համար բաց թողնեն 60 շիշ
գարեջուր, 29 կգ բաստուրմա և էլի ինչ-ինչ ուտեստներ՝
առանց վերադիր գների:

¹ Ժամանակակից անգլիացի հայտնի բեմադրիչ:

Այս շղիմացա. սա ի՞նչ խայտառակություն է, ինչո՞ւ պիտի դուք զբաղվեք նման բաներով, բաստուրմա, չես իմանում ինչ, անհարմար է, չէ՞», ձեր ի՞նչ գործն է, դուք ո՞ր օրվա ադմինիստրատորն եք, ձեզանից ի՞նչ զիրեկտոր, ինչի՞ վրա եք վատնում ձեր ժամանակը:

Ասացի, ինչ մտածում էի (ինչ շատերն էին մտածում), Վերստին ծիծաղի, ինչպես արևմտահայերն են ասում՝ «անուշի կապեց»:

Սա է բնավորությունը, ի՞նչ կարող ես անել:

1972, ապրիլի 24:

Վճռել է վերջնականապես՝ մայիսի 3-ից պետք է սկսի և իրար հետևից պետք է բեմադրի «Իֆիգենիան», «Քանդած օջախը», «Տոպազը»։ Պարտաթուղթ եմ վերցնում։ Ուրիմն հաստատ է։ Ինչպես կարող է հաստատ լինել, երբ ասում է՝
— Երեսի ստիպված լինեմ «Կովկասի հրավերը» բեմադրել։
Չրեմադրեց ո՛չ Մ. Շաթիրյանի և Լ. Ղարագողյանի այդ պիեսը, ո՛չ «Քանդած օջախը», ո՛չ «Տոպազը» (որի բեմադրիլը և. Արրահամյանը եղավ)։ Բեմադրեց միայն «Իֆիգենիան»՝ երկու-երեք տարի հետո։

1973, մայիսի 21:

Հրավիրել։ Էր գեղարվեստա-թատերական ինստիտուտի ավարտական կուրսի «Ռեհիզոր» ներկայացման վերջին փորձերը դիտելու։ Կարգին կուրս էր՝ Հարություն Մովսիսյան (Խենստակով), Ռուսով Դիենեդյան (Քաղաքաբետ), Ալիս Կապլանջյան (Աննա Անդրեևնա), Կարինե Սուքիասյան (Մարիա Անտոնովինա), Բագրատ Գրիգորյան (Խոպովի), և այլք։

Ալ թե փորձ, այլ բեմադրական մտքի ու երևակայության հրավառություն, ինչպես իր լավ օրերին, իբրև հերքումն եղած կարծիքի, թե «Աճեմյանը սպառվել է»։ Համարձակ մտահղացում. Քաղաքապետը սեփակորի գալստյան անախործ լուրն ասում է ստորադրյալներին, ինչպես պինսումն է, բայց ներկայացման մեջ սրանք տեղ են գտնել ոչ թե բեմում, այլ հանդիսասրահում։ Լուրը հզվաւ է հանդիսատեսներին, և նրանցից մի քանիսը՝ պիեսի գործող անձինք, բարձրանում են բեմ, հետո վերադառնում իրենց տեղը։ Ասել է թե՝ դիտողները, այսինքն՝ մենք, հենց այդ քաղաքի բնակիչներն ենք։ Կարծես գոգոլյան ժամանակներից մինչև օրս ոչինչ չի փոխվել։ Սանրաբայլ, կոնզի նման կոշտ ու կոպիտ Քաղաքապետ և եղեգնի նման դյուրաթեք Խլեստակով։

Նայում եմ մեծ հաճույքով։ Հիւանալի աշխատանք է։ Ավարտական ներկայացումից հետո պիտի կորչի գնա։

— Բա իհարկե՛ց

Զի՞ս կարելի Սունդուկյանում անել նույնը, մի բան, որ մշակված պատրաստ է։

— Ես էլ այդպիս եմ մտածում, տեսնենք։

Դա էլ շարվեց, թեև բեմադրության մասին մի հոգված հրապարակեցի, որ ավարտվում էր այսպես. «... լավ չէ՞ր լինի, որ Աճեմյանը նույն ոհմիսորական մտահղացումն իրականացներ իր իսկ ղեկավարած Սունդուկյանի անվան թատրոնում։ Չէ՞ որ այս ներկայացումը, ինչպես մյուս դիպլոմային ներկայացումները, որքան էլ լինեն արժեքավոր, անէանում են առանց լայն հասարակության սեփականությունը դառնալու։ Ափսոս չէ» («Երեկոյան Երևան», 1973, 15 հունիսի)։

1973, սեպտեմբերի 4:

Վերադարձել է Էսենտուկիից, ուր մեկնել էր բուժվելու — Ո՞չ մի օգուտ: Ասում են՝ կոլիտ և լեզապարկի բորբոքում: Ասում եմ՝ զե՞ր բուժեցեք: Փոխարենը՝ ամեն օր անառի: Մի-երկու շաբաթ ենթարկվեցի: Հետո ձեռ բաշեցի:

Շա՞տ է խանդարում:

— Ոչ մի բանի հավաս չի մնում, ո՞չ աշխատելու, ո՞չ կարդալու:

Գուրգեն Մահարու մասին հողված էի տպագրել. չի հավանում՝ ինչո՞ւ չեմ ասել, որ «Այրվող այգեստանները» հիանալի գիրք է: Մտարերեց իր մասին Մահարու գրած հուշերը:

— Կարդում եմ ու զարմանում՝ չս ո՞նց է գրել:

Ես էլ եմ զարմանում:

Գոհուակությամբ ասաց, թե թատրոնը միութենական երկրորդ մրցանակ է շահել: Ի՞նչ կա զարմանալու, — ասացի, — ամբողջ սեղոնում երկու պրեմիերա եք տվել, ձեզ պետք է դատել, ոչ թե մրցանակ տալ:

Բարեկացած հայացք:

Բերեցին դերասան Արտո Փաշայանի մահվան հեռագիրը.

— Սա չի վերջը:

1973, սեպտեմբերի 10:

Տրամադրությունն այնքան վատ չէ, որքան սպասելի էր կոնսիլիումի եզրակացությունից հետո՝ պետք է ստամոքսը վիրահատել, ուրիշ ելք չկա: Միայն ոճնտգենոլոգ Հրանտ Դանիելյանն է, հմատ մի մասնագետ, որ դա անհրաժեշտ վեհաճարում:

— Դիտե՞ս ինչ ասաց, նույնը, ինչ որ դու Պետք է ձեր
բեռը թեթևացներ, ասում է, այդ դիրքեկտորությունը թողեք:

Այսպես կարձ ու կտրուկ կարծես համաձայն է: Միայն՝
կարծես: Եվ ի՞նչն է ստիլում կառչել տնօրենի պաշտոնից:
Միայն աստծուն է հայտնի, իրեն իսկ հայտնի չի:

Որոշել է Մոսկվա մեկնել՝ թող այնտեղ վճռեն վիրահա-
տության խնդիրը:

Սեղանին մի շքեղ գիրք կա՝ «Современные итальянские
пьесы», նոր է կարդացել: Պատմում է Դև Ֆիլիպոյի պիես-
ներից մեկի («Յիլինդր») «անպարկեցա» բովանդակությունը:
Պատմում է հիանալի: Այդ հիանալին խոսքը չէ, այլ դիմա-
խաղը, հայացքը, ժեստը: Այսպես՝

— Մի կին, սիրուն, զրավիչ և այլն, բալկոնից հրապու-
րում է տղամարդկանց (ցույց է տալիս ուսերը խաղացնե-
լով): Տղամարդիկ հերթով գալիս են (ցույց է տալիս հաճույքի
նախազգացումը): Կինն ասում է՝ մտեք վարագույրի հետեւ
(աշքով-ունքով է անում): Տղամարդը գուրս է թոշում զար-
հուրած (աշքերը սարսափից չովում են), ներսում դիակ կատ-
Այս (տիրամած կանացի դեմք և վշտալի ձայն), ամուսինս
վախճանվել է, ապրուստու հոգալու ուրիշ միջոց չունեմ: Տղա-
մարդը մի քիչ զրամ է տալիս և սոսկումով հեռանում (ցույց
է տալիս վիճակը)...

Եվ այսպես պատմում է մինչև վերջ: Լուրջ թե կատակ,
որ միշտ էլ դժվար է որոշել՝

— Կուղե՞ս բեմադրեմ:

Աշ, Դև Ֆիլիպոն ավելի լավ պիեսներ ունի:

1975, սեպտեմբերի 1:

Դիտում ենք «Պաղտասար» աղբարիչ առաջին արարությունը

ՄՀԵՐ Մկրտչյանի խաղն օրգանական է և վառ: Միայն թե
կերպարը պետք է բարձրացնել, ազնվացնել:

— Այո՛, ճիշտ է: Հասարակացնում է:

Ինչո՞ւ Մհերն այդքան քիչ է խաղում:

— Ինքն է մեղավոր, չի ուզում խաղալ: Բուզարական
պիեսում լավ դեր ուներ՝ շխաղաց: Ասում է՝ նաև բեմադրեմ:
Թող աներ, ի՞նչ կպատահեր:

— Ստանիսլավսկին էլ այդպես բան չի արել:

Ստանիսլավսկին, իշարկե, չը անի: Բայց նրան պիտի
թույլ տայիիր: Խորենին նույնակնս պիտի թույլ տայիր, ո՛յ
«Ավագակներում» և Ֆրանցի դերը խաղար, և Կարլի:

— Գաստրոլային թատրոն է, ի՞նչ է:

Կայնցը¹ ժամանակին խաղացել է:

— Հարյուր տարի առաջ:

Խնչ անենք, կխաղար՝ կլիներ կարգին ներկայացում:

— Ճիշտ շեմ:

Ինքն է սխալը. կընդառաջեր կփառատեր հետզհետե կու-
տակվող դժգոհության սև ամպերը: Եվ ներկայացումն էլ կա-
րող էր հետարքիր լինել (իս Խորեն Արքահամբանին ստե-
նում» էի այդ դերերում):

1975, սեպտեմբերի 3:

Իր տանը հանգիստ զրուցում ենք: Լրացել է ծննդյան 70
տարին: Բեյրութում հանդիսավոր նշվել է հորելլանը վաղա-
ժամ՝ մարտի 13-ին իր իսկ ներկայությամբ, Երևանում պետք
է նշվի ուշացումով՝ մինչև տարվա վերջը (հանդիսը, ի վեր-
ջու կայացավ դեկտեմբերի 22-ին):

1 Կայնց Յոզեֆ (1858-1910) — ավստրիացի նշանավոր արտիստ:

Մտաբերում ենք արած գործերը սկզբից ի վեր: Ահապին
քան է դուրս գալիս: Մեկ էլ թէ՝

— Զե՞ս նկատել, մեր կինոն իմ արածներն է անում՝
ոՊատվիր Համարը, «Կարինե», «Քառոս», «Պաղտասար աղ-
րար», «Իմ սիրտը լնոներում է», «Հանրապետության նախա-
դահը» («Երկունք» անունով), «Հարսնացու հյուսիսից»...

Փորձում եմ տուարկել՝ կինոն ազգային թատերագրությու-
նից օգտվելու նույն իրավունքն ունի, բայց տեսնում եմ՝ ինչ
որ ճիշտ է ճիշտ է՝ իր հիշած դեպքերում կինոն իր հետքերով
է գնացել, փորձված նաևապարհով:

Այլ ժամին տուն եկավ Արուս Ասրյանը սաստիկ հուզված.
Սոս Սարգսյանը չի նեկել ներկայացման, նրա փոխարեն խա-
ղացրել են մի անփորձ տղայի, խայտառակ բան¹:

Ասրյանը խոսում էր հուզված վրդովմունքով, Աճեմյանը՝
վրդովմունքով, բայց առանց հուզմունքի: Թարձակ ինձ՝

— Դո՞ւք եք մեղայուր՝ թատերագետներդ, երես եք տվել,
շփացրել եք, ի՞նչ դերասաններ են դրանք, հենց միայն դրա-
վում են մեծերի տեղերը...

Պաշտպանվելը դյուրին էր՝ հիմա նրանք խաղացանկ են
կրում իրենց ուսերին, մարդիկ համբավի են հասել ոչ ին-
քննադատների, այլ իրենց տաղանդի ու արածի շնորհիվ:
Վատն այն կլիներ, որ քննադատները չտեսնելու ու շղթարա-
տեին:

3. Արուս Ասրյանը կատարում էր «Աշխարհ» այս՝ շոտ է եկել» ներ-
կայացման զիմավոր ցերերից մեկը (Հայոցոց), Սոս Սարգսյանը՝ մեկ
արքէր (Էղիկ): Բայս այսպես է եղալ. նախապես Հայտարարված ներկա-
յացումը գոյխարինեվել է հիշալ ներկայացմանցու բանից անոնդուակ՝ Սաս
Սարգսյանը մշկել է Սաղկամոք: Փոխարինով երթառարդ գերասանը՝ շեր-
գալ Մկրտչյանը՝ զերից մի կիրակ զլուխ է հանել:

Տիկին Արուսը վեճն ամփոփեց ախուվախի ինտոնացիա-
յով, որ շատ էր սազում իրեն՝
— Թատրոնը կործանվում է...

1975, գեկանմբերի 20:

Տանն եմ, անառողջ: Եկավ մեր տուն, բերեց իր հորելլա-
նական երեկույթի վերջին խոսքը, որ «նայեմ»: Հաջորդ օրը
երեկոյան իր վարորդ Ռաֆիկին ուղարկեց մեր տուն ձեռա-
գիրը վերցնելու:

Կարդացել, գո՞յ էր մնացել:

Գո՞չ մնացին ունկնդիրները նույնպես թայց նրանք լսե-
ցին ձեռագրում արված իմ հավելումն այն մասին, որ այ-
սօրվանից (Երեկոն կայացած 22-ին) ինքը թողնում է Սուն-
դուկյանի անվան թատրոնում դրաված իր պաշտոնները
(դիրեկտորի և գլխավոր ռեժիսորի), ասպարեզը թողնելով
հետնորդներին: Լավ հիշում եմ, այդ հատվածն ավարտել էի
չին լատինական դարձվածքով՝ «Ես արեցի այն, ինչ կարող
էի, թող գան ուրիշները և անեն ավելի լավ»:

Հրաժարումի հատվածը փառավորապես ջնջել էր:

Եվ իզուր, իզո՞ւր

Դա կլիներ և ճիշտ, և գեղեցիկ: Այն էլ ասեմ, որ այդ
հավելումը ես արել էի նախապես ունենալով իր համաձայ-
նությունը և Արուս Ասոյանի խրախուսական վերաբերմունքը:
Մենք հո չէինք ասում հեռու քաշվի ասպարեզից՝ բեմադրիչ
ես, ո՞ր թատրոնում ո՞ր պիեսն ուզում ես բեմադրի, ո՞վ զըր-
կաբաց չի ընդունի, թատրոնի տնօրենի և գլխավոր ռեժիսո-
րի պաշտոններից է, որ պետք է հրաժարվել: Կարծես թե հա-
մաձայն եղավ: Հետո, երևի, մտածել-մտածել էր ու ջնջել՝
ձեռքից բաց թողնելով իր կենսագրության գուցե և վերջին

1975, դեկտեմբերի 24:

Իր տանն եմ: Երկու օր է անցել Հորելլյանական երեկույթից, որի ժամանակ նրան հանձնվել է սոցիալիստական աշխատանքի հերոսի ոսկե «Մուրճ» ու մանդաղը», ասվել են մեծարանքի շքեղ խոսքեր: Երբեք շէի կարծի, որ մեծարանքի ու կոչումների սեր չունեցող Աճեմյանը կարող է այդքան ոգեզրվել ու ոգեշնչվել: Երեկի տարիքն անում է իրենը:

Միտք ունի մեծ ներկայացում ստեղծել երիտասարդ, ամենաերիտասարդ դերասաններով:

— Այդ սերնդի բարձրացումն է հիմա ամենից կարևորը: Մի հոյակապ բեմադրությամբ:

Մտածում է ստեղծել մի նոր «Նամուս», միայն թե պիեսը չի գտնում: Մտմտում է թատրոնի դիրեկտորի ընտրության շուրջ (կարծես թե ուզում է հրաժարվել այդ պաշտոնից, կարծես թե): Թվում է մի ամբողջ շարք թեկնածուների անուններ. ո՞ր մեկը:

Գոտեանդված է, վստահ, լավատես, տարիք ու առողջություն չի հարցնում, կրած վիրավորանքները միտք չի բերում:

Զարմանալի արարած է մարդ արարածը:

1976, նոյեմբերի 28:

Սունդուկյանի թատրոնում Ռուսթավելու անվան թատրոնը մի-երկու օր առաջ ցուցադրել էր Բ. Բրեխտի «Կավճով գըծված կովկասյան շրջանակը» Ռ. Ստորուայի բեմադրությամբ՝ ժամանակակից թատերական լեզվով արված վառ ներկայացում:

Աճեմյանը հավանում է ներկայացումը, հասկանալով նաև, որ դա թեև անմտադիր, բայց անուղղակի հարված է իրեն և

1975, դեկտեմբերի 24:

Իր տանն եմ: Երկու օր է անցել Հորելլյանական երեկոյթից, որի ժամանակ նրան հանձնվել է սոցիալիստական աշխատանքի հերոսի ոսկե «Մուրճ ու մանգաղը», ասվել են մեծարանքի շքեղ խոսքեր: Երբեք չէի կարծի, որ մեծարանքի ու կոշումների սեր չունեցող Աճեմյանը կարող է այդքան ոգեզրվել ու ոգեշնչվել: Երեկի տարիքն անում է իրենց:

Միտք ունի մեծ ներկայացում ստեղծել երիտասարդ, ամենաերիտասարդ դերասաններով:

— Այդ սերնդի բարձրացումն է հիմա ամենից կարևորը: Մի հոյակապ բեմադրությամբ:

Մտածում է ստեղծել մի նոր «Նամուս», միայն թե պիեսը չի գտնում: Մտմտում է թատրոնի դիրեկտորի ընտրության շուրջը (կարծես թե ուզում է հրաժարվել այդ պաշտոնից, կարծես թե): Թվում է մի ամբողջ շարք թեկնածուների անուններ. ո՞ր մեկը:

Գոտեանդված է, վստահ, լավատես, տարիք ու առողջություն չի հարցնում, կրած վիրավորանքները միտք չի բերում:

Զարմանալի արարած է մարդ արարածը:

1976, նոյեմբերի 28:

Սունդուկյանի թատրոնում Ռուսթավելու անվան թատրոնը մի-երկու օր առաջ ցուցադրել էր Բ. Բրեխտի «Կավճով գըծված կովկասյան շրջանակը» Ռ. Ստուրուայի բեմադրությամբ՝ ժամանակակից թատերական լեզվով արված վառ ներկայացում:

Աճեմյանը հավանում է ներկայացումը, հասկանալով նաև, որ դա թեև անմտադիր, բայց անուղղակի հարված է իրեն և

իր թատրոնին, որ հակառակի պես այդ ժամանակ տիսուր քեմագրություններ էր ցուցադրում:

Նախանձը շարժվեց թե ինչ՝ ևս օդովեցի հանգամանքից. ձեռ քաշեք «Բաղնըսի բոխչայից» ու «Ծոկան Պետրովիչից» (Հիմի էլ մտադիր էր դրանք բնմադրել), պետք է մի նոր, թարմ, մողեռն քան անել: Ի՞նչ Թեկուզն «Քաջ նազարը», բայց բնմադրել ա լա Բրեխտ: Գնացինք իր տուն, խոսեցինք: Նույնիսկ Գեորգ Էմինին հեռախոսեցինք, որ ներկայացման համար երգերի տեքստեր գրի՝ քծնանքի, վախի, անհծքի և այլն, Բրեխտի զոնդերի հանգով:

Ոգուրչեց «Քաջ նազարով»: Այս էլ քանինքո՞րդ անգամ:

1976, դեկտեմբերի 22:

Խորհրդակցություն Կենտեկոմի կուլտուրայի բաժնում: Քըն-նարկման առարկան՝ Սունդուկյանի անվան թատրոնի այսօրվա վիճակը: Այսպես՝ ըստ պաշտոնական հայտարարության, որ արեց բաժնի վարիչ Գուրգին Առաքելյանը: Բայց դարձավ թատրոնի ղեկավարության, ասել է թե Աճեմյանի քննադատությունը, ավելի ճիշտ՝ դատապարտումը, էլ ավելի ճիշտ՝ դատապատանը, որ կարծես թե ծրագրված էր: Եվ ոչ անպայման հավաքի մասնակիցների կողմից...

Նույն դեկտեմբեր ամսին երկու բնմադրություն էր ցույց տվել թատրոնը («Սիրանո զը Բերժերակ», «Գլուխդ բարձր, զինվոր»), երկուսն էլ ակներնորին ձախողված: Ժողովի մասնակիցներն այդ ներկայացումների թողած անուրախ տպավորության տակ էին: Ամպերը կուտակվել, խռացել էին մինչև հագեցումը: Մնում էր պայթյունը:

Թատրոնն իրոք որ հայտնվել էր ճպնաժամային վիճակում: Դա միանգամից ստեղծված անսպասելի բան չէր, այլ տարի-

ների գոյացում։ Ասածս Հիմնավորելու համար մտարերեմ քացահայտ ձախողումները։

1972, մարտ. Մոսկվայից իրեն բեմադրիչ Հրավիրվեց Բորիս Զախարվան, «Եզրոր Բուլըշովը և ուրիշներ» հոչակավոր ներկայացման բեմադրիչը, մեծահմտութ արվեստագետ։ Լավ հույսեր էին կապում նրա հետ։ Բեմադրեց Ալ. Օստրովսկու «Ճշգմարտությունը» լավ է, բախտը՝ ամենից պիեսը։ Դուրս եկավ անգույն ներկայացում, չնայած Գեղամ Հարությունյանի ընտանի խաղին գլխավոր ռենտերից մեկում (Դրողնուով)։

1972, դեկտեմբեր. Սատնիալավսկու անվան ոռուսական թատրոնի գլխավոր բեմադրիչ Ալ. Դրիգորյանը բեմադրեց մոլդավ թատերագիր Իոն Դրուցեի «Մեր ջահելության թըռչունները» պիեսը։ Դուրս եկավ թույլ ներկայացում, որ չմնաց խաղացանկում։

1973, ապրիլ. երիտասարդ բեմադրիչ Հ. Հովհաննիսյանը բեմադրեց Շիլերի «Ավազակները». ձախողված ներկայացում, ցուցադրվեց միայն մի անգամ։

1974, դեկտեմբեր. վրաց հայտնի բեմադրիչ Դ. Ալեքսիձեն Հրավիրվեց բեմադրելու էլիոդիշվիլու «Արևի տակ» («Մեր զուտնաշիներ») պիեսը։ Չնայած մի բանի լավ ունրակատարումներին (Դուրգեն Զանիբեկյան, Վաղինակ Մարգոնի, Գեղամ Հարությունյան), դա լավ բեմադրություն չէր, ցուցադրվեց հազիվ մի բանի անգամ։

1975, մայիս. Հր. Ղափլանյանը բեմադրեց «Եյուրնբերգյան վերջարան» պիեսը (գրել էին Վ. Մնացականյանը և Հր. Ղափլանյանը միասին)։ Վերստին անհաջող ներկայացում, որ չմնաց խաղացանկում։

1975, հոկտեմբեր. Հր. Ղափլանյանը բեմադրեց բուդար

թատերագիր Ստ. Կոստովի «Մեծամոլը» կատակերգությունը: Մրան ևս վիճակվեց նույն բախտը: Եվս մի պարտություն:

1976, դեկտեմբեր. Մոսկվայի Երմոլովվայշի անվան թատրոնի բնագրիչ Ա. Շատրինը հրավիրվեց բնմաղրելու է. Ռուսանի «Սիրանո զը Բերքերակը»: Ինչքա՞ն հույսներ էին կապվում դրա հետ. «Շարաթ, կիրակի, երկուշարթի» հիանալի ներկայացման հեղինակը՝ իր գործի հմուտ մասնագետ: Սիրանոյի գերը պետք է խաղա ոչ այլ ոք, քան Մհեր Մկրտչյանը, որ կարծես ստեղծված էր այդ գերի համար: Դուրս եկավ ձախողված մի ներկայացում, որ ցուցադրվեց, կարծեմ, միայն մի անդամ:

1976, դեկտեմբեր. Երկու շաբաթ անց, վրա հասակ հաջորդ ձախողումը՝ Ի. Կասումովի «Դլուխդ բարձր, զինվոր» պիեսի անդույն ներկայացումը՝ Զ. Սելիմովայի բնմաղրությամբ:

Այսպես՝ պարտություն պարտության հետևից, և այնքան ակներեւ, որ անգեն աշքով էլ երևում էր:

Թատրոնի ներքին կացությունն էլ ժանր էր: Դրա հրապարակային արտահայտությունն էր, որ գերասաններ եօրեն Արքահամբանը և Սոս Սարգսյանը թատրոնից հեռանալու դիմում էին ներկայացրել: Դիմումներ, որ մի-մի բողոք էին թատրոնում ախրող վիճակի դեմ և իրավացի բողոք: Հետո առաջինն իր զիմումը հետ էր վերցրել, երկրորդը՝ ոչ, ուստի և վերջինիս հեռացումը հրամանադրվել էր:

Թատրոնի անմիտիթար վիճակն ամենքն էլ գիտեին, թերևս ամենից լավ՝ նրա վարչական և գեղարվեստական զեկավարությանը և անմյանի խոսքով էլ սկսվեց խորհրդակցությունը: Ու երեքի ամենից խիստ, կացության բուն արմատների ըմբռնու-

մով, թատերական գործի արատավոր դրվածքի մեջ թափանցելով նա խռուց:

Թատրոնում ստեղծվել է այնպիսի իրադրություն, — ասացնա, — որ մարդիկ չեն ուզում աշխատել: Պատճառն այն է, որ լավ ու վատ աշխատանքը նույն շափով է վարձատրվում, «հաստ ու բարակ մի գին է» (այսպես էլ ասաց): Անհրաժեշտ է աշխատավարձի կարգավորում, իսկ դա չի արվում թատերախմբի տարիքը շափառանց բարձր է, նրա երիտասարդացման հարցն անհնար է լուծել, ոչ մեկից չես կարող ազատվել: Թատրոնի աշխատանքը կազմալուծում է մեծամասությունը, կարիքը մեծեղ անսամբլ չի կարող ստեղծվել, որպէս մեկը մյուսի հետ չի ուզում խաղալ: Մյուս կողմից էլ Հայֆիլմն է չարիք դարձել թատրոնի համար: Օրինակ, Մհեր Մկրտչյանը Սիրանոյի դերը պատրաստելիս նկարահանվում էր չորս ֆիլմում: Իհարկե, ոչինչ ստացվել չէր կարող: Թատրոնի տեխնիկական սարքավորումը գտնվում է վատ վիճակում, կարգին մասնագետներ չունենք: Ես էլ մի տարի է, ինչ ոչինչ չեմ արել, դրադվել եմ ուրիշների գործերով, դիրքետորի պարտականություն կատարելով: Հրամայական պահանջ է ունենալ լուրջ, գործը հասկացող, բանիմաց դիրքետոր:

(Ասեմ փակագծում, որ Աննմյանի հարցադրումները վերաբերում էին ոչ միայն իր զեկավարած թատրոնին, այլև բռվանդակ երկրի թատերական համակարգին առհասարակ: Նրա ելութից շուրջ տասը տարի հետո էր, որ ամենուրեք առաջ քաշվեց թատերական գործի դրվածքը վերափոխելու, թատրոններում ևս վերակառուցվելու, «սոցիալական արդարություն» հաստատելու պահանջը: Բայց 1976-ը «լճացման ժամանակ» էր ամբողջ երկրում, երկրի տնտեսական ու հոգե-

վոր կյանքի բոլոր ոլորտներում, 1986-ը՝ վերափոխման, մաքրագործման ժամանակ, ամեն ժամանակ իր երգն ունի):

Անեմյանի խոսքից հետո ծայր առավ, ինչպես ասում են, «մտքերի փոխանակություն»: Շատ շատերը խոսեցին և բոլորն էլ՝ միշտ ինձարկե, անհնար բան է հինգ ժամ տևած ասուլիսը վերաբռագրել, բայց դրա ընթացքում ինչ որ ինձ թվացել է էական՝ գրի եմ առել, ուրեմն և թիշ բան կարող եմ վերականգնել, բայց այդ թիշը վստահորեն ստույգ:

— Ես էլ եմ արել էղ հիմարությունը, — իրեն հատուկ կոշտ շիտակությամբ խոսեց Թուրքեն Զանիրեկյանը, — դիրքկառոր եմ եղել: Բայց դա իմ գործը չէր: Թատրոնում կարգապահություն ասած բանը չկա: Հիմա Մհեր Մկրտչյանի պատճառով ներկայացում է հանվում, այն էլ՝ պրեմիերա, ոչինչ, մինչդեռ ժամանակին Սուրեն Թոշարյանը մի օր քնով էր ընկել, չէր եկել ներկայացման՝ թատրոնից հանեցին: Եվ չգիտեմ Սոս Սարգսյանին ինչպես են հրամանագրել, բայց եթե հայտարարված ներկայացմանը չի գալիս, ասենք արի ոտներդ պաշտեր:

Վարդգես Պետրոսյան, թատրոնի գեղարվեստական խորհրդական գոյություն շունի, թեև խորհուրդը շատ անդամներ ունի: Խորհուրդը պետք է լինի փոքր, ասենք՝ յոթ հոգուց բազկացած, բայց վճռական խոսքի իրավունքով:

Սուրեն Հարությունյան, թատրոնը թույլ է կապված հասարակության հետ, նրա շահագործությունը պահպան է պատճենագիր համար: Տիրում է համատարած կոմպրոմիս, թատրոնը գնրամ է հանդիսատեսի հետեւից:

Ալեքսանդր Արաքսմանյան, դրությունը ոշինչ փրկել չի կարող, ոչ մի զիրեկառոր, ոչ մի խորհուրդ: Միակ ելքն է՝ թատերախումբը ցրել, նորից հավաքել:

Մետաբայա Սիմոնյան. դրսում եղած մարդիկ չեն պատկերացնում, թե թատրոնում ինչքա՞ն փլված է ամեն ինչ: Ես էլ ուզում էի դիրեկտոր դառնալ, որ «Սիրանոյի» նման ներկայացումներ չինեն, որ թատրոնի ստուդիան փակեմ: Ինչ՝ համար է այդ ստուդիան, ոչ մի նպատակի: Մեզնից կտրում ենք հանդիսատեսին, մտածող հանդիսատեսին: Ընկեր Աճեմյանն ինքը պետք է քաջություն ունենա ասելու, որ թատրոնը գեկավարել չի կարող:

Հակոբ Ջարախյան (Կենակովի հովառուրայի բաժնի տեսուշ). Թատրոնն իր պլանները չի կատարում, բայց պարզենենք է ստանում՝ հին ներկայացումները վերականգնելով և հայտարարելով իրեն նոր: Մեծ ժախսեր են արվում նոր բեմադրությունների վրա և ցուցադրում միայն մի քանի անգամ. «Նյուրենբերգյան վերջարանը»՝ 6 անգամ, «Արևի տակ» ներկայացումը՝ 5 անգամ: Թատերախումբն ըստ օրենքի պետք է կազմված լինի 60 մարդուց (50 դերասան և 10 օժանդակ կազմ), մինչդեռ բազկացած է 87 մարդուց (67 դերասան և 20 օժանդակ կազմ), բայց դերասան չկա: 26 մարդ անցել է թոշակի հասակը, նրանցից 24-ը՝ ստանում են թոշակ և աշխատանքից չեն ազատվում: Դրա պատճառով փակվում է երիտասարդության ճանապարհը: Թատրոնում զբաղվածությունը կազմում է 35 տոկոս, ոչ որ սահմանված նորմային չի հանում:

Բարկեն ներսիսյան. այս բոլորի պատճառը հանգուրժողականությունն է: Աճեմյանի տաղանդը, հանճարը՝ հասկացանք, բայց թե զործը վատ է զնում: Նա թույլ է աշխատել և իրեն դիրեկտոր, և իրեն զիսավոր ոեժիսոր: Ես էլ եմ դժգոհ, վաթսուն տարիս լրանում է, ես կգնամ թոշակի, բայց այսպիս շարունակել չի կարելի:

Մարատ Խարազյան (կուլտուրայի մինիստրի տեղակալ)՝ թատրոնը ճգնաժամի մեջ է: Չունի ուսպերտուարի դիմ: Չունի իր հանդիսատեսը, թեև վահե Մկրտչանը¹ դահլիճը լցնում է: Թատերախմբի միջին տարիքը 55—56 է, աննորմալ վիճակ:

Աւրիշներն էլ խոսեցին (ես նույնպես), բոլորի խոսքերը չեն, որ ներկայացնում են: Նրանք էլ, մյուսների նման, խոսեցին ճիշտ ու հիմնավոր, Անձմյանի մեծ տաղանդն ու վաստակը նախապես և հատկապես ընդգծելով:

Ի՞նչն էր, հապա, որ ինձ (ուրիշներին ևս, ասեմ հիշողությամբ՝ Սաղաթել Հարությունյանին, Գուրգեն Զանիքը կյանին, Վարդգես Պետրոսյանին) այնպես ճնշում, դառնացնում էր այդ խորհրդակցության ընթացքում. ծանր էր ականատես լինել, թե ինչպես հայրենական մշակույթին այնքան ազնվարեն և անշահախնդիր ծառայած մարդը, նա, որ ավելի շատ բան էր արել այդ մշակույթի համար, քան իր ընդդիմախոսներից որևէ մեկը, մինչև իսկ բոլորը միասին, գամված է մեղադրյալի աթոռին, և մեղադրվում է նաև այնպիսի մեղքերի մեջ, որոնց հետ մազաշափի իսկ առնչություն չուներ: Անարդար բան էր կատարվում. մարդուն, որին պարտական էին բոլորն անխտիր, դարձրին քավության նոխազ ամեն ինչի համար. զուր չէ, որ ողբերգության մյուս անունը նոխազերգությունն է:

Խորհրդակցության մեջ ես (ոչ միայն ես) զգում էի մի ինչ-որ շարագուշակ բան, ծրագրված նպատակ, շարության շեշտ: Ամենից ակներեւ զա նկատվում էր Խորեն Արքահամբյան—Անձմյան հակամարտության մեջ, որ ասուիսի ցավագին առանցքն էր: Արքահամբյանն էլ խոսեց, և ուրիշների պես

1 Թատրոնի դիրքեառող-էաորդորիչը:

ճիշտ ու հիմնավորված, ցույց տվեց թատրոնի ցավոտ տեղերը նույնան անհերքելի, բայց նրա թափած եռանդը շափից դուրս էր ընդգծվում:

Իսկ հավաքն ավարտելիս, երբ մեղադրյալն իր վերջին խոսքն էր ասում, թե չպետք է շափ ու սահման անցնել, լսվեց ևորին Աբրահամյանի վճիռը՝ մեր թատրոնն այսօր լիդեր շունի: Զհասկացա, թե քաթանի պես գունատ մեղադրյալն ինչպես տեղնուտեղը գոտավ պատասխանը և հուզմունքից կերպերուն ձայնով ասաց՝ ես լիդեր էի, երբ աշխատում էի ուրիշ դերասանների հետ, իսկ կարիքերիստների համար ես լիդեր լինել չեմ կարող...

Վերջում բաժնի վարիչը հանդիսաւ ասաց, թե արված դիտությունները հաշվի կառնենք և կհանգենք գործնական եղացացության:

Գործնական եղացացության ժամանակ շեղադր մեծելուն ինքն արեց գործնական եղացացություն՝ մեկ ամիս անց նա այլևս գոյություն չուներ:

Հավաքից հետո մարդիկ ցրվեցին ծանր տրամադրությամբ. ոչ ոք չէր ուզում մյուսի հետ խոսնել:

Ես պետք է գնայի Հովհաննես Թումանյանի տուն հրավերի՝ բանաստեղծի կնոջ ծննդյան օրն էր, որ ավանդաբար նշյում է այդ տանը նրա՝ մահից հետո էլ: Զէի կարող զգնալու Մի-երկու ժամ կնոջս հետ սեղան նստեցինք անտրամադիր: Ժամը 9-ի մոտերքն էր՝ դուրս եկանք ու գնացինք Աճեմյանի առևն: Ծանր պատկեր՝ մարդ ու կին մենակ, թևաթափ, տիւրտրտրուում նստած: Ինչե՞ր էին անցնում նրանց մտքով, հաստատաբար՝ ոչ մի ուրախ բան: Ես, իհարկե, սրտապնդնցի ինչպես կարող էի՝ ի՞նչ է պատահել, վերջապես, ի՞նչն էր անսպասելի, առաջին անգամ հո չէ՝, մի օր պիտի լիներ՝ եղավ

գնաց... Դուք էլ անմեղ չեք, չե՞ս թա որ էնքան ասում էինք՝ ձեր ի՞նչ գործն էր դիրեկտորի պաշտոնը, ձերը ձեր արվեստն է, եղա՞վ մեկը, որ դա շընդուներ, շընդգծեր հատկապես...

Մեծ արդյունքի հճասա, իհարկե, տրամադրությունը շփոխվեց, բայց ասաց.

— Լավ է, որ եկաք: Ինչպե՞ս են լինում էդպես մարդիկ...

Ասացի, թե մարդիկ չեն այնքան մեղավոր, որքան կացությունը, վիճակը: Նրանք թշնամիներ չեն, չե՞ք նկատել, որ հաջողությունը միավորում, համախմբում է մարդկանց, անհաջողությունը՝ իրար դեմ հանում, թշնամացնում: Կյանքում էլ, արվեստում էլ, թատրոնում մանավանդ:

Ճիշտ էի ասում, բայց մտքովս ուրիշ բաներ էլ անցնում էին՝ մարդկային ապերախտության, անկիրթ վարքագծի մասին, նաև դաստիարակության տիրապես բացակայության մասին, նաև քինախնդրության...

Մտքովս անցավ հիշեցնել, թե ինչո՞ւ ջնջեց այն մի քանի տողը, որ ես իր համաձայնությամբ, տիկին Արուսի հավանությամբ ավելացրել էի իր այն ճառում, որ ճիշտ մի տարի առաջ կարդաց իր հորելլյանական երեկոյին. երկու պաշտոնից էլ կամովին հրաժարվելու հայտարարության տողերը: Զէ՞ս որ այս ամենը կանխված կլիներ փառավորապես:

Ինչո՞ւ խույս տվեց «ճշմարտության մոմենտից», որ իր ստով եկել կանգնել էր առաջին:

Մտքովս անցավ, բայց սիրտ շարի...

1977, հունվարի 21:

Նույն օրը երկու մարդու թաղում, Անեմյանի համար թանկագին մարդկանց՝ գերասան Դուրգեն Հակոբյանի և նկարիչ Սուրեն Մտեփանյանի:

Դուրգեն Հակոբյանն այն մարդն էր, որ 1937-ին, Աճեմյանի լինել-վիճելը զմռող ժողովում ձեռքը թափով խփել էր սեղանին և ձայն բարձրացրել հօգուտ արվեստագետի: Միա՛կ մարդը: Հետո կալանվել էր ինքը և տասնյոթ տարի մնացել էր արտորում, իսկ վերադարձից հետո դարձել Սովորուկյանի անվան թատրոնի ղերասան:

Թատրոնը սպո հանդերձանքի մեջ թողած՝ շտապում ևնք նկարիչների տուն, որ համենը Սուրեն Ստեփանյանի թաղմանը: Այն Սուրեն Ստեփանյանի, որի հետ շատ էր աշխատել քեմազրիչը, և միասին պիտի ձեռնամուխ լինեին «Քաջ Նազարին»:

Աճեմյանը տիսուր է անասելին կաց չի լինում, չի խոսում,— ևս նրան լաց լինելիս չեմ տեսել ամենավշտալի պահերին անգամ,— գունատ է ոնց որ պատի ծեփ: Ես արդեն Աճեմյանի համար հեմ վախենում, կողքից չեմ հեռանում:

Ո՞վ իմանար, որ նրան մի քանի օր էր մնացել ապրելու

1977, Հունվարի 24:

Անցավ ևս երեք օր:

Վաղ առավոտյան դուժեցին մահվան բոթը:

Մահը վրա է հասել լուսադեմին և քառորդ ժամում ավարտել անելիքը:

Հերձումը ցույց տվեց՝ ժավալուն ինֆարկտ, մի ինֆարկտ էլ ունեցել է մեկ ամիս առաջ, ըստ երևոյթին դեկտեմբերի 22-ի դառնաշտանչ խորհրդակցության օրը, բայց տարել է ոտքի վրա:

Վարդան Աճեմյանը կյանքից հեռացավ դառնացած, խորը վիրավորված հոգով:

Ասել են, կարծեմ ու, նեմիրովիշ-Դանչենկոն է ասել՝ թատրոնը կառուցվում է վիրավորված ինքնասիրությունների վրա: Ճիշտ է, դառնորեն ճիշտ: Գուցե և ամբողջ կյա՞նքն է այդպիս: մենք շրջում ենք վիրավորված ինքնասիրությունների մեջ, ու մեզնից ամեն մեկը նրանցից մեկն է՝ առավել կամ պակաս շափով...

Թատրոնին սա վերաբերում է ամենից ավելի: Ես չեմ հանաչում մի գերասանի, որ իրեն արժանի չհամարի ավելի աշքի ընկնող գերերի, քան խաղում է, ինչպես կյանքում ամեն որ իրեն համարում է արժանի ավելի լավ բախտի, քան բաժին է ընկել իրեն:

Բայդ զրա իրավունքի մեծ խնդիրը կա: Մի բան է, երբ համեստ տվյալներ ունեցող դերասանն է հավակնում նշանավոր գեր, ուրիշ բան, երբ հավակնորդն աշքի ընկնող կարողության տեր դերասան է: Երկու դեպքում էլ դեր տվողը բեմադրիչն է, կհավանի՝ դերասանին, «կտեսնի» նրան տվյալ դերում՝ կհանձնարարի, չի՝ տեսնի՝ չի հանձնարարի: Այստեղից էլ դերասանների հավերժական դժգոհությունը բեմադրիչից, սա էլ այս մասնագիտության անիծյալ կողմը՝ պատճառներից գլխավորը, որ այնքան դժվարին է դարձնում, թունավորում է նրա կյանքը: Օրինակները շափականց շատ են և, իհարկե, ոչ միայն հայ թատրոնի պատմության մեջ: Վիրավորված ինքնասիրությունները ներել շգիտեն:

Ոչ մի կասկած, վարդան Աճեմյանը, ինչպես ամեն մի, առավել ևս տասնամյակներ շարունակ գլխավորը եղած բեմադրիչը, դժգոհողներ շատ ուներ: Անարդար, բայց նաև արդարացի բողոքավորներ:

Իրավացի՝ էր Աճեմյանն իր բացատրություններով, թե ոչ այլ խնդիր է, բոլոր դեպքերում չէր կարելի չնկատել նրա

բաժին մեղքը վիրավորված ինքնասիրությունների գոյացման մեջ: Բայց կարծես թե ամեն ինչ այս աշխարհում հավասարակշռում է՝ ամենից անարդար վիրավորված կողմն ինքն էր որ կար:

1946-ից Աճեմյանի կյանքն ու գործն անցել է իմ աշքի տուաջ, և ինչքան հիշում եմ նրան՝ մեղադրվելիս և ձեռովով պաշտպանվելիս եմ հիշում: Պաշտպանվելիս՝ տեղինքայց շատ ավելի անտեղի, անարդար, անխիղճ քննադատությունից, եթե դա էլ կարելի է քննադատություն կոչել: Հենց 1946-ին՝ ստեղծել էր «Արա Գեղեցիկ» փայլուն ներկայացումը Լենինականի թատրոնում: Պրեմիերայի օրերին թատրոնում դրա քննարկումը եղավ: Ձեկուցողը Տիգրան Հախումյանն էր. զուր տեղը թերագնահատեց ներկայացումը: Աճեմյան՝ արի ու պաշտպանվիր: 1953-ին ստեղծեց բեմական արվեստի մի գեղեցիկ նմուշ՝ «Բալենու այգին»: Քննարկվեց, զեկուցողը Սուրեն Հարությունյանն էր: Ավերեց թողեց ներկայացումը: Աճեմյան՝ պաշտպանվիր:

Եվ լավ էլ պաշտպանվում էր, սխալ է այն կարծիքը, թե նա լավ հռետոր չէր:

Բայց ես իմ տեսածներն ու լսածներն եմ ասում:

Իսկ դրանից առաջ:

Զերիս տակ է «Խորհրդային արվեստ» հանդեսի 1936-ի մայիսի 16-ի համարը: Այստեղ տպագրված է Աճեմյանի ունեցած ելույթներից մեկի համառոտագրությունը: Եվ հենց այն ժամանակ, որ համարվում է Լենինականի թատրոնի «ոսկեդարը», իսկ դրա հեղինակը՝ Աճեմյանը. նա ստիպված է եղել պաշտպանել իրեն և իր ստեղծած արժեքները՝ անարգելով: «... ես անխուսափելիորեն վարակվեցի ֆորմալիստական բացիկներով;

որոնք հետագայում աճեցին իմ ռեժիսորական ստեղծագործական առաջարկան առաջին շրջանի աշխատանքների ընթացքում:

Չմոռանանք՝ սա Մեյերհոլդի հալածանքի, նրա «պայմանական թատրոնի», «բիոմինիանիկայի» դատապարտման, նրա թատրոնը փակելու ժամանակներն էին (արվեստագնուց բանտարկվեց և անչացավ ավելի ուշ):

Անել անհնարինը՝ ՅՕ-ական թվականների էնինականույն առեղծել ու միայն առաջնակարգ բնմադրություններ, այլև առաջնակարգ թատրոն՝ և պաշտպանվել դրա համար, հնարավոր դատապարտումը կանխել ինքնադատաստանով: Զինելիքիր բան: Բայց լինում էր, և դա համարվում էր միանգամայն բնական և օրինաշափ: Մնում է մտաքերել հին խոսքը՝ ո՞վ ժամանակներ, ո՞վ բարբեր...

Ժամանակներն էլ փոխվեցին, բարեկըն էլ, բայց Աճեմյանը մնաց ամենից արգասավոր և տաղանդավոր աշխատողի, մշակութիւն մշակի (տափտողոգիան նկատում եմ), թերը քշտած բանվորի, և ամենից շատ պաշտպանվողի, ամենից մեղավորի դերում:

Հավերժական մեզադրյալ:

Սա չէ՞ ամենից հանիրավի վիրավորված ինքնասիրությունը:

Մի ձեռքով աշխատել, ստեղծել, մյուս ձեռքով պաշտպանվել շարունակ... Սա ի՞նչ տրամարանություն է, սա ի՞նչ կյանք է, և սա՞ է կյանք...

Խչքան արգելքներ, ինչպես մամուլում գրում են՝ «օրիկակիվ և սույնեկոտիվ պատճառուներ» խանգարել են Աճեմյանին իր գործը սեփական նախասիրությունների հունով տանելու համար 1962-ից, թատրոնի շնորհ այրվելուց ի վեր. թվելն իսկ երկուող է ազդում՝ թատերախմբի անապատան-

վիճակը, որ շորս տարի տևեց, իր հիվանդությունները և վիրահատությունը, վերջ շունեցող հարկավոր ու անհարկավոր հյուրախաղերը, որոնց ընթացքում դադար էր առնում ամեն մի աշխատանք, հորելլանական պարտադիր ներկայացումները, որոնք ստիպում էին շանել այն, ինչ կամենում էր և անել այն, ինչ չէր կամենում, կարենը ու անկարենը խորհրդակցությունները Մոսկվա ու Երևան, դրանք էլ ահազին ժամանակ էին խլում, լենինականի թատրոնին աջակից լինելու ջանքերը, իր մանկավարժական աշխատանքը, թատերական գործի արատավոր դրվածքը, սիրելի գերասանների կորուստները (հոգով գնացածների հետ էր, գործով՝ նորերի, որոնց մեջ իրեն մենակ էր զգում), վերջապես, իր շարաբաստիկ զիրենկտորությունը...

Այս ամենի մեջ ինքը, իր բնավորությունն էլ մեղք ուներ, որ թույլ շավեց իրեն լինելու ավելի մեծ, քան կարող էր ըստ տաղանդի ու կարողության, տաղանդ, որ ավելի մեծ էր, քան բնավորությունը...

Եվ հեռվից հեռու ևս Ամեմյանին տեսնում եմ չկատարած խոստումների տակ կը ած, պահանջատեներեռվ ու բողոքավորներով շրջապատված, անօդնական ու շփոթված:

Իհարկե, կարող են, և լիակատար իրավունքով, հարցնել գործի տերն ինքն էր՝ իրեն պետք է հասցեադրվեր ամեն մի քննադատություն, հապա էլ ո՞ւմ: Ճիշտ է: Այն էլ կատարելապես ճիշտ է, որ «պատղատու ծառին են քար գցում»: Բայց այնքան և այնպես, որ մարդն ամբողջ կյանքում լինի պաշտպանվողի դերում: Ամենից շատ և՛ անող-արարողի, և՛ պաշտպանվողի»:

Իրոք որ՝ «շատ քանողին շալե շապիկը»

Ասենք, դա էլ օրինաշափ, բնական երևոյթ է, այլապես
ժողովուրդն այդ իմաստուն խոսքը չէր հորինի:

Անընականը, ցավալին ու ցավագինը մեկ ուրիշ բան է՝
արժանի խորին ափսոսանքին: Կյանքում, մեր հայկական ան-
համերաշխ, աններդաշնակ կյանքում առավել ես, մարդիկ
շափաղանց շատ կորուստներ են տալիս:

Դա է ափսոսանքը:

Ես ուշ հասկացա, թէ ինչու Հովհաննես Թումանյանի բառա-
րանում ափսոս-ն ամենից հաճախաղեալ, ամենից շատ հուզ-
մունք կրող բառերից է, ինչպիս նառաշնն-ը: Բանաստեղծի
վշտի խորին ակունքը: Դա միայն Անուշը չէ՝ «Ափսո՞ս»,
Անո՞ւշ, սարի ծաղիկ..., նաև ինքն է՝

Ինչքա՞ն ծաղիկ պիտի բուսներ, որ չըրուսավ էս հողին...
Ինչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տրվողին...

Ինքը՝ «Ափսոսում եմ մեզ», ո... մեր ամբողջ կյանքը ան-
վերջ ափսոսանք է» (նամակներից)¹: Նաև իր ժողովուրդն իր
անագործուն պատմությամբ: Առումները շատ են:

Մարդկային վշտի հորդառատ ակունքներից մեկը բացա-
կայությունն է ափսոսանքի զգացման. մարդիկ հեռ' մէ էլ, հի-
մա՞ էլ, չեն խնայում միմյանց, չեն ափսոսում միմյանց
զգացմունքները, տաղանդը, թանկագին ժամանակը, իրենց
օդն ու ջուրը, ծառ ու ծաղիկն էլ չեն ափսոսում, իրենց նվի-
րական պատմությունն ու մշակույթն էլ, իրենց զլխավոր նե-
ցուկը՝ մայրենի լեզուն էլ...

Եվ ինչքա՞ն ավելի տարբեր, գեաի լավը տարբեր, կլի-

1 Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, Հատոր Հինգերազ, Հայոց հանրատու, 1945, էջ 295, 327:

Ներ ամեն ինչ, եթե ափսոսային, դողային ունեցած ամեն ինչը վրաւ:

Ի՞նչ կա ավելի ափսոսալի, քան ափսոսանքի կորուստը Աշխեց:

Բայց դառնանք այս գրքի հերոսին:

Ի՞նչն է նրա մեջ արժանի խորին ափսոսանքի և որ կարող էր ավելի լիակատար բացվել ուրիշ վերաբերմունքի՝ ափսոսանքի ազնիվ տիրապետության պայմաններում։ Դա նրա արվեստն է՝ մի շատ թանկագին հատկությամբ։

Եթե բեմական արվեստը, ինչպես գրականությունը, երաժշտությունը կամ նկարչությունը, ազգային կեցության, նկարագրի և գիտակցության պատկերը չարժ չարժեր դրան նվիրվել, դրանով զրադվել։ Սրանից չի հետեւում, թե բեմական արվեստի, ինչպես մյուս արվեստների ամեն մի գործ տալիս է այդ պատկերը։ Բնակ ոչ։ Դա ամեն մարդու բան չէ։ Այդ արվեստն ունենում է իր ընտրյալ վարպետները։

Տևածս մեծ մարդկանց մեջ՝ Արամ Խաչատրյան, Մարտիրոս Սարյան, Շարա Տալլան, Թաթուլ Ալթունյան, լավ ճանաչածս մարդկանց մեջ՝ Ավետիք Խսահակյան, Մտենիան Զորյան, Պուրգեն Մահարի, Պարույր Սևակ, Հրաչյա Ներսիսյան, Ռաֆայել Խորայելյան, Համբ Մահյան, Հրանտ Մաթեոսյան...

Վարդան Աճեմյանը պատկանում է այս նկարագրի տեր՝ ազգային գեղագիտական մտածողության արմատներին հասնող արվեստագետների դասին։ Նա կարող էր ունենալ մեծապես հաջողված կամ նվազ հաջողված, նաև անհաջող բեմադրություններ։ Հաջողության շափը չէ ամենից կարևորը, այլ հետապնդած նպատակը, ինքն իրեն մշտապես հավատարիմ արվեստագետի այդ խառնվածքը։ Դա էր պատճառը,

որ սիրում էի Աճեմյանի թատրոնը և գնահատում նրա աշխատանքները մինչև իսկ այն դեպքերում, երբ դրա համար բոլոր հիմքերը չեմ ունեցել:

Կարծում եմ, արվեստագետի արդ Նկարագիրը նկատելուներ Կոնստանտին Ստանիսլավվակին «արմատի բեմադրիչ» ասելով՝ ի տարբերություն «արդյունքի բեմադրիչից»:

Աճեմյանն «արմատի բեմադրիչ» էր, իրու այդպիսին՝ միակ հայ բեմադրիչը, որին տեսել եմ:

Այլապես այս գիրքը չէր գրվի:

Մարդու վախճանն ապրողներին մղում է ամփոփելու նրա վաստակը, նրա ապրած կյանքի արժեքն ու խորհուրդը: Կյանքի օրենքն է՝ հետնորդները ծանրութեթև են անում նախորդների կյանքն ու գործը, որ այլ բան չէ, բան անցյալի իմաստավորումը: Դա արվում է այնքան ավելի հուղախռով, որքանը իշխանակ է անցել մահվանից: Որքան հեռանում է մահը, ավելի խորն է սուզգում անցյալի մեջ՝ զուգակշիռն արվում է այնքան ավելի կշռադատված, եթե ոչ սառն, ապահանգիստ, մանր կրքերից, անհատական համակրանքներից ու հակակրանքներից ձերքապատ:

Հիմա, երբ գրում եմ այս տողերը՝ 1987-ն է: Տասը տարի է անցել արվեստագետի մահվանից: Զետ արվեստագետը, շատերը չկան նրա մերձավորներից ու արվեստակիցներից, որոնց հետ նա նստել-վելը է կացել, կովել ու հաշտվել, մտերմացել ու հակադրվել, ում հետ անց է կացրել իր կյանքը:

Տասը տարին շատ է, թե քիչ՝ չգիտեմ:

Ասեմ միայն, որ վաղուց է, ինչ ուզում էի գրել այս գիրքը և հետաձգվել է, չի գրվել: Հիմա գրվեց, ուրեմն՝ եկել էր ժամանակը:

Գրեցի, որքան թույլ տվեց իմ ունեցած ձիրքը, չանացի
ներկայացնել պարդան Աճեմյանի անձն ու գործը՝ իմ տեսածի
սահմաններում, և իմաստավորել արվեստաբանորեն, որքան
կարող եղաւ:

Մեացածը պատկանում է ընթերցողին:

1985—1987 րր.

Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն	
Մ Ա Ւ Տ Տ Վ	5
Ա Ռ Ա Զ Ի Ն Մ Ա Ս	
Առաջին ժամանակաշրջան, 1946-ի և 1953-ի միջև	12
Ե Ր Ա Ր Ա Ր Գ Մ Ա Ս	
Թե արվեստագետն ինչպես էր նաևկանում և պատկերում իր ժողովրդի պատմական անցյալը	57
Ե Ր Բ Ա Ր Գ Մ Ա Ս	
Թե արվեստագետն ինչպես էր նաևկանում և պատկերում ժա- մանակակից կյանքը	109
Հ Ա Ր Բ Ա Ր Գ Մ Ա Ս	
Ինչ ու իր խաներ	147
Հ Ր Ե Գ Ե Ր Ա Ր Գ Մ Ա Ս	
Վերջին տարիների կորագիծը	240

Научно-исследовательское издание
ЛЕВОН ОГАНЕСОВИЧ АХВЕРДЯН
Вартан Аджемян в жизни и искусстве
Талант и характер:

Ереван, издательство «Хорурдани грох»
На армянском языке

Գիտա-մասսայական հետարակության
Խելքի, շնուրական և պատմական գործականության
Տաղանդ և բնավորություն.
Վարդան Անեմյանը կյանքում և արվեստում

Խմբ. վարիչ՝ Ս. Ա. Խաչատրյան
Խմբագիր՝ Օ. Ա. Մարկոսյան
Նկարիչ՝ Հ. Ա. Մամյան
Դեղ. խմբագիր՝ Հ. Մ. Կարապետյան
Տէխն. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան
Վերսուլուզ սրբազրի՝ Ա. Ա. Արքանամյան

ԱԲ 6531

Համեմություն է շարժածը 13. 03. 89 թ.:


Առաջարկած է տպագրության 10. 08. 89 թ.: ՎՅ 00701, Ձորմառ՝
70×108½/32, թուղթ՝ տպացր. № 1: Տառափեսակ՝ «Դրբի սովորական»:
Տպագրություն՝ բարձր: 12.95 պարմ. տպ. մամ., 10.6 հրատ. մամ., Տպա-
րակակ՝ 5000: Պատվեր՝ 252: Դիեր՝ 1 ու.

«Եղորհողացին գրող» Հրատարակչություն, Երևան-9, Տերյան-91:

Издательство «Хорурдани грох», Ереван-9, ул. Теряна, 91.

Հեղմ Հրատարակությունների, պոլիգրաֆիայի և գրքի առելորդ գործերի
պետական կոմիտեի № 6 ապարան, Երևան, Թումանյան փող. 23/1:

Типография № 6 Госкомитета по делам издательств, полиграфии
и книжной торговли Арм. ССР,
Ереван, ул. Туманяна 23/1.



A 1286D